



2563


No. 1100

SUEZ
IN TRANSIT

~~B~~ 1 / 55

MADE IN JAPAN





II
7825

84

Ահ.

Հեղինակ
Ա.Ղ.ԵՒՍԱՆԿԻ ՏԻԻՄԱ

ԺՕՁԷՖ ՊԱԼՍԱՄՕ

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

Հրատարակիչ
ՍՈՎԲԱՏ ԱՍՐԲԱՑԵԱՆ



ԳԱՀԻՐԷ
Տպագրութիւն « Ոստան »
1915

Ժ Օ Ղ Է Ֆ Պ Ա Լ Ս Ա Մ Օ

ԾԱ.

ՏԸ Ռ-ՕՂԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԿԱՐՏԻՆԱԼԸ

Ա

ՆՅՈՂԴՈՂԴ ու նրբամիտ իշխանուհիին աչքին առջև, անցածը այնքան տարօրինակ էր որ, ան ինքնիրեն կը հարցնէր թէ արդեօք առջևը գտնուող մարդը մո՞գ մըն էր որ սրտերն ու մտքերը ըստ հաճոյս ուզած կողմը կը դարձնէր :

Բայց ար Ֆէնիքս կոմսը այդչափով չգոհանալով, շարունակեց .

— Սմէնքը այս չէ, տիկին : Ձեր բարձրութիւնը Լօրէնցայի բերնէն մեր պատմութեան միայն մէկ մասը լսեց, հետեւաբար, հաւանական է որ ձեր սրտին մէջ քիչ թէ շատ կաակամ մը մնայ՝ եթէ մնացեալ մասն ալ անոր բերնէն չլսէ :

Այս ըսելով գետտոի կնոջ դարձաւ :

— Մեր ճամբորդութեան մնացած մասը կը յիշէք, այնպէս չէ՞, սիրելի Լօրէնցա, զոր օրինակ Միլանը, Մափէօր լիճը, Օպէրլանտը, Ռիզէն և Ռէնը :

ժող. Պալս., քիւ 23—50, հաս.Գ., Բ.հր.Ն.Ք.

ԱՄ



11-7825ակ

— Այո՛, Լօրէնցա անոնց բոլորն ալ տեսաւ, ըստ գեոատի աղջիկը միօրինակ շնչաով մը :

— Այս մարդէն մղուելով և հնազանդելով այնպիսի գորութեան մը՝ որուն ինչ ըլլալը չէիք հասկնար, այնպէս չէ՞, աղջիկս, հարցուց իշխանունին :

— Ի՞նչ տեղը կայ այդպէս կարծելու, տիկին, քանի որ իր քիչ մը առաջուան խոստովանութիւնը ատոր հակառակը կը հաստատէ : Է՛հ, ասկէ զատ, եթէ աւելի չօշափելի ապացոյց մը, փաստացի վկայութիւն մը կ'ուզէք, ահա Լօրէնցայի կողմէ գրուած նամակ մը, որուն մէջ ինչ հետու գտնուելուն վրայ կը ցաւի և զիս տեսնել կը փախաքի . այս նամակը իմ բացակայութեանս գրուած է զոր Ձեր բարձրութիւնը կրնայ կարգալ :

Կոմսը նամակ մը հանեց թղթապանակէն և իշխանունին տուաւ :

Իշխանունին կարդաց .

« Եկուր, Աշարա, բան մը աչքիս չերեւար երբ գունքովս չես : Աստուած իմ, ե՞րբ մշտնջենապէս քուկդ պիտի ըլլամ :

ԼՕՐԷՆՑԱ . »

Իշխանունին ոտքի ելաւ . բարկութեան բոցը ճակատը ելեր էր . նամակը ձեռքը բռնած Լօրէնցայի մօտեցաւ :

Այս վերջինը, առանց զայն տեսնելու ու լսելու, թոյլ տուաւ որ մօտենայ . կարծես թէ միայն կոմսը կը լսէր :

— Հասկցայ, ըստ կոմսը աշխուժիւ, գոգցես ցվերջ գեոատի կնոջ թարգմանն ըլլալ որոշած ըլլար : Ձեր բարձրութիւնը կը կասկածի և կ'ուզէ զիտնալ թէ արդեօք իրօք Լօրէնցա գրած է այս նամակը : Լա՛ւ, Ձեր բար-

ձրութիւնը այդ բանը Լօրէնցայի բերնէն իսկ պիտի իմանայ : Լօրէնցա, պատասխանեցէ՛ք, ո՞վ գրած է այս նամակը :

Կոմսը նամակը առնելով գեոատի կնոջ ձեռքը տուաւ, այս վերջինը ձեռքը սրտին գրաւ և ըստ .

— Լօրէնցա գրած է :

— Եւ Լօրէնցա զիտէ՞ նամակին պարունակութիւնը :

— Անչո՛ւշտ :

— Լաւ ուրեմն, նամակին պարունակութիւնը ըտէք իշխանունինին, որպէս զի չկարծէ թէ զիս կը սիրէք ըսելով զինքը կը խաբեմ :

Լօրէնցա ճիգ մը ըրաւ և առանց նամակը բանալու կամ աչքին տանելու կարդաց .

« Եկուր, Աշարա, բան մը աչքիս չերեւար երբ գունքովս չես : Աստուած իմ, ե՞րբ մշտնջենապէս քուկդ պիտի ըլլամ :

ԼՕՐԷՆՑԱ . »

— Մարգուն հաւատալը չիգար և չեմ ուզեր հաւատալ, անոր համար որ բոլոր այս բաներուն մէջ անբացատրելի և գերբնական բան մը կայ, ըստ իշխանունին :

— Այս նամակին վրայ որոշեցի մեր միութիւնը փութացնել, շարայարեց աը Ֆէնիքս կոմսը տիկին Լուիզի ըսածը չլսել ձեւացնելով : Որքան որ Լօրէնցա զիս կը սիրէր՝ ես ալ նոյնքան կը սիրէի զինքը : Իմ վտանգաւոր կենցաղավարութեանս մէջ կրնար ազէտ մը պատահել ինձ, կեանքս միշտ վտանգի մէջ էր, եթէ ես մեռնէի՝ կ'ուզէի որ իմ բոլոր ստացուածքս Լօրէնցայինը ըլլար, ուստի Սթրապուրկ հասած ատեննիս ամուսնացանք :

— Ամուսնացա՞ք :

- Այո՛ :
- Անկարելի է :
- Ինչո՞ւ համար, տիկին : Տը ֆէնիքս կոմսին Լօ-
բէնցա ֆէլիչիանիի հետ ամուսնանալուն մէջ ի՞նչ ան-
կարելիութիւն կը տեսնէք :
- Բայց ինքն իր բերնով ըստ ինձ թէ ձեր կինը չէ-
կոմսը առանց իշխանուհիին պատասխանելու Լօբէն-
ցայի դարձաւ :
- Որ օրը ամուսնանալիս կը յիշէ՞ք, Լօբէնցա :
- Այո՛, մայիսի 3ին :
- Ո՞ւր :
- Սթրազպուրկի մէջ :
- Ո՞ր եկեղեցին :
- Մայր եկեղեցիին, մէջ Սուրբ Յովհաննու մա-
տուր :
- Այս միութեան դէմ կենալ ուզեցի՞ք :
- Ո՛չ, շատ երջանիկ էի :
- Այս հարցումը կ'ընեմ անոր համար որ իշխանու-
հին կը կարծէ թէ բռնութիւն բանեցուցած են քու վրագ-
իրեն ըսեր են թէ զիս կ'ատես, իրա՞ւ է :
- Կոմսը այս խօսքը ըսած միջոցին Լօբէնցայի ձեռքը
բռնեց :
- Դեռատի կնոջ մարմնոյն մէջէն երջանկութեան դող
մը անցաւ :
- Ես քեզ ստե՞մ, ո՛հ, ո՛չ, ես քեզ կը պաշտեմ :
- Դուն բարի, վեհանձն և զօրաւոր ես :
- Կոմսը իշխանուհիին դարձաւ, կարծես թէ անոր ը-
սել ուզէր՝ « Կը բէ՞ք » :
- Տիկին Լուիզ սոսկումով ետ քաշուեցաւ :
- Ձեր բարձրութիւնը տակաւին իմանալիք ուրիշ
բան մը ունի՞, հարցուց կոմսը Լօբէնցայի ձեռքը թող-
լով :

- Պարո՛ն, պարո՛ն, երկո՛ւքդ ալ մի՛ մօտենաք
ինձ, գոչեց իշխանուհին սարսափահար :
- Այս միջոցին կառքի մը ձայնը լսուեցաւ :
- Ո՛հ, ա՜տ վերջապէս կարախնալը եկաւ, հիմայ ա-
մէն բան երեւան կ'եկայ, գոչեց իշխանուհին :
- Տը ֆէնիքս կոմսը խոնարհած միջոցին Լօբէնցայի
քանի մը բառ ըսաւ և գէտքերը պատրաստելու ձիրքն
ունեցող մէկու մը պէս համբրութեամբ սպասեց :
- Քիչ մը հաքը գուռը բացուեցաւ և Պ. տը Ռօման
կարախնալին զալուստը ծանուցուեցաւ :
- Իշխանուհին, երրորդի մը ներկայութենէն ոյժ սա-
նելով, վերստին իր թիկնաթոռը նստաւ և ըսաւ .
- Դե՛րս մտցուցէք :
- Կարախնալը ներս մտաւ, բայց, հազիւ թէ իշխանու-
հին ողջունած, ինքզինքը ժողէֆ Պալամօօի դէմը զբա-
նելով՝ զարմանօք ըսաւ .
- Վա՛յ, դո՛ւք էք, պարոն :
- Պարոնը կը ճանչնա՞ք, հարցուց իշխանուհին հեա-
զնեակ զարմանքը աւելնալով :
- Այո՛, ըսաւ կարախնալը :
- Ուրեմն մեզի պիտի ըսէ՞ք անոր ով ըլլալը, գո-
չեց իշխանուհին :
- Ատկէ զիւրին բան չկայ, ըսաւ կարախնալը : Պա-
րոնը կախարհ է :
- Կախա՞րդ, մրմնջեց իշխանուհին զարմացական
հարցմամբ :
- Ներեցէք, տիկին, նորին սրբազնութիւնը հիմայ
պէտք եղած բացատրութիւնը պիտի տայ և ձեզ գո՛հ պի-
տի ձգէ կարծեմ, ըսաւ կոմսը :
- Արդեօք պարոնը նորին արքայական բարձրու-

թեան ալ գուշակութիւնն ըրաւ որ այս աստիճանն խոս-
ված կը տեսնենք զինքը, ըսաւ Պ. ար Ռոճան :

— Սմուռնական վկայագիրը, շո՛ւտ, ամուսնական
վկայագիրը, զոչեց իշխանուհին :

Կարտինալը այս խօսքերէն ատանց բան մը հասկնա-
լու անոր հայեցաւ :

— Ահաւասիկ, ըսաւ կոմսը վկայագիրը կարտինալին
երկնցնելով :

— Ի՞նչ է ատիկայ, հարցուց կարտինալը :

— Պարոն, կ'ուզեմ զխոնալ թէ այս ամուսնական
վկայագիրը վաւերական է և ասորագրութիւնը իր տի-
րոջն է :

Կարտինալը թուզթը կարգաց :

— Շատ կանոնաւոր ամուսնական վկայագիր մըն է
և այս ասորագրութիւնը Սուրբ Յովհաննէս մատուռին
աւագերէց տէր Ռեմիի ասորագրութիւնն է . բայց ձեր
բարձրութեան հասկնալ ուզածն ի՞նչ է :

— Պարոն, մի գուցէ այդ ասորագրութիւնը . . .

— Կեղծ չէ՛, աիկին, բայց ինչէ՞ն զխոնամ որ բըռ-
նութեամբ անուած չէ :

— Ահա ատիկայ խիստ հաւանական է, զոչեց իշխա-
նուհին :

— Լորէնցայի հաւանութիւնն ալ ըոնութեամբ առ-
նուած է, այնպէս չէ՞, ըսաւ կոմսը հեզնական շեշտով
մը խօսքը իշխանուհին ուղղելով :

— Բայց ի՞նչպէս և ի՞նչ միջոցներով կարելի է բռնի
կերպով ասորագրութիւն մը կորզել, ըսէք տեսնենք, Պ.
կարտինալ, ըսաւ աիկին Լուիզ :

— Պարոնին ունեցած զօրութեան միջոցներովը, այ-
սինքն կախարդական միջոցներով :

— Կախարդական միջոցներով : Կարտինալ, զո՞ւք
էք ըսողը . . .

— Պարոնը կախարդ է ըսի և ըսածս ետ չեմ առնիր :

— Ձեր սրբազնութիւնը կատակ կ'ընէ :

— Ո՛չ, և ասպոցոյցն ալ այն է որ ձեր ներկայու-
թեանը պարոնին հետ լուրջ խօսակցութիւն մը պիտի
ունենամ :

— Ես ալ նոյն բանը պիտի խնդրէի ձեր սրբազնու-
թենէն, ըսաւ կոմսը :

— Աղէկ, բայց մի՛ մոռնաք որ հարցափորձողը ե՛ս
պիտի ըլլամ, ըսաւ կարտինալը հանդարտութեամբ :

— Դուք ալ պէտք չէ մոռնաք որ ե՛ս պիտի պա-
տասխանեմ ձեր հարցումներուն, մինչև անգամ, եթէ
կը փափաքիք, նորին բարձրութեան առջև : Բայց վըս-
տան եմ որ այդպիսի բան մը ընելու չպիտի ուզէք :

Կարտինալը ժպտեցաւ :

— Պարոն, մեր օրերուն, կախարդի դերը գծուար
դեր մըն է : Ձեզ այդ գործին գլուխը տեսայ . մեծ յա-
ջողութիւն ցոյց տուիք, բայց, ատաջուընէ ըսեմ ձեզ
թէ ամէն մարդ Աւստրիոյ տան աիկին արքայազուսարին
չափ համբերատար և վեհանձն չկրնար ըլլալ :

— Տիկին արքայազուսարին, բացազանչեց իշխա-
նուհին :

— Այո՛, աիկին, նորին կայսերական բարձրութեան
ներկայացուելու պատիւն ունեցայ, ըսաւ կոմսը :

— Եւ ձեզի եղած այդ պատիւին փոխարէն ի՞նչպէս
յայտնեցիք ձեր երախտագիտութիւնը :

— Աւա՛ղ, աիկին, ուզածէս աւելի գէշ, որովհետեւ
անձնական աստիճան մը չունիմ մարդոց, մանաւանդ
կանանց դէմ :

— Բայց ի՞նչ ըրած է ուրեմն պարոնը իմ օգոստոս-
փառ հարսիս, բացազանչեց տիկին Լուկ :

— Տիկին, հասկնալ ուզած իրողութիւնը իրեն ըսե-
լու զժբարդութիւնն ունեցայ :

— Ճի՛շտ է, իրողութիւն մը որ զան մարեցուց,
վրայ բերաւ կարսինալը :

— Երբ այդ իրողութիւնը չտիէն աւելի ստակալի ըլ-
լարով նման արդիւնք մը ունենայ, յանցանքը ի՞մօ
եղած կ'ըլլայ, պարոն կարաինալ, ըսաւ կոմսը զօրաւոր
ձայնով մը : Ե՞ս փնտոնցի իշխանուհին, կ'ուզեցի ի-
րեն ներկայանալ : Ո՛չ, ընդհակառակը ես իրմէ խոյս
կուտայի . գրեթէ բռնի տարին զիս անոր քով . ինձ
հրամայական հարցումներ ուղղեց :

— Բայց ի՞նչ էր այդ ստակալի իրողութիւնը, պա-
րոն, հարցուց իշխանուհին :

— Այդ իրողութիւնը ազագային քօղն է՝ զոր պատ-
ուհցի, տիկին, պատասխանեց կոմսը :

— Ազագային քօղը :

— Այո՛, տիկին, ձեզ սպառնալից երեցող ազագա-
յին՝ որմէ ձեր արքայական բարձրութիւնը փախչելով՝
խորանին ստորտող իր աղօթքովն ու արցունքովը անոր
գէմ մաքառելու կը ջանայ :

— Պարոն . . . :

— Յանցանքը ի՞մօ է, տիկին, երբ այդ ազագան՝
զոր դուք իրբեւ սուրբ նախազգացիք, իրբեւ մարգարէ
ինձ յայտնուեցաւ և երբ իմ միջոցաւ ալ տիկին ար-
քայադուտորին յայտնուեցաւ՝ զայն մարեցուց :

— Կը ըսէ՞ք, ըսաւ կարաինալը :

— Աւա՛ղ, պատասխանեց իշխանուհին :

— Այո՛, աւա՛ղ, վասն զի անոր թագաւորութիւնը

դատապարտուած է և միապետութեան ամենէն աղէտալի
ու ամենէն թշուառ թագաւորութիւնը պիտի ըլլայ, գո-
չեց կոմսը :

— Պարոն, բացազանչեց իշխանուհին :

— Իսկ գալով ձեզի, տիկին, լինեւ ձեր աղօթքը
ընդունուած է, շարայարեց կոմսը : Բայց դուք բան մը
չպիտի տեսնէք, որովհետեւ այդ գէպքերուն կատարուած
միջոցին դուք տիրովը բազուկներուն մէջ պիտի գըտ-
նուիք : Աղօթեցէ՛ք, տիկին, աղօթեցէ՛ք :

Իշխանուհին, ուղղակի իր հօգեկան ստակումներուն
համապատասխանող այս մարգարէական ձայնէն յաղ-
թուած, մօտը գանուող փոսկրեայ խաչելութեան մը
ոտքն ինկաւ ծնրադիր և իբօք սկսաւ ջերմեռանդութեամբ
աղօթել :

Այս միջոցին կոմսը կարաինալին առջեւէն անցնելով
պատուհանի մը որմածակին մէջ քաշուեցաւ և ըսաւ .

— Երկուքնիս մնացինք, պարոն կարաինալ, ի՞նչ
կ'ուզէիք ինէ :

Կարաինալը կոմսին մօտեցաւ :

Իշխանուհին խաչեալին ոտքին տակ ջերմեռանդու-
թեամբ կ'աղօթէր, Լօրէնցա, համբ ու անշարժ, աչքերը
խոշոր խոշոր բացած, սենեակին մէջտեղը ոտքի կանգ-
նած էր : Երկու մարդիկը պատուհանին որմածակին մէջ
կեցիւր էին, կոմսը փեղկին կաթնած էր, իսկ կարաինալը
կիտովին վարազոյրէն ծածկուած :

— Ի՞նչ կ'ուզէք ինէ, ըսէ՛ք, կրկնեց կոմսը :

— Կ'ուզեմ հասկնալ թէ ո՞վ էք :

— Ատիկայ գիտէք :

— Ե՞ս :

— Անշո՛ւշտ : Դուք չըսի՞ք որ կախարդ եմ :

— Լա՛ւ, բայց ասկէ ասաջ ժողէֆ Պալտամօ կը կոչուէիք, մինչդեռ հոս ար ֆէնիքս կոմս կը կոչեն ձեզ :

— Ի՞նչ կ'ելլայ ասկէ, աս միայն թէ անունս փոխեր եմ :

— Այո՛, բայց չէ՞ք գիտեր որ այդ սեսակ փոփոխութիւնները երբ ձեզի պէս մէկու մը կողմէ կատարուին՝ Պ. ար Սարթիւնի մեծ մասնագութիւն կը պատճառեն :

— Ո՛հ, պարոն, անս Ռօճանի մը համար փոքրիկ պատերազմ մը : Պիտի հարցնէք թէ ի՞նչպէս : Զեր սըրբազնութիւնը բառերը փաստ կը համարէ, պիտի պատասխանեմ : « Բաս և ձայն կայ, բայց մարմին չկայ », կ'ըսէ լատիներէն ասածը : Ա՛յո է իմ յանցանքս :

— Կարծեմ ծաղրել կը սկսիք :

— Քա՛ւ լիցի, ասիկայ իմ բնաւորութիւնս է :

— Հը՛մ, կարծեմ ձեր ձայնը քիչ մը ցածցնել հարկ պիտի ըլլայ :

— Պիտի խնդրէի որ այդ դիտաւորութենէն ետ չի կենաք :

— Վստահ եմ որ արքայադատեր հաճելի պիտի ըլլամ այդ բանը ընելով :

— Կարծեմ այս միջոցին այքայադատերը հաշտ չէ ձեզի հետ և միջոց մը կը փնտռէք անոր աչքը մտնելու համար, ըսաւ Պալտամօ անտարբերութեամբ :

— Եթէ ձեզ ձերբակալել տայի, ի՞նչ պիտի ըսէիք, պարոն կախարդ :

— Պիտի ըսէի թէ բնաւ իրեւունք չունիք :

— Իրա՛ւ, և ո՞վ երեսիս պիտի տայ այդ անիրաւութիւնը, ըսաւ սրբազանը արհամարհանքով :

— Դո՛ւք, պարոն կարտինալ :

— Երբոր երթամ այս մասին պէտք եղած հրամանը տամ, այն ատեն պիտի ստուգուի թէ իրապէս ո՞վ է աս ժողէֆ Պալտամօն կամ ար ֆէնիքս կոմսը :

— Պարոն, ինչո՞ւ համար ձեր բարեկամէն՝ Պ. ար Պրըթէօյլէն իմ մասին տեղեկութիւններ չստիք :

— Պ. ար Պրըթէօյլը իմ բարեկամս չէ :

— Այսինքն այժմ չէ, բայց ժամանակաւ ձեր լաւագոյն բարեկամներէն մին էր : Այս բանը անոր գրած ձեր մէկ նամակէն կը հասկցուի . . .

— Ի՞նչ նամակ, ըսաւ կարտինալը կոմսին մօտենալով :

— Աւելի՛ մօտ եկէք, պարոն կարտինալ, աւելի՛ մօտ եկէք . բարձրաձայն խօսիլ չեմ ուզեր որպէս զի վտանգի չեն թարեկուիք :

Կարտինալը աւելի մօտեցաւ :

— Ո՞ր նամակին վրայ է խօսքերն իդ :

— Ո՛հ, դուք լա՛ւ գիտէք թէ որ նամակին վրայ է :

— Հոգ չէ, ըսէք :

— Լա՛ւ ուրեմն, խօսքս վիէննայէն գրած և Բարիդ Պ. Պրըթէօյլի զրկած ձեր մէկ նամակին վրայ է, սրով արքայադատեր ամուսնութիւնը յետաձգել տալ կ'ուզէիք : Կրօնաւորը զգացած սոսկումը մատնող շարժում մը ըրաւ :

— Այդ նամակը . . . , կակաղեց :

— Գոց ըրած եմ :

— Ատիկայ Պ. ար Պրըթէօյլի մէկ դաւաճանութիւնն ըլլալու է :

— Ինչո՞ւ համար :

— Որովհետեւ ամուսնութիւնը որոշուելէն ետքը նա մակը ետ ուզեցի :

- Ըստ որ նամակը այրած է :
- Պատճառը այն է որ չէ համարձակած կորսնցուցած ըլլալը խոստովանելու :
- Կորսնցուցած . . . :
- Այո՛ . . . , հետեւաբար կը հասկնաք անչաւչա, կորսուած նամակ մը գտնելը անկարելի բան մը չէ :
- Ըսել է Պ. ար Պրըթէօյլի գրած նամակս . . .
- Ես գտայ : Եւ ան ալ գիպուածս, վէրսայլի մարմարեայ գաւիթէն անցած ատենս :
- Եւ Պ. ար Պրըթէօյլին չլիբրարարձուցի՞ք զայն :
- Կարելի՞ է որ այդպիսի բան մը ընէի :
- Ինչո՞ւ համար անկարելի ըլլայ :
- Անոր համար որ իբրև կախարչ գիտէի թէ ձեր սրբազնութիւնը, որուն այնչափ բարիք կը կամիմ ես, զիս մտնու չափ կ'ատէր Հետեւաբար դժուար չպիտի ըլլայ հասկնալը թէ որքան պիտի հրճուի այն անգէն անցորդը որ անտառէ մը անցած ատենը ծառի մը տակ ձգուած լեցուն հրացան մը կը գտնէ . . . , մանուանոց երբ գիտնայ թէ անտառին մէջ իր վրայ յարձակողներ պիտի գտնուին . . . :
- Կա՛ւ, ի՞նչ ըսել կ'ուզէք :
- Ըսել կ'ուզեմ թէ խենթ մը պիտի ըլլար այդ մարդը եթէ զայն չվերցնէր :
- Կարտինալին զլուխը դարձաւ : Վար չիյնալու համար պատուհանին չըջանակին կռթնեցաւ :
- Մինչդեռ կոմսը ուշի ուշով անոր գէմքին փոփոխութիւնները կը գիտէր : Կարտինալը պահ մը վարանելէ վերջ ըսաւ .
- Այնպէս թող ըլլայ : Բայց պէտք չէ ըսուի որ իմ սերունդէս իշխան մը պոռոտախօսի մը սպանուալիք-

ներուն առջև խոնարհած է : Կ'ուզէ այդ նամակը կորսուած ըլլայ, կ'ուզէ դուք գտած ըլլաք, մինչևե իսկ եթէ տիկին արքայադուստրին ալ ցոյց տրուի և կամ իբրև քաղաքական մարդ զիս կործանէ ան, ես իմ հաւատարիմ հպատակի և ուղղամիտ զեսպանի դերս պիտի պաշտպանեմ : Ի՞նչ որ ճշմարիտ է՝ պիտի ըսեմ, այսինքն իմ հայրենիքիս վնասակար կը դատէի այդ խնամութիւնը, և հայրենիքս, վստահ եմ որ կա՛մ զիս կը պաշտպանէ, կա՛մ վրաս կը ցաւի :

— Բայց եթէ մէկը հոն գտնուելով ըսէ թէ այդ գեսպանը, երիտասարդ, գեղեցիկ և իզատէր ըլլալով, մանուանոց իր Ռօճան անուանը և իշխանական ախողոսին ասպաւինելով, ո՛չ թէ աւսարիական խնամութիւնը իր հայրենիքին շահերուն վնասակար դատելուն համար գրած է այդ նամակը, այլ Մարի-Անթուանէթ իշխանուհիին կողմէ շնորհալի և արքայալայիկ կերպով ընդունուելուն համար, որուն մէջ, այդ մեծամիտ զեսպանը մարդասիրութենէ և մտերմութենէ աւելի բան մը տեսնելու յուսախար սնապարծութիւնն ունեցաւ : Այն ատեն ասոր ի՞նչ պիտի պատասխանէ այդ հաւատարիմ հպատակն ու ուղղամիտ զեսպանը :

— Պիտի ուրանայ, պարոն, որովհետև այդ մասին շօշափելի ո եւ է ապացոյց չկայ մէջտեղը :

— Ինչպէ՞ս չկայ, պարոն, կը սխալիք, տիկին արքայադուստր անոր հանդէպ ցոյց տուած ցուրտ վերաբերումը կայ :

Կարտինալը սարսռաց :

— Է՛հ, սիրելի իշխանս, հաւատացէք որ փոխանակ իրարու հետ աւրուելու, բան մը որ պիտի ըլլար եթէ ձենէ աւելի խոհեմ չըլլայի, իրարու մտերիմ բարեկամներ մնանք :

— Մտերիմ բարեկամ մի՛ :
 — Ինչո՞ւ չէ : Մտերիմ բարեկամութիւնը իրարու ծառայութիւններ մատուցանելով կ'ապացուցուի :
 — Ես ձեռնէ ու եւ է ծառայութիւն խնդրեցի՞ :
 — Յանցանքը ձերն է : Քանի որ երկու օրէ ի վեր Բարիզ կը գտնուէիք . . .

— Ե՞ս . . . :
 — Այո՛, դուք : Ո՛հ, պարոն, ինչո՞ւ ինչ պահել կ'ուզէք, զիտէք որ կախարդ եմ : Իշխանուհին Սուասոն թողուցիք, Վիլէր-Բօթըրէի և Տամարթէնի կողմէն Բարիզ եկաք, այսինքն ամենէն կարճ ճամբով : Բարիզի ձեր մտերիմներէն ծառայութիւն խնդրեցիք, որոնցմէ մերժուեցաք : Այդ մերժումներուն առջև յուսահատած սուրճանդակի կառքով Գօմբիէներ վերադարձաք :

Կարախնալը կը զգար թէ աակաւ առ սակաւ ինքզինքը կը կորսնցնէր :

— Եթէ ձեզի դիմէի՝ ի՞նչ ծառայութիւն կրնայիք մատուցանել ինձ :

— Ոսկի շինող մարդէ մը ի՞նչ ծառայութիւն որ կը սպասուի :

— Ձեր ոսկի շինելը ինձի՛ ինչ :

— Բա՛հ, երբ մարդ քատատունը ու թը ժամէն հինգ հարիւր հազար ֆրանք վճարելու անհրաժեշտ պէտքն ունենայ . . . : Հինգ հարիւր հազար ֆրանք չէ՞ : Ըսէ՛ք :

— Այո՛, այդպէս է :

— Է՛հ, սակաւին կը հարցնէք թէ ոսկի շինող բարեկամէ մը ի՞նչ կ'իլլէ : աա կ'իլլէ որ, այդ ոչ ոքի քով գտնուող հինգ հարիւր հազար ֆրանքը անոր քով կը գտնուի :

— Եւ ս՞՛՛ր, հարցուց կարախնալը :

— Մարէ թաղին մէջ, Սէն-Գլոս փողոցը :
 — Տունը ի՞նչպէս կրնամ ձանչնալ :
 — Անապապղինձէ կործազուլս դռնաճարէ մը :
 — Ե՞րբ կրնամ ներկայանալ հոն :
 — Վաղը չէ միւս օր, իրիկուան ժամը վեցին ատեն ներք, եթէ կը հաճիք, սրբազան հայր, և անկէ վերջ՝ ուզած ատեննիդ և ուզած ժամերնուդ : Բայց մեր խօսակցութիւնը ճիշդ ժամանակին կը լրանայ, անա իշխանուհին իր աղօթքը աւարտեց :

Կարախնալը յաղթուեք էր . ալիւս դէմ զնելու ճիղ չըբաւ և իշխանուհին մօտենալով ըսաւ .

— Տիկին, տախտած եմ խտատվանելու թէ Պ. աը Ֆէնիքս կոմսը կատարելապէս իրաւունք ունի, թէ ունեցած վկայագիրը ասկէ աւելի վաւերական չկրնար ըլլալ և թէ սուած բացատրութիւնները զիս կատարելապէս համոզեցին :

Կոմսը խոտարութիւն մը ըբաւ :

— Ի՞նչ կը հրամայէ ձեր արքայական բարձրութիւնը, ըսաւ կոմսը :

— Վերջին խօսք մը ունիմ այս գեոատի կնոջ : Կոմսը, ի նշան հաւանութեան, անգամ մըն ալ խոտարնեցաւ :

— Ձեր կամքովը կ'ուզէք մեկնիլ Սէն-Տընիի մեխտատանէն՝ ուր եկած էիք ինչ ապատանարան մը խնդրելու :

— Նորին բարձրութիւնը կը հարցնէ թէ ձեր կամքովը կը թողուք մեխտատանը, պատասխանեցէ՛ք, Լօրէ՛նցա, կրկնեց Պարսամօ աշխուժիս :

— Այո՛, իմ կամքովս, պատասխանեց գեոատի կինը :

— Ձեր ամուսնո՞յն, աը Ֆէնիքս կոմսին Տեաեւելու համար :

11-7825cc



— Ի՞նչ հետեւելու համար, կրկնեց կոմսը :

— Ո՛հ, այո՛, ըստ դեռատի կիւնը :

— Է՛հ ուրեմն, ձեր ազատ զգացումներուն վրայ բանութիւն բանեցուցած չըլլալու համար երկուքնուդ ալ արգելք ըլլալ չեմ ուզեր : Բայց, եթէ բոլոր ասոնց մէջ իրերու բնական օրէնքէն դուրս ելնող բան մը կայ, թող Աստուծոյ անէ՛ծքը իջնէ այն մարդուն զլխուն որ իր օգտին կամ շահերուն համար բնութեան ներդաշնակութիւնը կը խանդարէ : Գացէ՛ք, Պ. աը Ֆէնիքս կոմս : Գացէ՛ք, Լօրէնցա Ֆէլիչիանի : Ա՛լ արգելք չեմ ըլլար ձեզ . . . : Միայն թէ ազամանդներնիդ առնելու չմոռնաք :

— Ազատներուն թող մնան անոնք, ըստ աը Ֆէնիքս կոմսը : Ողորմութիւն մը ձեր ձեռքովը բաշխուելով աւելի հաճելի պիտի ըլլայ Աստուծոյ : Միայն ձիւրխս կը պահանջեմ :

— Վար իջած ատեննիդ ձեզ պիտի վերադարձուի, Գացէ՛ք :

Կոմսը իշխանուհիին առջեւ խոնարհեցաւ և թեւը Լօրէնցայի տուաւ : Գեռատի կիւնը անոր թեւը մտաւ և առանց բառ մը արտասանելու գուրս ելաւ :

— Ո՛հ, պարոն կարտինալ, մեր շնչած օդին մէջ անհասկնալի և աղէտալի բաներ մը կայ, ըստ իշխանուհին զլուխը ախուր կերպով երերցնելով :



ԾԲ

ՍԷՆ ՏՐՆԻԷՆ ՎԵՐԱԳԱՐՁ

Ժիլպէր, ինչպէս որ ըսինք, Փիլիպէն զատուելէ վերջ ըզգմութեան մէջ մտեր էր :

Բայց այս անգամ ոչ թէ յուսալից և զուարթ սրտով կը նետուէր բազմութեան մէջ, այլ այնպիսի վերաւորուած հոգիով մը՝ որուն ցաւը մինչեւ իսկ Փիլիպի լաւ ընդունելութիւնն ու զեղեցիկ խօսքերը չէին կրցած մեղմացնել :

Անորէ, անչա՛ւշա, մտքէն անգամ անցուցած չէր թէ Ժիլպէրի նկատմամբ անգլթօրէն վարուած էր : Գեղանի և պարզամիտ աղջիկը բնաւ չէր զիտեր թէ իր կաթնեղբօր և իր միջեւ թէ՛ տառապանքի, թէ՛ ուրախութեան մասին շօշափման կէտ մը կրնար գանուիլ : Ան, ստորին դասակարգին վրայէն կ'անցնէր՝ անոր վրայ իր ստուերը տարածելով՝ երբ ախուր էր, իր լոյսը ախելով՝ երբ ուրախ էր : Այս անգամ իր արհամարհանքին ստուերը Ժիլպէրը ստեղծուցեր էր : Բայց որովհետեւ միայն իր բնազդական մղումին հնազանդած էր, ի՛նքն ալ չէր զգացած իր արհամարհոտ կեցուածքը :

Բայց Ժիլպէր, անգէն ըմբիշի մը նման, անոր արհամարհոտ նայուածքը, հպարտ խօսքերը, ամէն բան սրտաբաց ընդունելու էր : Նոր վերաւորուող Ժիլպէրը, սակաւին ըստ բաւականին փիլիսոփայ չըլլալուն, յուսահատութեան մէջ փնտռած էր իր մխիթարութիւնը :

Ուստի, առանց ձիերու ոտքերուն և մարդոց հրմըշ-
տուքներուն կարեւորութիւնն տալու, բազմութեան մէջ
մտաւ : Իր բոլոր ոյժը ի մի հաւաքելով և կորսուելու
կամ ոտնակոխ ըլլալու վտանգին ենթարկուելով, վիրա-
ւոր վարազի մը պէս բազմութեան մէջ նետուեցաւ և
իրեն ճամբայ բացաւ :

Պատանին ժողովրդեան թանձր խաւերէն անցնելէն
ետքը, ազատ շունչ մը առաւ, և շուրջը նայելով՝ մար-
գագիտինը, առանձնութիւնն ու ջուրը տեսաւ :

Ուր երթալը առանց զխոնալու մինչև Սէն գետը
վազեր էր և զրեթէ Սէն-Տընի կղզիին գէմը կը գտնուէր :
Ո՛չ թէ մարմնական աշխատութենէ, այլ մաստանջու-
թենէ յոգնած, մարգագետնին վրայ փուռեցաւ և զլուխը
ձեռքերուն մէջ առնելով յիմարի մը նման մոնչել
սկսաւ, կարծես թէ առիւծին լեզուն մարդկային ազա-
զակներէ և բռուրէ աւելի լաւ պիտի կրնար արտայայ-
տել իր տառապանքն ու ցաւերը :

Արբարեւ, բոլոր այն տարտամ և անորոշ յոյսը, որ
մինչև այն ատեն քանի մը զոգուելի նշոյլներ արձակեր
էր իր խօլ բազմանքներուն վրայ՝ որոնց իրենն ըլլալն
խակ տակաւին չէր համարձակեր ինքզինքին խոստովա-
նելու, միթէ ակնթարթի մը մէկ չէ՞ր մտեր : Հանձա-
րի, զխտութեան կամ ուտմունքին պարգեւած զօրու-
թեամբը, ընկերային սանդուխին ո՞ր ատտիճանին ալ
բարձրանար ժիլպէր, Անարէի համար մի՛շտ միլեւնոյն
ժիլպէրը պիտի մնար, այսինքն իր մը կամ մարդ մը՝
որուն պէտք չէր որ իր հայրը նայէր և որուն վրայ
աչք դարձնելն անգամ չէր արժեր :

Ժիլպէր, իր մասին նպատաւոր կամ աննպատաւ,
լաւ կամ գէշ խորհելով, պահ մը կարծեր էր թէ Անարէ

զինքը Բարիդի մէջ տեսնելով, իր աննշանութեանը գէմ
մաքառելու համար ըրած որոշումը պիտի ճանչնար և
այդ ջանքին պիտի հաւնէր : Բայց սնա այսպէսով, վե-
հանձն աղան ոչ միայն վերակինդանացման խթանէն կը
զրկուէր, այլև յոգնութեան և վսեմ որոշման փոխարէն
ոչինչ կը շածէր, բացի այն արձամարձոտ անտարբերու-
թենէն՝ զոր Անարէ միշտ սնուցած էր թալէրնէյարնակ
ժիլպէրին համար :

Ասկէ զատ, միթէ մազ չէ՞ր մնացեր որ յանդիմանու-
թեան ու կշտամբանքի ենթարկուէր իր աչքերը անոր
երգարանին մէջ պարտած ըլլալու յանդուութիւնը զօր-
ծած ըլլալնուն համար :

Տկար սրտերու համար, պատրանք մը կամ սխալ
հաշիւ մը զօրաւոր հարուած մըն է, որուն ներքեւ սէրը
կը խոնարհի աւելի զօրաւոր և յարատեւօրէն վերականդ-
նելու համար : Այսպիսի սրտերը հառաչանքով և արցուն-
քով կը յայտնեն իրենց վշտերը, անոնք ոչխարին կրա-
ւորական հեզութիւնն ունին մահացու դանակին տակ :
Ասկէ զատ, այն ցաւերը՝ որոնք պէտք էին սէրը մարելի՝
չատ աւելի կ'աճեցնեն զայն . ստոնք միտքերնուն կ'ը-
սեն թէ իրենց քաղցրութիւնը պիտի վարձատրուի . այս
վարձատրութիւնը իրենց նպատակն է, ուր կը դիմեն՝
ճամբան գէշ ըլլայ թէ աղէկ . միայն թէ, եթէ ճամբան
գէշ ըլլայ՝ աւելի ուշ կը հասնին, ըլլալիքն այս է, բայց
վերջապէս կը հասնին :

Սակայն զօրաւոր սրտերը, կամ ապաշա բնութիւններն
ու հուժկու կազմուածքները այդպէս չեն : Այսպիսի
սրտերը իրենց արիւնին հոսիլը տեսնելով կը զայրանան
և իրենց խտութիւնը այն ատտիճան վայրենութիւն կը
ստանայ որ, մարդ կը կարծէ թէ այդ վայրկեանէն

սխեալ աւելի ասեցութիւն կը յորդի մարմնոյն կեզրո-
նէն՝ քան թէ սէր : Պէտք չէ զանոնք մեղադրել : Անոնց
մէջ սէրն ու ասեցութիւնը այնքան իրարու մօտ կը
քալեն որ՝ մէկէն միւսին անցած ասեցոյնին ըսն մը չեն
զգար :

Հետեւաբար, երբ վշտակիրն ժիւլկէր ցաւէն յազ-
թուած մարգագետնին վրայ տառապալին կը տապալկէր՝
Անարէն ասելը կամ սիրելը կրնա՞ր գիտնալ : Ո՛չ, վիշտ
ունէր, կը տառապէր, ա՛նա ա՛յոչտի : Միայն թէ, որով-
հետեւ չէր կրնար երկար ասեն համբերել, հաստատ որո-
շում մը տալու գիտաւորութեամբ վիշտը մէկգի թողուցր

— Անորէն զիս չսիրեր, ասիկայ ըսցարձակ իրակա-
նութիւնն է, ըսաւ իւրովի, սակայն ես ալ կարեւր չէր,
պէտք չէր յուսայի որ զիս սիրէ : Շատ շատ իրմէ տա
միայն պահանջելու իրաւունք ունէի, այսինքն այն
քաղցր համակրութիւնը զոր մարդ կը մուտցանէ թշուառ
ուրթեան դէմ մարանջելու զօրաւոր կամքն ունեցող
թշուառներուն հանդէպ : Անորէն եղբօրը ըսածը չպիտի
կրնար հասկնալ : Փիլիպ ինձ ըստ՝ « Ո՞վ գիտէ, թիւրիւս
օր մը Գօլպէր մը կամ Վօպան մը կ'ըլլատ » : Եթէ եր-
կուքն ալ ըլլայի՝ ան իրաւունքս պիտի ճանչնար և
տաքցած փառքիս փոխարէն քոյրը ինձի պիտի տար,
բան մը զոր պիտի ընէր նաեւ եթէ պապենական ազ-
ազնուականութիւնն ունենայի, անոր հաւատար ծնած
ըլլայի : Բայց Անորէի համար, ո՛չ, այո՛, համոզուած
եմ թէ, Գօլպէր թէ Վօպան, ժիւլկէրը միշտ ժիւլկէր
պիտի մնար, որովհետեւ ո՛չ մէկ բան կրնայ ջնջել,
ո՛չ մէկ բան կրնայ ոսկեզօծել, ո՛չ մէկ բան կրնայ
ձածկել այն՝ ինչ որ իմ մէջս արձամարեւելի է անոր
համար . . . , այսինքն իմ ատորին ծնունդս . . . :

Այնպէս որ, եթէ իրեն հաւատար ծնած ըլլայի, կարծես
թէ աւելի մեծնալու և բարձրանալու պէտք չպիտի ու-
նենայի իրեն համեմու համար : Ո՛հ, կանա՛յք . . . :
կի՛ն . . . , այսինքն կատարելութեան թշնամի :

« Յանձնեցէ՛ք ինքզինքնիդ տա գրաւիչ նայուածքին,
լայն ճակտին, հանճարեղ ժպտին, արքայական կերպա-
բանքին . օրիորդ թափէրնէյն է ան, այսինքն կին մը
որ իր զեղեցիութեամբը աշխարհը կառաւարկու բրձանի
կ'ըլլայ . . . : կը սխալիք . . . : Բարձրութիւն և բարձրա-
զլուխ, տղնուպակտական նախապաշարութեանով խան-
ձարուրուած կի՛ն մըն է ան : Բոլոր տա ուզեղնին պա-
րազ ճանձազամխտ երիտասարդները, որոնք ամէն բան
ուսանելու միջոցն ու գիւրութիւնը ունեցեր ըսց բա՛ն
մըն ալ չեն կրցիր սորվիլ, անոր հաւատարներն են :
Անոնք այնպիսի իրեր կամ անձեր են՝ որոնց պէտք է
ուշադրութիւն գարձնէ . . . ո՞վ . . . : ժիւլկէր չո՛ւն մըն
է, չունէ՛ մըն ալ ցած է . . . : կարծեմ թէ Մանօնին
վրայ տեղեկութիւն ուզեց, ըսց ժիւլկէրի մասին ընտ-
տեղեկութիւն չպիտի ուզէր :

« Ո՛հ, ուրեմն չե՛ն գիտեր թէ ես ալ իրենց չափ պօ-
րաւոր եմ, թէ երբ ե՛ս ալ իրենց նման զգեստներ հագ-
նիմ՝ իրենց չափ զեղեցիկ կ'ըլլամ, թէ ես իրենցմէ ա-
ւելի անողորք կամք մը ունիմ և եթէ ուզե՛մ . . . »

Ստակալի ժպտա մը նկարուեցաւ ժիւլկէրի չրթանցը
վրայ և պատանին խօսքը չաւարտած լռեց :

Ապա, յամբօրէն և յօնքերը պառտկով, գլուխը կուրծ-
քին վրայ կախեց :

Ի՞նչ կ'անցնէր այդ պահուն այս միթին հոգւոյն մէ-
ջէն . որպիսի՞ տակալի գաղափարի մը ասկ խոնարհեցաւ
անոր հակումներէ զեղնած ճակատը՝ որուն վրայ մտած-

մունքն ու վիշտը իրենց սուր ճիրաններով կնճիռներ
ու փոսեր փորած էին : Ո՞վ պիտի ըսէ :

Նաւալա՞րը, որ իր նաւակովը գետէն վար կ'իջնէր
ցած ձայնով երգելով : Լուսցարարունի՞ն, որ թափորը
տեսնելէն հաքը Սէն-Տընիէն կը վերագառնար և ժիւլպե-
րի քովէն չանցնելու համար ճամբէն կը շեղէր : Թերեւս
գող-կարծեր էր այն պատանին՝ որ ճերմակիզէններ
փռուած ձողերուն մէջտեղը մարգագետինին վրայ տա-
րածուեր էր :

Կէս ժամու չափ խորունկ կերպով մտածելէ հաքը՝
ժիւլպէր պողարիւնու թևամբ սաքի ելաւ : Որոշումը
սուած էր : Սէն գետը իջաւ, սաստ ջուր խմեց, շուրջը
նայեցաւ և իր աջ կողմը Սէն-Տընիէն վերագարծող բաղ-
մու թիւնը տեսաւ :

Բազմութեան մէջէն կառքերը կը սկսէին տեսնուիլ,
որոնք, յամբաքայլ, Սէնի-Ուան փողոցին ուղղութեա-
նը կը յատաջանային :

Ժիւլպէր անմիջապէս Անտրէի կառքը ճանչցաւ, Փի-
լիպ կառքին քովէն սրարչաւ կը ճախրէր :

— Պէտք է որ ուր երթալը գիտնամ, ըսաւ պատա-
նին իւրովի, և ուր երթալը գիտնալու համար պէտք է
որ անոր հետեւիմ :

Ժիւլպէր հետեւեցաւ :

Տիկին իշխանուհին Միւլէթ պիտի երթար քանի մը
հոգիի հետ իջնիւնու համար, այսինքն թագաւորին,
գահաժառանգին և Պ. ա' Արթուր կոմսին հետ : Լուի Ժե-
արքունական սովորութիւնները այն աստիճան մոռցեր
էր որ՝ Սէն-Տընի եղած ատենին արքայազուտորը ճաշի
հրաւիրեր և կոչնականներուն ցուցակը անոր ներկայա-
ցուցեր էր մատուցելով մը՝ որպէս զի Մարի-Անթուանէթ,

Գալլիոյ սպազայ թագուհին չուզած կոչնականներուն
անունը աւրէ :

Իշխանուհին, վերջին տողին մէջ տիկին Տիւպարիի
անունը կարդալով, իր շրթունքներուն տեղունիլն ու
գողալը զգացեր էր : Բայց իր կայսրուհի մօր պատուէր-
ները յիշելով, բոլոր ոյժը հաւաքեր և շնորհալի ժպի-
տով մը ցուցակն ու մատիտը ետ առեր էր՝ ըսելով թէ
չառ երջանիկ կը զգար ինքզինքը այսչափ շուտ ընտա-
նիքին մէջ ընտանեցած տեսնելով :

Ժիւլպէս այս պարագան չէր գիտեր և միայն Միւլէթի
մէջ տեսաւ տիկին Տիւպարիի կառքերն ու սպասաւորնե-
րը, ինչպէս նաեւ Զամօրը՝ իր մեծ ճերմակ ձիով :

Բարեբաղդաբար միջնեք էր : Ժիւլպէր թաւափ մը
մէջ նստուեցաւ, փորին վրայ պառկեցաւ և սպասեց :

Թագաւորը իր հարսը տարփուհիին հետ ընթրել
ցուաւ և շառ ուրախ երեւցաւ մանաւանդ տեսնելով որ
տիկին իշխանուհին Գամբիէնի մէջ ըրած ընդունելու-
թենէն աւելի լաւ ընդունելութիւն մը կ'ընէր տիկին
Տիւպարիի :

Բայց գահաժառանգը, տխուր և մտատանջութեան
մասնուած, սեղան չնստած՝ զլիտու սաստիկ ցաւ մը
պատճառ բռնելով՝ իր սենեակը քաշուեցաւ :

Ընթրիքը զիչերուան ժամը մինչև տասնըմէկը տե-
ւեց :

Իշխանուհիին հետեւորդները, թագաւորին նուագա-
խումբին մեղեդիներովը, տաղաւորներուն մէջ ընթրե-
ցին, և խորտա Անտրէն տարպուած էր հպարտութեամբ
խոստովանիլ թէ ի՞նքն ալ անտեց մէջ կը գտնուէր :
Ասկէ զատ, և որովհետեւ տաղաւորները նեղ կուգային,
յիսուն հոգի ստիպուեցան մարգագետիններուն վրայ

փառամ սեղաններու վրայ ճաշել, որոնց կը աշտատրկէին սակեճամուկ միազգեստներով յիսունի չափ սպասաւորներ :

Ժիլլէր ստանց տեղէն շարժելու անցուդարձէն բան մը չկորսնցուց : Գրպանէն հացի կտոր մը հանեց՝ զոր Գլիլլա-կարէն գնդը էր՝ և անոնց հետ ընթրեց, միևնոյն ատեն մեկնողները աչքէն չհրախցնելով :

Տիկին արքայազուտորը ընթրիքէն վերջ պատշգամին վրայ երեւցաւ . հիւրերէն հրաման ատել էր :

Թագաւորը անոր քովը կեցեր էր . տիկին Տիւպարի, իր թշնամիներուն խոյ հիացում պատճառելու չափ գեղեցիկ և ճաշակաւոր, սենեակին խորը անտեսանելի մնաց :

Ամէնքն ալ պատշգամին տակէն անցան ողջունելու համար թագաւորը և արքայազուտորը՝ որ իրեն հետեւողներուն մեծ մասը կը ճանչնար, խոյ չճանչցածին ահա նուէն ալ թագաւորը կուտար : Մերթ ընդ մերթ հնորհալի բառ մը կամ պարագային յարմար խօսք մը կը թռէր անոր շրթներէն և մեծ ուրախութիւն կը պատճառէր որ ուղղուած էր :

Ժիլլէր, հետեւէն բոլոր այդ քծինքն ու կտարտաքը կը տեսներ և ինքնիրեն կ'ըսէր .

— Ես տա բոլոր մարդոցմէն ալ մեծ եմ, որովհետեւ, եթէ աշխարհի բոլոր տիկին ալ ինձ արուէր, դարձեալ անոնց ըրածը չէի ընել :

Կարգը Պ. ալ թափէրնէյի և իր սրբուցը եկաւ : Ժիլլէր մէկ ծունկին վրայ կանգնեցաւ :

— Պարոն Փիլիպ, մեկնելու հրաման կուտամ ձեզի, սրպէս զի ձեր պարոն հայրն ու օրիորդ քայրը Բարիզ առաջնորդէք, ըստ տիկին արքայազուտորը :

Գլիլլային լուծիւնը և ունկնդիրներուն յամբ զգուշաւորութիւնը պատճառ եղաւ որ այս խօսքը ժիլլէրի տկանջն իյնայ :

Տիկին արքայազուտորը աւելցուց .

— Պ. ալ թափէրնէյ, տակաւին ձեզի բնակարան մը չեմ կրնար յատկացնել, ուստի օրիորդին հետ Բարիզ գացէք մինչև որ ես վերադառնի մէջ տեղաւորուիմ : Օրիորդ, քիչ մը խմ վրաս մտածեցէք :

Սեպուհը իր ազուն և աղջկանը հետ մեկնեցաւ :

Ժիլլէր թաւուսէն դուրս նստուեցաւ և սեպուհին հետեւեցաւ, իրենց տէրերուն կտուէն վազող երկու հարիւր զբանիկներուն, զբանիկներուն պատասխանող յիսուն կառավարներուն և ապարկին վրայ թաւալող կառքերուն խառն ի խառն ու սրտալիբ ժխորին մէջէն :

Եւ որովհետեւ արքունիքէն կառք մը պակսեր և Պ. ալ թափէրնէյի անյայտ աչքը կառք մը գտեր էր, զայն իր կառավարնովը իրեն սպասցնելու ազնուականաց յատուկ մնասարժութիւնն ունեցիւր էր սեպուհը : Երեքը մէկ կառք նստան և գոնակը գոցուեցաւ :

— Բարեկամ, կառավարին քովը ելիր, ըստ Փիլիպ գոնակը գոցող զբանիկին :

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, հարցուց սեպուհը :

— Որովհետեւ խեղճ ազան ատուրնէ ի վեր տաքի վրայ է և անշուշտ յողնած, ըստ Փիլիպ :

Սեպուհը քիթին տակէն քանի մը բառ մուտաց, բայց ժիլլէր բան մը չհրակցաւ :

Գրանիկը կառավարին քովը եկաւ :

Ժիլլէր կառքին մօտեցաւ :

Կառքը ճամբայ ելնելու ատենը տեսան, որ փակերէն մին քակուեր էր :

կատարանը վար իջաւ և կառքը պահ մըն ալ եղած տեղը մնաց :

— Ուշ մնացինք, ըսաւ սեպուհը :

— Սոսկալի կերպով յոգնած եմ, դոնէ պատկերու տեղ մը պիտի գտնե՞նք, յարեց Անտրէ :

— Կը յուսամ, պատասխանեց Փիլիպ : Էա Պրին և Նիգօլը Սուտասնէն Բարիզ դրկեցի : Բարեկամներէս միոյն ուղղուած նամակ մը յանձնեցի անոնց, որուն մէջ կը պատուիրէի բարեկամիս թէ անցեալ տարի իր մօրը և քրոջը բնակած փոքրիկ տունը բոնէ մեզ համար : Զարգարուն բնակարան մը չէ բայց կրնանք հոն հանգիստ ըլլալ : Մարդու չենք երեւիր և կը սպասենք որ ուրիշները գան մեզ գտնեն :

— Ի՛նչ որ ալ ըլլայ թափէրնէյէն գէշ ըլլալու չէ, ըսաւ սեպուհը :

— Դժբաղդարար այո՛, հայր իմ, պատասխանեց Փիլիպ մեղամաղձոտ ժպտով մը :

— Գոնէ ծառեր պիտի տեսնե՞մ, հարցուց Անտրէ :

— Այո՛, և շատ գեղեցիկ ծառեր : Միայն թէ, շատ հաւանական է որ երկար տունն չվայելենք զանոնք, որովհետեւ Երկիրն իշխանութիւն ամուսնութիւնը տեղի ունենալուն պէս պիտի ներկայացուինք :

— Օ՛ն, գեղեցիկ երազ մըն է տեսածնիս, աչքերնիս ամուր գոցենք որ անմիջապէս չարթնանաք : Փիլիպ, հասցէն տուի՞ր կատարանին :

Փիլիպէր անձկութեամբ մտիկ կ'ընէր :

— Այո՛, հայր իմ, ըսաւ Փիլիպ :

Փիլիպէր որ ամէն բան լսած էր՝ կը յուսար որ հասցէն ալ պիտի կրնար լսել : Բայց Փիլիպի լսկոնական պատասխանը լսելով յուսախար եղաւ :

— Վնաս չունի, իրեն պիտի հետեւիմ, ըսաւ Փիլիպէր : Հազիւ փարոսիս մը հետեւ ենք Բարիզէն :

Փոկը կապուեր էր : Կատարանը իր տեղը ելաւ և կառքը ճամբայ ելաւ :

Բայց թագաւորին ձիերը արագ կ'երթան՝ երբ կատարանը կամաց քաշելու չտիպէ զանոնք :

Փիլիպէր ճիգ մը ընելով հետեւի քայլարկին հասաւ՝ զոր գրանիկը պարագայ թողուցեր էր : Պատանին յոգնած ըլլալով անոր պլուսեցաւ, վրան ցամակեց և նստաւ :

Բայց իսկոյն միտքը եկաւ որ Անտրէի կառքին և տեւը, այսինքն դրանիկի մը տեղը նստեր էր :

— Ո՛չ, մոմաց անողք պատանին, պէտք չէ ըսուի որ մինչև վերջին վայրկեանը չմաքտեցայ : սըրունքներս յոգնած են, բայց բազուկներս զօրաւոր :

Եւ երկու ձեռքովը քայլարկը բռնելով, որուն վրայ գրեր էր կօշիկներուն ծայրը, նստարանին ասկէն կախուած՝ սկսաւ կառքին կողմէ քաշուելով տարուել, և հաւկատակ կառքին երեքուքներուն ու ցնցումներուն, իր կորովի բազուկներուն շնորհիւր այդ անտանակի դիրքին մէջ մնաց և չուզեց իր խզճին հետ իրաւախօսութեան գալ :

— Հասցէն պիտի տրվիմ, մ'ընծեց : Գէշ գիշեր մըն ալ պիտի անցընեմ, բայց վաղը խաղանիչ ընդօրինակելով Երկիրն վրայ կը հանդէսիմ : Ասկէ գտտ, դրամ ալ ունիմ տակաւին և եթէ ուզեմ՝ երկու ժամ ալ կրնամ քնանալ :

Յետոյ խորհեցաւ որ Բարիզ մեծ էր և թէ ինք փոքրօքները չճանչնալուն համար կրնար կորսուել, երբ սեպուհը իր որդւոցը հետ իրենց նոր լսնած տունէն ներս մտնէին :

Բարեբաղդարար կէս գիշերը մօտ էր և առտուան ժամը չորսին ալ կը լուսնար :

Ժիլպէր այս խորհրդածութիւնները ըրած միջոցին տեսաւ որ մեծ հրապարակէ մը կ'անցնէին որուն մէջ տեղը հեծեալ արծան մը կար :

— Տես, կարծես թէ Յաղթութեան հրապարակն է, ըսաւ ուրախութեամբ և միանգամայն զարմանքով :

Կառքը դարձաւ : Անորէ գլուխը դռնակէն դուրս հանեց :

— Հանգուցեալ թագաւորին արծանն է : Հիմայ ո՛ւր որ է կը հասնինք, ըսաւ Փիլիպ :

Բաւական ցից դառիվայրէ մը իջան : Մազ մնաց որ ժիլպէր անխնհրուն տակ պիտի գլորէր :

— Ահա եկանք, ըսաւ Փիլիպ :

Ժիլպէր սաքը գետինը դրաւ, փողոցին միւս կողմը վազեց և հոն գանուող ուղեցոյց տախտակի մը ետին պահուըտեցաւ :

Առաջ Փիլիպ կառքէն դուրս ցատկեց, զրան զանգալ կը զարկաւ և վերադառնալով Անարէն բազուկներուն մէջ առաւ :

Սեպուհը ամենէն վերջը իջաւ :

Այս միջոցին Լա Պրիի և Նիքօլի ձայնը լսուեցաւ և դուռ մը բացուեցաւ :

Երեք ձամբորդները միմիմ գաւիթ մը մտան : Գաւիթին դուռը անոնց վրայէն գոցուեցաւ :

Կառքն ու գրանիկները մեկնեցան թագաւորին ախտոնները վերադառնալու համար :

Այս տունը, որուն մէջ կ'անյայտանային երեք ձամբորդները, վրան ու եւ է աչքի զարնելիք նշան չունէր, բայց կառքին մեկնած միջոցին քովի տունը լուսաւոր-

ուելով՝ ժիլպէր հետեւեալ բառերը կարդաց նշանատախտակի մը վրայ .

Աւմրեցնիլի Պանդոկը :

Հիմայ կը մնար փողոցին անունը սորվիլ :

Փողոցին ամենէն մօտ անկիւնը վազեց, դէպի հոն՝ ուրկէ կառքը հեռացեր էր : Զարմանքը մեծ եղաւ հոն հասած ատենը, որովհետեւ այն աղբիւրին դէմը գտնուեցաւ ուրկէ ամէն օր ջուր խմելու սովորութիւնն ունէր :

Գացած ձամբէն զուգահեռարար ստաք քայլ ետ դարձաւ և իրեն հաց ծախող հացազործին կրպակին դէմն երաւ :

Տակաւին կը կատկածէր : Փողոցին անկիւնը դարձաւ : Հեռաւոր կանթեղի մը բեկբեկուն նշոյլովը ճերմակ քարի մը վրայ կրցաւ կարգաւ այն երկու բառերը՝ զոր երեք օր առաջ Ռուսի հետ Մէտաթօնի անասաէն տունկեր հաւաքելէ վերջ վերադարձած ատենը կարդացած էր .

Բլաւսրիեք փուլոց :

Ըսել է Անարէ իրմէ հարիւր քայլ անդին կը բնակէր, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ էր թափէրնէյի դղեակին մէջ :

Դէպի իր բնակարանը ուղղուեցաւ յուսալով որ ներս քաշուած չէր այն երջանկաբաշխ պարանը՝ որով ժանժաք Ռուսի բնակարանին դուռը կը բացուէր :

Ժիլպէր բազաւոր էր : Պարանին մէկ քանի թեկերը ծակէն դուրս մնացեր էին, այդ թեկերուն շնորհիւ պարանը ամբողջութեամբ դուրս քաշեց . դուռը բացուեցաւ :

Պատանին խարխախելով սանդուխը դտաւ, առանց ձայն հանելու, աստիճան առ աստիճան վեր երաւ և վերջապէս մասնորոշովը գրան փականքին դպաւ՝ որուն բանալին կամարարութեամբ վրան թողուցեր էր Ռուսո :

Միտքը, յօդուեթենէն յաղթուած, չկրցաւ գործել և ժիւղէր քնացաւ՝ անհամբեր յաջորդ օրուան սպասելով :



ԾԳ

ՓՈՔՐԻԿ ՏՈՒՆԸ

Ժիւղէր ուշ տուն եկած, անմիջապէս պատկած և խոր քունով մը քնացած ըլլալով՝ մոռցած էր պատուհանը գոցելու այն լաթի կտորով՝ որուն շնորհիւ ատտուան արեւին ճառագայթներուն մուտքը կ'արդիւէր :

Ատտուան ժամը հինգին արեւը անոր աչքին զարնելով՝ արթնցուց զայն . ժիւղէր վեր ցատկեց : Կարծելով որ ուշ էր արթնցեր՝ սիրտը թունդ ելաւ :

Ժիւղէր, իբրև դաշտաբնակ, արեւին զիրքէն, անոր ճառագայթներուն աւելի կամ նուազ տաքութենէն ժամը ամենայն ճշդութեամբ կը հասկնար : Ուստի իր բնական ժամացոյցին վազեց :

Իեզին ճառագայթները, որոնք հազիւ թէ մեծ ծառերուն գագաթը կը լուսաւորէին, տպածուցուցին զինքը թէ փոխանակ շատ ուշ արթնցած ըլլալու՝ շատ կանուխ ելեր էր :

Ժիւղէր պատուհանին կտորած սպակին իբրև հայելի գործածելով տանարուեցաւ, մինչդեռ ձեռքը կը գործէր՝ միտքն ալ առջի օրուան զէպքերուն վրայ կը մտածէր :

Իր հրաբորբը և ծանրացած ճակատը հրճուանքով առտուան զով զեփիւռին յանձնեց . ապա միտքն ինկաւ որ Անտրէ մօտակայ փողոցներէն միոյն մէջ, Արմընտալիլ անունով պանդոկին քովի տունը կը բնակէր :

Առջեւը գտնուող հակայ ծառերը տեսնելով գեռատի աղջկան առջի օրուան խօսքը յիշեց :

« Ծառեր կա՞ն », հարցուցեր էր Անտրէ եղբօրը :

— Ո՛հ, ինչո՞ւ սա պարտէզին մէջի անբնակ անակը բնորած չեն, կ'ըսէր ժիւղէր իւրովի :

Պատահին այս խորհրդածութեան մէջ թաղուած՝ սկսաւ փոքրիկ տունով զբաղիլ :

Բնագրական անսովոր ձայն մը և տարօրինակ մղում մը հոն կը հրաւիրէին իր նայուածքը : Այս միջոցին այդ փոքրիկ տան պատուհաններէն մին, որ երկար աւանդ է ի վեր գոց մնալու գառապարտուած էր, անվարժ կամ տկար ձեռքի մը ներքեւ կը ցնցուէր, չըջանակը վերի կողմէն կը բացուէր, բայց վարի եզերքը խոնաւութենէն ուռած ըլլալով՝ յամառ ընդդիմութիւն մը ցոյց կուտար :

Վերջապէս աւելի ուժգին ցնցում մը կազնին ճռնչել տուաւ և պատուհանին թևերը ուժգնօրէն բացուելով՝ գեռատի աղջիկ մը երեւցաւ, որ ըրած ճիւղերէն կարմրած փոշոտ ձեռքերը կը թոթվէր :

Ժիւղէր զարմացման ճիչ մը արձակեց և ետ նետուեցաւ : Առաւօտեան մաքուր ու զով օդին մէջ թևերը տարածելով մարմինը ջղաձգօրէն պրկող գեռատի աղջիկը օրիորդ Նիգօլն էր :

Կասկածելու բան չկար : Առջի օրը Փիլիպ իր հօրն ու քրոջը ըսեր էր որ Լա Պրի և Նիգօլ բնակարան մը կը պատրաստէին : Ուրեմն այս փոքրիկ տունն էր այդ ժօզ. Պալս., քիւ 24—52, հաս.Դ., Բ.հր.Ն.Բ.

պատրաստուած բնակարանը : Գօգ-Հէրօն փողոցի տունը՝ ուր ճամբորդները անյայտացեր էին՝ Բլաթրիէր փողոցին հասելին կցուած պարտէզ մը ունէր ուրեմն :

Ժիլպէր այնպիսի աչքի զարնող կերպով մը ետ նետուեր էր որ, եթէ Նիգօլ զբաղած չըլլար այն ծոյլ պըրկումով՝ որ արթնցած պահուն երջանկութեան պատրանք մը կուգայ մարդուս, մեր փիլիսոփան պիտի նշմարէր պատուհանին մէջ :

Բայց ժիլպէր արագօրէն ետ քաշուեր էր, որովհետեւ չէր ուզեր որ Նիգօլ տանիքի մը պատուհանին մէջ տեսնէ զինքը : Եթէ ստաջին յարկի մը վրայ բնակէր և եթէ նստած տեղէն թանկազին գորգեր և շքեղ կարասիներ տեսնուէին, թերեւս ժիլպէր տեսնուելու չվարանէր. բայց հինգերորդ յարկի մը վերնաշարկին մէջ գտնուելուն համար ստորին մարդոցմէ աւելի վար գտնուելինքզինքը, չտեսնուելու համար ձեռքէն եկածը ըրած : Ասկէ զատ, այս աշխարհին մէջ խիստ օգտակար բան է առանց տեսնուելու տեսնելը :

Սա ալ կայ որ, եթէ Անտրէ գիտնար թէ ժիլպէր իր զխմացի տունը կը բնակէր, կա՛մ տունէն կ'ելնէր, կա՛մ ընտ պարտէզ չէր ելնէր :

Աւա՛ղ, ժիլպէր իր հպարտութեամբը ինքզինքը բանի մը տեղ կը դնէր : Անտրէի ի՛նչ փոյթն էր ժիլպէրը, ինչո՞ւ Անտրէ ոտքը պիտի շարժէր անոր մօտենալու կամ անկէ հեռանալու համար : Միթէ Անտրէ այն տեսակ կիրներէն չէ՞ր որոնք սպասաւորի մը կամ գիւղացիի մը ներկայութեան կիսամերկ բազնիքէն կ'ելնեն, անոր համար որ սպասաւոր մը կամ գիւղացի մը մարդ չեն համարուիր անոնց համար :

Բայց Նիգօլ այդ տեսակ կիրներէն չէր, հետեւաբար անորմէ խոյս տալ պէտք էր :

Անա ա՛յս էր ժիլպէրի յախուռն կերպով ետ քաշուելուն բուն պատճառը :

Սակայն ժիլպէր պատուհանին անկիւնէն կը դիտէր Նիգօլի պատուհանին ճիշդ տակը, գետնաշարկին վրայ երկրորդ պատուհան մըն ալ կը բացուէր և սպիտակ բան մը կ'երեւէր հոնկէ : Անտրէն էր ան, որ զիշերազգեստ մը հագած՝ շրուականները կը վնասէր, որոնցմէ մին իր փոքրիկ ոտքէն ելնելով գացեր աթոռին տակ պահոււրներ էր :

Ժիլպէր, փոխանակ իր սիրոյն հպատակելու, ի զուր կը ջանար իր ատելութեամբը պատնէշ մը կանգնել : Ամէն անգամ որ Անտրէն կը տեսնէր՝ միեւնոյն արգիւնքը յառաջ կուգար միեւնոյն պատճառաւ . սիրտը այնպէս մը կը արտփէր որ՝ կարծես թէ պիտի պայթէր և արիւնը մարմնոյն ամէն կողմը կ'եռար . չիյնալու համար պատին կռթնիլ ստիպուեցաւ :

Պատանիին չնչերակները տակաւ առ տակաւ հանգարտեցան, ասով մտածելու կարողութիւնը վերստացաւ : Ինչպէս որ քիչ մը առաջ ըսինք, պէտք էր տեսնել առանց տեսնուելու : Թէրէզի հին շրջագրատներէն մին առաւ, գնդասեղով մը զայն պատուհանին լայնութեանը կազուած պարանէ մը կախեց և այս յանպատրաստից շինուած վարագոյրին հասէն կարող եղաւ Անտրէն տեսնել՝ առանց անորմէ տեսնուելու վախն ունենալու :

Անտրէ, Նիգօլի պէս, իր ձիւնաթոյր թեւերը տարածեց, այս շարժումով իր զգեստը քիչ մը բացուեցաւ, յետոյ պատուհանէն դուրս ծնցաւ շրջակայ պարտէզները ուզածին պէս գիտելու համար :

Զգալի գոհունակութիւն մը նկարուեցաւ անոր դէմքին վրայ . այն կիւնը՝ որ քիչ անգամ մարդոց կը ժպտ-

տէր, առանց թաքուն խորհուրդ մը ունենալու՝ իրերուն ժպտեցաւ : Իր շուրջը, ամէն կողմ, բարձրաբերձ ծառեր իրենց ստուերը կը տարածէին և կանաչեղէններ ամէն կողմէ զինքը կը շրջապատէին :

Անորէ՛ ինչպէս պարտէզին շուրջը գտնուող միւս ատեները՝ նոյնպէս նաև ժիւլպէրի գտնուած ատենը աչքէ անցուց : Անորէի պատուհանէն ժիւլպէրի տան միայն վերնայարկը կ'երևէր, նոյնպէս նաև միայն ժիւլպէրի վերնայարկէն Անորէի բնակած տան մէջ կը նայուէր : Ժիւլպէրի վերնայարկը խորխոր աղջկան ուշադրութիւնը բնաւ չգրաւեց : Անոր հոգն էր թէ ինչ սեռէ կամ դասակարգէ մարդիկ կը բնակէին վերնայարկի մը մէջ :

Ուստի, Անորէ ամէն կողմը աչքէ անցընելէ վերջ համոզուելով որ առանձին էր և ոչ ոք զինքը կը տեսնէր, գոհունակութիւնն ունենալով նաև թէ այդ անխտով առանձնութեան տահմաններուն վրայ չպիտի երևէր այն գաւեշտասէր ու ծաղրող բարիզցիներուն հետաքրքիր կամ երխտատարդ դէմքերէն մին՝ որոնցմէ գրեթէ կը սոսկան գաւառացի կանայք, պատուհանը բաց ձգելով, որպէս զի առաւօտեան մաքուր օդը իր սենեակին ամէն կողմը գործէ, կրակարանին քով գնաց, գանդակի մը լարը քաշեց և սկսաւ հաղուել, կամ աւելի ճիշդը, հաղուելու համար հանուել կիսամութ սենեակին մէջ :

Նիգօլ եկաւ, Աննա թաղուհիին ժամանակէն մնացած կաշիէ տուփ մը բացաւ, խեցիէ սանար մը առաւ և Անորէի մազերը քակեց :

Վայրկեանի մը մէջ հոծ մազերու երկայն հիւսկէններն ու խիտ խոպոպիկները դոնդողաչէն վերարկուի մը

նման՝ դեռատի աղջկան պսպղուն ուսերն ի վարձահանցան ու դողացին :

Ժիւլպէր խնդրուկ հառաչանք մը արձակեց : Անորէ կիսովին մերկացած էր : Ժիւլպէրի թուքը բերնին մէջ չորցաւ, մատները այրիլ սկսան և միշտ միեւնոյն տեղը նայելէն աչքերը մթապնեցան :

Մազերը սանարիւլ տուած միջոցին Անորէ դիպուածաւ գլուխը վեր վերցնելով ժիւլպէրի վերնայարկին ուղղեց նայուածքը :

— Այո՛, նայէ՛, նայէ՛, մրմնջեց ժիւլպէր, բայց ի դուր կը նայիս . դուն բան մը չպիտի տեսնես, իսկ ես ամէն բան պիտի տեսնեմ :

Ժիւլպէր կը սխալէր, Անորէ բաներ մը տեսեր էր . տեսածը այն ծիփուն շրջազգեստն էր որուն մէկ եզերքէն դուրս ելած էր պատանիին գլուխը :

Անորէ մատովը այդ տարօրինակ առարկան ցուցուց Նիգօլի :

Նիգօլ գործը դադրեցուց և սանարովը լուսամուտը ցուցուց, հարցնելու ձեռով թէ ա՞յն էր իր տիրուհւոյն ցուցնել ուզածը :

Այս հեռագիրը, զոր ժիւլպէր կը լափէր և մոլեգին ցանկութեամբ մը կը վայելէր, երկրորդ ականատես մըն ալ ունեցած էր, բան մը որ ժիւլպէրի միտքէն բնաւ չէր անցներ :

Ժիւլպէր յանկարծ զգաց որ արագաշարժ ձեռք մը թէրէզի շրջազգեստը իր ձակտէն կը խլէր :

Պատանին ետին դարձաւ և ինքզինքը Ռուսօի դէմը գտնելով շանթահարուած մնաց :

— Ի՞նչ ապուր կը խառնես հող, պարոն, գոչեց փխտոփան յոնքերը պոտտելով և կնոջը զգեստը զննելով :

Ժիւլյէր Ռուսօի ուշադրութիւնը լուսամուտէն հեռա-
ցընել ջանաց :

— Ոչինչ, պարոն, բան մըն ալ չէի ընել :

— Ոչինչ Ուրեմն ինչո՞ւ պահուրտեր էիր սը-
ւոր ետին, գոչեց փիլիսոփան շրջազգեստը ցուցնելով :

— Արեւը աչքս կ'առնէր :

— Արեւմտեան կողմը կը գտնուիս և արեւը ծագած
ատենը ա՛չքդ կ'առնէ : Պարոն, կ'երեւի թէ աչքերդ
չատ փափուկ են :

Ժիւլյէր քանի մը բառ թոթովեց, բայց զգալով որ
հետզհետէ կը բռնուի՝ երեսը ձեռքերուն մէջ առաւ :

— Սուտ կը խօսիս և կը վախնաս, ուրեմն չարու-
թիւն մը կը գործէիր, յարեց փիլիսոփան :

Եւ այս ստակալի արամարանութեան վրայ, որմէ
Ժիւլյէր բոլորովին չփոթեցաւ, Ռուսօ պատուհանին առ-
ջև գալով կեցաւ :

Ժիւլյէր որ քիչ մը առաջ պատուհանէն երեւնալու
կը վախնար, Ռուսօի հոն երթալը տեսնելուն պէս՝ ինքն
ալ բնական զգացումով մը հոն նստուեցաւ :

— Վա՛յ, փոքրիկ տունը մա՞րդ կը բնակի հիմա, յ
բաւ Ռուսօ Ժիւլյէրի երակներուն արիւնը սառեցնող
եզանակաւ մը :

Ժիւլյէր ձայն չհանց :

— Եւ այդ մարդիկը իմ տունս կը դիտեն և իրարու
ցոյց կուտան զայն, շարայարեց կասկածոտ փիլիսոփան :

Ժիւլյէր հասկնալով որ պատուհանին շատ մօտեցեր
էր, դէպի ետ շարժում մը ըսաւ :

Ո՛չ այս շարժումը և ո՛չ ալ անոր շարժառիթը Ռուսօի
աչքէն վերկեցան . փիլիսոփան հասկցաւ որ Ժիւլյէր
տեսնուելէ կը վախնար :

— Ո՛չ, ո՛չ, դեռատի բարեկամս, ասոր տակը դա-
ւաճանութիւն մը կայ, ըսաւ Ռուսօ պատանիին դա-
տակէն բռնելով : Վերնայարկդ ցոյց կուտան . սըտեղը
կայնէ նայիմ :

Եւ թեւէն բռնելով պատուհանին առջևը տարաւ
զայն :

— Ո՛հ, ո՛չ, պարոն, ո՛չ, չնո՛րհ, գոչեց Ժիւլյէր
անոր ձեռքէն ազատելու համար գալարուելով :

Անոր ձեռքէն ազատիլը Ժիւլյէրին պէս զօրաւոր և
դիւրաշարժ պատանիի մը համար իրա՛ւ էր որ բան մը
չէր, բայց պէտք էր որ այդ բանին համար իր Աստու-
ծուն դէմ մաքառէր, անոր հանդէպ իր սնուցած յար-
գանքը արդելք կ'ըլլար այդ ընդդիմութեան :

— Դուն տա կիները կը ճանչնաս և անոնք ալ քեզ
կը ճանչնան, այնպէս չէ՞ :

— Ո՛չ, պարոն, ո՛չ :

— Քանի որ դուն զանոնք չես ճանչնար և անոնք
ալ քեզ, ինչո՞ւ անոնց չես երեւիր :

— Պարո՛ն Ռուսօ, դուք ձեր կեանքին մէջ բնաւ
զաղտնիք ունեցած չէ՞ք : Գթութիւն ունեցէք և ինձ
զաղտնիք մը բանալ մի՛ տաք :

— Վա՛յ, մասնի՛չ, գոչեց Ռուսօ : Հը՛մ, ես դիտե՛մ
ատոնք ինչ տեսակ զաղտնիքներ են : Կրիմներուն և
ս'Օլլախներուն դասակարգէն մէկն ես դուն . քեզի դեր
մը սորվեցուցեր են իմ մարդասիրութիւնս որսալու հա-
մար : Ես մտեր զիս կը մասնես : Ո՛հ, որքա՛ն
խենթ եմ եզեր, որքա՛ն բնապաշտ ապուշ մըն եմ ե-
զեր : Լրտես մըն եմ բերեր տունս, մի՛նչդեռ կը կար-
ծէի թէ իմ նմաններէս մէկու մը կ'օգնեմ :

— Լրտես՞ս մը մի՛, ե՞ս, գոչեց Ժիւլյէր սարսափա-
հար զայրոյթով մը :

— Տեսնենք ե՞րբ պիտի ծախես զիս, Յուզա՛, բա-
ցազանչեց Ռուսօ և թէրէզի չըջազգեստը մեքենարար
վրան առաւ վե՛հ բան մը ըրած ըլլալու պատրանքովը,
մինչդեռ զժբարդարար ցաւալի ըլլալէ աւելի ծիծաղելի
կը դառնար :

— Պարոն, զիս կը զրպարտէք :

— Քեզ զրպարտած կ'ըլլամ երբ դուն իմ թշնամի-
ներուս հետ նշաններով կը հաղորդակցիս, փոքրի՛կ օձ,
զոչեց Ռուսօ : Թերեւս ազգանշաններով իմ վերջին հե-
զինակութեանս նիւթը ուրիշներուն հաղորդած ատենդ
վրայ հասայ :

— Պարոն, եթէ ձեր հեղինակութեան գաղտնիքը
մատնելու համար ձեր տունը եկած ըլլայի, պատուհանէ
պատուհան նշաններով հաղորդակցելու տեղ, ձեր գրտե-
զանին վրայի ձեռագիրները կ'ընդօրինակէի :

Այս խօսքը իրաւացի էր, որով Ռուսօ անհեթեթ
խօսք մը ըրած ըլլալն զգալով ինքնիրեն բարկացաւ :
Այս բանը յաճախ կը պատահէր երբ վախի մէջ ըլլար ան :

— Պարոն, շատ կը ցաւիմ քեզի հետ այսպէս վար-
ուելուս համար, բայց փորձառութիւնս զիս խտացուց :
Կեանքիս մէջ շատ անգամ խաբուած եմ : Շատեր զիս
մատնեցին, ուրացան, յանձնեցին, ծախեցին և իրենց
չաճերուն զօնեցին : Դուն զիտես թէ ես այն ականաւոր
թշուառներէն եմ՝ զորս կառավարութիւնները ընկերային
իրաւունքներէն կը զրկին : Այսպիսի պարագայի մը մէջ
կասկածոտ ըլլալը ներելի է : Արդ, դուն ինձ կասկածելի
կ'երեւիս, հետեւաբար տունէս դուրս պիտի ելնես :

Ժիւլյէր այս վերջաբանին չէր սպասեր :

Վռնատի՛լ

Կարկամած բուռնցքները՝ գոցեց և աչքերուն մէջէն
փայլակ մը անցաւ, սրմէ Ռուսօ սարսուց :

Բայց այդ փայլակը տեւողութիւն չունեցաւ և առանց
որոտումի մտրեցաւ :

Ժիւլյէր մտածեր էր որ՝ եթէ մեկնելու ըլլար՝ մէկ
անգամէն թէ՛ ուզած ատենը Անտրէն տեսնելու քաղցր
երջանկութենէն պիտի զրկուէր, թէ՛ Ռուսօի բարեկա-
մութիւնը պիտի կորսնցնէր, այսինքն թէ՛ թշուառու-
թիւն ու տառապանք, թէ՛ ամօթ ու զրկանք :

Իր վայրենի ամբարտաւանութիւնը մէկզի թողուց և
երկու ձեռքերը իրար միացնելով ըսաւ :

— Պարոն, զիս մտիկ ըրէք, միայն բառ մը պիտի
ըսեմ :

— Ես անողոք եմ, զոչեց Ռուսօ : Մարդիկ իրենց
գործած անիրաւութիւններովը զիս վազրէ մը աւելի
կատաղի ըրին : Դուն իմ թշնամիներուս հետ կը հաղոր-
դակցիս, անոնց քով գնա, ես քեզ չեմ արգիլեր : անոնց
հետ միաբանէ, դէմ չեմ կենար քեզի, բայց տունէս
դուրս ելիւր :

— Պարոն, այդ երկու աղջիկները ձեր թշնամիները
չեն, մին օրիորդ Անտրէն է, իսկ միւսը օրիորդ Նիգօլը :

— Ո՞վ է օրիորդ Անտրէն ըսածդ, հարցուց Ռուսօ՝
որուն բոլորովին անծանօթ չէր այս անունը :

— Օրիորդ Անտրէն աը թալէրնէյ սեպուհին աղջիկն
է : Ո՛հ, բայց ներեցէք ինձ ձեզ այսպիսի բաներ ըսելուս
համար, ձեր ստիպումին վրայ է որ կը խօսիմ : Անտրէն
այն օրիորդն է՝ որուն հանդէպ սնուցած սէքս շատ աւե-
լի զերազանց է՝ քան այն սէրը զոր դուք սնուցած էք
օրիորդ Կալէյի և տիկին Ուարէնի հանդէպ, այն օրիորդն
է՝ որուն հետեւեցայ հետիոտն, առանց զբամի և առանց
հացի, մինչև որ յոգնաբեկ և վշտածիւր՝ ճամբուն վրայ
ինկայ, այն օրիորդն է՝ զոր տեսնելու համար երէկ մին-

չիւ Սէն-Տընի գացի, որուն ետեւէն մինչև Միւէթ վազեցի և առանց անորմէ տեսնուելու Միւէթէն մինչև ձեր փողոցին ետեւի փողոցը անոր հետեւեցաւ, այն օրիորդն է՝ որուն սա փոքրիկ տան մէջ բնակիլը այս առտու տեսայ, և վերջապէս այն օրիորդն է՝ որուն համար կ'ուզէի կամ թիւրէն, կամ Ռիշլիէօ, կամ Ռուսօ ըլլալ :

Ռուսօ մարդկային սիրտը կը ճանչնար և անոր ձայներուն սահմանները գիտէր . գիտէր թէ ամենէն վարպետ գերասանն իսկ չէր կրնար արտայայտուիլ այն արտասուախառն շեշտով՝ որով ժիւլպէր կ'արտայայտուէր և այն տենդալի շարժումներով՝ որոնք իր խօսքերուն կը միանային :

— Ուրեմն այդ դեռատի աղջիկը օրիորդ Անտրէն է :

— Այո՛, պարոն :

— Զինքը կը ճանչնա՞ք :

— Իր կաթնեղբայրն եմ :

— Ուրեմն քիչ մը առաջ՝ զայն չեմ ճանչնար ըսելով կը սսէիք, եթէ մատնիչ մը չէք՝ ստախօս մըն էք :

— Պարոն, սիրտս կը պատուէք, գոչեց ժիւլպէր : Ճշմարիտ կ'ըսեմ որ աւելի լաւ կ'ընէք եթէ զիս եղած տեղս սպաննէք :

— Պահ, յուզիչ նախադասութիւններ կը յօրինէք, Տիարրօի և Մարմօնթէլի ոճով կը խօսիք . պարոն, դուք ստախօս էք :

— Լաւ ուրեմն, այո՛, այո՛, այո՛, ստախօս եմ, պարոն, բացազանչեց ժիւլպէր, և վա՛յ ձեզ եթէ այսպիսի ստախօսութեան մը պատճառը չկարենաք հասկնալ : Ստախօ՛ս, ստախօ՛ս . . . Ես կը մեկնիմ . . . մնաք բարով : Ես յուսահատ կը մեկնիմ և յուսահատութիւնս ձեր խղճին խայթը սլափ ըլլայ :

Ռուսօ ծնօտը շոյելով իրեն հետ զգալի նմանութիւններ ունեցող պատանիին նայեցաւ :

— Ահա մեծ սիրտ մը կամ մեծ խաբերայ մը, ըսաւ մտովի : Բայց ի՛նչ որ ալ ըլլայ, քանի որ ինձ գէմ լարուած դաւադրութենէ մը կը կապածիմ, ինչո՞ւ ձեռքիս մէջ չունենամ դաւադրութեան թեղիքը :

Ժիւլպէր դրանը մօտեցեր և ձեռքը փականքին դրած կը սպասէր որ վերջին բառ մը կամ բոլորովին վճռոէ զինքը և կամ ետ կանչէ :

— Ա՛լ ասոր վրայ չխօսինք, որդեակ իմ, ըսաւ Ռուսօ : Բայց եթէ իրաւ ձեր ըսածին չստի սիրահարուած էք՝ ցաւալի է, ցաւալի՛ : Բայց ուշ մնացինք, երէկուան օրը բոլորովին կորսնցուցինք, երկուքնիս ալ երեսունական էջ ունինք ընդօրինակիւք : Շո՛ւտ, ժիւլպէր, քիչ մը շարժէ՛ :

Ժիւլպէր փիլիսոփային ձեռքը բռնեց և զայն շրթունքին տարաւ : Իրա՛ւ թագաւորի մը ձեռքը չպիտի համբուրէր ժիւլպէր :

Բայց Ռուսօ սենեակէն դուրս ելլալէ առաջ վերջին անգամ մըն ալ պատուհանին մօտեցաւ և երկու դեռատի աղջկանց նայեցաւ :

Այս միջոցին Անտրէ գիշերազգեստը հաներ էր և Նիգօլի ձեռքէն շրջազգեստ մը կ'առնէր :

Անտրէ փիլիսոփային ձեռմկած գլուխն ու անշարժ մարմինը տեսնելով, յանկարծ ետ քաշուեցաւ և հրամայեց Նիգօլի որ պատուհանը գոցէ :

Նիգօլ հնազանդեցաւ :

— Հահ, իմ ձեռմակ գլուխէս վախցաւ . քիչ մը առաջ պատանիին գէմքէն չէր վախնար : Ո՛հ, որքան լաւ բան է երիտասարդութիւնը, յարեց հառաչելով և լատիներէն լեզուաւ աւելցուց .

Ո՛վ երիտասարդութիւն գարուն կենաց,
Ո՛վ գարուն երիտասարդութիւն տարւոյ :

Եւ թէրէզի շրջագրեալ վերստին պատին վրայի գա-
մին անցընելով՝ սանդուխէն վար իջաւ մեկամաղձոտու-
թեամբ և հետեւեցաւ ժիւլպէրի քայլերուն, որուն երի-
տասարդութեանը հետ թերեւս նոյն վայրկեանին ուզեր
փոխանակել այն համբաւը որ վօլթէրի համբաւին կը
հաւասարէր և անոր հետ համաշխարհային հիացումը կը
վայելէր :

ԾԳ

Սէն ԳԼՈՏ ՓՈՂՈՅԻ ՏՈՒՆԸ

Սէն-Գլոս փողոցը, ուր աը Ֆէնիքս կոմսը ժամադ-
րութիւն տուեր էր կարտինային, այն ատենները արդի
վիճակէն մեծ տարբերութիւն մը չունենալուն՝ մեր
նկարագրելիք տեղերուն հետքերը տակաւին կը տեսնուին
հոն :

Ինչպէս այսօր, նոյնպէս ալ այն ատեն, այս փողոցը
ցից զառիվայրով մը Սէն-Լուիի հրապարակին կը կցուէր
Տասնըփնգ տուն և եօթը կանթեղ կար այս փողոցին
մէջ :

Երկու անել փողոցներ ալ կը տեսնուէին հոն :

Մին ձախ կողմը՝ որ մինչեւ վօյսէնի պահովը կը

հասնէր, միւսը աջ կողմը՝ որ մինչեւ Սուրբ-Ճաճանչի
փերց պարտէզը կ'երկարէր :

Այս վերջին անել փողոցին ձախ եզերքին վրայ կը
բարձրանար Սէն-Գլոս փողոցին մէջ գանուող տան մը
գորչագոյն մեծ պատը, որուն աջ կողմը մենաստանին
ծառերը իրենց ստուերը կը տարածէին :

Այս պատը կիկլոպի մը գէմքին նման ձակատին
ճիչը մէջտեղը աչք մը ունէր, կամ, աւելի բացորոշ
խօսինք, պատուհան մը : Այս պատուհանը վանդակով
ծածկուած և երկաթէ ձողերով պահպանուած էր :

Այս գրեթէ բնաւ չբացուող և սարգի ոտայններով
ամբացուած պատուհանին տակը խոշոր զամբով անա-
զին գուռ մը կար, որը կարծես զիտողին ըսել կ'ուզէր
թէ ո՛չ թէ սովորաբար հոնկէ կը մանուէր՝ այլ կարելի
էր հոնկէ ներս մտնել :

Այս անել փողոցին մէջ բնաւ բնակարան չկար,
միայն երկու բնակիչ կար՝ մին փայտէ հիւղակի մը
մէջ կօշկակար մը և միւսը տակաւի մը մէջ հնակարկատ
կին մը : Ասոնք, երկուքն ալ կ'ապաստանէին մենաս-
տանին ազասիաներուն տակ, որոնք աստուան ժամը
իննէն սողին քաղցր զովութիւն մը կը պիտէին փոշե-
լից գետնին վրայ :

Իրիկուան, հնակարկատ կինը իր սենեակը կ'երթար,
կօշկակարն ալ իր պալատին փեղկերը կը գոցէր, և բացի
այն մթազոյն ու արտաստիկ պատուհանէն՝ որուն վրայ
խօսեցանք քիչ մը վերը՝ ոչինչ կը հսկէր նոյն փողոցին
մէջ :

Մեր նկարագրած տունը, մեր յիշած դռնէն զատ,
զլիաւոր մուտք մըն ալ ունէր Սէն-Գլոս փողոցին վրայ
Այս մուտքը, Լուի ԺԳ-ի ժամանակին ճարտարապետու-

թիւնը յիշեցնող մեծ դուռ մըն էր և զարդարուած էր
այն կործազլուէն դանձարով՝ զոր տը Ֆէնիքս կոմսը
իբր գրական տեղեկութիւն մը տուեր էր տը Ռօնան
կարահնալին ։

Իսկ պատուհանները հրապարակին վրայ կը նայէին,
որոնք միայն առտուն կը ըսցուէին նորածագ արեւը
ընդունելու համար ։

Այն աստիճանները Բարիզի, մանաւանդ վերոյիշեալ
թաղին մէջ ապահովութիւնը կատարեալ չէր ։ Ուստի, ոչ
ոք պիտի դարմանար պատուհաններուն երկաթէ վան-
դակները և պատերուն երկաթէ ցիցերը տեսնելով ։

Այս մանրամասնութիւնները թուելով ըսել կ'ուզենք
թէ մեր նկարագրած տունը գրեթէ բերդի մը կը նմա-
նէր ։ Թշնամիներու, աւազակներու և սիրահարներու դէմ
բիւրաւոր սրածայր ցիցերով երկաթէ պատշգամներ ու-
նէր ։ հրապարակին կողմէն խոր փոս մը կը պատէր
չէնքը, իսկ փողոցին կողմէն ներս մանկու համար ե-
րեսուն ոտնաչափ երկայնութեամբ ելնարաններ պետք
էին ։ Պատը երեսուներկու ոտնաչափ ըարձրութիւն ու-
նենալով պատուոյ գաւիթը կը ծածկէր ։

Այս տունը, որուն առջեւէն անցնողը այսօր զար-
մանալով, վրդովելով և հետաքրքրութեամբ կանգ պիտի
առնէր, 1770ին այնքան տարօրինակ երեւոյթ մը չու-
նէր ։ Այլ ընդհակառակը թաղին ներդաշնակ մէկ հատ-
ուածը կը կազմէր, և եթէ Սէն-Լուի և Սէն-Գլօտ փո-
ղոցներուն բնակիչները այդ ապարանքին շրջականերէն
խոյս կուտային, ոչ թէ ապարանքին պատճառաւ էր,
այլ Սէն-Լուիի անբնակ հրապարակին լաւ չգոցուած
դրան և Շու կամուրջին պատճառաւ՝ որուն կոյուղիի
մը վրայ ձգուած կամարները՝ աւանդութեանց քիչ մը

հմուտ եղող Բարիզցիի մը համար Գասէսի սիւներուն
նման անանցանելի կը թուէին ։

Իրա՛ւ ալ, հրապարակը այդ կողմէն միայն Պաս-
թիլ կ'առաջնորդէր ։ Քառորդ փարսախի ճամբու մը
վրայ տասը տուն անգամ չէր տեսնուեր ։ Այս պատճա-
ռաւ հանրային շինութեանց նախարարութիւնը յարմար
չէր դատած կանխկանգնել լուսաւորել այն ոչնչութիւնը,
այն թափուր թաղը, այն անէութիւնը որ՝ ամառը ժա-
մը ութէն և ձմեռն ալ չորսէն վերջ ուրիշ բան չէր
եթէ ոչ անդունդ մը կամ գողերու որջ մը ։

Բայց իրիկուան ժամը ինը կար երբ այդ հրապարա-
կին վրայ արազընթաց կառք մը տեսնուեցաւ Սէն-Տընիի
այցելութենէն երկք քառորդ ժամու չափ ետքը ։

Տը Ֆէնիքս կոմսին գինադրոջմներովը զարդարուած
էր այս կառքը ։

Կոմսը, կառքէն քսան քայլ առաջ, ձիբիտին վրայ
հեծած էր ։ արարան կենդանիին երկայն պոչը ձայն կու-
տար փողոցին մէջ ։

Լօրէնցա, վարագոյրներով գոցուած կառքին մէջ,
բարձերու վրայ հանգիստ կը քնանար ։

Անիւներուն ճոնչիւնէն դուսը գոցեա հմայքով մը
ըսցուեցաւ և կառքը Սէն-Գլօտ փողոցի միջին խորքե-
րուն մէջ սուզուելէն ետքը մեր նկարագրած տան գա-
ւիթին մէջ անյայտացաւ ։

Գուռը վրայէն գոցուեցաւ ։

Սակայն այսպէս գաղտնի գործելու ալ հարկ չկար ։
Փողոցը ամայի էր և մութ ։ Եթէ տը Ֆէնիքս կոմսը
մենաստանին դրամարկը կառքի մը մէջ գնելով հոն
բերած ալ ըլլար, ոչ ոք պիտի տեսնէր զայն և արգիլէր ։

Այժմ տանը ներքին մասին վրայ քանի մը տեղե-

կութիւններ տանք, որովհետեւ մեր ընթերցողները յաճախ հոն տանելու դիտաւորութիւնն ունինք :

Վերոյիշեալ մեծ գաւիթին մէջ, երկարամեայ խոտեր յաւխտնակաւն պատուար մը կը ձեւացնէին և դէպի աջ կողմի ախորը և ձախ կողմի կառանցը երկարող երկկողմանի սալաշատակները իրարմէ կը դասէին : Գիմացի կողմը արտաքին սանդուխ մը և ասոր ստորոտը տասն երկու աստիճաններով երկկողմանի սանդուխ մը կար :

Ապարանքին գեանայարկը, ըստ երեւոյթին, կը բաղկանար ընդարձակ սեննակէ մը, արծաթէ սպասներով լեցուն դարաններ պարունակող սեղանատունէ մը և դահլիճէ մը՝ որ գոգցես իր նոր տանտէրներն ընդունելու համար հազիւ թէ քանի մը ժամէ ի վեր կահաւորուած էր :

Այս դահլիճին ելքէն նախասեննակ մը կը մտնուէր ուր կը տեսնուէր առաջին յարկը առաջնորդող սանդուխ մը : Այս յարկը տանտէրներուն յատկացուած երեք սեննակներէ կը բաղկանար :

Բայց ճարտար երկրաչափ մը պիտի գարմանար ապարանքին շքափակը չափելով ու արամազիծը հաշուելով, որովհետեւ այդչափ ընդարձակ գեանի մը վրայ փոքր շէնք մը պիտի տեսնէր միայն :

Բայց ասոր ալ պատճառը այն էր որ, այս դուրսէն երեւցող առաջին տան մէջ երկրորդ գաղանի տուն մըն ալ կար որ միայն հոն բնակողին ծանօթ էր :

Արդարեւ, նախասեննակին մէջ, ցուցամտաբ շրթունքներուն դրած լուծեան խորհրդանիշ արձանի մը քով գետեղուած էր գաղտնի գսպանակ մը՝ որուն շարժում արուելով ճարտարագետական գրուագիներով խճօղուած գուռ մը կը բացուէր : Այս գուռը նրբանցքի մը մէջ

և անոր լայնութեանը շինուած սանդուխի մը վրայ կը բացուէր : Այս նրբանցքէն կ'առաջնորդուէր սեննակ մը՝ որ ներքին գաւիթի մը վրայ բացուող երկու վանդակապատ պատուհաններէ լոյս կ'առնէր : Աւելորդ է ըսել թէ վանդակներն երկաթէ էին, որովհետեւ փայտը քիչ գեր կը կատարէ բերդի մը մէջ :

Այս գաւիթը երկրորդ տունը պարունակող և զայն ամէնուն աչքէն ծածկող տուփն էր :

Սանդուխին առաջնորդած սեննակը յայտնի էր թէ էրիկմարդու սեննակ մըն էր : Անկողիններուն և թիկնաթուռներուն առջև արուած գորգերն ու բազմոցները Ափրիկէի և Հնդկաստանի հազուադուր մուշտակներէն էին : Առոնք տակաւին հրացայտ աչքերով և սպառնալից ժահիքներով առիւծի, վագրի և յովազի մորթեր էին : Պատերը, որոնք Գօրսուի կաշիով պատած և մեծ ու շքեղ նկարներով ծածկուած էին, ամէն տեսակ զէնքով զարդարուած էին : Հաւրանի լախտէն մինչև Մալաքքայիին բառնալին, նախկին ասպետներու խաչածեսուրէն մինչև Արարացիին խանչէրը և տանըլեցեբորդ գարու փղոսկրով զարդարուած հնածես հրացանէն մինչև տանը ութերորդ գարու ոսկեգրուազ նորածես հրացանը պատերը կը զարդարէին :

Հոն մանողը այդ սեննակին մէջ սանդուխին ելքէն ուրիշ ետք մը ի դուր պիտի փնտռէր : Թերեւս ուրիշ ելք մըն ալ կար, կամ քանի մը ելքեր ալ կային, բայց անոնք բոլորովին անյայտ և անտեսանելի էին :

Քասնըհինգէն երեսուն տարեկան գերմանացի ծառայ մը, որ քանի մը օրէ ի վեր այդ ընդարձակ տան մէջ առանձին կը լծափտէր, պարզունակը գրաւ և կառքին գուռը բանալով կ'օրէնցան գուռս հանեց քնացած վիճակի ժօզ. Պալա., բխ. 24—53, հաւ.Գ., Բ.հր.Ն.Ք.

մէջ, զայն գրկեց և մինչև նախասնեակը տարաւ, մինչդեռ անտարբեր կառապանը ձիւրուն սանձերը քակելով կը զբաղէր : Նախասնեակին մէջ կարմիր օթոցով ծածկուած սեղան մը կար, ծառան իր մարդկային բնոր անոր վրայ դրաւ և դեռատի կնոջ երկայն ձեւով քոզը համեստութեամբ ոտքերէն վար իջեցուց :

Ապա եօթը ջահ ունեցող աշտանակ մը առնելով դուրս ելաւը մոմերը կառքին կանթեղէն վառեց և վերագարձաւ :

Բայց այդ կարճ միջոցին մէջ Լօրէնցաւ անյայտացիր էր :

Արդարև, սենեկապան ծառային դուրս ելնելէն անմիջապէս վերջը ար Ֆէնիքս կոմսը ներս մտեր, Լօրէնցան գրկեր և ծածուկ դուռնէն անցնելով գաղտնի սանդուխէն զինուց սենեակը տարեր էր զայն, չմոռնալով դռները կսեւէն գոցելու :

Հոն հասնելուն պէս՝ կրակարանին դուրս ցցուած անկիւնին մէջօքը զետեղուած զսպանակ մը մղեց ոտքին ծայրովը : Իսկոյն կրակարանին երկաթէ տախտակը տարօրինակ մղումով մը դանդաղօրէն դէպի ներս քաշուելով՝ դուռի նման անցք մը բացուեցաւ, կոմսը դռնէն ներս մտաւ, ոտքովը զսպանակը հակառակ կողմէն մղելով անյայտացաւ և դուռը անոր վրայէն գոցուեցաւ :

Կրակարանին ներքին կողմը երկրորդ սանդուխ մը կար, կոմսը Ութթէխի թաւիչով ծածկուած տանընթինգ աստիճաններէ ելնելով սենեակի մը սեմին առջև կանգ առաւ : Այս սենեակը բնական ծաղիկներու նման կենդանի գոյներով և համանման ծաղիկներով նկարակիւռուած ջանջիւղէ կահաւորուած էր :

Սենեակին կան կարասին փայտէ էր, սա տարբերու-

թեամբ որ փայտերը սակեզօծուած էին : Պղինձէ դրուագներով խեցիէ երկու մեծ դարաններ, դաշնակ մը և վարդափայտէ զարդասեղան մը, փայլերանգ գեղեցիկ անկողին մը և Սէվրի յախճապակիէ անօթներ սենեակին կարասիներուն զլսաւոր մասերը կը կազմէին : Երեսուն քառակուսի սանաչափ միջոցի մը մէջ զուգաչափօրէն և համահաւասար հեռաւորութեամբ զետեղուած աթոռներ, թիկնաթոռներ և բազմօցներ բնակարանին մնացած մասը կը զարդարէին, որ կը բազկանար զարդասնեակէ մը և այս սենեակին կցուած մենախուցէ մը :

Հաստ վարագոյրներով ծածկուած երկու պատուհաններ վերօյիշեալ սենեակը կը լուսաւորէին, բայց զիշերը Լլալուն՝ վարագոյրները ծածկելու պէտք չէր տեսնուած :

Մենախուցը և զարդասնեակը պատուհան չունէին : Անուշահոտ խոզով լեցուած կանթեղներ զիշեր ցերեկ զանոնք կը լուսաւորէին և անտեսանելի ձեռքեր ձեղունէն խզ կը լեցնէին անոնց մէջ :

Այս սենեակին մէջ ո՛չ ձայն կար և ո՛չ ալ շունչ, կարծես թէ մարդոցմէ հարիւր փարախ հեռու կը զբտնուէր : Սակայն սակին ամէն կողմ կը փայլէր հոն, պատերուն վրայ գեղեցիկ նկարներ կը ժպտէին, պոհնմական ակնախտիզ երեսներով երկայն անօթներ բոցափայլ աչքերու պէս լոյս կ'արձակէին երբ կոմսը Լօրէնցան բազմօցի մը վրայ դնելէն հաքը, մենախուցին բեկրեկուն ու դողօջ լոյսովը չգոհանալով, ժիւլպէրի զարմանքը չարժող տիկիէն լոյս ցատեցուց և կրակարանին վրայի վարդազոյն մոմերով ստեղծուոր զոյգ մը աշտանակը վառեց :

Կոմսը այս գործը լմնցնելէ վերջ Լօրէնցայի մօտեցաւ և մէկ ծունկը անոր առջևը դրուած բարձի մը վրայ դնելով ըսաւ :

— Լօրէնցա :

Գեոատի կինը այս ձայնը առնելուն պէս աջ արմուկ կին կաթնելով մարմինը կիսով վեր վերցուց . աչքերը գոց էին : Պատասխան չտուաւ :

— Լօրէնցա, սովորակա՞ն թէ մագնիսական քունով կը քնանաք, կրկնեց կոմսը :

— Մագնիսական քունով կը քնանամ, պատասխանեց Լօրէնցա :

— Ուրեմն եթէ ձեզի քանի մը հարցումներ ընեմ պիտի կարենա՞ք պատասխանել :

— Կարծեմ թէ այո՞ :

Պահ մը լռութիւն տիրեց, ապա աը Ֆէնիքս կոմսը շարունակեց :

— Տիկին Լուիզի սենեակը նայեցէք, ուր գրեթէ երեք քառորդ ժամ առաջ կը գտնուէինք :

— Կը նայիմ :

— Եւ հոն գտնուողները կը տեսնէ՞ք :

— Այո՞ :

— Տը Ռօճան կարտինալը տակաւին հո՞ն է :

— Չայն հոն չեմ տեսներ :

— Իշխանուհին ի՞նչ կ'ընէ :

— Անկողին մտնելէ առաջ կ'աղօթէ :

— Մենաստանին նրբանցքներուն մէջ նայեցէք, մի գուցէ նորին սրբազնութիւնը հոն ըլլայ :

— Չեմ տեսներ :

— Կառքը գրանը առջե՞ւն է :

— Ո՛չ :

— Մեր եկած ճամբուն հետեւեցէք :

— Կը հետեւիմ :

— Ճամբուն վրայ կառքեր կը տեսնէ՞ք :

— Այո՞, շատ մը կառքեր կը տեսնեմ :

— Այդ կառքերէն միոյն մէջ կարտինալը կը տեսնէ՞ք :

— Ո՛չ :

— Բարիզի մօտեցէք ուրեմն :

— Կը մօտենամ :

— Քիչ մըն ալ :

— Լա՛ւ :

— Տեսա՞ք :

— Ո՛հ, այո՞, զայն կը տեսնեմ :

— Ո՞ւր :

— Պարիսպին առջեւ :

— Կա՞նգ առած է :

— Այս միջոցին կանգ կ'առնէ : Կառքին հետեւէն գրանիկ մը վար կ'իջնէ :

— Կարտինալին հետ կը խօսի :

— Ո՛չ, բայց խօսելու համար անոր կը մօտենայ :

— Մտի՛կ ըրէ, Լօրէնցա : Ինձ համար խիստ կարեւոր է զխոնալը թէ կարտինալը ի՞նչ կ'ըսէ այդ մարդուն :

— Խօսեցան ընցաւ, ժամանակին մտիկ ընելու չհրաժայեցիք : Բայց կեցէ՛ք, զրանիկը կառապանին հետ կը խօսի :

— Ի՞նչ կ'ըսէ :

— Կառքը Մէն-Գլոտ փողոցը քշելու հրաման կուտայ :

— Կեցցէ՛, Լօրէնցա, շնորհակալ եմ :

Կոմսը քանի մը բառ գրեց թուղթի մը վրայ, ծանուութիւն տալու համար պղինձէ գլանիկի մը վրայ պլորեց զայն, կոճակ մը մղեց՝ որուն տակէն դարակի նման բերան մը բացուեցաւ, սոմսակը հոն սահեցուց և բերանը զայն կուլ տալով գոցուեցաւ :

կոմսը երբ ներքին սենեակները գտնուէր՝ այս կերպով կը թղթակցէր իր սենեկապանին՝ ֆրիցի հետ :

Ապա Լօրէնցայի դառնալով ըստ :

— Կրկին շնորհակալութիւն կը յայտնեմ, Լօրէնցա :

— Ուրեմն գո՞հ ես ինէ, հարցուց զուստի կիներ :

— Այո՛, սիրելի Լօրէնցա :

— Է՛հ ուրեմն, ո՞ւր է վարձատրութիւնս :

Պալատօ ժպտեցաւ և շրթունքը Լօրէնցայի շրթունքին մօտեցուց, որուն մարմինը այս հեշտազեղ հպումէն սարսուց :

— Ո՛հ, ժօղէ՛ֆ, ժօղէ՛ֆ, որքա՛ն կը սիրեմ քեզ, մրմնջեց մանկամարդ կիներ ցաւազին հառաչանքով մը :

Եւ Պալատօն սրտին վրայ սեղմելու համար թեւերը երկնցուց :



ԾԵ

ԿՐԿԻՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ — ՔՆԷԱԾՈՒԹԻՒՆ

Պալատօ աշխուժիւ ետ քաշուեցաւ և Լօրէնցայի թեւերը օղը զրկեցին ու խաչածեւ կուրծքին վրայ ինկան :

— Լօրէնցա, բարեկամիդ հետ խօսակցիլ կ'ուզե՞ս, հարցուց Պալատօ :

— Ո՛հ, այո՛, բայց միշտ դո՛ւն խօսէ ինձի, շատ կը սիրեմ քու ձայնդ :

— Լօրէնցա, դուն յաճախ ինձ ըսած ես թէ աշխարհէ մեկուսացած ինձ հետ ազրկելով ինքզինքդ շատ երջանիկ պիտի համարէիր :

— Այո՛, խիստ երջանիկ :

— Լաւ ուրեմն, քու այդ փափաքդ իրականացուցի, Լօրէնցա : Այս սենեակին մէջ ոչ ոք կրնայ մեզ հետ ապնդել, ոչ ոք կրնայ մեզ գտնել : Կոս առանձին ենք, բոլորովին առանձին :

— Ո՛հ, շատ լաւ է ատիկայ :

— Ըսէ ինձ թէ այս սենեակը ճաշակիդ համեմատ կահաւորուած է :

— Հրամայէ որ տեսնեմ :

— Տե՛ս :

— Ո՛հ, ի՛նչ զեղեցիկ սենեակ, բացազանչեց Լօրէնցա :
— Ուրեմն հաւնեցա՞ր, հարցուց կոմսը քաղցրութեամբ :

— Ո՛հ, այո՛, ահա իմ սիրական ծաղիկներս, արեւադէմ համեմուկներս, զեղին վարդերս, չինական յաւմիկներս : Շնորհակալ եմ, իմ փափկասիրտ ժօղէֆս, որքա՛ն բարի սիրտ մը ունիս :

— Քեզի հաճելի ըլլալու համար ձեռքէս եկածը կ'ընեմ, Լօրէնցա :

— Ո՛հ, արժանիքէս հարկւր անգամ աւելին կ'ընես :

— Կը խոստովանի՞ս ուրեմն որ խիստ չարութեամբ վարուեցար հետս :

— Իրաւունք ունիս, իրաւունք ունիս, բայց ինձի պիտի ներես, այնպէս չէ՞, ժօղէֆ :

— Քեզի պիտի ներեմ եթէ ինձի բացատրես այն տարօրինակ գաղտնիքը որուն դէմ կը մտքառիմ քեզ ձանձնալէս ի վեր :

— Մտի՛կ ըրէ, Պալտամօ : Իմ մէջս իրարմէ տար-
բեր երկու Լօրէնցա կայ, մին այն է որ զքեզ կը սիրէ,
իսկ միւսը այն՝ որ զքեզ կ'ատէ, ասիկայ կը նմանօր
մէջս գտնուող իրարու ներձակ այն երկու գոյութիւն-
ներուն՝ որոնցմէ մին զիս եղեմական զուարթութեամբ
կը ընու, միւսը՝ դժոխական տանջանքներով կը լլկէ :

— Այս երկու գոյութիւններէն մին Քուենն է և միւս-
սը Չարթուսը, այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Այսպէս, քնացած ատենդ զիս կը սիրես և ար-
թուն եղած ատենդ կ'ատես :

— Այո՛ :

— Ինչո՞ւ համար :

— Չեմ գիտեր :

— Լա՛ւ գիտուէ, նե՛րսդ նայէ, սի՛րսդ քննէ :

— Ո՛հ, այո՛ . . . : Հասկցայ :

— Խօսէ՛ :

— Երբ Լօրէնցա արթուն ըլլայ՝ հոտուհի մըն է,
խառաջի սնապաշտ աղջիկ մը : Կը կարծէ թէ զիսու-
թիւնը ոճիր մըն է և սէրը մեղք մը : Արթուն եղած
ատենը կը վախնայ զիսուն Պալտամօն, կը վախնայ
զեղեցիկ Պալտամօն : Խոստովանահայրը ըսած է Լօրէն-
ցայի որ քեզ սիրելով իր հոգին պիտի կորսնցնէ, ուստի
ան քենէ խոյս պիտի տայ միշտ և յաւիտենապէս :

— Իսկ երբ Լօրէնցա քնանայ :

— Ո՛հ, այն ատեն խնդիրը կը փոխուի . այն ատեն
ա՛լ հոտուհի չէ, ա՛լ սնապաշտ չէ, այլ կինն է : Այն ատեն
Պալտամօի սիրտն ու միտքը կը տեսնէ, կը հասկնայ որ
այդ հանճարեղ մարդը վսեմ բաներու վրայ կը մտածէ :
Այն ատեն ինքզինքը անոր հետ բաղդատելով իր ոչըն-

չութիւնը կը հասկնայ, և շատ կը բաղձայ անոր մօտն
ապրիլ և անոր հետ մեռնիլ՝ որպէս զի ազագան ցած
ձայնով արտասանէ Լօրէնցա անունը, ինչպէս որ բար-
ձրագոյ պիտի հռչակէ . . . Գօնթ տը Գալիոսթրօ անունը :

— Ուրեմն այս անունով կրեւելի պիտի հանդիսա-
նամ :

— Այո՛, այո՛, այս անունով :

— Սիրելի Լօրէնցա, այս նոր բնակարանէն պիտի
ախորժի՞ս :

— Մինչև հիմայ ինձ յատկացուցած բնակարաննե-
րէդ շատ աւելի ճոխ է, բայց ասոր համար չէ որ ինձ
ախորժելի կը թուի :

— Հապա ինչո՞ւ համար :

— Անոր համար որ ինձ հետ հոս բնակիլ կը խոս-
տանաս :

— Ա՛հ, քուսի մէջ եղած ատենդ զիսն որքան
եռանդազին ու ցանկութեամբ կը սիրեմ քեզ :

Դեռատի կինը անոր ծունկերը իրեն քաշեց, մինչ-
զիս տոգոյն ժպիտ մը կը նկարուէր շրթներուն վրայ :

— Այո՛, կը տեսնեմ, սակայն բան մը կայ որ Լօ-
րէնցայէն աւելի կը սիրես, յարեց դեռատի կինը հասա-
չանք մը արձակելով :

— Եւ ի՞նչ է ան, հարցուց Պալտամօ սարսուռ մը
զգալով :

— Երազդ :

— Գո՛րծդ, ըսելու էիր :

— Փատախրութիւնդ :

— Փա՛նքդ, ըսելու էիր :

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ :

Դեռատի կնոջ կուրծքը ճնշուեցաւ, սիրտը ճմլուե-

ցաւ և իր փակ տրտեւանունքներուն մէջ լռին ու զըմ-
ուսիրածոս արցունքի կաշլակներ նշմարուեցան :

— Ի՞նչ կը տեսնես ուրեմն, հարցուց Պալսամօ զար-
մանալով դեռատի կնոջ այն ահարկու յտակատեսութե-
անէն որմէ ինքն անգամ երբեմն կ'ահարեկէր :

— Ո՛հ, ստուերներ կը տեսնեմ որոնց մէջ խուճապ-
ներ կը սպրդին . այդ ստուերներէն ամանք ձեռքերնուն
մէջ բռնած են իրենց թագակիր զլուխները, և դո՛ւն,
դո՛ւն, բոլոր ստոնց մէջ կը գանուիս իրրեւ զօրապետ
մը պատերազմի դաշտին վրայ : Ինձ կը թուի թէ Աս-
տուծոյ զօրութիւնն ունիս, հրամաններ կուտաս և քեզ
կը հնազանդին :

— Լա՛ւ ուրեմն, զիս ունենալնուն համար չե՞ն պան-
ծար, հարցուց Պալսամօ ուրախութեամբ :

— Ո՛հ, քու բարեխորութիւնդ աւելի պանծալի է
քան թէ մեծութիւնդ : Ասկէ դատ, բոլոր շուրջս զըս-
նուողներուն մէջ ինքզինքս կը փնտսեմ և չեմ գտներ :
Ո՛հ, ես այն ստեն հոն չպիտի ըլլամ Հոն չպիտի
ըլլամ, մրմնջեց Լօրէնցա :

— Եւ ո՞ւր պիտի ըլլաս :

— Մեռած պիտի ըլլամ :

Պալսամօ սարսուց :

— Դուն մեռած պիտի ըլլա՛ս, սիրելի Լօրէնցաս,
զօջեց Պալսամօ : Ո՛չ, ո՛չ, մենք ի միասին և իրար
սիրելու համար պիտի սպրինք :

— Դուն զիս չես սիրեր :

— Ինչո՞ւ :

— Գոնէ պէտք եղածին պէս չես սիրեր, զօջեց Լօ-
րէնցա երկու ձեռքերովը Պալսամօի գլուխը բռնելով :
Այո՛, զիս պէտք եղածին պէս չես սիրեր, կրկնեց և

հրատարեք չրթունքը անոր ճակատին գպցնելով զգուան-
քը բազմապատկեց :

— Ի՞նչ է իմ պակասութիւնս :

— Պազ վերաբերումդ : Տե՛ս, կ'ընկրկիս : Միթէ
չրթունքներս քեզ կ'այրե՞ն որ համբոյրներէս միշտ խոյս
կուտաս : Ո՛հ, ի՛նձ վերադարձուր ուրեմն մանկութեանս
օրերը, Սուպիազօի մենաստանս և առանձին գիշերներս :

— Լօրէ՛նցա, Լօրէ՛նցա :

— Ո՛հ, ինէ խոյս մի՛ տար, Պալսամօ, խոյս մի՛
տար ինէ, կը պաղատիմ . ձեռքերդ տուր որ սեղմեմ,
աչքերդ ինձ մօտեցուր որ համբուրեմ . միթէ կի՛նդ չե՞մ :

— Այո՛, այո՛, սիրելի Լօրէնցաս, դուն իմ պաշտելի
կի՛նս ես :

— Եւ դուն կը հանդուրժե՞ս որ այսպէս անօգուտ և
մեկուսացած կեանք մը անցընեմ քովդ : Քովդ ամբիժ և
մենակեաց ծաղիկ մը ունիս որուն քաղցրարոյր և զըր-
զըռիչ հոտը քեզ կը կանչէ և դուն կը մերժես : Ո՛հ,
լաւ գիտեմ, ես քեզի համար բան մը չեմ արժեր :

— Ընդ հակառակը, սիրելի Լօրէնցաս, դուն ինձ
համար ամէն բան ես . դո՛ւն ես իմ զօրութիւնս, կա-
բօղութիւնս և հանճարս, որովհետեւ առանց քեզի բան
մը չպիտի կրնայի ընել : Գազրէ՛ ուրեմն զիս սիրելէ
այն տենդագին յիմարութեամբ՝ որով քու երկրիդ կա-
նանց գիշերները կը խռովուին : Զլա այնպէ՛ս սիրէ՛
ինչպէս որ ես զքեզ կը սիրեմ :

— Ո՛հ, ինձ հանդէպ անուցած զգացումդ սէր չէ՛,
սէր չէ՛ :

— Գիտեմ, բայց քե՛նէ պահանջածս առ է, որովհե-
տեւ միայն այդպէսով ուզածս ինձ կրնաս տալ, որովհե-
տեւ քու հօգիդ ունենալով է որ ես երջանիկ կ'ըլլամ :

— Երջանի՛կ, ասիկայ երջանկութի՞ւնն կը համարես, ըսաւ Լօրէնցա արճամարտոտ շեշտով մը :

— Այո՛, որովհետեւ ըսա իս մարդ մեծ ըլլալով երջանիկ կ'ըլլայ :

Լօրէնցա սրտին խորէն հառաչեց :

— Ո՛հ, սիրելի Լօրէնցա, եթէ զիտնայիր թէ ի՛նչ անսպասելի բան մըն է իր ունեցած կիրքերովն իսկ զինքը նուաճելու համար մարդոց սիրտը բացայայտութեն կարգալը :

— Այո՛, գիտեմ, այդ բանին համար զիս քու գործիքդ ըրած ես :

— Այդչափով չըմենար : Աչքերդ ինծի համար ապագայի գոց զրքին մէջ կը կարդան այն ամէն բաները զորս ես քսան տարուան տքնաջան աշխատութեամբս չկրցայ սորվիլ, գուն, իմ անմեղ և ամբիժ աղաւնիս, երբ ուզեա՞ ինձ ամէն բան կը սորվեցնես : Քայլերս՝ ուրոնց ներքեւ անհամար թշնամիներ դարան կը լարեն և խոչընդոտներ կը մղեն՝ գուն կը լուսաւորես . միտքս՝ որմէ կախում ունի կեանքս, ինչքս և ազատութիւնս՝ մութին մէջ տեսնող լուսաննի մը աչքերուն նման կը բանաս : Գեղանի աչքերդ գոցուելով՝ աշխարհային լոյսը չեն տեսներ և գերմարդկային պայծառութեան մը մէջ կը բացուին ու ինծի համար կը հսկեն : Դո՛ւն ես զիս ազատ, հարուստ և զօրաւոր ընողը :

— Իսկ գուն փոխադարձաբար ինձ տառապանք կը հրամցնես, գոչեց Լօրէնցա սիրատուչոր :

Եւ սովորականէն աւելի զօրաւոր ցանկութեամբ մը թեւերովը Պալտամօն գրկեց, մինչդեռ այս վերջինը ելկարական բոցերէն կատարելապէս լափուած ըլլալով՝ տկար ընդգլխութիւն մը ցոյց կուտար :

Բուռն ճիգով մը զինքը թմբեցնել սկսող կենդանի կապերը քակեց :

— Լօրէնցա, Լօրէնցա, գթութիւնն . . . , գոչեց :

— Քու աղջիկդ չե՛մ ես, այլ կինդ : Զիս սիրէ ա՛յնպէս՝ ինչպէս որ ամուսին մը իր կինը կը սիրէ և ո՛չ թէ ինչպէս որ հայրս զիս կը սիրէր :

— Լօրէնցա, պաղատապին կ'աղաչեմ քե՛նէ, քեզ մատուցած սէրէս տարբեր սէր մի՛ պահանջէր ինէ, ըսաւ Պալտամօ սիրատուչոր :

— Բայց սէր չէ՛ աս, սէր չէ՛, գոչեց մանկամարդ կինը յուսահատութեամբ թեւերը երկինք բարձրացնելով :

— Սէ՛ր է . . . , բայց սուրբ և ամբիժ սէր մը, այն սէրը զոր մարդ պարտաւոր է իր մէջ սնուցանել կոյսի մը հանդէպ :

Գեոտափ կինը յանկարծական շարժում մը ըրաւ և սեւ մազերուն հիւսկէնները ակամայօրէն քակուեցան ու վար թափեցան : Իր սպիտակ և ջղուտ թեւը գրեթէ սպառնալից կերպով կոմսին երկնցուց :

— Ո՛հ, ի՛նչ կը նշանակէ ասիկայ, գոչեց Լօրէնցա կարուկ և վշտագին ձայնով մը : Ինչո՞ւ համար ուրեմն զիս հայրենիքէս, անունէս, ընտանիքէս և մինչեւ իսկ Աստուծմէս բաժնեցիր : Այո՛, Աստուծմէս, որովհետեւ քու Աստուածդ իմինիս չնմանիր : Ինչո՞ւ համար իմ վրաս տիրեցիր այն բացարձակ իշխանութեամբ՝ որ զիս քու գերիդ, կեանքս քու կեանքդ և արիւնս քու արիւնդ կ'ընէ : Կը լսե՞ս : Ինչո՞ւ այս բանը ըրիր՝ եթէ զիս Լօրէնցա կոյսը պիտի կոչէիր :

Պալտամօ սրտաբեկ կնոջ հառաչանքը արձագանքեց :

— Աւա՛ղ, յանցանքը քո՛ւկդ է, կամ մանաւանդ Աստուծոյ է : Ինչո՞ւ Աստուած անվրիպելի նայուածքով հրեշտակ մը ըրեր է քեզ՝ որուն օգնութեամբը տիեզեր-

քը նուաճելու կարողութիւնը կը ստանամ . ինչո՞ւ ա-
մէնուն սիրտը կը կարգատ ապակիի մը հտեւէն թուղթ
մը կարգալու պէս : Պատճառն այն է որ դուն ամբօւ-
թեան հրեշտակն ես, Լօրէնցա, ամբիժ աղամանդ մըն
ես և մտքիդ առջև ընաւ ստուեր չկայ . պատճառն այն
է որ Աստուած քու այդ անարատ, ամբիժ և նշուլագեղ
կերպարանքդ տեսնելով՝ կը հաճի հոն իջեցնել իր սուրբ
հօգին՝ որ սովորաբար ստորին և դձուճ արարածներուն
մէջ անարատ հանգստալայր մը չգտնելուն համար անոնց
վերեւը կը սաւառնի : Կոյս ըլլալուդ համար տեսուհի ես,
Լօրէնցա . եթէ կին ըլլայիր՝ միմիայն նիւթ պիտի
ըլլայիր :

— Եւ դուն իմ սէրս նախապատիւ չե՞ս համարեր այն
ամէն երազներէն՝ որոնց յիմարօրէն սիրահարուած ես,
այն ամէն ցնորքներէն՝ զորս ինքնին կը ստեղծես, գո-
չեց Լօրէնցա կատաղութեամբ ձեռքերը իրար զարնելով :
Քու ներկայութեամբդ զիս գրգռելով և չարչարելով կու-
սական ամբօւթեան կը գատապարտես զիս : Ո՛հ, Ժօ-
ղէ՛Ք, Ժօղէ՛Ք, քեզ կ'ըսեմ թէ ոճիր մըն է գործածդ :

— Ձիս մի՛ յանդիմաներ, սիրելի Լօրէնցա, որով-
հետեւ ե՛ս ալ քեզի պէս կը տանջուիմ, գոչեց Պալսամօ :
Տե՛ս, սիրտս կարգա՛, քու ուղածդ ի՛մ ալ ուղածս է, և
այժմ կրնա՞ս ըսել թէ քեզ չեմ սիրեր :

— Բայց ինչո՞ւ ուրեմն ինքզինքդ կը զսպես, ինչո՞ւ
դէմ կը կենաս :

— Որովհետեւ քեզ ինձի հետ աշխարհիս գահին վրայ
բարձրացնել կ'ուզեմ :

— Ո՛հ, քու փառասիրութիւնդ երբէք քեզ պիտի
տա՞յ սիրոյս քեզ տուածը, մամռաց զեռատի կիներ :

Պալսամօ՛ ինքզինքը գրեթէ կորսնցուցած՝ զլուխը
Լօրէնցայի կուրծքին վրայ դրաւ :

— Ո՛հ, այո՛, այո՛, վերջապէս կը տեսնեմ թէ զիս
քու փառասիրութենէդ, կարողութենէդ և յոյսեդ աւելի
կը սիրես, գոչեց Լօրէնցա : Ո՛հ, վերջապէս զիս կը սի-
րես այն սիրով որով ես ալ քեզ կը փոխարինեմ :

Պալսամօ ջանաց ի բաց վանել այն սիրայեղց ամպը
որ կը սկսէր իր միաքը պղտորել : Այս ճիգը օգուտ մը
չունեցաւ :

— Ո՛հ, քանի որ զիս այդչափ շատ կը սիրես, խնա-
յէ՛ ինձի, թո՛թովեց Պալսամօ :

Լօրէնցա ա՛լ մտիկ չէր ըներ . պողպատէ ակիշներէ
աւելի զօրաւոր և աղամանդէ աւելի կարծր՝ անդիմադ-
րելի շղթայ մը կազմեր էր իր երկու թեւերովը :

— Ի՛նչպէս որ կ'ուզես այնպէս սիրէ զիս, իբրեւ
քոյր կամ կին, իբրեւ կոյս կամ ամուսին, բայց համ-
բոյր մը, միայն համբոյր մը :

Պալսամօ պարտուեր էր . այս աստիճան սիրային ար-
տայասուլութեանց չկարենալով այլեւս դիմանալ և դէմ
գնելու իր զօրութիւնը կորսնցնելով, հրաբորք աչքե-
րով, հեւասպառ, զլուխը գէպի ետ, կուրծը գէպի առաջ,
Լօրէնցայի կը մօտենար այն պողպատին պէս՝ որուն վա-
նողական զօրութիւնը կը սկարանայ մագնէտին ձգողա-
կան զօրութեան դէմ :

Հագիւ թէ իր բորբոքած շրթունքը զեռատի կնոջ
շանթահարիչ շրթունքին պիտի դպէ՛ր, յանկարծ խելքը
զլուխը եկաւ : Թմբեցուցիչ գոլորշիներով ճնշուած մըթ-
նոլորտը ձեռքերովը մտրակեց, մարմինը թոթովեց և
հպարտ կեցուածքով մը ոտքի ելաւ :

— Լօրէնցա, արթնցի՛ր, կը հրամայե՛մ, գոչեց զօ-
րաւոր հրամայական շեշտով մը :

Այն շղթան՝ զոր Պալսամօ չէր կրցած ջախջախել՝

այս խօսքերուն սուջեւ խակոյն թուլցաւ, զինքը սեղմող թեւերը քակուեցան, Լօրէնցայի ցամքած շրթունքը պատող հրատապ ժպտը հոգեկարքի մը ցոյց առած կեանքի յետին նշոյլին պէս մարեցաւ, գոց աչքերը բացուեցան և տարածուն բիբերը սեղմուեցան : Թեւերը ուժով մը ցնցեց, երկարօրէն յօրանջեց և արթուն վիճակի մէջ բազմոցին վրայ տարածուեցաւ մնաց :

Պալատօ, որ անորմէ երեք քայլ անդին սօքի կեցած էր, խորունկ հառաչանք մը արձակեց :

— Երթաս բարձր Անտէրջ, երթաս բարձր Երջանկութիւն, մբմնջեց :

ՅԶ

ԿՐԿԻՆ ԳՈՅՈՒԹԻԻՆ — ԶԱՐԹՈՒՄ

Լօրէնցայի աչքերը իրենց զօրութիւնը ստանալուն պէս, արագ ակնարկ մը արձակեց իր շուրջը :

Ամէն բան աչքէ անցուց · կիներու հաճոյք պատճառող հազարաւոր իրերով լեցուն սենեակը իր կախերեսութիւնը չկրցաւ ալալել · վերջապէս ցաւազին դողով մը Պալատօի վրայ յանց աչքերը :

Պալատօ անորմէ քանի մը քայլ անդին կեցած՝ ուժադրութեամբ անոր կը նայէր :

— Դա՞րձեալ դուք էք, ըսաւ Լօրէնցա ընկրկելով :

Եւ ստեղծմը գէմքին վրայ իր ծայրայեղ գիծերն յօրինեց · շրթունքները սոգունեցան, քրտինքը մազերուն արմատը թրջեց :

Պալատօ պատասխան չտուաւ :

— Ո՛ւր եմ, հարցուց Լօրէնցա :

— Տիկին, գիտէք թէ սուրիէ կուզաք, հետեւաբար ուր դանուելնիդ կրնաք գուշակել, պատասխանեց Պալատօ :

— Այո՛, կը յիշեմ : Գիտեմ որ զիս հալածեցիք, ետեւեւ եկաք և զիս խլեցիք Աստուծոյ միջնորդին՝ արքայազուն իշխանուհին ձեռքէն :

— Ուրեմն կրնաք համկնալ նսեւ թէ իշխանուհին, հակառակ իր ամենակարողութեան, չկրցաւ ձեզ պաշտպանել :

— Այո՛, մագական զօրութեամբ մը յաղթեցիք անոր, գոչեց Լօրէնցա ձեռքերը իրար միտցնելով : Ո՛հ, Աստուած իմ, ազատէ զիս սա ստատանային ձեռքէն :

— Ո՛ր կողմն ստատանայի կը նմանի, տիկին, ըսաւ Պալատօ ուսերը թարձրացնելով : Ա՛լ կը բառէ, կ'ազաչեմ, մէկդի թողուցէք Հումէն բերած այդ սղաշական կարծիքներուդ կոյսն ու մենատաանէն բերած անհեթեթ սնապաշտութիւններնիդ :

— Ո՛հ, մենատաան, ո՞վ զիս դարձեալ իմ մենատանն պիտի վերադարձնէ, գոչեց Լօրէնցա փղձկելով :

— Իրաւ որ շատ հաճելի տեղ մըն է սա ձեր մենատանն կոչած գերեզմանները, ըսաւ Պալատօ հեզուական :

Լօրէնցա պատուհաններէն միտն քով վազեց, վարագոյրը բացաւ և փնդկը վեր ստաւ, բայց իր ստարածուն բազուկները ծաղիկներով ծածկուած երկաթէ վանդակապատի մը զարնուեցան :

— Մէկ բանտէն մի՛ւտը, գոչեց Լօրէնցա : կը նախընտրեմ այն բանտը որ զէպի երկինք կ'առաջնորդէ, քան թէ այն որ դժոխք կը տանի :

Եւ փափուկ բռունցքները կատաղաբար երկաթէ ձուղերուն կաթնցուց :

— Լօրէնցա, եթէ աւելի խոհեմ ըլլայիք, ձեր պատուհանին առջեւ վանդակապատի տեղ միայն ծաղիկներ պիտի գտնէիք :

— Խոհեմութեամբ չլարուեցա՞յ երբ զիս տա Ալթօթաս անունով ճիւղալին հետ թաւալուն կառքին մէջ կը պահէիք : Այո՛ : Բայց և այնպէս զիս աչքէ չէիք հեռացըներ, ձեր կարանաւորուն էի և երբոր ինէ բաժնուէիք՝ երեսիս կը փչէիք այն գիւժական շունչը որուն հպատակող ակարութիւնը իմ մէջս կը բնակի և որուն դէմ մաքառելու կարողութենէն զուրկ եմ : Ո՛ւր է ինծի մահու չափ երկիւզ ազդող նա թշուառական ու անճոռնի ծերունին : Տըտեղը, անկիւն մըն է անշուշտ : Եթէ երկուքս ալ լռենք, թերեւս անոր ուրուականին թխրտոցը գետնին տակէն պիտի առնենք :

— Տղու մը պէս երեսակայութիւննիդ կը յուզէք, տիկին, ըսաւ Պալսամօ : Ալթօթաս, իմ գոտարակս, բարեկամս և երկրորդ հայրս, անվնաս ձերունի մըն է որ երբէք ձեզ տեսած կամ ձեզի ժօտեցած չէ, և եթէ մօտեցած ու տեսած ալ է՝ ամէն պարագայի մէջ ուշադրութիւն անկամ ըրած չէ ձեզի, որովհետեւ բոլորովին իր գործին ետեւէն ինկած ու անով լախուած է :

— Իր գո՞րծը մի՛, մոմօսաց Լօրէնցա, խնդրեմ, ըսէք, ի՞նչ է տըրոր գործը :

— Կենսատու ցքին կը փնտռէ, այն ըմպելիքը զոր վեց հազար տարիէ ի վեր բոլոր գիտնականները կը փնտռան :

— Իսկ գո՛ւք ի՞նչ կը փնտռէք :

— Ե՞ս, մարդոց կատարելութիւնը :

— Ո՛հ, սատանայ են ասոնք, սատանայ, բացազանչեց Լօրէնցա ձեռքերը երկինք բարձրացնելով :

— Է՛ն, նորէն յիմարութիւնդ կը բռնէ, ըսաւ Պալսամօ ոտքի ելնելով :

— Յիմարութիւ՞նս մի՛ :

— Այո՛, Բան մը կայ որ չէք գիտեր, ձեր կեանքը երկու հաւասար մասերու բաժնուած է, միոյն մէջ քաղցը, բարեսիրտ և խոհեմ էք, իսկ միւսին մէջ յիմար :

— Ասոր համա՞ր զիս կը բանտարկէք :

— Յաւելով կը խոստովանիմ այդպէս ըլլալը :

— Ո՛հ, ուղածնուդ չափ անողորմ, բարբարոս և անգութ եղէք, զիս բանտարկեցէք, սպաննեցէք, բայց կեղծաւորութիւն մի՛ բանեցնէք և զիս գիշատած ստեղծելով զրաս ցաւելու ձեւեր մի՛ առնէք :

— Բայց ի՞նչ ըսել կ'ուզէք, միթէ շքեղ և հանգստաւէտ սենեակի մը մէջ բնակիլը չարքարա՞նք է, ըսաւ Պալսամօ առանց զայրանալու և մինչև իսկ ժպտելով :

— Երկաթնե՛ր, ամէն կողմ երկաթ, վանդակապատնե՛ր, վանդակապատնե՛ր, օդ չկայ, օ՛դ :

— Այդ երկաթները ձեր օգտին համար են, կը լսէ՞ք, Լօրէնցա :

— Ո՛հ, գոչեց Լօրէնցա, զիս կրակին վրայ այրելով կը սպաննէք և սպա կ'ըսէք թէ իմ օգտիս, իմ բարութեան համար կ'ընէք այդ բանը :

Պալսամօ զեռասի կնոջ մօտեցաւ և բարեկամական ժպիտով մը անոր ձեռքը բռնել ուզեց : Լօրէնցա օձի մը դպչելու պէս ետ քաշուեցաւ :

— Ո՛հ, ինձ մի՛ դպիք, գոչեց :

— Ուրեմն զիս կ'ատէ՞ք, Լօրէնցա :

— Մահապարտի մը կը հարցնէք թէ իր դահլճը կ'ա-
տէ՞ :

— Լօրէնցա՛, Լօրէնցա՛, ձեր դահլճը ըլլալ չուզի-
լուս համար է որ կատարեալ ազատութիւնն չեմ տար
ձեզ : Եթէ ուզած ստեղծելու երթալ գալու ազատութիւնը
ունենայիք, ով զիտէ ինչե՛ր պիտի ընէիք ձեր յիմա-
րութիւնը բռնած մէկ վայրկեանին :

— Ինչ պիտի ընէի՞ : Հը՛մ, թող օր մը ազատ ըլլամ
և պիտի տեսնէք թէ ի՛նչ պիտի ընեմ :

— Լօրէնցա, դէշ կը վարուիք այն ամուսնոյն հետ
զոր Աստուծոյ ատջեւ ընտրեցիք :

— Ես ձեզ ընտրած ըլլա՛մ : Աստուած չընէ :

— Սակայն գուք իմ կինս էք :

— Ահա ստանային գործը հոս է զոր չեմ կրնար
ըմբռնել :

— Ինչ զձ յիմար, ըսաւ Պալատօ գորովագին հայ-
ուածքով մը :

— Բայց ես հոտուէի եմ, և օր մը չէ օր մը վրէժս
պիտի լուծեմ, մոմոաց Լօրէնցա սպանազին :

Պալատօ գլուխը մեղմիւ թօթվեց :

— Ձիս վախցնելու համար կ'ըտէք, այնպէս չէ՞,
հարցուց Պալատօ ժպտելով :

— Ո՛չ, ո՛չ, ըսածս պիտի գործադրեմ :

— Ո՛վ քրիստոնեայ կին, ի՞նչ կ'ըտէք, գոչեց Պալ-
ատօ իշխանաբար : Ձեր կրօնքը, որ չարութիւնը բա-
րութեամբ հատուցանել կը պատուիրէ, կեղծիք մ'ըն է
ուրեմն, քանի որ, պնդելով հանդերձ թէ այդ այդ կրօն-
քին կը հետեւիք, բարիքը չարութեամբ կը փոխարինէք :

Լօրէնցա պահ մը այս փոքրերէն զարնուած երեւցաւ :

— Ո՛հ, ժողովուրդին թշնամիները արդարութեան
մատնելը վրէժ լուծել չէ, այլ պարտականութիւն մը :

— Ձիս իբրև կախարդ կամ իբրև վհուկ արդարու-
թեան չպիտի կրնաք մատնել, որովհետև ժողովուր-
դին ո եւ է վնաս մը չունիմ, այլ զԱստուած կ'արհամար-
հեմ : Ինչո՞ւ ուրեմն Աստուած, որ մէկ նշանով կրնայ
զիս շահնթանել, զիս պատժելու ծանրութիւնը յանձն
ստնել չուզեր և այդ գործը մարդոց կը թողու, մարդոց՝
որոնք ինձ նման տկար և սխալական են :

— Կը մոռնայ և կը ներէ, որովհետև անյիշաչար
է, կը սպասէ որ դարձի գաք, մրմնջեց դեռատի կինը :

— Եւ հիմայ ձեզի խրատ կուտայ որ ձեր բարեկա-
մը, ձեր բարերարը և ձեր ամուսինը մատնէ՞ք :

— Ամուսինս մի՛ : Փա՛նք Աստուծոյ, ստանց զիս
կարմրցնելու կամ դողացնելու ձեր ձեռքը երբէք իմ ինխ
դպած չէ :

— Միշտ վեհանձնօրէն այդ շօշախումէն խուստիած
եմ :

— Ճշմարիտ է, տառապանացս միակ հատուցումը
այդ եղած է : Ո՛հ, որքա՛ն պիտի տանջուէի եթէ ձեր
սիրոյն յազուրդ տալու ստիպողականութեան մէջ գըտ-
նուէի :

— Ո՛հ, ի՛նչ անթախանցելի դադանիք, մոմոաց
Պալատօ՛ Լօրէնցայի պատասխանելէ աւելի իր խորհուրդ-
ներուն հետեւելով :

— Վերջացնե՛նք, ինչո՞ւ ազատութիւնս կը խլէք
ինէ, ըսաւ Լօրէնցա :

— Որովհետև զայն կամովին ստալէ վերջ ես առնել
կ'ուզէք, որովհետև ձեզ պաշտպանողէն խոյս կուտաք,
որովհետև կ'երթաք օտարուհիէ մը օգնութիւն կը խըն-

զրէք ձեզ սիրողին զէմ ելնելու համար, որովհետեւ ձեզի չսպառնացողի մը անդադար կը սպառնաք երեւան հասնել աշնակի գաղանիքներ որոնք ձեզի չեն վերաբերիր և որոնց ո՛ր աստիճան ծանրակշիռ ըլլալը չէք գիտեր :

— Ո՛հ, այն կալանաւորը որ իր ազատութիւնը կը փնտռէ ամենուրեք՝ վերջապէս օր մը զայն ձեռք կ'անցընէ և գիտցէք որ ինչպէս ձեր շրջուն վանդակը չկըրցաւ՝ նոյնպէս ալ ձեր վանդակապատ բնակարանը չպիտի կրնայ զիս արգելափակել :

— Վանդակները բաւական ամուր են, Լօրէնցա, և այս բանը ձեզի համար բարեբաղդութիւն մըն է, ըսաւ Պալատօ սպառնալից հանդարտութեամբ մը :

— Աստուած Լօրէնիսին նման փոթորիկ մը կը զրկէ, կայծակ մը կ'իջնցնէ և ձեր վանդակները կը ջրախափէ :

— Հաւատացէ՛ք ինձ, Լօրէնցա, և աղօթիցէք Աստուծոյ որ այդպիսի բան մը չընէ՝ իրրեւ բարեկամ կը խօսիմ ձեզի, զիս մտիկ ըրէք :

Այնպիսի բարկութիւն մը ամփոփուած էր Պալատօի ձայնին մէջ, այնպիսի վսեմ հուրով մը բոցալաւաւ էին անոր աչքերը և սալտակ ու ջղուտ ձեռքը ծանրութեամբ և հանգիստօրութեամբ արտասանուած այս բառերուն խորքանշիւր ելուէջին վրայ այնպիսի տարօրինակ կերպով կը կարկամէր որ, Լօրէնցայի գերազըր-գիւր ընդզումը իր զագաթնակէտին հասած պահուն իսկ ակամայ զսպուեցաւ :

— Կը տեսնէ՞ք, աղջիկս, շարայարեց Պալատօ անանց իր ձայնին սպառնալից քաղցրութիւնը կորսնցնելու, այս բանտը թագունիի մը բնակարանին նմանցնելու համար ամէն ջանք չինսայիցի, այնպէս որ եթէ թագունի մըն ալ ըլլայիք՝ հոս բան մը չպիտի պակսէր ձեզ :

Ուստի ա՛լ մի յուզուիք : Հոս սպրեցէք իրրեւ ձեր մենաստանին մէջ . իմ ներկայութեանս վարժուեցէք . սիրեցէք զիս իրրեւ բարեկամ կամ իրրեւ եղբայր : Ես մեծ վշտեր ունիմ, զանոնք մտերմաբար ձեզի կը հաղորդեմ . ստակալի ստապանքներու մտանուած եմ, երկիւղալի վտանգներու ենթակայ եմ, ձեր մէկ ժպտը զիս կրնայ սիտիել : Քանի ձեզ բարեբարոյ, խոնկ և համբերատար գտնեմ, ա՛յնքան պիտի նրբացնեմ ձեր մենաստանին վանդակները : Ո՞վ գիտէ, թերեւս ասրիէ մը կամ վեց ամիսէն ինծի չափ ազատ պիտի ըլլաք, պայմանաւ որ այդ ազատութիւնը ինէ գողնալ չուզէք :

— Ո՛հ, ո՛հ, խոտուած չեմ ուզեր, ա՛լ ձեր ստախօսութիւնները չեմ կլկեր, զոչեց Լօրէնցա չկարենալով համկնալ թէ ի՞նչպէս այս ատենի գիտաւորութիւնը այնքան քաղցրանշիւր ձայնի մը տակ կրնար ծածկուիլ : Գուք զիս բռնութեամբ առեւանդեցիք . ես իմ անձիս կը վերաբերիմ . զոնէ զիս Աստուծոյ յանձնեցէք եթէ չէք ուզեր ինքզինքիս յանձնել : Մինչեւ այսօր ձեր միտպետութեանը ներքի որովհետեւ կը յիշեմ թէ զիս ազատեցիք այնպիսի առաջակներու ձեռքէ որոնք պատիւս պիտի բռնաբարէին, բայց այս երախտադիտական զգացումս ալ տակաւ առ տակաւ կը սկսի նուազիլ իմ մէջս : Եթէ քանի մը օր եւս մնամ զիս կատղեցնող այս բանտին մէջ՝ ա՛լ անկէ ետքը ձեզ հանդէպ անուցած երախտադիտական զգացումս պիտի մարի, և այն ատենը, զգոչացէ՛ք, թերեւս մինչեւ իսկ պիտի կործեմ թէ զիս առեւանդիլ ուզող առաջակներուն հետ զագանի յարաբերութեան մէջ էիք :

— Արդեօք զիս առաջակապետ մը կարծելու պատի՛ւը կ'ընէք ինձ, հարցուց Պալատօ հեղնական :

— Չեմ գիտեր . գիտցածս սա է թէ խօսքեր լսեցի և նշաններ տեսայ :

— Նշաններ տեսաք և խօսքեր լսեցի՞ք, գոչեց Պալտամօ ամբողջանալով :

— Այո՛, այո՛, տեսայ և լսեցի և զանոնք միտքս պահած եմ, գոչեց Լօրէնցա :

— Բայց մարդու չպիտի ըսէք զանոնք, այնպէս չէ՞ : Չանոնք ձեր մտքին խորը պիտի պահէք որպէս զի խնդրուին, կորնչին :

— Ո՛հ, ընդհակառակը ամենուն պիտի ընեմ, գոչեց Լօրէնցա ուրախանալով՝ ինչպէս որ մարդ բարկացած առտենը կ'ուրախանայ իր հակառակորդին տկար կողմը գտնելուն համար : Այդ բառերը մտքիս մէջ պիտի պահեմ և քանի առանձին ըլլամ՝ ցած ձայնով պիտի կըրկնեմ զանոնք, իսկ առաջին ամբիւ բարձրաձայն պիտի հուշակեմ . արդէն ուրիշին ըսած եմ :

— Որո՞ւ, գոչեց Պալտամօ :

— Տիկին Լուիզ իշխանուհիին :

— Լաւ ուրեմն, զիս մտիկ ըրէք, Լօրէնցա, ըստ Պալտամօ գլուխը ելած արիւնը ետ մղելու համար և գունդները ձակարին մէջ մխելով : Եթէ մէկու մը բան մը ըսած էք, ա՛լ սակէ վերջ չպիտի ըսէք, հասկցա՞ք : ա՛լ չպիտի կրնաք ըսել, որովհետեւ գոնեքը դոց պիտի պահեմ և եթէ հարկ ըլլայ՝ ըսելին պատերը Բարեկոնեան աշտարակին պէս պիտի բարձրացնեմ :

— Ձեզի ըսի արդէն, Պալտամօ, գոչեց Լօրէնցա, մարդ ամէն բանտէ գուրս կ'եկնէ, մանաւանդ երբ բռնակալին ատկութիւնը ազատութեան սէրը իր մէջ զօրացնէ :

— Լա՛ւ, լա՛ւ, է՛ն, ելէք տեսնեմ, Լօրէնցա : Սա

ալ գիտցէք որ միայն երկու անգամ գուրս պիտի կրնաք ելնել հասկէ . առաջին անգամուն այնպիսի անողորմ կերպով պիտի պատեմ ձեզ որ՝ ունեցած արցունքնիդ պիտի թափէք, իսկ երկրորդ անգամուն այնպիսի անդժու թեամբ պիտի զարնեմ որ՝ երակներնուդ բոլոր արիւնը պիտի թափէք :

— Աստուած իմ, զիս պիտի սպաննէ, մրմնջեց զեռաստի կլինը բարկութեան յետին աստիճանին հասած և սկստ մագերը փեթբտել ու գորգին վրայ տապալակիլ :

Պալտամօ բարկութեամբ խառն կարեկցութեամբ մը պահ մը զայն գիտեց :

Վերջապէս կարեկցութիւնը բարկութեան յաղթեց :

— Լօրէնցա, խեղքերնիդ գլուխնիդ բերէք, հանգարտեցէ՛ք, կրած կամ կրել կարծած վիշտերնուդ փոխարէն որ մը լիուլի պիտի վարձատրուիք :

— Բանտարկուած եմ, բանտարկուած եմ, կը գոչէր Լօրէնցա առանց Պալտամօն մտիկ ընելու :

— Համբերութիւն :

— Չարնուած եմ :

— Փորձութեան օրն է :

— Խեղքի՛ս պիտի գայ, խեղքի՛ս :

— Պիտի բժշկուիք :

— Ո՛հ, զիս նխակուրնէ իսկ յխմարանոց նետեցէք, ճշմարիտ բանտի մը մէջ բանտարկել առէք զիս :

— Ո՛հ, արդէն գուշակած էի որ օր մը զիս պիտի մատնէք :

— Լա՛ւ, ուրեմն մա՛հ, մա՛հ, այժմէն իսկ մեռնիլ կ'ուզեմ, ունայ Լօրէնցա և վայրենի անասունի մը ստիւնովը ոտքի ելնելով՝ գլուխը զարնելով ջախջախելու համար գէպի պատը խոյացաւ :

Պալատօ հազիւ ժամանակ գտաւ ձեռքերը անոր կողմը երկնցնելու, և շրթունքէն աւելի իր հզօր կամքովը բառ մը արտասանելով զայն կեցուց : Լօրէնցա վազած միջոցին յանկարծ կանդ առաւ, դողաց և Պալատօի բազուկներուն մէջ իյնալով քնացաւ :

Այս տարօրինակ կախարհը, որ դեռատի կնոջ նիւթական բոլոր մասնիկները իրեն հնազանդեցուցած էր և ի գուր անոր բարոյական մասնիկներուն դէմ կը մարտնչէր, բազուկներուն մէջ առաւ զայն և իր անկողինը տարաւ . համբոյր մը դրոշմեց անոր շրթներուն վրայ, անկողինին և ապա պատուհանին վարագոյրները քաշեց և գուրս ելաւ :

Լօրէնցա մազնիսական քաղցր և կազուրիչ քունէ մը շրջապատուած կը քնանար, ինչպէս որ լալէն վերջ հանգիստ քուն մը կը քաշի անմեղ մանկիկը իր բարեւտիւրտ մօր վերարկուին փաթթուած :



Մէ :

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Լօրէնցա սխալած չէր : Կառք մը Սէն-Տընիի գոնէն մտնելով և համանուն արուարձանին երկայնութեամբը երթալով դրան և վերջին տան կողմած անկիւնը անցեր, պողոտային երկայնութեանը կը յառաջանար :

Ինչպէս որ տեսուհին ըսած էր արդէն, այս կառքին մէջ կը գտնուէր Սթրազպուրկի կախկոպոս Պ. Լուի տը Ռօճան, որ, անհամբեր, որչափ ժամադրութենէն առաջ կուգար սակի շինուղ կախարհը իր որջին մէջ գտնելու նպատակաւ :

Կառապանը, որ զեղեցկալէմ եկեղեցականին բազմաթիւ սիրային արկածներուն ականատեսն եղած և այս պատճառաւ փոսերու, մթութեան և ինչ ինչ խորհրդաւոր փողոցներու վտանդին վարժուած էր, բնաւ կանդ չառաւ երբ Սէն-Տընիի ու Սէն-Մարթէնի բազմամարդ և լուսաւորուած պողոտաներէն անցնելէ վերջ հարկ եղաւ Պասթիլլ առաջնորդող ամայի և մթին պողոտային մօտնաւալ :

Կառքը, պողոտային մէջանդօքը, Սէն-Գլօս փողոցին անկիւնը կանդ առաւ և տիրոջը հրամանին համեմատ գնաց քան քայլ անդին գտնուող ծառերուն տակ պահուրտեցաւ :

Պ. տը Ռօճան, քաղաքային զգեստներ հագած, Սէն-Գլօս փողոցը մտաւ և ծանր քայլերով մօտեցաւ այն դրան որին գունահարը տը Ֆէնիքս կոմսին նկարագրութենէն ճանչցեր էր :

Բակին մէջ Յրիցին ոտքի ձայնը լսուեցաւ և գուռը բացուեցաւ :

— Պ. տը Ֆէնիքս կոմսը հո՞ս կը բնակի, հարցուց իշխանը :

- Այո՛, սրբազան հայր, պատասխանեց Յրից :
- Ինքը հո՞ս է :
- Այո՛, սրբազան հայր :
- Իրեն իմաց տուէ՞ք թէ . . .
- Ետրին սրբազանական բարձրութիւն տը Ռօճան կարտընայի՞ն՝ գոլուտոք, այնպէս չէ՞, սրբազան հայր :

Իշխանը սպշած մնաց : վրան նայեցաւ, զգետաները շոշափեց և շուրջը նայեցաւ հասկնալու համար թէ իր զգեստէն կամ իր մօտը զանուածէն ի՞նչ բան իր կարգը կը մատնէր : Իր քովը մարդ չկար և աշխարհականի ալ զգեստ հագեր էր :

— Անուես ինչէ՞ն գիտէք, հարցուց կարտինալը :

— Պ. կոմսը պահ մը առաջ ինձ ըսաւ թէ նորին սրբազնական բարձրութեան կը սպասէ :

— Այո՛, գիտեմ, բայց ո՛չ թէ այսօր, ո՛չ թէ այս ժամուսն, այլ վաղը, միւս օր :

— Ո՛չ, սրբազան հայր, նոյն խալ այս երեկոյ :

— Ձեր տէրը պահ մը առաջ ձեզ ըսաւ թէ այս երեկոյ ի՞նձ կը սպասէ :

— Այո՛, սրբազան :

— Լաւ, ուրեմն եկած ըլլալս իրեն խմացուցէք, ըսաւ կարտինալը երկու լուի սահեցնելով Ֆրիցի ձեռքին մէջ :

— Թող ձեր սրբազնական բարձրութիւնը ինձ հետեւելու ծանրութիւնը յանձն առնէ, ըսաւ Ֆրից :

Կարտինալը զլսովը հաւանական նշան մը ըրաւ :

Ֆրից հասկնալով նախամտնակին կողմը յոռաջացաւ, ուր ոսկեգօծ անապապովինձէ ստեղնաւոր մեծ աշտանակ մը իր տասներկու ճրագներով ամօյն լոյս մը կը տխուէր : Կարտինալը, խոհուն ու զարմանահար, անոր կը հետեւէր :

— Բարեկամս, անշուշտ սխալմունք մը տեղի ունեցած է, այս պատճառաւ չեմ ուզիր կոմսը անհանգիստ ընել, ըսաւ կարտինալը սրահին դրան առջեւ կանգ առնելով : Ձեր տէրը անկարելի է որ ինձի սպասէ, որովհետեւ չէր գիտեր թէ ես պիտի գայի :

— Ձեր սրբազնական բարձրութիւնը Սթրազպուրկի

եպիսկոպոս աը Ռօման կարտինալը չէ՞, հարցուց Ֆրից :

— Այո՛, բարեկամ :

— Ուրեմն պարսն կոմսը ձեր սրբազնական բարձրութեան կը սպասէ :

Եւ Ֆրից ուրիշ երկու աշտանակներու ճրագներն ալ վառելէ վերջ խոնարհելով գուրս ելաւ :

Կարտինալը, տարօրինակ յուզմունքի մը մատնուած, հինգ վայրկեանի չտի սրահին շքեղ կարտիններն ու քանդակուած շրջանակներու մէջ աւնուած ութը « աւագ-եղբայր » ներսէն պատկերները դիտեց :

Դուսը բացուեցաւ և աը ֆէնիքս կոմսը սեմին վրայ երեւցաւ :

— Բարի երեկոյ, սրբազան հայր, ըսաւ կոմսը աւանց սեթեւեթի :

— Ինձ ըսուեցաւ թէ այս իրիկուն ինձի կը սպասէիք, բայց անկարելի է, գոչեց կարտինալը առանց բարեին պատասխանելու :

— Այո՛, ձեզի կը սպասէի, բայց ներողութիւն կը խնդրեմ ձեր սրբազնական բարձրութենէն ըրած անարժան ընդունելութեանս մտախն, սակայն Բարիդ գուրս հաղիւ քանի մը օր եղած ըլլալով՝ սակաւին լաւ մը տեղափոխուած չեմ, թող ձեր սրբազնութիւնը հաճի ներդամիս զանուիլ, պատասխանեց կոմսը :

— Ինձ կը սպասէիք : Բայց ձեզ ո՞վ խմաց տուաւ իմ այցելութիւնս :

— Դո՛ւք, սրբազան հայր :

— Ինչպէ՞ս :

— Կառքերնիդ Սէն-Տընիի դրան առջեւ չկեցուցի՞ք :

— Այո՛ :

— Դրանիկնիդ չխանչեցի՞ք, կառքին դռնակէն անոր հետ չխօսեցա՞ք :

- Այո՛ :
- Անոր չըսի՞ք թէ կառքը Սէն-Տընիի արուարձա-
նէն Սէն-Գլոս փողոցը քչել տայ և ան ալ այս բանը
կառապանին չկրկնե՞ց :
- Այո՛ : Ուրեմն զիս տեսած և ըսածս լսած էք :
- Այո՛, ձեզ տեսայ և ըսածնիդ լսեցի, սրբազան
հայր :
- Ըսել է հոն էիք :
- Ո՛չ, սրբազան հայր, հոն չէի :
- Հապա ո՞ւր էիք :
- Հոս :
- Եւ հոսկէ՞ տեսաք, հոսկէ՞ լսեցիք :
- Այո՛, սրբազան հայր :
- Օ՛ն, կարծեմ կատակ կ'ընէք :
- Միթէ նորին սրբազնական բարձրութիւնը կա-
խարք ըլլալս կը մոռնա՞յ :
- Հա՛, իրաւունք ունիք, մոռցայ, պարոն . . . ,
ի՞նչպէս կոչելու է ձեզ, Պ. Պալսամօ սեպո՞ւն թէ Պ. տը
Ֆէնիքս կամս :
- Տանս մէջ անուն չունիմ, այլ Տէ՛ր կը կոչուիմ,
սրբազան հայր :
- Այո՛, Հերմեսեան տիաղոս մըն է ատիկայ : Լաւ
ուրեմն, տէ՛ր, ի՞նձ կը սպասէիք :
- Այո՛, ձեզ կը սպասէի :
- Գործարաննիդ տաքցուցե՞ր էիք :
- Իմ գործարանս միշտ տաք է, սրբազան հայր :
- Ինձ թոյլ պիտի տա՞ք որ հոն մտնեմ :
- Ձեր սրբազնական բարձրութիւնը հոն առաջնոր-
դելու պատիւը պիտի ունենամ :
- Եւ ես ալ ձեզի պիտի հետեւիմ, բայց պայմանով մը :

- Ի՞նչ պայմանով :
- Պայմանով որ զիս սատանային հետ անձամբ յա-
րարերութեան մէջ չընէք : Նորին վեհափառութիւն սա-
տանաներու թագաւորէն շատ կը վախնամ :
- Հոգ մ'ի՛ ընէք, սրբազան հայր, ըսաւ Պալսամօ
ժպտելով, իմ սատանաներս բնաւ չեն մոռնար որ պա-
տիւը պիտի ունենան յաճախ իշխաններու հետ զործ ու-
նենալու :
- Լաւ, ատիկայ գէշ չէ : Գործարան մտնենք :
- Ձեր սրբազնական բարձրութիւնը կը հաճի՞ ինձ
հետեւիլ :
- Քաղինք :



ԾԲ

ՈՍԿԻՆ

Տը Ռօհան և Պալսամօ մեծ սանդուխին զուգահեռա-
կանին ձգուած փոքր սանդուխէ մը անցան, ուրկէ առ-
ջուի յարկին սրահները կ'առաջնորդուէր : Հոն, կամարի
մը տակ շինուած դուռ մը բացաւ Պալսամօ և մութ
սենեակ մը երևցաւ կարտինալին աչքին՝ ուրկէ աներ-
կիւղ ներս մտաւ :

Պալսամօ դուռը իրենց վրայէն դոցեց :

Դրանը զոցուելու ձայնէն կարտինալը տարտաց և
ետին զարձաւ :

— Ահա հասանք, սրբազան հայր, միայն սա վերջին գուռը մնաց մեր առջև զոր հիմայ պիտի բանանք և վրանուս գոցենք, սակայն անոր տարօրինակ ձայնին վրայ մի զարմանաք, երկաթէ է :

Կարախնալը որ արդէն առաջին դրան ձայնէն անգամ մը սարսուացեր էր, ներքին գոհունակութիւն մը զգաց այս նախազգուշական պատուէրէն, որովհետեւ վերջին դրան ծխնինկրուն և փականքին մետաղէ խուռ սարսուազեցիկ ձանչիւնը իրենինէն շատ աւելի զօրաւոր ջիղերն անգամ կրնար սարսուացնել :

Ենձ սենեակ մը՝ որուն ձեզուներ մերկ գերաններով ծածկուած էր, մեծ կանթեղ մը իր լուսամբափող, բազմաթիւ գիրքեր, տարբալուծական և բնագլխական խել մը գործիքներ, ահա ասոնք էին այս նոր բնակարանին մէջ առաջին անգամ աչքի զարնող իրերը :

Ներս մանկնին հազիւ քանի մը բողբեղած էր երբ կարախնալը զգաց թէ դժուարաւ չունչ կ'առնէ :

— Ի՞նչ կը նշանակէ ասիկայ, տէր, հոս մարդ չունչ չկրնար սանել, քրտինքը ճակտէս կը վազէ : Ի՞նչ է այդ ձայնը :

— Սրբազան, Շէքսպիրին պէս ևս ալ ձեզ պիտի ըսնմ՝ « Ահա՛ ձայնին պատճառը », ըսաւ Պալլամօ անկիզուկէ (ամիսնք, կրակի մէջ չլսող թուզթի նման տեսակ մը բաղադրութիւն) մեծ վարագոյր մը բանալով և ցոյց տալով ալիսէ մեծկակ փուռ մը որուն ճիշդ մէջտեղը երկու ծակեր մութին մէջ փայլող ասիւծի աչքերու նման կը վազրտէին :

Այս փուռը իր կրկին մեծութեամբը երկրորդ փուռի մը կեղրոսին կը հասնէր : Այս երկրորդ փուռը անկիզուկէ վարագոյրով մը գոցուած ըլլալուն պատճառաւ իշխանին անտեսանելի կը մնար :

— Օհօ՛, բաւական ստակալի տեսք մը ունի, ըսաւ իշխանը ընկրկելով :

— Փուռ է, սրբազան հայր :

— Այո, կը տեսնեմ, բայց դուք Շէքսպիրը յիշեցէք, ևս ալ Մօլիէրը . փուռ ալ կայ փուռ ալ կայ . այս փուռը բոլորովին գծախոյզին տեսարան մը կը պարզէ, ասկէ զատ, անխորթ հոս մըն ալ ունի : Ի՞նչ կ'երևնն ասոր մէջը :

— Այն բանը զոր ձեր սրբազնութիւնը ինչ ուզեց :

— Ի՞նչ կ'ըսէք :

— Այո՛, թէպէտ վաղուրնէ առաջ գործի չպիտի սկսէի, որովհետեւ ձեր սրբազնութիւնը վաղը պիտի գար, բայց երբ Սէն-Գլօս փողոցը զալու համար ճամբայ ելնելնիդ տեսայ՝ ձեր սրբազնութեան գիտաւորութեան փոխուիլը կրանկով փուռս վառեցի և խառնուրդը պատրաստեցի : Ահա փուռը կ'եսայ . տասը վայրկեանէն ու կինիդ պատրաստ պիտի ըլլայ : Ներեցէք որ փեղկերը բանամ օդ տալու համար :

— Ի՞նչ . . . , միթէ այս փուռին մէջի հալոցները . . .

— Տասը վայրկեանէն մեզի վենետիկեան սոկերթաներուն և թօսքանայի ֆիօրիններուն նման անարատ սակի պիտի մտտակարարեն :

— Է՛հ, տեսնենք, Նայելու թույլ կուտա՞ք :

— Ինչո՞ւ չէ, միայն թէ քանի մը նախազգուշութիւններ պէտք է ձեռք առնենք :

— Որո՞նք են այդ նախազգուշութիւնները :

— Ապակիէ աչքերով սա անկիզուկէ զիմակը երեսնիդ անշուշէք . առանց անոր կրակը կրնայ աչքերնիդ այրել, որովհետեւ ինչպէս որ կը տեսնէք փուռս գծալքին հնոցին պէս կը վառի :

Փօլ. Պալա., թիւ 25—55, հաս.Գ., Բ.հր.Ն.Ք.

— Սատանա՛ն տանի այդ հնոցը, զգուշացէ՛ք ուրեմն, աչքերս ինձի պէտք են և ձեր խոտացած հինգ հարիւր հազար սկուտին հետ չեմ կրնար փոխանակել զանոնք :

— Ես ալ այդ կարծիքէն եմ, սրբազան հայր, ձեր սրբազնութեան աչքերը շատ գեղեցիկ են :

Այս գովասանքը անհաճոյ չթուեցաւ իշխանին, որովհետեւ անձնական առաւելութեանց չափազանց նախանձ ձախնդիր էր :

— Օհօ՛, ոսկի՞ պիտի տեսնենք հիմայ, ըսաւ կղերականը դիմակը շակելով :

— Կարծեմ, սրբազան հայր :

— Եւ հարիւր հազար սկուտի :

— Այո՛, սրբազան հայր, և թերեւս քիչ մըն ալ աւելի, որովհետեւ խառնուրդը աստա շինեցի :

— Իրաւ որ շատ վեհանձն կախարդ մըն էք եղեր, ըսաւ իշխանը՝ որուն սիրտը ուրախութենէն սկսեր էր արտփել :

— Ձեր սրբազնական բարձրութիւնը աւելի վեհանձնութիւն ցոյց կուտայ իր փաղաքշական խօսքերովը՝ քան թէ ես իմ ոսկիովս : Հիմայ, սրբազան հայր, կ'աւզակեմ, քիչ մը հեռու կեցէք, որպէս զի հալոցին ծածկոցը բանամ :

Պալատօ անկիղուկէ կարճ շապիկ մը հագաւ, իր կորովի բազուկովը երկաթէ ունեւի մը առաւ և կրակին սաստկութենէն կարմրած կափարիչ մը վերցուց, որով իրարու նմանող չորս հալոցներ երեւան ելան՝ որոնցմէ երկուքին մէջ կրակի նման կարմիր խառնուրդ մը և միւս երկուքին մէջ տակաւին իր ծիրանոցոյն թափանցկութիւնը պահող ձերմակ նիւթ մը կար :

— Ահա՛, ոսկին, ըսաւ եկեղեցականը ցած ձայնով մը,

կարծես թէ կը վախնար բարձր ձայնով խօսելու՝ որպէս զի մի գուցէ իր առջեւ կատարուող խորհրդաւոր գործը խանդարէ :

— Այո՛, սրբազան հայր, այս չորս հալոցները աստիճանով շարուած են . ոմանք տասներկու ժամ տաքցած են և ոմանք ալ տասներմէկ : Նիւթը եռացած միջոցին խառնուրդը անոր մէջը թափել պէտք է, այս բանը գաղտնիք մըն է զոր միայն զխոնական բարեկամի մը կը յայտնեմ : Բայց, ինչպէս որ ձեր սրբազնական բարձրութիւնը կը տեսնէ, ահա առաջին հալոցը ձերմակ զոյն մը կը ստանայ . այս հալոցին պարուհակած նիւթը՝ որ պէտք եղած աստիճանին չափ եռացած է՝ ուրիշ ամանի մը մէջ լեցնելու ժամանակը եկած է : Հաճեցէք ետ քաշուիլ, սրբազան հայր :

Ինչպէս որ զինուոր մը իր սպային հրամանը կէտը կէտին կը կատարէ, իշխանն ալ այնպէս հնազանդեցաւ : Պալատօ՝ կարմրած հալոցին դպիւովը տաքցած ունեւին ձեռքէն ձգելով՝ անիւներու վրայ սահող սալ մը մօտեցուց փուռին : Այս տալին վրայ երկաթէ՝ ամաններու մէջ ազուցուած էին համահաւասար մեծութեամբ ութը կաղապարներ :

— Ա՛ս ի՞նչ է, սիրելի կախարդ, հարցուց իշխանը :

— Սովորական կաղապարն է, սրբազան հայր, հիմայ ձեր ոսկիի ձոյլերը ասոր մէջ պիտի հալեցնեմ :

— Հը՛մ . . . , ըրաւ իշխանը և ուշադրութիւնը կրկնապատկեց :

Պալատօ քարայտակին վրայ պատնէշի ձեւով կարգ մը ձերմակ խժուժներ տարածեց : Սալին և փուռին մէջ տեղը կեցաւ, մեծ գիրք մը բացաւ, գաւազան ի ձեռին կախարդական խօսք մը կարդաց և հալոցը բռնելու համար ահագին աքցան մը առնելով ըսաւ .

— Ոսկին սքանչելի և ատաղին տեսակէն պիտի ըլլայ, սրբազան հայր :

— Հէ՞, այդ հրեղէն ամանը պիտի վերցնէ՞ք :

— Այո, սրբազան հայր, յիսուն լիտր կը կշռէ, բայց մի՛ վախնաք, շատ քիչ ցուլիչներ իմ ջիղերս ու ճարպիկութիւնս ունին :

— Բայց եթէ հալոցը ճաթի . . .

— Անգամ մը այդ բանը եկաւ զլիսուս, սրբազան հայր : 1399ին էր, Նիգօլա Ֆլամէլի հետ փորձ մը կ'ընէի իր տանը մէջ որ Սէն-Ժազ-Լապուշըրի մատուռին մօտ Տէզէքրիվէն փողոցը կը գտնուէր : Մազ մնաց որ խեղճ Ֆլամէլը պիտի մեռնէր, իսկ ես ոսկիէն աւելի թանկազին նիւթէ մը կէս լիտր կորանցուցի :

— Աստուծո՛յ սիրուն, ի՞նչ կը խօսիք :

— Ճշմարտութիւնը :

— Ի՞նչ էր ուրեմն այդ ոսկիէն աւելի թանկազին նիւթը :

— Փիլիսոփայական քարը :

— 1399ին փիլիսոփայական քարը փնտռելու ետեւէ՞ էիք :

— Այո՛, սրբազան հայր :

— Նիգօլա Ֆլամէլի՞ն հետ :

— Այո՛, Գազանիքը միասին գտանք, այդ թուականէն յիսուն վաթսուն տարի ատաջ Բօլա քաղաքին մէջ Բիէր Լը Պօնի հետ աշխատած ասիննիս : Հալոցը ժամանակին չգրցեց և այս պատճառաւ աջ աչքս տասը տասն երկու տարուան մէջ գոլորշիանալով կորսուեցաւ :

— Բիէր Լը Պօն, ըսիք :

— Այն Բիէր Լը Պօնը որ «Մարկարիթա Բրէթիօզա» անուն կրեւելի երկասիրութիւնը գրեց : Այս երկասիրութիւնը անչունչա կարգացած էք :

— Այո՛, 1330ին հրատարակուած է :

— Ճիշտ է, սրբազան հայր :

— Դուք անձամբ տեսած էք Բիէր Լը Պօնը և Ֆլամէլը :

— Ատաղինին աշակերտը և երկրորդին վարժապետն էի :

Եւ մինչդեռ կարտինալը, զարնուրած, ինքնիրեն կը հարցնէր թէ իր քովը գտնուող և անցեալ դարերու վերայ պոռոտախօսութեամբ ճոռմարանողը նոյնինքն սատանան էր թէ անոր գործակիցներէն մին, Պալամօ փուռին մէջ կ'երկարէր երկայն թեւերով աքցանը :

Քիմիագէտը փորձի համար հալոցը քանի մը մատնաչափ վեր վերցուց, ապա հօր ճիգով մը դնդերները պրկեց և անազին սանը հրաբորբք փուռէն դուրս հանեց-աքցանին բերանը խկոյն կարմրեցաւ : հրաչէկ նիւթին վրայ ճերմակ բիծեր երեւցան՝ որոնք ծծմբալի չամպի մը փայլակներուն կը նմանէին : ապա հալոցին եզերքը մուր կարմիր գոյն մը ստացաւ, մինչդեռ կեղրոնը՝ փուռին թերասուերին մէջ՝ տակաւին վարդագոյն կը մնար : Ապա ձուլածոյ մետաղը՝ որուն վրայ մանիչա-կազոյն ծիր մը գոյացեր էր՝ հալոցին մէջ չչել սկսաւ և սու կաղապարին մէջ ինկաւ :

— Հիմայ երկրորդին անցնինք, ըսաւ Պալամօ երկրորդ կաղապարի մը մօտեցնելով հալոցին բերանը :

Երկրորդ կաղապարն ալ միեւնոյն յաջողութեամբ լեցուեցաւ :

Այս գործողութիւնը կատարողին ճակտէն քրտինքը կը վազէր, իսկ գիտողը, շուքին մէջ, երեսը կը խաչակնքէր :

Արդարեւ, տեսարանը վեհափառ և վայրենի սոսկումի մը պատկերը կը նակայացնէր Պալամօ, մետաղին բոցա-

չէկ ցուքերէն լուսաւորուած, կը նմանէր այն գեհնաւ-
պարտնեցուն՝ որոնք Միքայէլ Անճէլօի և Տանթէի կաթ-
սաներուն մէջ կը գալարին :

Անձանօթին յուզմունքը տեսնելու արժանի էր :

Պալատօ այս գործողութիւնները կատարած միջոցին
չունչ չառաւ, ժամանակը կ'անցնէր :

— Քիչ մը կորուստ պիտի ունենանք, որովհետեւ
խառնուրդը մէկ հարիւրերորդ վայրկեան աւելի եռացու-
ցեր եմ, ըսաւ Պալատօ երկրորդ կաղապարին անցնելով :

— Մէկ հարիւրերորդ վայրկեան, գոչեց կարտինալը
վերջապէս չկարենալով իր զարմանքը ծածկել :

— Սակայն Հերմեսեան արհեստին մէջ անպին տար-
բերութիւն մըն է ասիկայ, սրբազան հայր, պատասխա-
նեց Պալատօ անտարբերութեամբ : Հիմայ, ահա երկու
հալոցներ պարպուելով երկու կաղապարներ լեցուեցան,
որով հարիւր լիտր ընտիր ոսկի կ'ունենանք պատրաստ :

Եւ իր զօրաւոր աքցանին միջոցաւ առաջին կաղա-
պարը բռնելով ջուրին մէջ նետեց : Տաք մետաղը հե-
ղուկին մէջ պտուտկեցաւ և երկար ատեն շոգի արձակեց :
Յետոյ կաղապարը բանալով՝ երկու ծայրերը տախակցած
թափծու շաքարի նման անսովոր ոսկիի կտոր մը
գուրս հանեց հոնկէ :

— Միւս երկու հալոցներուն համար ժամու մը չափ
պիտի սպասենք, ըսաւ Պալատօ : Այս միջոցին ձեր
սրբազնական բարձրութիւնը նստի՞ւ կը փախաքի թէ
մաքուր օդ չ'չիլ :

— Եւ ասիկայ ոսկի՞ է, հարցուց կարտինալը առանց
անոր հարցմանը պատասխանելու :

Պալատօ ժպտեցաւ : Ա՛լ կարտինալը իրն էր :

— Կը կատարածի՞ք, սրբազան հայր :

— Ձեզի բան մը ըսե՞մ, գիտութիւնը յաճախ սխա-
լած ըլլալուն . . .

— Մաքերնուզ անցածը չէք ամբողջացներ, սիրելի
իշխանա, ըսաւ Պալատօ : Դուք կը կարծէք թէ ես ձեզ
գիտակցաբար կը խաբեմ : Սրբազան հայր, ես ինքզինքս
սչնչութիւն մը պիտի համարէի՝ եթէ այդպէս գործէի,
որովհետեւ փառքս սենեակիս պատերէն անպին չպիտի
անցնէր, որովհետեւ ոսկին ձեռքերնից հոսկէ գուրս ելած
ատեննից գիմացնից ելլող ոսկերիչին պիտի ցուցնէիք և
հրացուննից վերջ պիտի գտնէր : Օ՛ն, օ՛ն, սիրելի իշ-
խանա, հաւատացէ՛ք որ եթէ ձեզ խաբել ուզէի՝ տարբեր
միջոցներու կրնայի գիմել : Ասկէ գատ, ձեր սրբազնա-
կան բարձրութիւնը գիտէ թէ ոսկին ինչով կը փորձեն :

— Անշուշտ, փորձաքարով :

— Շատ անգամ փորձած էք անշուշտ սպանիական
ոսկիները՝ որոնք խաղի մէջ կը գործածուին և յաճախ
նենդուած կ'ըլլան :

— Ստուգիւ ինձ պատահած է ասիկայ :

— Լաւ ուրեմն, սրբազան հայր, ահա՛ ձեզի փորձա-
քար :

— Հարկ չկայ, համոզուեցայ :

— Սրբազան հայր, այս ձոյլերն ոչ միայն ոսկի են,
այլ նաեւ անխառն ոսկի :

Կարտինալը չուզելով հանդերձ իր դժուարահաւանու-
թիւնը երեւան հանել, համոզուած չըլլալը կը յայտնէր :

Պալատօ փորձաքարը ոսկիի ձոյլերուն քսեց և ար-
գիւնքը իր հիւրին ցոյց տուաւ :

— Քաանը ու՞թը կերտտ, ըսաւ Պալատօ : Միւս եր-
կուքն ալ հիմայ կը թափեմ :

Տասը վայրկեան ետքը երկու հարիւր լիտր ոսկին
չորս ձոյլ եղած և խժուծին վրայ շարուած էր :

— Ձեր սրբազնական բարձրութիւնը կառքով եկաւ, այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Ձեր սրբազնական բարձրութիւնը կառքը դրանը մօտեցնել կուտայ եւ սենեկագրանս ձոյլերը կը փոխադրէ :

— Հարիւր հազար սկո՛ւա, մրմնջեց կարտինալը եւ ոտքին տակ փռուած սակին բաց աչքով տեսնելու համար գիմակը հանեց :

— Այս ձոյլերուն քուտից գոյրնալը զիտէք, այնպէս չէ՞, սրբազան հայր, սրբվեալս եւ ինչպէս շինուելը տեսաք :

— Ո՛հ, այո՛, ի սրահանջել հարկի պիտի վկայեմ :

— Ո՛հ, ո՛չ, Գաղիոյ մէջ գիտութիւնները չեն սիրեր, ըսաւ Պալամոս աշխուժիւ, վկայութիւն պէտք չէ, սրբազան հայր : Եթէ սակի շինելու տեղ միայն գիտութեանց վրայ վարդապետէի՝ այն ստին խնդիրը կը փոխուէր :

— Ուրեմն ի՞նչ կրնամ ընել ձեզի, ըսաւ իշխանը փափուկ ձեռքերովը յիտուն լիարնոց ձոյլ մը դժուարաւ վերցնելով :

Պալամոս անոր նայեցաւ եւ ամէն յարզանք մտնալով խնդալ սկսաւ :

— Կարծեմ խնդալիք բան մը չըսի, ըսաւ կարտինալը :

— Եթէ չեմ սխալիր, ձեր սրբազնութիւնը փոխարինութիւն մը կը խոստանայ :

— Անշո՛ւշա :

— Աւելի յարմար չէ՞ր ըլլար որ ես իմ ծառայութիւնս մատուցանէի ձեզ :

Կարտինալին դէմքը խոժոռ կերպարանք մը ստացաւ :

— Ձիս երախտագարս կը թողուք, պարոն, հետեւարար ես ալ փութացի իմ երախտագիտութիւնս հաստատել, բայց եւ այնպէս՝ եթէ կարծածէս աւելի երախտագիտութիւն մը պիտի պարտիմ ձեզ, գիտցած եղէք որ չպիտի կրնամ ընդունիլ ձեր ծառայութիւնը : Փա՛ռք Աստուծոյ, Բարիզի մէջ վաշխաուսներ չեն պակսիր, որոնցմէ մինչեւ վաղը հարիւր հազար սկուտ կրնամ զըտնել, կէսը աւանդով եւ կէսն ալ ստորագրութեամբ : միւս միայն եզխակոպտական մատանիս քառատուն հազար ֆրանք կ'արժէ :

Եւ եկեղեցականը իր կնոջական սպիտակ ձեռքը Պալամոսի ցոյց տուաւ՝ որուն մատնեմատին վրայ կազինի մեծութեամբ ազամանդ մը կը փայլէր :

— Սիրելի իշխանս, չկարծէք թէ ձեզ նախատեսու գիտաւորութեամբ խօսեցայ, գիտել տուաւ Պալամոս խոնարհելով :

— Ի՞նչ ըսել ուզեցիք ուրեմն :

— Այսինքն թէ ձեր սրբազնութիւնը ի՞նչ տեսակ փոխարինութիւն կրնայ ընել :

— Արքունիքին մէջ ունեցած վարկս կը մտնա՞ք :

— Սրբազան հայր, դուք ալ գիտէք թէ այդ վարկը տկարացած ու նուազած է եւ գրեթէ Պ. ար Շուազէօլի վարկին կը հաւասարի : այո՛, Պ. ար Շուազէօլի՝ որուն պաշտօնավարութիւնը հազիւ տասնըհինգ օր եւս պիտի տեսէ : Հետեւարար, սիրելի իշխանս, ապահով ուղի մը ընտրած կ'ըլլանք եթէ վարկի մասին իմ վարկիս ապահինինք : Ահա վեղեցիկ եւ ընտիր սակի : Երբոր ձեր սրբազնութիւնը դրամի պէտք ունենայ՝ ասջի օրուընէ կամ անուընէ իմաց կուտայ ինձ եւ ձեր ուզածին չափ սակի կը պատրաստեմ : Մարդս սակիով ամէն բան կ'ունենայ, այնպէս չէ՞, սրբազան հայր :

— Ո՛հ, տմէն բան չկրնար ունենալ, մամուսց կարտինալը պաշտպանի մը վերին աստիճանէն յանկարծ սուհելով և պաշտպանակալի մը ստորին աստիճանին վրայ իյնալով :

— Ո՛հ, իրաւունք ունիք : Մտացայ որ ձեր սրբազնական բարձրութիւնը սակիէն տարբեր բանի մը կը ցանկայ, աշխարհիս բոլոր հարստութիւններէն աւելի թանկագին բանի մը : բայց, սրբազան հայր, այդ բանը գիտութեան ընկիւք գործը չէ՞ այլ մոպութեան : Միայն բառ մը արտասանեցէք և քիմիազէսը պատրաստ պիտի ըլլայ իր մէջի մոպպեար ի հանդէս բերելու :

— Շնորհակալ եմ, պարօն, ա՛լ բանի մը չեմ կարօտիր, բանի մը չեմ ցանկար, ըստ կարտինալը տըխրութեամբ :

Պարսամօ անոր մօտեցաւ :

— Սրբազան հայր, երխտասարդ, կրակո՞ւ, գեղեցիկ, հարուստ և Ռօհան անուէնը կրող իշխան մը այսպիսի պատասխան մը չկրնար տալ մոպի մը, դիտել տուտ Պարսամօ ուղղակի կերպով եկեղեցականին աչքերուն մէջ նայելով :

— Ի՞նչ պատճառաւ :

— Որովհետեւ մոպը անոր սիրտը բաց գրքի մը պէս կը կարգայ և հակառակը կը տեսնէ : Ընդհակառակը, ես կը կարծէի թէ ձեր սրբազնական բարձրութիւնը այնպիսի բաղձանքներ ունի՞ զորս ինքզինքին իսկ խստատուանիւ չհամարձակիր, համոզուած ըլլալուն համար որ միմիայն թագաւոր մը կրնայ այդպիսի բաղձանք մը ունենալ :

— Պարօն, կարծեմ թէ աիկին Լուիզ իշխանուհիին սենեակին մէջ ինձ ըրած քոնի մը խօսքերնուդ կ'ակնարկէք :

— Այո՛, այդպէս ըլլալը կը խոստովանիմ, սրբազան հայր :

— Կը սխալիք, պարօն :

— Սրբազան հայր, կը մոռնա՞ք որ այս պահուն ձեր սրտէն անցածը կը տեսնեմ՝ ինչպէս որ տեսայ ձեր կառքին Սէն-Տընիի վանքէն ելնելը, քաղաքին դռնէն անցնիլը, պոզոտան մտնելը և սուէնէս յիսուն քայլ անգին ծառերուն տակ պահուելովը :

— Բացատրեցէք ըսածնիդ :

— Սրբազան հայր, միշտ ձեր ընտանեաց իշխաններուն մեծ և արկածալից սէր մը հարկ եղած է : դուք ձեր սերունդին մէջ բացառութիւն մը չէք կրնար կազմել : Բնական օրէնքին անօրինութիւնն է այս :

— Պարօն կոմս, ի՞նչ ըսել ուզելնիդ չեմ հասկնար, թոթովեց իշխանը :

— Ընդհակառակը, ըսածս սքանչելի կերպով կը հասկընաք : Կրնայի ձեր ներսը թրթռացող ուրիշ թեքերու ալ զպիլ, բայց անօգուտ տեղը ժամանակ կորսնցնելէ խուսափեցայ : Ուղղակի պէտք եղած թեքին դպայ : ո՛հ, իրաւ կ'ըսեմ որ ձեր հոգին տակն ու վրայ ընելու աստիճան կը թրթռայ ան :

Կարտինալը գլուխը վեր առաւ և յետին կասկածով մը Պարսամօի յտակ ու համարձակ նայուածքը քննեց :

Պարսամօ, ժպտագին, այնպիսի մեծութեամբ մը կը փայլէր որ, կարտինալը աչքերը խոնարհեցուց :

— Ո՛հ, իրաւունք ունիք, սրբազան հայր, իրաւունք ունիք ինձի չնայելու, որովհետեւ աւելի բացորոշ կերպով կը տեսնեմ ձեր սրտէն անցածը, որովհետեւ ձեր սիրտը տարօրինակ հայելիի մը նման իր մէջ երեւցած նիւթերուն կերպարանքը պահած է :

— Լսեցէ՛ք, աը մէնիքս կոմս, լսեցէ՛ք, ըսաւ կար-
տինալը յազթուելով :

— Այո՛, իրաւունք ունիք, լուծիւն պէտք է պա-
հել, սրովհետեւ տակաւին ժամանակը եկած չէ այդպիսի
սէր մը երեւան հանելու :

— Տակաւին ժամանակը եկած չէ՞, ըսիք :

— Այո՛ :

— Ըսել է ժամանակը պիտի դա՞յ :

— Ինչո՞ւ չէ :

— Բայց կրնա՞ք ըսել ինձ թէ այս սէրը յիմարտկան
սէր մը չէ : Ես կարծեցի, կը կարծեմ, և մինչև սր հա-
կատակը չապացուցուի՝ պիտի կարծեմ թէ յիմար սէր
մըն է այս :

— Դժուարինս խնդրեցեր, սրբազան հայր . ատիկայ
պզտիկ բան չէ . այդ մասին ձեզի բան մը չեմ կրնար
ըսել մինչև սր ձեր սիրոյն ենթակայ անձին կամ գոնէ
անոր կողմէն եկած մէկ նիւթին ձեռքս չգոցնեմ :

— Եւ ի՞նչ տեսակ նիւթ պէտք է այդ բանին համար :

— Օրինակի համար՝ անոր ոսկեգոյն մագերէն փոք-
րիկ հիւսկէն մը :

— Ո՛հ, այո՛, դուք շատ խորամանկ մարդ մըն էք :
Այո՛, ձեր ըսածին պէս, դուք սրտերը գրքի մը պէս կը
կարդաք :

— Աւա՛ղ, ձեր մեծ հորեղբոր հորեղբայրը՝ Լուի աը
Ռոճան ասպետն ալ ինձ այսպէս ըսաւ՝ երբ իրեն հրածեչ-
տի ողջոյնս տուի Պասթիլիլի-տանեստանին վրայ, ճիշդ
այն միջոցին երբ ինք անզուգական քաջութեամբ մը
զլիսաման տանուելէն վեր կ'եղնէր :

— Ըսաւ որ դուք շատ խորամանկ մա՞րդ մըն էք :

— Եւ սրտերը կը կարդամ : Այո՛, անոր համար որ

աը Բրէօլթ ասպետին զինքը մատնելը կանխաւ խնայ
տուեր էի իրեն : Ըսածիս հաւտալ չուզեց և աը Բրէօլթ
ասպետը զինքը մատնեց :

— Բայց ինչո՞ւ խմ և մեծ հաւիս միջև տարօրինակ
նմանութիւն մը կը գնէք, կակազից կարտինալը բնազ-
դաբար ածգունելով :

— Միմիայն ձեզ յիշեցնելու համար թէ խոճեմու-
թիւն պէտք է ձեռք ձգելու համար այնպիսի մագերէ՛
զսրս ստիպուած էք թագի մը տակէն կտրելու :

— Ո՛ւրկէ կ'ուզէ թող ըլլայ, պիտի բերեմ, պարոն :

— Լա՛ւ, ահա՛ ձեր ոսկին, սրբազան հայր : Կը յու-
սամ որ ա՛լ չէք կտակածիբ ոսկի ըլլալուն վրայ :

— Թուզթ և գրիչ տուէք :

— Ի՞նչ պիտի ընէք, սրբազան հայր :

— Այսքան վեհանձնութեամբ ինձ արուած հարիւր
հազար սկուտին փոխարէն ասացապիբ մը պիտի ստորա-
գրեմ :

— Ի՞նչ կ'ընէք, սրբազան հայր, ասացապի՞ր մը
պիտի տաք ինձ : Աւելորդ է :

— Կը խոտտովանիմ թէ ասանց ասացապիբ ձեր
տուած ոսկին չեմ կրնար ընդունիլ, սիրելի կոմս : Այս
գրամը պարզ փոխառութիւն մը կրնայ ըլլալ միայն :

— Թող ասանկ ըլլայ :

Կարտինալը սեղանին վրայէն գրիչ մը առաւ և ան-
ձունի ու անընթեռնի գրով մը ասացապիբ մը ստորա-
գրեց՝ որուն ուղղագրական սխալները այսօրուան գրպ-
րոցական ալոց ժպիտ ու արգահատանք պիտի պատճա-
ռէր :

— Եղա՞ւ, ըսաւ եկեղեցականը ասացապիբը Պալսա-
մօի ներկայացնելով :

— Կատարելագլէս, պատասխանեց կոմսը և առանց վրան նայելու գրպանը դրու գոյն :

— Հապա չէք կարդար :

— Ձեր սրբազնութեան խօսքը աւանդէ մը աւելի կ'արժէ ինձ համար :

— Պ. տը Ֆէնիքս կոմս, դուք ազնուական անձ մըն էք, և եթէ չեմ կրնար ձեզ երախտագիտութիւնս յայտնել, գոնէ ձեզ երախտագարտ մնալով ինքզինք երջանիկ կը համարեմ, ըսաւ կարաինալը նշանակալից ողջոյնով մը :

Պալատօ խոնարհեցաւ և զանգակի մը լարը քաշեց : Ֆրից երեւցաւ :

Կոմսը գերմաներէն բաներ մը մտաւայ :

Ֆրից ծոնցաւ և ութը նարինջ վերցնող տղու մը պէս՝ խնուծով պատած ոսկրի ութը ձոյլերը վերցուց :

— Հէրքիւլէս մըն է այս յանդուգն մարդը, ըսաւ կարաինալը :

— Այո՛, սրբազան հայր, բաւական ուժով է պատասխանեց Պալատօ : Բայց ճշմարիտը ըսելու համար իմ ծառայութեանս մէջ գտնուելէն ի վեր ամէն սուսու բարեկամս ասքթօր Ալթօթասի պատրաստած ըմպելիքէն եւրեք կաթիլ կուտամ անոր : Օրէ օր ուժովեալու վրայ է տարիէ մը հարիւր լիտրը մէկ ձեռքովը պիտի վերցնէ :

— Հրաշալի՛ բան, գերբնակա՛ն բան, մրմնջեց կարաինալը : Ո՛հ, չպիտի կրնամ համբերել և ամենուէն պիտի ըսեմ անսամներս :

— Չեմ յուսար որ այդպիտի անխոհեմութիւն մը ընելով դուք ձեր ձեռքովը մարէք փուռս, գիտել տուաւ Պալատօ ժպտելով : Հաւանական է որ ժողովը զիս կրէ վի հրապարակին վրայ այրել տալու որոշում մը տայ :

Եւ Պալատօ մինչևե տանը դուռը իր ականաւոր այցելուին ուղեկցելով յարգանք հրածեչափ ողջոյն մը մատոյց :

— Բայց ձեր սենեկագանը չեմ տեսներ, ըսաւ կարաինալը :

— Ոսկին ձեր կառքը փոխադրելու համար դուրս ելաւ, սրբազան հայր :

— Ուրեմն կառքիս ուր գտնուելը գիտէ՞ :

— Պողոտայէն դարձած ատեննիդ աջ կողմի չորրորդ ծառին տակ, ըսի անոր պահ մը ստաջ գերմաներէն լեզուաւ, սրբազան հայր :

Կարաինալը ձեռքերը երկինք բարձրացուց և մութին մէջ անյայտացաւ :

Պալատօ Ֆրիցի վերադարձին սպասեց և բոլոր դռները գոցելէ վերջ իր սենեակը ելաւ :



ԾԹ

ԿԵՆՍԱՏՈՒ ՅՅԻՆ

Պալատօ առանձին մնալով գնաց Լօրէնցայի դրանը ետեւէն մտիկ ըրաւ :

Լօրէնցա հաւատար չնշատութեամբ և քաղցր քունով մը կը ննջէր :

Դրանը վրայ դուրսէն բացուող փոքրիկ պատուհան մը կար, Պալատօ բացաւ զայն և քաղցր ու գորովալիք

մատխոնութեամբ մը զեռատի կնոջ նախեցաւ : Ապա պատուանը գոցեց և չօրէնցայի բնակարանը բնազխտական սենեակէն զատող ի վերեւ նկարագրուած սենեակէն անցնելով փուռին մօտեցաւ և մեծկակ խոզովակ մը բացաւ որով փուռին ջերմութիւնը ծխնելոյղէ մը գուրս կընելով կրակը մարեցաւ և տեղի տուաւ ասնիքին վրայ շինուած աւազանի մը ջուրին :

Յետոյ կարախնալին ստացազիրը զգուշութեամբ սեկաշիէ թղթապանակի մը մէջ գնելով մրմնջեց :

— Ռօնանեանց խոստումը բաներ մը կը խոստանայ, բայց միայն ինձի համար, այսու ամենայնիւ մեր « Երեք-կէտ-կարայր » ներքը (*) հարկ է զխանան թէ ի՞նչ բանի կը գործածեմ իրենց ոսկին :

Այս խօսքը բերանը մնաց : Նոյն միջոցին սենեակին ձեղունին Կրեք հարուած արուեցաւ : Պալամօ գլուխը առատաղին բարձրացնելով ըսաւ .

— Օհօ՛, ահա Ալթօթաս զիս կը կանչէ :

Ապա, և որովհետեւ ինքը սենեակին օդը փոխելով, ամէն բան կարգին գնելով և ամաններուն բերանը գոցելով կը զբաղէր, ձեղունին հարուածները կրկնապատկուեցան :

— Հըմ, անհամբերութիւն ցոյց կուտայ . գէշ նշան է :

Պալամօ երկաթէ երկայն գաւազան մը ասնելով ինքն ալ ձեղունին զարկաւ . ապա պատին վրայէն երկաթէ օղակ մը քաշեց, զապանակ մը բացուեցաւ որուն միջոցաւ կախուլ մը ելաւ ձեղունէն և վերելակի մը պէս միջուկը զեռին իջաւ :

(*) Ազատ-Ուրմազիները (Ֆրան-Մասոն) իւր Երեք-Կարայր կ'անուանեն : Մ. Հ.

Պալամօ այս հնաւուրց վերելակին մէջտեղը կեցաւ և զայն ուրիշ զապանակի մը միջոցաւ զանգաղօրէն վեր բարձրացուց : Աշակերտը վարպետին քով էր գանուէր :

Ծեր գիտնականին այս նոր բնակարանը գրեթէ ութ թէն ինը սուք բարձրութիւն և ասանրկեց սուք սրամազի՞ծ ունէր . ջրհորի մը պէս վերէն լուսաւորուած էր և չորս պատերը ամենայն ինտամով գոցուած էին :

Այս սենեակը՝ ուղեկառքին խցիկին հետ թաղափառութեան գրուելով՝ պալատ մըն է՝ կրնայ ըսուիլ :

Ծերունին պայտածու մարմարէ սեղանի մը մէջտեղը իր շրջուն թիկնաթուին վրայ նստն էր : Այս սեղանին վրայ տունկերու, սրուակներու, գործիքներու, գրքերու և երբաջական գազանի տասերով ծածկուած թուղթերու կոյտ մը, կամ աւելի ճիշդը լափիւռնիթս մը կար :

Ծերունին այնքան գրողած էր որ Պալամօն սենեկով սեղէն իսկ չչարմեցաւ :

Սրբազան ճառագայթի մը պէս վերէն վար լուսաւորող ապակիէ ձեղունին կեղծնէն կախուած կանթիկին լոյսը անոր մերկ ու փայլուն գանկին վրայ կ'իջնէր :

Վարպետը մտաներուն մէջ բանած սպիտակ ապակիէ շիշի մը կը նայէր և տանաթիկնօջ մը իր գնած հաւկիթնեքը լոյսին մէջ քննելուն նմանող չարժուամով մը անոր թափանցկութիւնը կը քննէր :

Պալամօ նախ լուծեամբ զայն գիտեց, յետոյ ըսաւ .
 — Նոր լա՞ն մը կայ, վարպետ :
 — Այո՛, այո՛ : Եկո՛ւր, Աշարս՛, զիս ուրախ և ցնծութեան մէջ պիտի գտնես . գտա՛յ, գտա՛յ . . .

— Ի՞նչ :
 — Ի՛նչ պիտի ըլլայ, փնտռածս :
 Ժօզ. Պալա., թիւ 26—56, հաս.Դ., Բ.հր.Ն.Ք.

- Ոսկի՞ն :
- Ո՛չ, բարեկամս, առ ալ ուրախութեան արժանի բա՞ն է Ալթոթասին համար :
- Հապա աղամա՞նդը :
- Մի՛ զառանցեր, ա՛տ ալ չէ :
- Չըլլա՞յ որ ձեր ցփին գտած ըլլաք, հարցուց Պալասամօ :
- Այո՛, բարեկամս, իմ ցփիս, այսինքն կեանքս, ի՛նչ կ'ընեմ, սխալեցայ, ոչ թէ կեանքը, այլ կինաց յաւիտենականութիւնը :
- Օ՞հ, ասկաւին այդ երազո՞վ կը զբաղիք :
- Ալթոթաս առանց իր աշակերտին ըսածներուն ականջ կախելու իր սրուակին կը նայէր սխրանօք :
- Վերջապէս համեմատութիւնը գտայ . քսան կրամ Արիսթէի ցփէն, տասնըփնից կրամ սնդիկի բարտանէն, տասնըփնից կրամ ոսկիի մրուրէն և քսանըփնից կրամ ալ լիբանանի մայրի իւզէն :
- Այս բաղադրութիւնը՝ բացի Արիսթէի ցփէն՝ ձեր վերջին բաղադրութիւնէն ո եւ է տարբերութիւն չունի կարծեմ, այնպէս չէ՞, վարպետ :
- Այո՛, բայց գլխաւոր կազմիչ նիւթը կը պակսէր, առանց ասոր միւսները ոչինչ են :
- Այդ նիւթն ալ գտա՞ք :
- Այո՛, գտայ :
- Ձեռք պիտի կրնա՞ք ձգել :
- Ատ ալ խօսք է :
- Է ի՞նչ է տեսնենք :
- Այս սրուակին մէջ բաղադրուած նիւթերուն վրայ պէտք է աւելցնել տղու մը շնչերակին արեան վերջին երեք կաթիլները :

- Լա՛ւ, բայց այդ տղան ո՞ւրկէ պիտի գտնէք, հարցուց Պալասամօ անարեկած :
- Դո՛ւն պիտի բերես :
- Ե՞ս :
- Այո՛, դո՛ւն :
- Խե՞նթ էք, վարպետ :
- Ինչու համար խենթ ըլլամ, չըսե՛ս, ինչո՞ւ, գոչեց անտարբեր ծերունին հրճուանօք սրուակին դուրսի կողմը լքելով՝ ուր գէշ գոցուած խիցէն կաթիլ մը ջուր կը սահէր :
- Բայց ի՞նչ կ'ըսէք, վարպետ, տղայ մը կ'ուզէք որպէս զի անոր շնչերակին արեան վերջին կաթիլն առնէք :
- Այո՛, ի՞նչ կ'ըլլայ եղեր :
- Ի՛նչ պիտի ըլլայ, այդ բանը ընելու համար տղան սպաննել պէտք է :
- Անտարակոյս . որքան գեղեցիկ ըլլայ՝ այնքան աւելի արժէք պիտի ունենայ :
- Անկարելի է, հոս տղաքը սպաննելու համար չեն առներ, դիտել տուաւ Պալասամօ ուսերը բարձրացնելով :
- Պա՛հ, հապա ի՛նչ կ'ընեն զանոնք, գոչեց ծերունին բարբարոսական պարզամտութեամբ մը :
- Ատիկայ ալ հարցնելու բա՞ն է, կը մեծցնեն :
- Վա՛յ, վա՛յ, չըսե՛ս սըւոր թէ աշխարհ փոխուեր է, Երեք տարի առաջ չորս չափ վառօթի կամ կէս չիչօղի փոխարէն քանի հատ տղայ որ ուզէինք մեզ կուտային :
- Ձեր ըսածը Գօնիօի մէջ էր, վարպետ :
- Է՛հ, այո՛, Գօնիօի մէջ : Տղան սեւ ըլլայ թէ ձերմակ իմ գործիս կուզայ, Բնաւ չեմ մոռնար, գան-

գուր մագերով գեղեցիկ և զուարթերես աղաքներ կը բերէին մեզ :

— Շատ լաւ բայց, սիրելի վարպետ, այժմ դժբաղդարար Գօնիօի մէջ չենք գտնուիր :

— Վա՞յ, Գօնիօի մէջ չե՞նք գտնուիր մի՛, հապառու՞ր ենք, գոչեց Ալթօթա :

— Բարիպ :

— Բարի՞դ : Լա՛ւ, Մարտիլիայէն նաւ նստելուս պէս վեց շարաթէն Գօնիօ կրնանք երթալ :

— Այո՛, բայց պէտք է որ ես Գալիա մնամ :

— Պէտք է որ դուն Գալիա՞ մնաս, և ինչո՞ւ համար :

— Արտօնտես հոս գործ ունիմ :

— Գալիոյ մէջ գո՞րծ ունիս :

— Այո՛, և կարեւոր գործ :

Ծերունին երկայն և ցաւալին քրքիջով մը խնդալ սկսաւ :

— Գործ ունի՛ս, գործ ունի՛ս : Հա՛, այո՛, իրա՛ւ, մոռցեր էի : ակումբներ պիտի կազմէիր :

— Այո՛, վարպետ :

— Դաւազրութիւններ պիտի նիւթէիր :

— Այո՛, վարպետ :

— Վերջապէս պիտի տեսնէիր կարգ մը գործեր զորոս իմ գործերս կը կոչես, ըսաւ ծերունին և սկսաւ վերասին խնդալ իր կեղծ ու ծաղրածու գէմքովը :

Պարսա՛օ ընց և սկսաւ կորով պատրաստել զիմա գրելու համար ապանագոյ վոթորկին սրուն մօտենալը կը զգար :

— Է՛ն, գործերդ ո՞ւրտեղուանքն հասած են տեսնենք, շարայարեց ծերունին թիկնաթուօն վրայ դժուարաւ գառնալով և իր մի՛ծ ու մոխրագոյն աչքերը աշակրտին վրայ սեւեւելով :

Պարսա՛օ զգաց թէ այդ նայուածքը լուսեղէն ճառագայթի մը նման իր հոգիին մէջ կը թախանջէ :

— Ուր հասած ըլլա՞րս հատկեալ կ'ուզէք :

— Այո՛ :

— Առաջին քարը նետեցի և ջուրը պղտորեցաւ :

— Եւ ի՞նչ մրուր հանեցիր տակէն : Ըսէ տեսնենք :

— Լաւագոյնը, փիլիսոփայական մրուրը :

— Հա՛, հասկցայ, գործին մէջ պիտի խառնես քու անհիմն ջնորքներդ, ունայն երազներդ և խառնաչիտթ գաղափարներդ, ասոնցմէ զատ նաեւ աշխարհի անպիտան արարածներ՝ որոնք Աստուծոյ գոյութեան կամ չգոյութեան վրայ կը վիճին՝ փոխանակ ինձ նման իրենք ալ Աստուած ըլլալ փորձելու : Եւ որո՞նք են այդ երեւելի փիլիսոփաները որոնց կապուած ես, տեսնենք :

— Արդէն դարուս ամենէն մեծ բանաստեղծն ու ա՛մենէն մեծ անաստուածը ձեռքս է : քանի մը օրէն Գալիա պիտի մտնէ, ուրիշ գրեթէ քարտուած էր, և իբրեւ մասօն պիտի ընդունուի այն օթնակը զոր Բօտրֆէր փողոցի Յիսուսեաններու շէնքին մէջ հաստատած եմ :

— Այդ մարդուն անունը ի՞նչ է :

— Վօլթէր :

— Չեմ ճանչնար : անորմէ ետքը ո՞վ ունիս :

— Մօտերս զիս պիտի ներկայացնեն դարուս գաղափարները յուզողներէն ամենէն մեծին, աշխարհի մարդու մը որ «Ընկերային Դաշինք»ը գրած է :

— Անո՞ւնը :

— Ռուսօ :

— Չեմ ճանչնար :

— Կը հաւատամ : դուք Ալթօնա Ժ.ը, Ռէյմօն Լիւլը, Քիէր աը Թօլէտը և Մեծն Ալպէրը միայն կը ճանչնար :

— Պատճառն այն է որ միայն այդ մարդիկը իրօք
ապրած են, սրովհետև միայն անոնք իրենց կիանքին
մէջ յուզած են ըլլալու կամ չըլլալու այս մեծ հարցը :

— Ապրելու երկու եղանակ կայ, վարպետ :

— Ես միայն մէկ եղանակ գիտեմ, այն ալ ապրելն
է : բայց այդ երկու փիլիսոփաներուն զառնանք : Ա-
նուննին ի՞նչ է ըսիր :

— Վօլթէր և Ռուսօ :

— Ազէկ մը միտքս պիտի քրտնեմ այս երկու անուն-
ները : Է՛ք քու պնդածդ ի՞նչ է :

— Շնորհիւ այս երկու անձանց՝ ներկային պիտի
տիրեմ և ապագային հիմերը պիտի խախտեմ :

— Օ՞հ, ուրեմն այս երկրին մարդիկը այնքան ան-
բա՞ն են որ գաղափարներով կը կառավարուին :

— Ընդհակառակը շատ խելացի ըլլալուն համար է
որ գաղափարները իրերէն աւելի ազդեցութիւն կը գոր-
ծեն անոնց վրայ : Ասկէ զատ, աշխարհիս բոլոր փիլի-
սոփաներէն աւելի զօրաւոր օժանդակ մը ունիմ :

— Ո՞րն է ան :

— Զանձրոյթը . . . : Գաղիոյ միապետութիւնը հա-
զար վեց հարիւր տարուան երկար կիանք/ մը ունեցած
ըլլալուն՝ գաղիացիները ա՛լ անկէ ձանձրացած են :

— Ըսել կ'ուզես թէ միապետութիւնը պիտի կործա-
նան :

— Այո՛ :

— Կը կարծե՞ս :

— Անչո՛ւշա :

— Եւ դո՞ւն կը դրդես զանոնք :

— Ունեցած ուժովն :

— Անմի՛տ :

— Ինչո՞ւ անմիտ ըլլամ :

— Միապետութեան կործանումովը քու ձեռքդ ի՞նչ
պիտի անցնի :

— Իմ ձեռքս բան մը չպիտի անցնի, բայց ամէն ոք
երջանիկ պիտի ըլլայ :

— Այսօր նոր գիւտովս գո՞ եմ, հետեւաբար չպիտի
ցաւիմ եթէ քեզի հետ վիճարանելով քիչ մը ժամանակ
կորսնցնեմ : Նախ բացատրէ ինձ թէ ի՞նչպէս ձեռք պիտի
ձդես երջանկութիւնը և ապա թէ ի՞նչ կը հատկապէս եր-
ջանկութիւնը ըսելով :

— Լաւ ուրեմն, ներկայ կառավարութիւնը միապե-
տութիւնը պաշտպանող վերջին պատնէշն է : խելացի,
խորամանկ և քաջ մարդոցմէ կազմուած այս կառավա-
րութիւնը թերևս քսան տարի ևս պիտի կրնար պաշտպա-
նել մաշած ու մաշմաշած միապետութիւնը : Գաղիական
միապետութեան կառավարութիւնը ինձի պիտի օգնէ մի-
ապետութիւնը տապալելու համար :

— Իսկ փիլիսոփանե՞րդ :

— Անոնք ընդհակառակը նեցուկ կ'ըլլան կառավարու-
թեան :

— Ի՞նչ, փիլիսոփաները միապետութիւնը պաշտպա-
նող կառավարութեան նեցուկ կ'ըլլան : Ո՛հ, անմիտ-
ներ, ետաէրնե՛ր :

— Ի՞նչ ըլլալուն վրայ վիճարանիլ չեմ ուզեր, ինչ
ըլլալնին չեմ գիտեր, գիտցածս առ է որ ներկայ կառա-
վարութիւնը տապալելուն պէս՝ ամէն ոք զայրանօք պի-
տի բողոքէ յաջորդ կառավարութեան դէմ : Նորեկ կա-
ռավարութեան դէմ պիտի ըլլան նախ փիլիսոփաները և
ապա ժողովը : Փիլիսոփաները պիտի բողոքեն, ժողովը
պիտի բողոքէ, կառավարութիւնն ալ փիլիսոփաները
պիտի հալածէ և ժողովը պիտի լուծէ : Այն ատեն փիլի-
սոփաներն ու ժողովը զազանի պիտի միաբանին, յա՞

մաս, կամացոյց և յարատև գիմաղբութիւն մը ցոյց
 պիտի տան և ամէն բան պիտի հարուածեն, ամէն
 վայրկեան պիտի փորեն ակուն պիտի բանան և հիմերը
 տեղին պիտի շարեն : Ժողովներուն տեղ գտաւորներ
 պիտի անուանուին, այդ գտաւորները թագաւորութեան
 կողմէ ընտրուած ըլլալով ամէն բան ի նպատակ թագա-
 ւորութեան պիտի կարգադրեն : Իրաւամբ զանոնք պիտի
 ամբաստանեն թէ կաշտակերութեամբ, գրկանօք և անխ-
 բասութեամբ կը գործեն : Ժողովուրդը ոտքի պիտի ելնէ,
 և մէկ խօսքով թագաւորութիւնը իր գէմը պիտի ունե-
 նայ փրկութիւնները՝ սրանք իմացական մասը կը կաղ-
 մեն, ժողովները՝ սրանք քաղաքացիներու մասը կը
 կաղմեն և ժողովուրդը՝ որ ժողովուրդն է, այսինքն
 այն լծակը զոր Աւելիմէս կը փնտռէր և սրով աշխարհ
 տեղէն կը վերնայ :

— Լաւ բայց երբ աշխարհը տեղէն վերցնես պիտի
 ստիպուիս գործնայ իր տեղը ձգել :

— Այո՛, բայց անոր իշխալովը թագաւորութիւնը
 պիտի ջախջախուի :

— Եւ երբ որ թագաւորութիւնը ջախջախուի, որդ-
 նամար ըլլայ, անոր տեւրակներէն ինչ պիտի ելնէ չը-
 տն :

— Ազատութիւնը :

— Ո՛հ, ուրեմն գաղխացիները ազատ պիտի ըլլան :

— Վերջապէս որ մը այդպէս պիտի ըլլայ :

— Ամենքն ալ ազատ պիտի ըլլան :

— Ամենքն ալ :

— Ըսել է Գաղիոյ մէջ երեսուն միլիոն ազատ մարդ
 պիտի գտնուի :

— Այո՛ :

— Եւ այդ երեսուն միլիոն ազատ մարդոց մէջ կը
 կարծես որ միւսներէն աւելի ճարպիկ մէկը չպիտի գտ-
 նուի՝ որ առաւ մը քսանը ինը միլիոն ինը հարիւր
 իննսունը ինը հազար իննսունը ինս քաղաքացիներուն
 ազատութիւնը պիտի յափշտակէ ինքնիրեն քիչ մը ա-
 ւելի ազատութիւն ունենալու համար : Մէտիսէի մէջ
 ունեցած շուներնիս կը յիշնս, բոլոր միւս շուներուն
 բաժինը ինք կ'ուտէր :

— Այո՛, բայց որ մըն ալ միւսները մէկ եզան և
 զայն խեղդեցին :

— Որովհետեւ անոնք չուն էին, եթէ մարդ ըլլային՝
 ձայն չպիտի հանէին :

— Ըսել է մարդոց իմացականութիւնը չունէ՞ն ալ
 վար կը գտէք, վարպետ :

— Է՛հ, օրինակները պակաս չեն :

— Որո՞նք են :

— Կարծեմ հիներուն մէջ կեսար օգտանա մը զըտ-
 նուեցաւ և նորերուն մէջ ալ Օլիվիէ Քրոմվել մը՝ ու-
 բոնցմէ առաջինը հռոմէական, իսկ երկրորդը անգլիա-
 կան կարկանդակը ժակաչքօրէն խածաւ և իրաւադրկուող-
 ները բան մը չըսին կամ մեծ բան մը չըրին անոնց գէմ :

— Լա՛ւ, բայց եթէ այդպիսի մարդ մըն ալ երեսուն
 ելնէ, ընտանաբար ան մասկանացու պիտի ըլլայ,
 պիտի մեռնի, և մեռնելէն առաջ բարիք ըրած պիտի
 ըլլայ իր հարստահարեալներուն, որովհետեւ ազնուապի-
 տութեան ձեռ պիտի փոխէ, բանի մը կոթնիլ պիտի
 ուզէ և ամենէն գորաւոր նեցուկը պիտի ընտրէ, այս-
 ինքն ժողովուրդը : Նուատացնող հաւատարութեան փո-
 խարէն բարձրացնող հաւատարութիւնը պիտի հաստատէ :
 Հաւատարութիւնը սրու սանման մը չունի, զայն հաւ-

տատուին բարձրութիւնն է անոր ստեմանը : Արդ, ժողովուրդը բարձրացնելով մինչև իր օրը անծանօթ մնացած սկզբունք մը նուիրագործած պիտի ըլլայ : Յեզսփախութիւնը զաղխացիները պիտի ազատէ, ս եւ է կեսար Օգոստոսի մը կամ Օլիվիէ Բրոմվէլէ մը պաշտպանութիւնը իրարու պիտի հաւատարեցնէ զանոնք :

Ալթօթա ալբանցակ շարժում մը ըրաւ թիկնաթոռին մէջ :

— Հաս, հաս, ինչ ապուշ է կզիր այ մարդը, գուշեց ծերունին բարկաճայթ : Բասն տարի աշխատէ ազայ մը մեծցնելու եւ ձեռքէդ եկածը մի խնայեր գիտցածդ անոր արվեցնելու համար, որպէսզի այդ տղան երեսուն տարու եղած ասունը քեզի ըսէ թէ « մարդիկ հաւատար են . . . » :

— Անշուշտ, մարդիկ հաւատար պիտի ըլլան օրէնքին առջև :

— Հապա մահուան առջև, անմիտ, օրէնքներուն օրէնքը եղող մահուան առջև ալ հաւատար պիտի ըլլան երբ մին երեք օրուան մանկիկ պիտի մեռնի եւ ախար հարիւր տարու ծեր : Հաւատար, մարդիկ հաւատար պիտի ըլլան եղեր մահուան չյաղթած : Ո՛հ, որքան անբան ես եղեր եւ որքան ալ տխմար :

Եւ Ալթօթա քրքիջ մը արձակեց, մինչդեռ Պալամօ գլուխը խոնարհած եւ լուրջ եւ ախուր դէմքով մը կը նայեր :

— Ըսել է իր հացը խածնելով ուտող կոշտ ու կոշ պիտ արհեստաւորը, կաթ ձծող մանկիկը եւ իր քանի մը կաթիլ կաթը իմող ու իր մարած աչքերուն վրայ լացող ապուշ ծերունին իմ հաւատարնե՞րա են . . . , շարայարեց Ալթօթա կարեկցութեամբ իր տշակերտին նա-

յելով : Ո՛հ, ի՛նչ խեղճ ու կրակ խմատակ մըն ես եղեր Գիացած եղիր որ մարդիկ մինչև որ անմահ չըլլան իրարու չպիտի հաւատարին, որովհետեւ երբ անմահ ըլլան պիտի աստուածանան, եւ միայն աստուածները իրարու հաւատար են :

— Անմահութիւն, ցնորք մըն է ատիկայ, մըմնջեց Պալամօ :

— Ցնորք մի, այս, ցնորք, բոլոր երեան չեւած գիւտերուն նման, չոգիին նման եւ կեքտրական հոսանքին նման՝ զորս կը փնտռեն եւ որոնք տակաւին զբանուած չեն ու պիտի գանուին : Բայց տիեզերքին փոշին, աշխարհքներու մասնիկները ինծի հետ խառնէ, մի առ մի երեան հանէ իրարու վրայ գիզուած խաւերը՝ ու բոնց խրաքանչիւրը տարբեր տարբեր շրջաններու քաղաքակրթութիւնները ցոյց կուտան, եւ այդ մարդկային խաւերուն մէջ, այդ թագաւորութեանց չեղձերուն մէջ, այդ դարերու երակներուն մէջ, զորս այժմեան խուզարկութեան սուրը գոգցես չերտ առ չերտ կը կարէ, գիտան թէ ինչ պիտի կարգաս : Սա՛թէ ամէն դարու մէջ եւ ամէն օր մարդիկ իմ փնտռածս փնտռած են « լաւաջոյնը », « բարին », « կատարեալը », եւ ուրիշ անուններով : Եւ գիտան թէ երբուրեք կը փնտռէին : Հոմերոսի ժամանակը՝ երբ մարդիկ երկու հարիւր տարի կ'ապրէին, նահապետներու ժամանակը՝ երբ ութը դար կ'ապրէին : Այդ լաւաջոյնը, այդ բարին եւ այդ կատարեալը չեն գտեր, որովհետեւ եթէ գտած ըլլային՝ այս փրտած աշխարհը թարմ, կոյս եւ առաօտեան արշալոյսին նման վարդազոյն պիտի ըլլար : Ատոր փոխարէն վիշտ, դիակ եւ աղբ ունինք այժմ աչքերնուս առջև : Փա՞ղցր բան մըն է վիշտը, գեղեցի՞կ բան մըն է գիակը, բողձա-

լո՞ւ բան մըն է աղբը :

— Լա՛ւ, բայց կ'ըսէք թէ այս կենսատու ցքին ոչ ոք գտած է սակաւին : Ես ալ ձեզի կ'ըսեմ թէ ոչ ոք պիտի գտնէ զայն :

— Միամի՛տ ես եզեր : Ո՞ւ է գողանիքի մը գըտնըւած չըլլալը պատճառ մըն է որ զայն չգտնէ մարդ : Այդ հաշուով երբէք գիւտ չպիտի ըլլար : Դուռն կը կարծես թէ բոլոր հնարուած գիւտերը նոր բաներ են : Ո՛չ, անոնք մտցուած բաներ են որ կը գտնուին : Բայց խնդիր է թէ ինչո՞ւ համար անգամ մը գտնուած բաները կը մտացուին : Որովհետեւ կեանքը շատ կարճ ըլլալով հնարիչը չկրնար իր հնարածէն հանել անոր պարունակած հետեւութիւնները : Քսան անգամ մազ է մնացեր որ այս կենսատու ցքին պիտի գտնուի եզեր : Կը կարծե՞ս որ Սաիւքըը Հոմերոսի մէկ երեակայութիւնն ըլլայ : Կը կարծե՞ս որ սա գրեթէ անմահ Աքիլլէսը՝ որ միայն կըրակէն կը վիրաւորուէր՝ դիցաբանական զրոյց մը ըլլայ : Ո՛չ : Աքիլլէս Կիրոնի աշակերտն էր, ինչպէս որ դուռն ալ իմ նշակերտս ես : Կիրոն կը նշանակէ մեծ կամ յոռի : Կիրոն գիտնական մըն էր զոր յուշկապարիկի ձեռով կը նկարագրեն, որովհետեւ իր գիտութեան ձիրքովը ձիու զօրութիւնն ու թիթեաշարժութիւնը ունէր : Ահա ան ալ գրեթէ կենսատու ցքին գտած էր : Թերեւս անոր ալ կը պակէր այն երեք կաթիլ արիւնը զոր ինձ բերել կը մերժես : Այդ երեք կաթիլ արիւնը չգտնուելուն համար Աքիլլէս կրուկէն վիրաւորելի եղաւ . մահը անցք մը գտաւ և ներս մտաւ հոնի : Այո՛, ըսածս կը կրկնեմ, Կիրոն, այդ համաշխարհայնացած մարդը, այդ մեծ մարդը, այդ տձե մարդը սարբեր Ալթոթա մըն է որ սարբեր Աշարայէ մը կ'արգիլուի ի գլուխ հանելու

այն գործը որ, թերեւս բոլոր մարդկութիւնը պիտի փրկէր և պիտի ազատէր երկնային անէծքներու ազդեցութենէն : Է՛հ, ասոր ըսելիք մը ունի՞ս :

— Ըսելիքս սա է որ ես իմ գործս ունիմ դուք ալ ձերը : Առանձին գործելով ըմբռնե՛ք զայն և իրարու շահին կամ վնասին մասնակից չըլլանք : Չեմ կրնար ձեզի օգնել ո՞ճիր մը գործելով :

— Ո՞ճի՞ր մը մի :

— Այո՛, մանաւանդ այնպիսի ո՞ճիր մը՝ որուն վրայ ժողովուրդը ամբողջութեամբ պիտի չարախօսէ, այնպիսի ո՞ճիր մը՝ որուն համար մարդը կը բարձրացնեն այն անարգ կախազանը որմէ սակաւին ձեր գիտութիւնը չէ կրցած ազատել ո՛չ մեծ և ո՛չ ալ փոքրիկ մարդիկ :

Ալթոթա երկու նիհար ձեռքերը մարմարէ սեղանին զարկաւ :

— Է՛ նայինք, մարդասէր սպուշ մը մի՛ ըլլար, ապուշներու ցեղին ամենէն վատթարը : Եկուք քիչ մը օրէնքներուդ վրայ խօսինք, այն օրէնքներուդ վրայ ուրոնք գրուած են քեզ նման անասուններու կողմէ : Անոնք իմաստութեամբ թափուած կաթիլ մը արեան դէմ կը զայրանան, բայց հոգի կուտան հասարակաց հրապարակներուն, քաղաքներու պատնէշներուն տակը, սա պատերազմի դաշտ կոչուած մտերմակայրերուն մէջ թափուած կենսական հեղուկէ զեռակներուն համար : Խօսինք քու անպիտան և անձնատիրական օրէնքներուդ վրայ որ սպազային մարդը ներկային կը դռնէ և իրեն նշանաբան ընարած է « Այսօր սպրէ, վաղը մեռիր » խօսքը : Կ'ուզե՞ս որ այս օրէնքներուն վրայ խօսինք :

— Ըսէ՛ք ինչ որ պիտի ըսէք, ձեզ մտիկ կ'ընեմ, պատասխանեց Պալսամօ հեռոյնէ տիրելով :

— Մտախտ մը և զրիչ մը ունի՞ս : Փոքր հաշիւ մը պիտի ընենք :

— Առանց զրիչի և առանց մտախտի կրնամ հաշուել : Ըսէք :

— Տեսնենք քու յատակագիծդ ի՞նչ է : Հը՛մ, կը յիշեմ . . . , կառավարութիւն մը կը տապալես, ժողովներ կը լուծես, ապօրէն դատաւորներ կը կարգես, սնանկութիւն մը կը զոյացնես, կառավարութիւններու ոյժ կուտաս, յեղափոխութիւն մը կը վարես, միապետութիւն մը կը կործանես, թոյլ կուտաս որ ինքնապաշտպանութիւն մը երեւան ելնէ և տիրապետողը կը զահալիմես : Յեղափոխութիւնը ազատութիւն պիտի բերէ և ինքնապաշտպանութիւնն ալ հաւատարութիւն : Ըսել է գողիացիները ազատ և հաւատար ընելով աւարտած կ'ըլլաս գործդ, այնպէս չէ՞ :

— Այո՛, այս գործը անկարելի՞ կը թուի ձեզ :

— Ես անկարելիութեան չեմ հաւատար : Կարծեմ այս համոզումը քու գործիդ ալ կուգայ :

— Ուրե՞մն :

— Սպասէ՛. նախ՝ Անդլիան՝ ուր քու ուզածդ ըրին՝ Գաղլիոյ չնմանիր . դուն Անդլիոյ օրինակը կը գողնաս : Գաղլիան կղզիացիալ երկիր մը չէ ուր մարդ կարենայ կառավարութիւնները տապալել, ժողովները լուծել, ապօրէն դատաւորներ հաստատել, սնանկութիւն մը զոյացնել, խոտլութիւններու ոյժ տալ, յեղափոխութիւնները վարել, միապետութիւններ կործանել, ինքնապաշտպանութիւններ կազմակերպել և տիրապետողները զահալիմել, առանց միւս ազգութիւնները քիչ թէ շատ այս շարժումներուն խառնելու : Գաղլիան Եւրոպայի փակած է՝ ինչպէս մարդու լեարդը աղիքներուն . Գաղլիան

արմատներ ունի ամէն ազգերու մէջ՝ նեարդներ՝ ամէն ժողովուրդներու մէջ, փորձէ՛ լեարդը խելլ այն մեծ մեքենայէն որ Եւրոպայ կը կոչուի և քսան, երեսուն, քստասուն տարի թերեւ մարմինը պիտի դողայ . բայց ես քիչէն կը բռնեմ և քսան տարի կ'առնեմ, շա՛տ է, պատասխանէ, խմատասէր փիլիսոփայ :

— Ո՛չ, շատ չէ, ընդհակառակը քիչ ալ է, պատասխանեց Պալասմօ :

— Լա՛ւ, ես այդ չափը բտական կը համարեմ : Քսան տարի պատերազմ, արիւնոռչտ, մահափիւռ, անդադար կռիւ : Է՛ն, այս բանին համար տարեկան երկու հարիւր հազար մեռեալ կը հաշուեմ, և ասիկայ չափազանց չէ, երբ որ Գերմանիոյ, Իտալիոյ, Սպանիոյ մէջ ալ կոխն ճարակի : Տարին երկու հարիւր հազար մարդ հաշուելով քսան տարին կ'ընէ չորս միլիոն մարդ, իւրաքանչիւր մարդու գրեթէ բնական հաշուով տանը եօթը լիտր արիւն հաշուելով՝ քու նպատակիդ հասնելու համար վաթսունը ութը միլիոն լիտր արիւն թափել հարկ պիտի ըլլայ : Ես քննէ երեք կաքիլ կ'ուզէի : Ըսէ հիմայ թէ մեր երկուքէն որն է խենթը, վայրենին, մարդակերը : Է՛, չե՞ս պատասխաներ :

— Ինչո՞ւ չպատասխանեմ, վարպետ, կը պատասխանեմ թէ այդ երեք կաթիլ արիւնը նշանակութիւն իսկ չպիտի ունենար՝ եթէ վատահ ըլլայիք թէ պիտի յաջողիք :

— Եւ դուն, դուն որ վաթսունը ութը միլիոն լիտր արիւն կը թափես, յաջողելու ապահովութիւնը ունի՞ս : Ըսէ՛ : Ոտքի՛ ելնելով և ձեռքերդ սրտիդ վրայ դնելով կրնա՞ս պատասխանել թէ « վարպետ, այս չորս միլիոն դիակներուն միջոցաւ մարդկութեան երջանկութիւնը

կ'երաշխատորեմ : »

— Վարպետ, վարպետ, յանուն երկնից ուրիշ բանի վրայ խօսինք, բացազանչից Պալատօ պատասխանէն խոյս տալով :

— Հը՛մ, պատասխան չե՞ս տար, դո՛չեց Ալթօթա :

— Մ'իջոցին արտաքին երևոյթիներէն խարուելով կը կարծէք թէ պիտի յաջողի՞ք, վարպետ :

— Կարծեմ թէ ինձ խրատ կուտաս, կարծեմ թէ զիս կ'ուրանաս, կարծեմ թէ զիս սուտ կը հանես, ըստ Ալթօթա պազ բարկութեամբ մը գորչազոյն աչքերը յօնքերուն ներքե գարձնելով :

— Ո՛չ, վարպետ . ես որ ամէն օր կ'ապրիմ աշխարհիս իրերուն ներձակ կերպովը, մարդոց հետ հակասութեամբ, իշխաններու հետ մտքանկելով ե ոչ թէ ձեզ նման անկիւն մը քաշուած, անցածին, արդիլուածին կամ թոյլ տրուածին անտարբեր վիանականի կամ ասուհական կոչը խմբազրոյ զատաւորին նման, կը մտածեմ : Մէկ խօսքով, ես որ անամուտեան գծուարութիւնները կը սնանեմ, զայն ձեզ մասնացոյց կ'ընեմ, ահա այս է իմ ըրածս :

— Այդ գծուարութիւններուն շատ շուտով կը յաղթէիք՝ եթէ կամենայիր :

— Եթէ հաւատայի ըսէք :

— Չե՞ս հաւատար ուրեմն :

— Ո՛չ, ըստ Պալատօ :

— Ձիս կը փորձե՞ս գոչեց Ալթօթա :

— Ո՛չ, կը կասկածիմ :

— Կա՛ւ, մահուան կը հաւատա՞ս :

— Ես գոյութիւն ունեցող բանին կը հաւատամ : Արդ, մահը գոյութիւն ունի :

Ալթօթա սուերը գնցեց :

— Այս կէտը չե՞ս հերքեր :

— Անհրքելին հերքուիր :

— Անտահման, անյաղթելի բան մըն է մահը, այնպէս չէ՞, յարեց ծերունի վիանականը սարսաղեցիկ ժպտով մը :

— Այո՛, անյաղթելի ե. անտահման :

— Եւ երբ վիակ մը սնանես, քրտինքը ճակատդ կ'իջնէ ու ցաւը սիրտդ կը մանէ, այնպէս չէ՞ :

— Քրտինքը ճակատս չիջնիր, սրտիճակս բոլոր մարդկային թշուառութեանց վարժուած եմ . ցաւն ալ սիրտս չմտնիր, սրտիճակս կեանքը գրեթէ բանի տեղ չեմ դնիր . բայց երբ վիակի մը առջև գանուիմ՝ կ'ըսեմ՝ « Մա՛հ, մա՛հ, դուն Աստուծոյ նման զօքաւոր ես, դուն զերազոյն կերպով կը թաղուարես, ե բան մը չկրնար քեզ յաղթահարել » :

Ալթօթա լուծեամբ մտիկ կ'ընէր Պալատօն ե ի նշան անհամբերութեան, կարոց մը կը սեղմէր մատնեւրուն մէջ : Երբ իր աշտիրաւը այս պարբերութիւնը աւարտեց, ծերունին, ժպտազէմ, շուրջը նայեցաւ ե իր աչքերը գոցին սրտին . մէկ անկիւնը կանգ առնել, ուր յարդի կոյտի մը վրայ պառկած կը գողգղար սեչուն մը, նոյն ցեղին ուրիշ երեք կենդանիներէ քիչ մը անդին, զորս Ալթօթա իր փորձերուն համար սեղած ե Պալատօ ալ բերել տուած էր :

— Ա՛ս տա շունը ե սեղանին վրայ գիր, ըստ Ալթօթա Պալատօի :

Պալատօ հնազանդեցաւ . գնաց սեչունը ստաւ ե մարմարիտնին վրայ դրաւ :

Կենդանին, իր ճակատադրին գոզցես սեղեակ, դողալ, ժօզ. Պալս., թիւ 26—57, հաս.Դ., Բ.հր.Ն.Ք.

տապալտկիլ և ոռնալ սկաւ երբ որ մարմարիողին պաղն զգաց :

— Է՛, ըսէ նայինք, բնական է որ կեանքին կը հաւատաս՝ քանի որ մահուան կը հաւատաս, ըսաւ Ալթօթա :

— Անշո՛ւշտ :

— Անա շուն մը որ ողջ և անողջ կ'երևայ ինձ, դուն ալ ողջ չե՞ս տեսներ զայն :

— Այո՛, որովհետեւ կը պոռայ, կը տապալտկի և կը վախնայ : Մէկ խօսքով կենդանութեան նշաններ ցոյց կուտայ :

— Հաջէ՛, պզտիկ հաջէ՛, որպէս զի պարսն Աշարան համոզուի որ ողջ ես, յարեց ձերունին իր մթազին ժպտովը :

Եւ մատովը շանը մէկ ջլին դպաւ, ապա աւելցուց .

— Լա՛ւ, յառաջ բեր օգահանը : Շունը տակը մղէ : Կեցի՛ր . . . : Աղէկ միտքս ինկաւ, քիչ մնաց պիտի մոռնայի քեզի հարցնել թէ ո՞ր մահուան կը հաւատաս :

— Չեմ գիտեր թէ ի՛նչ ըսել կ'ուզէք, վարպետ . մտնը մահ է :

— Ճիշդ է, ես ալ այնպէս կը կարծեմ : Ուրեմն, և որովհետեւ մահը մահ է, պարպէ օղը, Աշարա :

Պալամօ անխ մը դարձուց, ասով օգահան գործիքին տակի շանը հետ փակուած օղը խողովակէ մը ճամբայ գտնելով տակաւ առ տակաւ խոյս տուաւ սուր չչիւն մը հանելով : Փոքրիկ շունը նախ անհանդիստ եղաւ, ապա ոտքովը գետինը քերեց, գլուխը վեր առաւ, արագօրէն շնչեց և վերջապէս հեղձամղձուկ, ուռած և անկենդան, ինկաւ :

— Անա շունը կաթուածահար մեռաւ, այնպէս չէ՞, քսաւ Ալթօթաս : Գեղեցիկ մահուամբ մը որ շատ քաշկ չխտար :

— Այո՛ :

— Աղէկ մը մեռած է :

— Անշո՛ւշտ :

— Համոզուած չես երևիր, Աշարա :

— Ինչո՞ւ չէ, ընդհակառակը :

— Համոզուած չես երևիր որովհետեւ կ'ենթադրես թէ ներափչումը գտած եմ, հէ՞, այն երկրորդ հարցը որով օղը կեանքին հետ կը ներմուծուած անեղծ մարմնոյ մը մէջ :

— Ո՛չ, բան մըն ալ չեմ ենթադրեր, այլ՝ կը հաւատամ որ շունը մեռած է, սնա այսչափ :

— Հոգ չէ, աւելի ապահով ըլլալու համար երկու անգամ պիտի սպաննենք զայն : Օգահան մեքենան վերցուր, Աշարա :

Աշարա բիւրեղէ գործիքը վերցուց . շունը բնաւ չերկրաց . աչքերը գոց էին, սիրտը ա՛լ չէր զարներ :

— Ա՛ռ սա կտրօցը և առանց շնչափողին դպելու ա՛նոր ողնայարի սիւնը կտրէ :

— Միմիայն ձեզի հնազանդած ըլլալու համար կ'ընեմ այդ բանը :

— Ինձի հնազանդելէ աւելի՝ խեղճ կենդանին մեռցընելու համար կ'ընես՝ եթէ տակաւին կենդանութիւն կայ վրան, պատասխանեց Ալթօթաս յամառ ժպիտով մը :

Պալամօ կտրօցի հարուած մը տուաւ : Ողնայարի սիւնը երկուքի բաժնուեցաւ և արիւնոտ լայն վէրք մը քացուեցաւ :

Կենդանիին դիակը անշարժ մնաց :

— Այո՛, իրաւ որ վերջին շունչը փչած է, ո՛չ մէկ նհարդ կը շարժի, ո՛չ մէկ գնդեր կը գողայ, մարմնոյն և ո՛չ մէկ մասը այս նոր սճիրին գէմ կը բողբէ, ըստ Ալթոթմաս : Մեռած է և աղէկ մեռած, այնպէս չէ՛ :

— Քանի անգամ որ կ'ուզէք՝ այո՛ կը կրկնեմ, ըստ Պալտամօ անհամբեր :

— Անա կենդանի մը որ անշարժ է, սառած է և քարի կը նմանի : Բան մը չկրնար յաղթել մահուան, ըսիր, այնպէս չէ՛ : Այժմ ոչ ոք կարողութիւն չունի՞ այս խեղճ կենդանիին կեանք և կամ կենաց երևոյթը տալու :

— Աստուծմէ զատ ոչ ո՛ք :

— Այո՛, բայց Աստուած այդպիսի անպատկճութիւն մը չգործեր : Երբ Աստուած կը սպաննէ, պատճառ մը կամ շահ մը ունի սպաննելու մէջ, որովհետեւ ան գերազոյն իմաստութիւնն է : Մարդասպան մը այսպէս կ'ըսէր, ըսածն ալ անիրաւ չէր : Բնութիւնը մահուան մէջ շահ մը ունի :

— Հեռեւորար սնա ամէն բանով մեռած չուն մը որմէ բնութիւնը իր շահը առած է :

Ալթոթմաս Պալտամօի նայեցաւ : Պալտամօ ձանձրացած գլուխը ծոցի :

— Լաւ ուրեմն, ի՞նչ պիտի ըսէիր եթէ՛ այս չունը աչքը բանալով քեզի նայէր, շարայարեց Ալթոթմաս :

— Չտխազանց պիտի զարմանայի, վարպեա :

— Պիտի զարմանայի՞ր : Հը՛մ, բարեբաղդութիւն մըն է ասիկայ :

Ծերունին կեղծ ու ստուերոտ ժպիտով մը խօսքը աւարտելով՝ մետաղի կտորուանքէ կազմուած գործիք մը քաշեց չունին քով : Այս մետաղի կտորուանքները չուն խոյի խիցերով իրարմէ զատուած էին : Վերոյիշեալ գոր-

ծիքին չունիան թթուախառն ջրէ խառնուրդի մը մէջ կը զանուէր, որուն երկու ծայրերը տաշտէ մը գուրս կը մնային :

— Ո՞ր աչքը կ'ուզես որ բանայ, Աշարա, հարցուց ծերունին ձեռքը գործիքին տանելով :

— Աջը :

Ծերունին գործիքին երկու ծայրերը չունին պարանոցին գնդերներէն մէկուն մէջ մխեց : Այս ծայրերը մետաքսի կտորով մը իրարմէ զատուած էին :

Շունին աջ աչքը խոյն բացուեցաւ և կարծես ուղղակի Պալտամօի նայեցաւ : Այս վերջինը, աճաբեկ, ետ քաշուեցաւ :

— Կուզե՞ս որ հիմայ կոկորդին անցնինք, շարայարեց ծերունին :

Պալտամօ, խորին զարնանքի մը մտանուած, չպատահանեց :

Ալթոթմաս ուրիշ գնդերի մը զպաւ և գոցուող աչքին տեղ կոկորդը բացուեցաւ, ձերմակ ու սուր ակօսանքու կրկին շարք մը ցոյց տալով, որոնց արմատին կարմիր լինող կը գողգար, կարծես թէ կենդանին ողջ ըլլար :

Պալտամօ վախցաւ և չկրցաւ յուզմունքը ծածկել :

— Ո՛հ, ա՜նա տորօրինակ բան մը գոչեց :

— Կը տեսնե՞ս թէ մահը որքան չնչին բան մըն է, ես որ քիչ ատենէն անորը պիտի ըլլամ՝ զայն իր անուզօքի ճամբէն կը խոտորեմ, ըստ Ալթոթմաս իր ապշած աշակերտը յաղթելով :

Եւ յանկարծ սուր և ջղային խնդուքով մը տեղեցուց :

— Չգուշացի՛ր, Աշարա՛, զգուշացի՛ր, սա մեռած չունը որ քիչ մը առաջ քեզ խածնել կ'ուզէր, հիմայ եւ տեղեկ պիտի վազէ :

Եւ իրաւ ալ, շունը իր կարուած պարանոցովը, բաց քերտովը և սարսուռն աչքերովը յանկարծ ստքերուն վրայ կայնեցաւ և զլուխը սոսկալի տեսքով մը մէկ կողմ կախած՝ սրունքներուն վրայ երերտկաց :

Պալամօ մտղերուն անկուելը զգնց և հա հա քաշուելով գնաց դրանը կռթնեցակ՝ չզխուհալով թէ կենա՞լ պէտք էր թէ փախչիլ :

— Մի՛ վախնար, մի՛ վախնար, դաս տուած աստեան քեզ վախէդ մեռցնել չեմ ուզեր, այս փորձերը կը բաւեն, ըսաւ Ալթօթաս շան զխակը և մեքենան մէկ կողմ հրելով :

Դիակը գործիքին հետ հազարակցութենէ զայրելով՝ անմիջապէս նախկին տխուր կերպարանքն ստացաւ, ինչ կաւ ու անշարժացաւ :

— Մահուընէն այսպիսի բան մը կը սպասէի՞ր, Աշարա : Կը կարծէի՞ր թէ մահը կրնար այսպիսի ընաւազադրութիւն մը ունենալ : Ըսէ՛ :

— Իրա՛ւ որ շատ տարօրինակ բան, ըսաւ Պալամօ մօտենալով :

— Հիմայ տեսա՞ր որ մարդ ըսածս կրնայ ընել, և առաջին քայլն ալ առնուած է, տղաս : Ի՞նչ բանի կը ծառայէ կեանքը երկարելը, երբ մարդս կրնայ մահը ջնջել :

— Բայց քանի որ ձեր տուած կենդանութիւնը կեղծ կենդանութիւն մըն է, ըսել է սակաւին մահը ջնջուած չկրնար համարուիլ, առարկեց Պալամօ :

— Եթէ ժամանակ ունենանք՝ իրական կեանքը պիտի գանենք : Հոսովմայեցուց պատմութեան մէջ կարգացած չե՞ս որ Գաախտէ կենդանութիւն կուտար զխակներուն :

— Բանասանդուութեանց մէջ է ձեր այդ ըսածը :

— Մի մտնար թէ հոսովմայեցիք բանասանդուութեաններուն « մարգարէութիւն » անունը կուտային :

— Բայց ըսէք ինձ թէ եթէ ձեր կենսատու ցքիին բաղադրութիւնը կատարեալ ըլլար՝ զայն այս շունին իմցնելով յաւիտեանս պիտի կրնայի՞ք ապրեցնել զայն :

— Անշո՛ւշա :

— Եթէ այդ շունը ձեզի պէս փորձեր ընողի մը ձեռքերուն մէջ խեղդուած ըլլա՞ր, այն աստեան ի՛նչ միջոցի պիտի գիմէիք :

— Հը՛մ, ահա այս խօսքիդ կը սպասէի, գոչեց ծերունին սերակութեամբ ձեռքերն իրար զարնելով :

— Ըսէք տեսնե՞ք, վարպետ, ձեր ցքին ծխնելոյցի մը զլիսու մը վրայ փչելը պիտի կրնա՞յ արգիլել, մարգուտ մէկ կողմէն մանելով միւս կողմէն՝ դուրս ելլող գնդակ մը պիտի կրնա՞յ կասեցնել, վերջապէս պիտի կրնա՞յ ձիու մը իր վրան հեծնողին փորը կիցով մը ձեղքելուն առաջքն առնել :

Ալթօթաս իր ախոյեանին նայելու պէս Պալամօի նայեցաւ և ըսաւ :

— Ո՛չ : Ըսածդ խիստ արամարանական է, սիրելի Աշարաս : Մարդս ո՛չ ծխնելոյցէն, ո՛չ գնդակէն և ո՛չ ալ ձիուն կիցէն խոյս կրնայ տալ՝ քանի որ տուներ, հրացաններ և ձիեր կան :

— Ըսել է դուք միայն մեռելները պիտի կրնաք յարուցանել :

— Այո՛, ժամանակուոր կերպով և ո՛չ թէ անասման կերպով : Մեռելները անասման կերպով յարուցանելու համար պէտք է որ նախ մարմնոյն մէջ հողուցն կեցած տեղը զանեմ և այս խուզարկութիւնն ալ կրնայ երկար տեւել, բայց բացուած վէրքէն հողիին դուրս ել-

նկը կրնամ արգելել :

— Ի՞նչպէս :

— Վէրքը գոցելով :

— Մինչև իսկ եթէ այդ վէրքը չնչերա՞ղ մը կարած
ըլլայ :

— Անշո՛ւշտ :

— Ո՛հ, այդ բանը տեսնել կ'ուզէի :

— Եթէ այդպէս է, հո՛ս նայէ, ըստ ձերունին և ա-
տանց Պարամօի միջամտութեան ժամանակ ձգելու՝ ձախ
թեւին չնչերակը նշարակով ձը ծակեց :

Ծերունիին մարմնայն մէջ այնքա՛ն քիչ արիւն
կար և եղածն ալ այնքա՛ն ծանր կը քալէր որ՝ հազիւ
քանի մը վայրկանէն վէրքին բերանը կհաւ, և վերջա-
պէս առատօրէն գուրս պոսթկաց :

— Տէ՛ր Աստուած, ի՞նչ ըրիք, գոչեց Պարամօ :

— Ի՞նչ եղար, ի՞նչ կայ որ, ըստ Ալթօթաս :

— Ծանր կերպով վերստորուեցաք, ի՞նչ պիտի ըլ-
լայ :

— Եւ որովհետև դուն թովմաս առաքեալին պէս
տեսնելով ու չօշափելով միայն կը հաւատաս, ստիպուե-
ցայ քեզի ցուցնել և չօշափել տալ :

Ալթօթաս մօտը գրուած փոքրիկ սրուակ մը անտ և
մէջի նկուղէն քանի մը կաթիլ վէրքին վրայ կաթնեցնե-
լով ըստ :

— Նայէ՛ :

Այդ գրեթէ մոգական նկուղը վէրքին դպելուն պէս
արիւնահոտութիւնը դադրեցաւ, մարմինը սեղմուելով և
բակը գոցուեցաւ և վէրքը փոքր խայթուածքի մը վե-
րածուեցաւ՝ որմէ արիւն կոչուող հոտուն միտը չկրցաւ
գուրս ելնել :

Պարամօ այս անգամ ապշութեամբ ձերունիին նայե-
ցաւ :

— Ահա ստիկոյ ալ գտայ, առ՛ր ի՞նչ կ'ըսես, Ա-
չարա :

— Ի՞նչ պիտի ըսեմ, առ՛ թէ դուք մարդոց ամենէն
գիտունն էք :

— Աւելցուր նաև թէ՛ եթէ մահուան բոլորովին չեմ
կրցած յաղթել, գոնէ այնպիսի հարուած մը տուած եմ
անոր որ գիւրտ ինքզինքը չպիտի գտնէ, այնպէս չէ՞
կը տեսնե՞ս, սղաս, մարդու մարմինը գիւրարեկ ոսկոր-
ներ ունի որոնք կրնան կտարիլ. ես այդ սակերները
պոզպատի նման պիտի կարծրացնեմ. մարդու մարմինը
արիւն կը պարունակէ, երբ արիւնը վազելով հասնի՝ կեն-
դանութիւնն ալ իր հետը կը տանի, ես արիւնին գուրս
եղնելը պիտի արգելեմ. միտը կակուզ է և զերակեղեք,
ես զայն սուրբու և տապարներու բերանը բթացնող
միջին զարու սապիաներուն մօին նման անխոցելի պի-
տի դարձնեմ : Բայց այս բաներուն համար Ալթօթաս մը
պէտք է որ երեք հարիւր տարի սպրի : Է՛ն ուրեմն,
տո՛ւր ինձի ուղածս և ես հաղար տարի կ'սպրիմ : Սի-
րելի Աչարաս, այս բանը քու ձեռքդ է : Դարձո՛ւր ինձ իմ
երիտասարդութիւնս, իմ առօրյ մարմինս, իմ գողտ-
փարներու թարմութիւնը, և այն տանն պիտի տեսնես
որ ես ո՛չ սուրէն, ո՛չ գնդակէն, ո՛չ փլուղ պատէն և ո՛չ
ալ բզկտող դաղանէն՝ կը վախնամ : Տակաւին իմ չորբորդ
երիտասարդութեանս հասած, այսինքն չորս մարդու
տարիք չաղրած, պիտի տեսնես որ, Աչարա, աշխարհի
երեսը պիտի փոխեմ և ինձի ու վերանորոգեալ մարդկու-
թեան համար, առանց ծխնելոյցի, առանց սուրի, ա-
ռանց հրացանի գնդակի և առանց կից զարնող ձիու աշ-
խարհ մը պիտի շինեմ, որովհետև ա՛յն ատեն մարդիկ

պիտի հասկնան թէ աւելի լաւ է ապրիլ, իբարու օգնել
և զիրար սիրել, քան թէ զիրար սրտտակել և բնաջինջ
ընել :

— Ճշմարիտ է, կամ գոնէ կարելի է, վարպետ :

— Քանի որ այդպէս է, ուզած ազատ բեր :

— Թողէք որ քանի մը օր են մտածեմ և դուք ալ
մտածեցէք :

Ալթօթաս արհամարհական վեհ ակնարկով մը իր ա-
շակերտին նայեցաւ :

— Գնա՛, գնա՛, ուրիշ տանն քեզի պիտի համոզեմ -
մէջ մըն ալ որ, մարդուս արիւնը այնքան հագուազիւս
խառնուածք մը չէ՛ որուն անդ կարելի չըլլայ ուրիշ
նիւթ մը գործածել : Գնա՛, քեզի պէտք չունիմ - ես կը
վնասեմ և կը գտնեմ :

Պարամօ ոտքը կախուլին զարկաւ և ստորին օննեակը
մտաւ համբ ու անշարժ և բոլորովին խոնարհած այս
հանճարեղ մարդուն առջև՝ որ անկարելի բաները կարելի
ընելով՝ անկարելիութեան հաւատարմ կը ստիպէր զինքը :



ԿՍ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն երկայն և զէպքերով լի գիշերը, ուր զիցարաւ
նական աստուածները վարագուբող ամպերուն նման
Սէն-Տընիէն Միւէթ, - Միւէթէն Գօք-Հէօն փողոցը

Գօք-Հէօն փողոցէն Բլասթրիէր փողոցը և Բլասթրիէր
փողոցէն ալ Սէն-Գլոս փողոցը շրջեցանք, տիկին Տիւ-
պարի այդ զէպքերով լի գիշերը գործածած էր թագաու-
րին միտքը նոր քաղաքականութեամբ մը զբաղեցնելու :

Մոնաուանդ շատ պնդեր էր թէ վտանգաւոր պիտի
ըլլար Շուազէօրեանները ազատ ձգել որ տիկին արքայաւ-
գասեր հետ իրենց մտերմութիւնը աւելցնեն :

Թագաւորը ուսերը վեր ընելով պատասխաներ էր թէ
տիկին արքայագուստարը դեռ ազայ մըն էր, իսկ Պ. Շուա-
զէօլ ծերացած պաշտօնեայ մը, հետեւաբար ու է վտանգ
չկար՝ քանի որ մին չէր կրնար աշխատիլ, իսկ միւսը
չէր կրնար զուարճացնել :

Ապա, թագաւորը ըրած կատակարանութենէն յախը-
տակուած, վերջ տուեր էր խօսակցութեան :

Սակայն տիկին Տիւպարիի համար միւսնոյն բանը
չէր եղեր : Ան կը կարծէր թէ թագաւորին միտքը բանով
մը զբաղած էր :

Լուի Ժե պշտաւէր էր : Մեծ երջանկութիւն մըն էր
իրեն համար իր սարկուհիներուն նախանձը զրգուլը,
միայն թէ այդ նախանձը ո՛չ կուսներ յարուցանելու և
ո՛չ ալ զէպքերը երկար տանն թթուեցնելու էր :

Տիկին Տիւպարի երկու պատճառներ ունէր նախան-
ձելու, այս պատճառներէն մին իր կասախրութիւնն էր,
իսկ միւսը վախը : Իր գտնուած դիրքին հասնելու համար,
մինչև յազմութիւն, մեծ նեղութիւն կրեր էր, և կա-
քէն ձեռք անցուած բարձր դիրքին մէջ այնքան հեռի կը
գտնուէր ճամբայ ելած տեղէն որ, թագաւորին ուրիշ
սարկուհիներ ալ ունենալը ներողամտութեամբ զխտելու
քաջութենէն կը զրկուէր, մինչդեռ տիկին Բօմբասուր
այդ համարձակութեամբ օժտուած էր և մինչև իսկ,
ան, ստէպ ձանձրացող նորին վեհախառութեան ժամերը

տանկլի ընկելու համար ուրիշ տարիունելներ ալ կը վըն-
արուէր, և ասիկայ ամէն մարդ գիտէ :

Արդ, ինչպէս որ լաինք, տիկին Տիւպարի կը նա-
խանձէր, և ասիկայ պատճառ մըն էր որ թագաւորին
միտքը գրադիցնող իրերը նիմնովին գիտնալ ուզէ :

Թագաւորը յիշատակութեան արժանի յետագայ խօսքը
ըրած էր՝ որուն և ո՛չ մէկ բառին վրայ կը մտածէր սա-
կայն խկապէս :

— Երեւոյ միտքս հարսիս երջանակութեանը վրայ է, և
վտան հեմ թէ Պ. արքայորդին պիտի կարենայ երջանիկ
ընել զայն :

— Ինչո՞ւ չէ, տէր արքայ, հարցուց Տիւպարի կամ-
տունին :

— Որովհետև քննի անանկ երեցաւ որ Գոմբիէնի,
Սէն-Տընիի և Միւլթի մէջ Պ. Լուի աւելի նաչեցաւ ու-
րիշ կիներու քան թէ իրենին :

— Տէր արքայ, ստուգիւ, եթէ այս բանն ըսողը ձեր
վհատախառութիւնը չըլլար՝ չպիտի հաւատայի : Սակայն
տիկին արքայադուստրը ազնւ չէ :

— Քիչ մը նիհար է :

— Բայց որքա՞ն փոքր է :

— Լա՛ւ, սակայն օրիորդ թավէրնէյն ալ արչլիքաու-
նիին ասորիքն ունի :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, տէր արքայ :

— Ըսել կ'ուզեմ թէ անթերի զեղեցիութեամբ մը
օժտուած է սա փոքրիկ օրիորդը :

Կոմսունիին աչքերուն մէջ փայլակ մը շողաց և թա-
գաւորը իր անխորհրդապահութիւնը հասկցաւ :

— Բայց, սիրելի կոմսունի, վտան եմ որ դուք ալ
ստանը վիշ տարնկան եղած տոններից ըտլըշի մտքին
մը ունէիք, մէջ բերաւ թագաւորը աշխուժիւ :

Այս փաղաքական խօսքը զործերը քիչ մը կարգին
գրեր էր, սակայն հարուածն ալ իր նպատակէն շե-
ղած չէր :

Ուտաի տիկին Տիւպարի պշրանօք իր յարձակողակա-
նին սկսաւ :

— Վա՞յ, ուրեմն չա՞տ զեղեցիկ է այդ օրիորդ թա-
վէրնէյը :

— Է՛ն, ևս գիտե՞մ, ըսաւ Լուի ժե՛ :

— Ինչպէ՞ս, զայն կը փտաբանէք և զեղեցիկ ըլլալն
ու չըլլալը չէ՞ք գիտեր :

— Գիտցածս միայն սա է որ նիհար չէ :

— Ըսել է զայն գիտեր ու քննար էք :

— Ո՛հ, սիրելի կոմսունի, զիս թակարդի մէջ կը ձգէք
Ձէ՞ք գիտեր որ կարճատեւ եմ : Կունա ու կըսր բաները
աչքիս կը զարնեն, բայց մանրամասն կերպով չեմ կըր-
նար զննել զանոնք : Տիկին արքայադուստրին վրա՞
միայն ոսկորներ տեսայ ես :

— Իսկ օրիորդ թավէրնէյի վրայ ալ կունա ու կըսր
բաներ տեսած ըլլալու էք, այնպէս չէ՞, տէր արքայ :

— Կատա՞կ կ'ընէք, Ժանն, ձեզ ազնւ էք ըսող կա՞յ :

— Հը՛մ, գէշ գովտանք չէ, մամտաց կոմսունին
ինքնիրեն, սպա բարձրաձայն աւելցուց :

— Իրա՛ւ որ շատ զո՞ս պիտի ըլլայի եթէ տիկին արքա-
յադուստրը քիչ մը հաճելի պատուոյ տիկիններ ընտրէ՞
իրեն : մարգուս զանեկիքը կուգայ ձեր կիներու արքունիք
մը տեսնելով :

— Ատիկայ որո՞ւ պիտի հասկցնես, սիրելի բարեկա-
մունիս : Ըսածներդ գիւ կըկարքայորդիին կը կրկնէի .
բայց անոր համար ի՛նչ որ ալ ըլլայ նոյնն է :

— Բայց որքա՞ն տարօրինակ բան պիտի ըլլար եթէ
օրիորդ աը թավէրնէյով կազմել սկսեր տիկին արքայա-
դուստրը իր արքունիքը :

— Բայց կարծեմ զայն արքունիք պիտի ընդունին,
ըստ Լուի ԺԵ :

— Վա՞յ, վատա՞հ էք :

— Կարծեմ ատանկ բաներ մը լսեցի :

— Բայց այդ աղջիկը աղքատ է :

— Այո՛, բայց ազնուական է : Այդ թավէրնէյ Մէ-
զօն-Ռուսերը հին ընտանիքէ՛ն են և միեւնոյն ատեն ալ
թագաւորական հին ծառաներ :

— Ո՞վ է անոնց պաշտպանը :

— Չեմ գիտեր, բայց ձեր ըսածին պէս աղքատ ըլլա-
լու են :

— Ուրիմն Պ. ար Շուազէօլը չէ, որովհետեւ եթէ ան
ըլլար՝ թոշակներով պիտի ճաթէին :

— Կոմսուհի, կոմսուհի, կ'աղագհեմ, քաղաքականու-
թեան վրայ չխօսինք :

— Շուազէօլները ձեզ կը կործանեն ըսելով միթէ
քաղաքականութեան վրա՞յ խօսած կ'ըլլամ :

— Ատոր վրայ տարակոյս չկայ, ըստ թագաւորը և
սուքի ելաւ :

Ժամ մը հաքը, նորին վեհախորհրդինը կոմսուհիին
նախանձը զրգոելուն վրայ չափազանց ուրախ, մեծ
թրխանօնը հասեր էր, ճամբան ցած ձաչնով ինքնիրեն
ըսելով ինչ որ Պ. ար Ռիչլիէօ երեսուն տարեկան եղած
ատենը կ'ըսէր :

— Որքա՛ն ճանճրանալի են սա՛ նախանձոտ կիները :

Թագաւորը մեկնելուն պէս տիկին Տիւպարի ևս ոտքի
ելաւ և իր մենախուցը քաշուեցաւ՝ ուր Շօն անհամբե-
րութեամբ իրեն կը սպասէր նոր լուրեր ստանալու
համար :

— Է՛հ, գէշ չէ, անհաւատալի յաջողութիւն մը ունե-

ցար այս օրերս : Երէկ չէ սաղի օրը տիկին արքայազու-
տրին ներկայացուեցար, իսկ երէկ հաջկերոյթին մաս-
նակեցար, խօսք ատաւ Շօն :

— Ճշմարիտ է : Է՛հ, որքա՛ն սպուտ բաներ են և-
զեր ատոնք : Հա՛հ, հա՛հ :

— Ինչպէ՞ս, ի՞նչ ըսել կ'ուզէք : Գիտե՞ք որ Լիւսիէ-
էնի ճամբուն վրայ այս պահուն հարիւր կտուք կը շրջի
ձեր ատտուան ժպիտը վայելելու համար :

— Կը ցաւիմ :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ ժամանակնին պարապ տեղը կը կոր-
սնցնեն : ո՛չ կառքերը և ո՛չ ալ մարդերը իմ ժպիտս
պիտի տեսնեն այս ատու :

— Ի՞նչ կ'ըսէք, կոմսուհի, օգին մէջ մ'ըրբ'իկ կայ
արդեօք :

— Այո՛, սարստիկի փոթորիկ մը : Շօգօլա՛թս,
չո՛ւտ շօգօլաթս թող բերին :

Շօն զանգակը զարկաւ :

Չամօր երեցաւ :

— Շօգօլա՛թս, պոռոց կոմսուհիին :

Չամօր՝ քայլերը համբելով և ինքզինքը մեծ մարդու
մը տեղ դնելով՝ ծանրաքայլ մեկնեցաւ :

— Այս անպիտանը զիս անթուրթնէ մեռցնե՞լ կ'ուզէ,
խարա՛զանս, խարա՛զանս, զոչեց կոմսուհիին բարկաճայթ :

— Բայց այսօր կատղեր էք, Ժանն, ըտաւ Շօն :

— Միթէ իրաւունք չունի՞մ :

— Այո՛, իրաւունք ունիք, բայց անա ևս կը մեկ-
նիմ, քոյր իմ :

— Ինչո՞ւ :

— Մի գուցէ զիս ալ ծեծել տաք :

Երեք հարուած արուեցաւ մենախաւցին զբան :

— Ա՛ս ս՞՛վ է, գոչեց կոմսուհին անհամբերութեամբ :

— Ո՛՛վ որ ալ ըլլայ՝ գէշ ընդունելութիւն չպիտի գտնէ, մէջ բերաւ Ծօն հեղեօրէն :

— Պիտի նախընտրէի ձեռ մըն ալ ես ուսել, աւելցուց ժան արքայական ծանրութեամբ մը զուար հրելով և զանգաղօրէն սենեակէն ներս մտնելով :

— Է՛հ, ձեռ ուսելը անկարելի բան մը չէ, ի՞նչ պիտի ընէիր այդ պարագային, ըստ արիկին Տիւպարի :

— Անգամ մըն ալ հոս սոք չպիտի կոխէի, պատասխանեց ժան :

— Ի՞նչ կ'ելլայ ասկէ :

— Սա կ'ելլայ թէ զիս ձեռնելով ինչ աւելի կորուստ պիտի ունենայիք :

— Անամօ՛թ :

— Արդէն աշխարհ այգպէս է, երբ մարդ չպարտէ թուրքն չընէ՝ անամօթ կը կոչեն զայն, ի՞նչ ունի այս աստու, Ծօն :

— Ինծի մի՛ հարցնեք, ժան, այս աստու մարդ հեաը չկրնար կոր խօսիլ : Անա՛ չօքօրսիք եկա :

— Հոգեբնիկ անգամ չէ, բնաւ չէք հարցնեք թէ ի՞նչ ունիմ, ըստ կոմսուհին :

— Լա՛ւ ի՞նչ ունիք ուրեմն, հարցուց Ծօն մօտեանալով :

— Ձեռնէ և սչ մին զիս զբաղեցնող իրին վրայ կը մտածէ :

— Բայց ի՞նչ է ձեզ զբաղեցնողը, չըսէ՛ք :

— Ժան սեղէն անպամ չերկբաց :

— Դրամ՝ չունիք, շարնայարեց Ծօն :

— Ո՛հ, այդ բանը հոգս չէ, այդ կազմէն վատան եմ որ թագաւորը ինչ ասած պիտի անանկանայ :

— Գանի որ այգպէս է, հազար լուի փօխ սուր ինծի, իրա՛ւ որ շատ պէտք ունիմ :

— Հազար գլուղին շունքը զլուխդ փարատեն :

— Ժան չօքօրսիին զաւամբը առջևը քաշելով փառասուրապէս ճաշակիլ սիրաւ :

— Բայց ի՞նչ կայ, քոյր իմ, արգեօք թագաւորը մէկս՛ւ մը սիրահարուած է, գոչեց Ծօն :

Տիկին Տիւպարի զլիստ նշանով մը « ճիշդը գտար » ըսել ուզեց :

— Արգեօք այդ սիրուհին արիկին արքայադճւարն է, շարնայարեց Ծօն ձեռքերը իրար կցելով : Ատիկայ գէշ չէ, դուք կրնաք հանդիստ ըլլալ, թագաւոր մը չկրնար բացէ ի բաց ազգապղծութիւն մը ընել : անոր սիրահարուելը տակի ապէկ կ'ըլլայ քան թէ ուրիշի մը :

— Իսկ եթէ ուրիշի՞ մը սիրահարուած է :

— Աստուած իմ, ի՞նչ կ'ըսէք, քոյր իմ, գոչեց Ծօն անգունելով :

— Է՛ նայինք, գուն ալ տարուէ, ս՛ա էք պակաս, մ'ըմնջեց ժան :

— Վա՛յ, ուրեմն կորուսեցանք, մ'ըմնջեց Ծօն : Ի՞նչ պէս կը համբերես ստոր, ժանն : Որո՞ւ սիրահարուած է ասկայն :

— Ատիկայ չօքօրսի խմելէն կամկապույտ կարող ձեք պարսն կորարը հարցուցէք, ս՛՛վ ըլլալը ան ձեզի պիտի ըսէ, որովհետե կամ գիտէ և կամ կը կամկածի :

— Ինծի՞ էք, ըստ ժան զլուխը վեր աննելով :

— Այո՛, պարսն որկրամուլ, թագաւորին միտքը զբաղեցնող անձին անունը կը հարցնեմ ձեզի :

— Ժան ըս մը բերանը լեցնելով և զայն մեծ գծուաբութեամբ բանալով սա երեք բառերը արտասանեց :

Փօգ. Պալս., քիւ 27—58, հաս. Կ, Բ, հր. Ն. Բ.

Օրիորդ աը թավէրնէյ :

— Օրիորդ աը թավէրնէյ, աէ՛ր Աստուած, զոչեց Շօն :

— Տե՛ս, զիտէ սա դահիճը և առանց հոգն խակ ընելու հանգիստ մը կ'ուտէ, ոռնաց կոմսուէին թիկնաթոռին վրայ իյնալով և ձեռքերը երկինք բարձրացնելով :

Շօն եղբորմէն գատուելով քրոջը մօտեցաւ :

— Քնանապէն ուռեցած սա խոշոր ու տգեղ աչքերդ չփորեւր ինծի յանցանք մըն է, զոչեց կոմսուէին խօսքը ժանի ուղղելով :

— Կը սխալիք, ժանն, երէկ զիշեր բնաւ չքնացայ :

— Ի՞նչ ըրիր ուրեմն, ցփակեաց :

— Իբրա՛ւ որ մինչև առաւու լուսացուցի :

— Ես չըսի՞ . . . : Ով զիտէ ո՛ւրտեղուանքը լուսացուցած ես : Դժբաղդ եմ, զժբաղդ, ո՛վ պիտի ընէ ինձ թէ ի՞նչ եղած է կամ ո՛ւր է սա աղջիկը :

— Այսինքն ուր գտնուի՞լը հասկնալ կ'ուզէք :

— Այո՛ :

— Է՛ն, սա ալ բա՛ն է : Բարիզի մէջ է, ո՛ւր պիտի

ըսայ :

— Բարիզի մէջ . . . : Բայց ո՞ր կողմը :

— Գօք Հէոն փողոցը :

— Ո՞վ ըսաւ . . . :

— Կառապանը : Ախոռին մէջ սնոր սպասեցի և

հասկցայ :

— Է ի՞նչ ըսաւ :

— Ըսաւ որ պահ մը առաջ թավէրնէյ ընտանիքը Գօք Հէոն փողոցին մէջ փոքրիկ տուն մը առաջնորդած էր : Աւելցուց նաև թէ այդ տունը պարտէզի մը մէջ կառուցուած և Արմընօնվիլի պանդոկին կցուած էր :

— Ո՛հ, ժա՛ն, ժա՛ն, զոչեց կոմսուէին . բարեկամս, ստոնք խիտ կարևոր տեղեկութիւններ են : Հիմայ կը մնայ մեզի հասկնալ թէ ի՞նչ կեանք կը վարէ, զո՞վ կը տեսնէ, ի՞նչ կ'ընէ, և նամանաւանդ, մէկէ մը նամակ կը ստանա՞յ : Ահա այս բաները զիտնալը խիտ հարկաւոր է մեզ համար :

— Ասոնք ալ կը հասկնանք, հող մի՛ ընէք :

— Բայց ի՞նչպէս :

— Ատիկայ ինծի մի՛ հարցնէք : Ես իմ պաշտօնս կատարեցի, այժմ կարգը ձեզի եկաւ :

— Գօք-Հէրօն փողոցը ըսիք, բացազանչեց Շօն աշխուժիւ :

— Այո՛, ըսաւ ժան անտարբերութեամբ :

— Է՛ն, Գօք-Հէրօն փողոցին մէջ անշուշտ վարձուտուն մը կը գտնուի :

— Աքանչիլի խորհուրդ մըն է, զոչեց կոմսուէին : Պէտք է անմիջապէս երթալ և Գօք-Հէրօն փողոցին մէջ տուն մը վարձել : Հոն մենէ մէկը կը պահուըտի և մանող ելլողն ու անցած գարձածը կը լրտեսէ : Շո՛ւտ, շո՛ւտ, թող կառքս պատրաստեն որպէս զի առանց ժամանակ կորանցնելու Գօք-Հէրօն փողոցը երթանք :

— Մի՛ շտապէք, Գօք-Հէրօն փողոցին մէջ վարձուտուն չկայ :

— Ինչէ՞ն զիտէք :

— Ես փնտռեցի :

— Ի՞նչ ընելու է ուրեմն :

— Բլասթրիէր փողոցին մէջ կրնանք գտնել ձեր ուղածը :

— Բայց Բլասթրիէր փողոցը ո՞ր կողմը կ'իյնայ որ :

— Գօք-Հէրօն փողոցին պարտէզներուն վրայ կը

նայի :

— Լա՛ւ, անմիջապէս Բլատթրիէր փողոցին մէջ սուսն մը վարձելու է :

— Վարձուած է, ըսաւ Ժան :

— Հիտցում կ'ստթիս ինձ, Ժան : Չիզ չճանչցան, այնպէս չէ :

— Ո՞ր սատանան պիտի ճանչնայ զիս Բլատթրիէր փողոցին մէջ :

— Վարձած տունդ ի՞նչ տեսակ բան է :

— Խորվիրապի պէս մութ տան մը մէջ փոքրիկ յարկ մը :

— Հարկաւ որու համար վարձած ըլլալդ հարցուցին :

— Անշուշտ :

— Ի՞նչ պատասխանեցիր :

— Այրի կնոջ մը համար է, ըսի : Այրի կին ըլլալը գծուար բան մը չէ քեզ համար, այնպէս չէ, Շօն : Վերայէդ սե չըջագիտտ մը կը քսչես, զլսուզ ալ քրէ՛ր մը, լմնցաւ գնաց :

— Այտ ալ բա՞ն է, ըսաւ Շօն քմծիծաղով մը :

— Աքանչելի՛ ծրագիր, ըսաւ կոմսուհին : Շօն հոն կը տեղաւորուի, կը լրտեսէ ու կը հսկէ, միայն թէ ժամանակ կորսնցնելու չէ :

— Ուրեմն անմիջապէս մեկնիմ, ըսաւ Շօն : Ձիերը լծեցէ՛ք :

— Ձիերը լծեցէ՛ք, գոչեց կոմսուհին սարսափելի հարուած մը իջեցնելով զանգակին՝ որուն ձայնը գնաց վեր ցատկեցնել սրաւտին բոլոր սպասաւորները :

Ժան և կոմսուհին Անարէի մտաին ընելիքնին որոշած էին :

Անարէ միայն մէկ անգամ թագաւորին երևնալով

անոր ուշադրութիւնը գրաւեր էր, ուրեմն Անարէ վտանգաւոր էր իրենց համար :

— Այո աղջիկը ճշմարիտ գաւառացի մը չպիտի ըլլար և թէ իր ետեւէն գաւառացի սիրահար մը չընէր Բարիդ, ուրեմն այդ սիրահարը գտնենք և շուտափոյթ ամուսնութիւն մը կնքենք, որովհետեւ գաւառացի սիրահարներու միջև կատարուած ամուսնութենէ մը աւելի ոչ մէկ բան կրնայ պաղեցնել թագաւորը, կ'ըսէր կոմսուհին ցած ձայնով Ժանի ականջն ի վար, մինչդեռ կառապանը ձիերը կը լծէր :

— Նզովի՛ց արմատ, ընդհակառակը ետ կենալու ենք այդ բանէն, մրմնջեց Ժան : Դուք ուրիշներէն աւելի աղէք զխտէք որ նորէն ամենաքրիստոնեայ վեհափառութեան համար խիստ համեզ պատառ մըն է նոր հարս մը, բայց սիրահար մը ունեցող աղջիկ մը նորին վեհափառութիւնը չափէն աւելի պիտի նեղացնէ :

Կառքը պատրաստ էր :

Շօն, Ժանի ձեռքը սեղմելէն և քոյրը ողջագուրելէն վերջը կառք ցատքեց :

— Ժանը միտսին չի՞ պիտի դայ :

— Ո՛չ, ես ալ դատ կ'երթամ, ըսաւ Ժան : Բլատթրիէր փողոցին մէջ ինձի սպասէ, Շօն : Նոր բնակարանիդ առաջին այցելուն ես պիտի ըլլամ :

Շօն մեկնեցաւ, Ժան վերստին սեղանին առջև նստաւ և չօքլաթի երկրորդ գաւաթ մըն ալ պարպեց :

Շօն նախ իր բնակարանը գնաց, զգետը փոխեց և քաղաքացի կնոջ հովեր առնելու վարժութիւն ըրաւ : Ապա, երբ ինքզինքը բաւական փոխուած գտաւ, ուսուրուն վրայ սե մետաքսէ բարակ մեկնոց մը նետեց և վարձու կառք մը բերել տուաւ : Կէս ժամ ետքը օրիորդ

Սէլվիի հետ չորրորդ յարկ մը ատաջնորդող զից սան-
դուխէ մը վեր կ'ելնէր :

Գերկումսին վարձած բնակարանը այդ չորրորդ յար-
կին վրայ է :

Երկրորդ յարկին սանդուխին վերելը հասած ատեն Շօն
հտեը դառնալով տեսաւ որ մէկը իրեն կը հետեւէր :

Պառաւ տանտիրուհին էր սն, որ ատաջին յարկը
բնակելուն ոտքի ձայն ատեր և դուրս ելեր էր :

Պառաւը կնճռոտած դէմքը վեր առնելով երկու խըն-
դումերես դէմքեր տեսաւ դէմը :

— Տիկիններ, ի՞նչ կը փնտոէք հոս :

— Այն բնակարանը կը փնտոենք զոր եղբայրս մեզի
համար բռնած է, աիկին, արդեօք զինքը չտեսա՞ք, թէ
սխալ սունն եկած ենք, ըսաւ Շօն սրբեայրիի հովեր
առնելով :

— Ո՛չ, ո՛չ, սխալ սունն եկած չէք, չորրորդ յարկն
է, ըսաւ պառաւը Հէ՛ք դեռատի կին, այդ տարիքին մէջ
այրի մնացեր էք :

— Աւա՛ղ, մըմնջեց Շօն աչքերը երկինք վերցնելով :

— Բայց շատ հանգիստ պիտի ըլլաք Բլասթրիէր փո-
ղոցին մէջ. շատ զեղեցիկ փողոց մըն է. ձայն ձուն չէք
առներ, ձեր յարկը պարտէզներու վրայ կը նայի :

— Ես ալ այդպէս կ'ուզէի, աիկին :

— Սակայն երբ փողոցէն թափօր անցընեն կամ չու-
ներ խաղցնեն, նրբանցքէն կընաք տեսնել :

— Ո՛հ, ատոնք ցաւերս քիչ մը պիտի փարատեն,
աիկին, հառաչեց Շօն :

Եւ սկսաւ սանդուխէն վեր ելնել :

Պառաւ տանտիրուհին մինչև չորրորդ յարկը անոր
հտեէն նայեցաւ, և երբ Շօն դուռը գոցեց, իւրովի ըսաւ :

— Համեստ կնոջ մը կը նմանի :

Շօն սենեակին դուռը գոցելէն անմիջապէս վերջ
պարտէզին վրայ նայող պատուհաններուն քով վազեց :

Ժան սխալած չէր. կատարանին մատնանշած փոքրիկ
սունը գրեթէ պատուհաններուն ներքեւը կը գտնուէր :

Իսկոյն ամէն կասկած փարատեցաւ. դեռատի աղջիկ
մը, ձեռքը ձեռագործ մը բռնած, եկաւ փոքրիկ տան
պատուհանին քով նստաւ. Անարէն էր :

կի

ԲԼԱՍՏՐԻԷՐ ՓՈՂՈՅԻՆ ՏՈՒՆԸ

Շօն հազիւ քանի մը վայրկեանէ ի վեր դեռատի
աղջիկը կը դիտէր երբ ժան գերկամար կեղծ այրի կնոջ
սենեակին սեմին վրայ երեցաւ :

— Է՛հ, ի՞նչ կ'ընես տեսնենք :

— Դո՞ւն ես, ժան, իրաւ որ զիս վախցուցիր :

— Ի՞նչպէս կը գտնես նոր բնակարանդ :

— Խիստ յարմար, հոսկէ ամէն բան պիտի կընամ
տեսնել, բայց դժբաղդաբար ամէն բան չպիտի կընամ
լսել :

— Հը՛մ, անկարելի բաներ կը պահանջես, Շօն
Աղէկ միաբա ինկաւ, քեզի ուրիշ լուր մը ունիմ :

— Ի՞նչ լուր է, տեսնենք :

— Փիլիսոփան տեսայ :

- Ո՞ր փիլիսոփանս :
- Կեցիր որ ծայրէն սկսիմ :
- Օ՛ն, համբերութիւնս կը հասցնես :
- Ազրիւրի մը առջեւէն կ'անցնէի և հին կարասի-
ներ ծախսոյէ մը սա անշնոր՝ բնակարանին համար քանի
մը կտոր հին կարասիներու գի՛ծը կը հարցնէի, երբ յան-
կարծ գուլպաներու վրայ ջուր ցատկելը զգացի :
- Մէկդի՛ ձգէ սա սրբապ խօսքերը և թող սուր
որ սա նոր գրացուէիս գիտեմ :
- Բայց կեցիր, այնքան մի՛ աճապարեր, սիրելիս :
- Մէյ մըն ալ ետեւ գտանալով ի՞նչ տեսնեմ ազէկ . . .
մտքէդ անգամ չանցնիր . . . :
- Լինցուր նայինք :
- Գեոտտի սրբոն մը տեսայ որ չոր հացի կտոր մը
ազրիւրին ծորակին բերանը կը թխմէր թրջելու համար :
- Ասոնք քաղաքական խիստ կարեւոր անցուղարձ-
ներ են, անմիջապէս Պ. աը Սարթինի լուր տալու է,
ընդմիջեց Շօն հեղնարար :
- Գուլպաներու թրջուելը տեսնելով բարձրաձայն
հայնոյեցի . հացը թրջող սրբոնը ետին գործաւ, և մէյ
մըն ալ գիմացս ո՞վ տեսնեմ ազէկ :
- Ո՞վ :
- Փիլիսոփանիս :
- Ո՞վ, ժիւլյէ՞րը :
- Այո՛, Գլուխը մերկ, բաճկոնակին կուրծքը բաց,
գուլպաները վար ինկած, առանց ճարմանդի կօշիկներով,
վերջապէս կատարեալ անխոյժ վիճակի մը մէջ :
- Ժիւլյէ՞րը մի՛ . . . , է քեզի հետ խօսեցա՞ւ :
- Զայն ճանչցայ, ան ալ գիտ ճանչցաւ . առաջ ան-
ցայ, ետ քաշուեցաւ . ձեռքս երկնցուցի, սուքերը բացաւ
և որսի շունի մը պէս վազել սկսաւ կառքերուն և ջրը-

- կիրներուն մէջէն :
- Եւ վերջապէս աչքէդ կորնցուցիր զայն, հէ՞ :
- Անանկ բան մը, հազա ետեւէ՞ն վազէի :
- Բայց ի՞նչպէս փախցուցիր ձեռքէդ :
- Իրաւ որ ես ալ կը ցաւիմ, բայց վերջապէս կրիկը
զբաւ : Իրաւ որ եթէ անգամ մը անոր մաշած օձիքը
ձեռքս անցընէի, կ'երդնում որ խարաղանիս տակ պիտի
ստակեցնէի զայն : Է՛հ, վնաս չունի, ի՛նչ որ ալ ըլլա՞մ
Բարիզի մէջ է, և Բարիզի մէջ մարդ փնտտածը կը զըս-
նէ եթէ ստախկանութեան տեղեկալին հետ ասնկ քիչ մը
բարեկամութիւն ունենայ :
- Ասանկ ընելու է :
- Երբ որ զայն անգամ մը ձեռք ձգեսք՝ ծո՞մապա-
հուլեան բու գառ մը կուտանք :
- Ասանձին տեղ մը փակելու է զայն, միջամտեց
Սէլլի, միայն թէ այս անգամ աւելի ապահով տեղ մը
ընտրելու է :
- Եւ Սէլլի անոր հացն ու ջուրը կը տանի, ըսաւ
գերկոմսը :
- Չծիծաղինք, եզրայր իմ, ըսաւ Շօն : Այդ տղան
տիկին տրքայաբուստորին սուրճանդակի ձիերուն խնդի-
րին ներկայ գտնուեցաւ, հետեւորար ամէն բան գիտէ,
և եթէ ձենէ վրէժ լուծելու պատճառներ ունենայ՝ կրնայ
կատկածելի հակառակորդ մը ըլլալ մեզ :
- Ուրեմն, անպուխէն վեր կըստ ատենս ինքնիրենս
որոշեցի որ երթամ Պ. աը Սարթինը գտնեմ և գիւտս
անոր պատմեմ : Պ. աը Սարթին պիտի պատասխանէ թէ
զլուխը բաց, գուլպաները վար ինկած, առանց կապիչի
կօշիկներով և հացը ազրիւրէն թրջող մարդ մը շատ
մօտերը կը բնակի այն տեղին ուր երեւցած է այդպէս

խառնաշփոթ հագուստով, և այն աստի պիտի խոստանայ զայն կաննել :

- Առանց գրամի ի՞նչ կ'ընէ այս կողմերը :
- Թերեւս բնականութիւն կ'ընէ :
- Այդ վայրենի վիւլիստիօն բնականութիւն ընէ, եթէ գրուածը անսնամ կ'աւրեմ :
- Կ'երեւի թէ իր ազգականներէն բարեպաշտ ու մարդասէր պատաւ մը գտած է, որ իր շնիկին կերցնել չկրցած օթնկ հացի կեղեւները անոր կուտայ :
- Կը բաւէ, կը բաւէ. ճերմակեղէնները սա հին պարանին մէջ գիր, Սէլլի, իսկ դաւն ալ, եզրայր իմ, մեր գիտարանին մօտեցիր :

Մեծ զուշութեամբ պատուհանին մօտեցան :

Անորէ ձեռագործը մէկրի թողուց, սրունքները անփութօրէն թիկնաթուռի մը վրայ երկնցուց և իր մօտը դրուած աթուռի մը վրայէն գիրք մը սանկլով բացու և կարգալ սկսաւ : Գիտողներուն գատածին նայելով ընթերցանութիւնը խիստ ուշագրտա բանամը ըլլալու էր, որովհետեւ գեոասի աղջիկը կարգալ սկսած վայրկեանէն մինչև վերջը աչքը գիրքէն չհեռացուց :

- Ո՛հ, որքա՛ն ընթերցատէր է եղբի, հէ՛ :
- Ասիկայ քեզի համար ամենահարկաւոր կարասի մըն է, ըսաւ գերկոմսը գրգանէն հեռաթխակ մը հանելով, և զայն բացաւ ու Անարէի ուղղեց, զխտակին անշարժութիւն տալու համար պատուհանին անկիւնին կրթիւնելով :

Շօն անհամբերութեամբ զայն կը գլխէր :

- Տեսնե՞ք իրա՞ւ գեղեցիկ է սա աղջիկը, ըսաւ Շօն :
- Հիանալի՛ է, անթերի աղջիկ մըն է. ի՛նչ թեւեր, ի՛նչ ձեռքեր, ի՛նչ աչքեր. շրթունքները սուրբ Անտանն

անգամ կրնան գլխէ հանել :

- Օ՛հ, ել սիրահարուէ անոր, ա՛տ էր պակաս, ըսաւ Շօն զուարթամտութեամբ :
- Լա՛ւ, ասիկայ զէչ խող մը չպիտի ըլլար, մանաւանդ եթէ ան ալ ուզէր քիչիկ մը սիրել զիս. ասով խեղճ կամսուհին քիչ մը սպաճուլութիւն կը տանար :
- Գիտակը ինձի տուր և պարագ խօսքերու վերջ տանք եթէ կարելի է . . . : Այո՛, շատ գեղեցիկ է և անկարեղի է որ սիրահար մը չունենայ . . . : Նայեցէք, չկարգար . . . գիրքը ձեռքէն պիտի իյնայ . . . , կը սահի . . . : Բեզի չըսի՞, ժան, չկարգար այլ կը մտածէ :

- Կամ կը քնանայ :
- Աչքերը բաց է. արդարեւ գեղեցիկ աչքեր ունի :
- Եթէ սիրահար ունի, անպատճառ հոսկէ պիտի սևանենք :
- Եթէ ցերեկը գայ, այո՛, բայց եթէ գիշերը գայ . . . :

— Որքան ընտիր գիտակ է տսիկայ, գրեթէ գրքին մէջի գիրերը կը կարգամ ասով, ըսաւ Շօն :

- Գրքին անունը կարգացէք, Թերեւս բան մը կըընանք զուշակել այսպէսով :
- Շօն զրքին անունը կարգալու համար ծնեցաւ, բայց անմիջապէս ետ քաշուեցաւ :
- Ի՞նչ կայ, ի՞նչ կղաք, հարցուց գերկոմսը :
- Շօն անոր թեւը բռնեց :

— Եզրայր իմ, սա ձախ կողմի լուսամուտէն դուրս ծող անձին ուշադրութեամբ նայեցէք, Բայց չըլլա՛յ որ ձեզ տեսնէ :

- Օ՞հ, հացին կեղեւները թրջող մարդուկս է, գոչեց Տիւպաբի խուլ կերպով :

— Կարծես թէ ինքզինքը վար պիտի նետէ լուսամուտէն :

— Ո՛հ, խողովակին փաթառուեր է :

— Բայց այդ հրաբորբոք աչքերով, այդ վայրենի ցանկութեամբ որո՞ւ կը նայի :

— Բան մը կը դիտէ :

Գերկոմսը ձեռքը ձակալին ուսուցում :

— Գառայ, գոչեց :

— Ի՞նչ է գառածնիդ :

— Է՛հ, ի՞նչ պիտի ըլլայ, աղջիկը կը դիտէ :

— Օրիորդ աը թավէրնէ՞յր :

— Այո՛, այո՛, սնա՛ գաւտուացի սիրահարը : Աղջիկը Բարիդ կուգայ, աղան հտեէն կը վազէ. մէկը Գօք-Հէրօն փողօցը կը բնակի, միւսը մեր ձեռքէն կը փախչի երթալ Բլաթթրիէր փողօցը բնակելու համար. աղան աղջկան կը նայի, աղջիկն ալ կը մտածէ :

— Իրա՛ւ որ ճշմարիտ է, սըւոր նայուածքն ու կապոյտ աչքերուն բոցը տես, գրաւ կը դնեմ որ խենթեւ նալու չափ սիրահարուած է անոր, ըսաւ Շօն :

— Քո՛յր իմ, ա՛լ սիրուհույն նայելու նեղութիւն չկրննք, սիրահարը այդ գործը կը կատարէ, ըսաւ Փան :

— Բայց անիկայ իր հաշուոյն կ'աշխատի :

— Ո՛հ, մեր հաշուոյն համար ալ : Այժմ թոյլ սուէք որ անցնիմ, երթամ քիչ մը սա մեր սիրելի Սարթինը տեսնեմ : Իրաւ որ շատ բազրաւոր ենք : Բայց զգուշացիր որ փիլիսոփան քեզ չտեսնէ, Շօն : զխտա թէ նապատակի մը պէս արագ կը փախչի :



ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾՐԱԳԻԲ

Պ. աը Սարթինն առաւօտեան ժամը երեքին խիտ յոգնած սուսն վերադարձեր էր : Ան, թաղաւորին և տիկինն Տիւնպարիի համար պատրաստած երկկոյթին առանց միջտէպի անցնելէն խիտ գոհ մնացեր էր :

Տիկինն արքայազատեր պաշտեամբը ժողովրդեան խանգալառութիւնը աւելնալով՝ բազմաթիւ ձայներ « Կեցցէ՛ թաղաւորը » գոչեր էին : Այս աղաղակը խիտ ցանցատ կերպով կը լսուէր այն նշանաւոր հիւանդութենէն ի վեր, երբ բոլոր Գաղիայ ժողովուրդը կեկեցեցիներ կամ ուխտասեղիներ կը դիմէր նորատի Լուի Ժե.ի ատղջութեան համար աղօթելու, Լուի Ժե.ի որ այն տանն « Ամենասիրելին » կը կոչուէր :

Միւս կողմէն տիկինն Տիւպարի, որ հասարակութեան կողմէ ուրի մասնաւոր խնդրոցներով կը նախատուէր, ընդհակառակը խիտ շնորհալի կերպով ընդունուեր էր հանգիստասեղանը բազմաթիւ շարքերէ՝ սրտնք ճարպիկութեամբ անոր առջևը շարուելու միջոցը գտեր էին : այսպէսով թաղաւորը գոհ մնացեր և Պ. աը Սարթինի նայելով ժպտէր էր, արքայական ժպիտ մը որ ստիկաւ նութեան տեղեկալին համար շնորհակալութեան արտայայտութիւն մը կը վերապահէր :

Այսպէս, ինքնախտած, կարծեր էր թէ ա՛լ ներքի էր կէսօրին արթննալ քունէն : Անկողնէն ելնելով պարապօր ժամերը իր նոր չինել սուսն կեղծամեները փորձելով

անցընել ուզած էր, միևնոյն ատեն զիշերուան տեղեկազիր մը կարգալով: Կեղծամենբու վեցերորդին քննութեան և տեղեկագրին մէկ երրորդ մասին ընթերցանութեան հասած ատեն, ժան Տիւպարի դերկոմսին զարուստը ծանուցին:

— Է՛հ, սհա շնորհակալութիւն յայտնելու կուզան, ըստ Պ. տը Սարթին մտովի և ապա բարձրաձայն աւելցուց:

— Պ. դերկոմսը զահլիճ առաջնորդեցէք:

Ժան խիստ յոգնած ըլլալով թիկնաթոռի մը մէջ նստեց ինքզինքը: Ոստիկանութեան տեղակալը, սր անմիջապէս եկեր և զինքը գտեր էր, համոզուեցաւ որ իրենց խօսակցութեան մէջ ու է ցաւալի բան մը չպիտի մանէր:

Ժան ուրախ կ'երեւէր:

Երկու մարդիկը իրարու ձեռք սեղմեցին:

— Է՛հ, ո՞ր հովը ձեզ առաւօտուն կանուխ հոս բերաւ:

— Ամէն բանէ առաջ պէտք կը զգամ շնորհաւորել ձեզ երէկուան հանդէսին մէջ ձեր ըրած կարգադրութեանց համար, խօսք առաւ ժան ոստիկանութեան տեղեկալին անձնասիրութիւնը գզուելու դիտաւորութեամբ:

— Ո՛հ, շնորհակալ եմ: Պաշտօնակա՞ն է:

— Լիւսիէնի կողմէ պաշտօնական:

— Ինձ պէտք եղածն ալ ատ է: Միթէ արեւը հոնկէ չի՞ ծագիր:

— Եւ երբեմն ալ հոնկէ մարը կը մանէ:

Եւ Տիւպարի այլանդակ քրքիջ մը արձակեց:

— Բայց քացի այս շնորհակալութենէն, ձենէ ծառայութիւն մըն ալ խնդրելու եկած եմ:

— Գլխուս վրայ, եթէ կարելի բան մըն է:

— Կարելի ըլլալն ու չըլլալը դուք իսկ պիտի խոստովանիք միայն սա հարցմանս պատասխանելով, այսօրինքն թէ՛ երբ Բարիզի մէջ բան մը կորսուի՝ անոր գտնուելուն վրայ յոյս կրնա՞յ ունենալ մարդ:

— Եթէ կորսուած ստարկան արժէք մը չունենայ և կամ մեծ արժէք մը ունենայ, զայն գտնուելու յոյսը կըրնայ ունենալ:

— Խմ ինտուածս մեծ արժէք մը չունի, ըստ ժան զրուսը ցնցելով:

— Փնտուածնիդ ի՞նչ է, կրնա՞մ հասկնալ:

— Տասը ութը տարեկանի մօտ պզտիկ մանչ մը:

Պ. տը Սարթին թուղթ մը և մատիտ մը առաւ և նշանակեց:

— Տասը ութը տարեկան: Ձեր պզտիկ մանչուն անունը ի՞նչ է:

— Ժիլպէր:

— Ի՞նչ գործ կ'ընէ:

— Կարծեմ թէ ոչինչ:

— Ո՞ւրկէ կուգայ:

— Լօրէնէն:

— Որո՞ւն քովը էր:

— Թալէրնէյներու:

— Միասի՞ն բերած են զայն:

— Ո՛չ, քոյրս, Շօն, զայն սովաբեկ գտեր է մեծ ձամբուն վրայէն: Կառքն առեր և Լիւսիէն բերեր է, իսկ հոն . . .

— Է հոն ի՞նչ է եղեր տեսնենք:

— Կարծեմ թէ ստահակը չարաչար գործածեր է անոր աստիճականութիւնը:

- Գողութիւնն ըրեր է :
- Ո՛չ, տարօրինակ կերպով մը փախեր է :
- Հիմայ վերտօրին ձեռք ձգիլ կ'ուզէք զայն :
- Այո՛ :
- Իր գոնուած տեղին վրայ գաղտնիար մը ունի՞ք :
- Այսօր անոր հանդիպեցայ Բլասթրիէր փողոցի անկիւնի տղբւրին առջև, և շատ հաւանական է որ նոյն փողոցը կը բնակի : Եթէ պէտք ըլլայ, կարծեմ թէ սուսըն ալ ցոյց կրնամ տալ :

— Ազէկ բայց քանի որ սուներ գիտէք, հոն երթալ և զայն գոնուած տանը մէջ բռնեցէն գիւրին միջոց չկայ : Սակայն բռնեցէ վերջ ինչ պիտի ընէք զայն, Շարանթօն նկատի պիտի տաք թէ Պիտէթրը :

— Ո՛չ, քոյրս այդ տղէն շատ կ'ախորժէր և զայն քովը պահելը հաճելի էր իրեն . խեղացի տղայ մըն է : Եթէ մէկ միջոցը գոնենք զայն քաղցրութեամբ քրոջս առնելու, շատ աղւար բան մը պիտի ըլլայ :

— Պիտի աշխատինք : Ո՛ւր բնակելուն վրայ Բլասթրիէր փողոցին մէջ մէկը հարցաւորեցիք :

— Ո՛չ, ազմուկ հանել չուզեցի . զիս սեանելուն պէս փախաւ . եթէ գիտնար թէ իր բնակարանը գիտէի՝ թնրեա հանկէ ալ կ'ծիկը գներ :

— Նիշտ է : Բլասթրիէր փողոցը բաւք . բայց փողոցին ո՞ր կողմը, սիկըրը, մէջտեղը, թէ վերջը :

— Փողոցին վերջանալուն մօտ :

— Անհոգ եղէք, հիմայ ճարպիկ մարդ մը կը զրկեմ հոն :

— Ատիկայ գործիս չիգար, սիրելի տեղակալս, ճարպիկ մարդ մը որքան ալ ճարպիկ ըլլայ՝ գործեալ քիչ մը խօսք կը փախցնէ բերնէն :

— Կրնաս վստահ ըլլալ, մերիններուն բերնէն խօսք չելէր :

— Տղան չափազանց նրբամիտ է :

— Հասկցայ, հակցայ . կ'ուզէք որ ևս անձամբ տեսնեմ այդ գործը . . . : Լա՛ւ, լա՛ւ, իրաւունք ունիք, թերեւ այս գործին մէջ մտքէ չանցած գծուարութիւններու կրնանք հանդիպիլ, ի՞նչ :

Եւ Պ. տը Սարթին զանդակը զարնելով սենեկապանը կանչեց :

— Թող ձիերը լծեն, ըսաւ անոր :

— Ես կառք մը ունիմ, ըսաւ ժան :

— Շնորհակալ եմ, իմս աւելի գործիս կուզայ, զինանչան չունի, սոյլի և կառքի մէջտեղը բան մըն է : Ամէն ամիս զայն տարրեր գոյնով մը ներկել կուտամ չճանչցուելու համար : Հիմայ ներկեցէք որ մինչև ձիերուն լծուիլը զլիսուս յարմար կեղծամ մը գտեմ :

— Լաւ :

— Պ. տը Սարթինի կեղծամները պատրաստող վարատիրան կեղծամներու ճշմարիտ հաւաքածոյ մը բերաւ, որոնց մէջ ամէն գոյնէ, ամէն ձեւէ և ամէն չափէ իրաւագէտի, փաստաբանի և ձիաւորի կեղծամներ կը զբաւնուէին : Պ. տը Սարթին լրտեսութիւն ընելու համար օրական երեք չորս ձեռք զգետա կը փոխէր և անոր կաւնաւորութեանը խիստ խնամք կը տանէր :

Երբ տատիկանստղտը իր քսանըչորրորդ կեղծամը կը փորձէր՝ կառքին պատրաստ ըլլալը իմաց տուին :

— Տունը պիտի կարենա՞նք ճանչնալ, հարցուց Պ. տը Սարթին ժանի :

— Պա՛հ, աչքիս առջևն է :

— Մուտքը գննեցի՞ք :

Ժող. Պալս., թիւ 27—59, հաս.Գ, Բ.հր.Ն.Բ.

- Առաջին ցործն այդ եղաւ :
- Կրնա՞ք նկարագրել ինձ մուտքը :
- Նեղ անցք մըն է :
- Հը՛մ, փողոցին երրորդ մասին վրայ գտնուող նեղ անցքով տուն մը ըսի՞ք :
- Այո՛, դադանի դուռով մը :
- Գաղտնի դուռով մը՛, Չա՛ր աստանայ : Գործը հետզհետէ կը գէշնայ կոր : Ձեր փախստականին բնակո՞ծ յարկը գիտէ՞ք :
- Վերնայարկին մէջ կը բնակի : Անա աղբիւրը կը տեսնեմ :
- Ծանր ծանր, կառապան, ըսաւ Պ. տը Սարթին : Կառապանն գնացքը չափաւորեց : Պ. տը Սարթին պատուհանները բացաւ :
- Անա սա աղտոտ տունն է, ըսաւ ժան :
- Վա՛յ խերը անիծածս, ահա ես ալ այդ տունէն կը վախնայի, գոչեց Պ. տը Սարթին ձեռքերը իրար դարնելով :
- Բայց ի՞նչ բանէ կը վախնաք :
- Բազդ չունիք, պարոն գերկոմս :
- Բացատրեցէք ըսածնիդ :
- Լաւ . այս աղտոտ տունը՝ ուր ձեր փախստականը կը բնակի, ժընէվցի Պ. Ռուսօին տունն է :
- Հեղինա՞կ Ռուսօին :
- Այո՛ :
- Բայց ձեզի՛ ինչ :
- Ի՞նչ, ինձի ի՞նչ : Կ'երևի թէ դուք ոստիկանութեան տեղակալ չէք և փիլիսոփաներու հետ զործ չունիք :
- Բայց ինչէ՞ն գիտէք որ ժիլպէր Պ. Ռուսօի հետ կը բնակի :

- Է՛հ, դուք չէի՞ք ըսողը որ այդ տղան փիլիսոփայ է :
- Այո՛ :
- Լաւ, նման զնմանն սիրէ :
- Վերջապէս ենթադրելով որ անոր հետ կը բնակի, ի՞նչ կը հետեցնէք ասկէ :
- Սա թէ, չենք կրնար բռնել այդ տղան :
- Պատճա՞ն :
- Որովհետեւ Պ. Ռուսօ ստակալի մարդ մըն է :
- Բայց ինչո՞ւ Պատթիլ չէք նետեր զայն :
- Այդ բանը անցեալ օր թագաւորին առաջարկեցի բայց համարձակեցաւ :
- Հէ՞, համարձակեցա՞ւ :
- Այդ ձերբակալութեան պատասխանատուութիւնը իմ վրաս թողուլ ուզեց, և ես ալ, իրաւ որ, թագաւորէն աւելի քաջատիրոս չկրցայ ըլլալ :
- Իրա՞ւ :
- Կ'երգնում որ մարդ իր թիկնոցը տա փիլիսոփաներուն խածնել տալէ առաջ բաւական կը մտածէ : Ի՞նչ, Պ. Ռուսօի տունէն առեանգութիւն մը ընել, ո՛չ, սիրելի բարեկամս, ո՛չ, այդ բանը չըլլար :
- Իրաւ որ, սիրելի տեղակալս, տարօրինակ երկշտուութիւն մը կը տեսնեմ ձեր վրայ . թագաւորը կարծեմ թագաւոր է և դուք ալ իր ոստիկանապետը :
- Իբրև քաղաքացի հիանալի կը խօսիք : « թագաւորը թագաւոր է » ըսելով ամէն բան ըսած ըլլալ կը կարծէք : Ինձի մտիք ըրէք, սիրելի գերկոմս : Նախապատիւ կը համարեմ ձեզ աիկին Տիւպարիի տունէն առեանգել՝ քան թէ ձեր Պ. ժիլպէրը Պ. Ռուսօին տունէն գուրս հանել :
- Իրա՞ւ . շնորհակալ եմ ձեր ըրած նախապատ-

ուսութենէն :

— Իրաւ որ, աւելի քիչ ազմուկ պիտի ելնէր այն-
աստն : Գիտէ՞ք որքան գիւրազգաց է սա գրագէտնեւրուն
մորթը . պզտիկ կեզեքուածի մը դէմ կը պուչտան, կար-
ծես թէ պատժանիւի դատապարտուած ըլլային :

— Մտտի վախերով չպաշարուինք, սիրելի տեղա-
կալս : Տեսնենք իրօք Պ. Ռուսօ իր սուենն աւած է մեր
փախտասականը : Այս քառայարկ սուենը Պ. Ռուսօի՞նն է .
առանձին կը բնակի անոր մէջը :

— Պ. Ռուսօ տասնոց մը անգամ չունի, հետեւորար
Բարիզի մէջ աուն չկրնար ունենալ : Այդ տանը մէջ
իրմէ գատ թերեւ տանընիւզ քսան վարձակալներ կան .
Բայց ինչո՞ւ հետուները կ'երթանք, նոթատնորս քոյս է :

— Նօթատնորսիդ ի՞նչ բանի կրնայ ծառայել :

— Պ. Ռուսօի մասին տեղեկութիւններ պիտի հայ-
թայթէ մեզ : Ժընէվցի փիլիսոփային ամէն մէկ քայլը
կը լրանեն մերինները :

— Վա՞յ, իրա՞ւ : Ուրեմն ստուգիւ վասնգաւո՞ր
մէկըն է :

— Ո՛չ, բայց անանգատութիւն կը պատճառէ : այդ-
պիտի խենթ մը կրնայ ամէն վայկեան մէկ թեւ կամ
սրունքը խորտակիլ, և այն աստն պիտի ըսեն որ ընողը
մենք ենք :

— Է՛հ, թող ինքզինքն ալ խեղդէ, սա ալ հոգերնի՞դ
կ'ընէք :

— Աստուած չընէ որ այդպիտի բան մը տեղի ունե-
նայ :

— Ներեցէք, ըսածնիդ չեմ հասկնար :

— Սպասեցէք որ բացատրեմ . ժողովուրդը մերթ ընդ
մերթ այդ բարի ժընէվցին կը քարկոծէ, բայց այդ բա-

նը իրեն կը վերագածէ, իսկ եթէ մենք պղտլիլ քար մը
նետենք անոր՝ այն աստն մեզ կը քարկոծէ ժողովուրդը :

— Զիս մի մեղադրէք, ևս այդ բաներէն տեղեկու-
թիւն չունիմ :

— Ուրեմն պէտք է որ նախազգուշութիւններ ձեռք
ստնենք : Այժմ ստուգենք թէ ձեր մասնանշած սուենը
իրօք Ռուսօի բնակարանն է : Դուք կառքին խորը
քաջուեցէք :

Ժան հնազանդեցաւ, իսկ Պ. աը Սարթին հրամայեց
կառապանին քանի մը քայլ ևս յատաճանալ փողոցին
մէջ :

Ապա նոթատնորս հանեց գրպանէն :

— Այժմ տեսնենք թէ ձեր փախտականն ո՞ր ծրէն ի
վեր անոր քովն է :

— Ամսոյն տանը 16 ին փախած է քրոջս ապարան-
քէն :

— «Ամսոյն 17 ին, առուօտան ժամը վեցին, Պ.
Ռուսօ Մէտոնի անտառին մէջ տեսնուեցաւ, ուր խոտ
կը հաւաքէր . առանձին էր : Նոյն օրը, կէս օրէն երկու
ժամ ետքը դարձեալ խոտ կը հաւաքէր, բայց այս անգամ
պատտնիլ մը ընկերակցութեամբը :

— Հէ՞ . . . :

— Կը լսէ՞ք, պատանիի մը ընկերակցութեամբը,
կրկնեց Պ. աը Սարթին :

— Նզովի՛ց արմատ :

— « Պատանին վատուժ է : »

— Ճիշտ է :

— « Կերածը կը լսիկ : »

— Ճիշտ է, ճիշտ է :

— « Այո երկու անձերը տունկեր կը հաւաքեն և գա-

նանք թիթեղէ առւիթի մը մէջ կը զետեղեն : »

— Չա՛ր աստանայ, չա՛ր աստանայ, գոչեց Տիւպարի :

— Ամէնքը այս չէ, մտիկ ըրէք : Պ. Ռուսօ . իրիկուան պատանին իր աունը տարաւ . կէս գիշեր եզեր էր և տակաւին պատանին սունկէն գուրս չէր ելած :

— Լաւ :

— « Ամսոյն 18 ին պատանին սունկէն գուրս չէլաւ, կ'երևի թէ Պ. Ռուսօի տանը մէջ տեղաւորուած էր : »

— Տակաւին պզտիկ յոյս մը ունիմ :

— Ըսէք թէ ո՞րն է :

— Կարելի չէ՞ որ այդ տանը մէջ աղզական մը ունենայ մեր փախստականը :

— Օ՛ն, կարծեմ գո՛հ ձգելու համար բոլորովին յուսահատեցնելու է ձեզ : Կեցո՛ւր, կառապան :

Պ. աը Սարթին կառքէն իջաւ : Տաը քայլ չառած գորշադոյն զգեստով կատրածելի մարդու մը հանդիպեցաւ :

Այս մարդը ռատիկանապետը տեսնելով զլխարկը հանեց և նորէն զլուխն անցուց՝ առանց ողջօյնին կարևորութիւն տալ ձեռքնելու, թէպէտ յարզանքն ու անձնաւիրութիւնը անոր աչքերուն մէջ կը կարդացուէր :

Պ. աը Սարթին նշան մը ըրաւ, մարդը մօտեցաւ, սկանջն ի վար քանի մը պատուէր ստացաւ և գնաց Ռուսօի տան նեղ անցքին մէջ անյայտացաւ :

Ռատիկանապետը վերստին կառք նստաւ :

Հինգ վայրկեանէն գորշադոյն զգեստով մարդը կրկին երեցաւ և կառքին դրանը մօտեցաւ :

— Ռատիկանական գաղտնի գործողութեանց սոջև ևս զլուխ աջ կողմը կը դարձնեմ որպէս զի ինքզինքս չի տեսնենք, ըսաւ ժան Տիւպարի ժպտելով :

Պ. աը Սարթին ժպտեցաւ, իր գործակալին ըսածները

մտիկ ըրաւ և զայն ճամբեց :

— Է՛ն, ի՞նչ նոր, ըսաւ Տիւպարի :

— Բազդ չունինք, ձեր ժիւլպերը Պ. Ռուսօի ձեռք կը բնակի : Իրաւ որ ձեր գաղափարը փոխեցէք :

— Ի՞նչ, գաղափարս փոխեմ մի՛ :

— Այո՛ : Բմամին հաճոյքի մը համար անշուշտ չէք ուզեր որ Բարիզի բոլոր փիլիսոփաները մեզի գէմ՝ զըրգրուին, այնպէս չէ՞ :

— Բայց Աստուած իմ, ի՞նչ պիտի ըսէ հիմայ ժանն :

— Ուրնն ձեր քոյրը անպատճառ կ'ուզէ՞ այդ ժիւլպերը, հարցուց Պ. աը Սարթին :

— Անշո՛ւշտ :

— Լաւ ուրնն, այն տանն քաղցր միջոցներու զիմեցէք, խորամտնակութիւն քանակեցէք, Պ. Ռուսօն փաղաքեցէք և փոխանակ բոնութեամբ առեանդելու քաղցրութեամբ կրնաք առնել զայն Պ. Ռուսօի հաւանութեամբը :

— Իրաւ որ արջ մը ընտանեցնելէ աւելի դժուար բան է այդ ինձի համար :

— Չյուսահատինք, թերևս ձեր կարծածին չտի գըծուար չէ : Ռուսօ զեղեցիկ գէմքերը կը սիրէ . կամսունին խիտ զեղեցիկ է, օրիորդ Շօնի գէմքն ալ գէշ չէ : Ըսէք, կոմսունին զոնգութիւն մը յանձն կ'առնէ՞ իր քմածին հաճոյքը կարենալ ի զլուխ հանելու համար :

— Ինչո՞ւ չէ, եթէ հարիւր զոնգութիւն ալ պէտք ըլլայ՝ կ'ընէ :

— Կը հաւանի՞ Ռուսօին սիրահարուիլ :

— Եթէ հարկ է, ինչո՞ւ չէ :

— Թերևս այս բանը օգտակար ըլլայ . բայց զանոնք

իրարու ընկելու համար միջնորդի մը պէտք ունինք :
Ռուսոն ճանչցող մէկը կը ճանչնա՞ք :

— Պ. ար Գօնթին :

— Աս չեղաւ : Ռուսօ իշխաններէն կը կտակածի :
Սանկ չնչին մարդ մը, բանաստեղծ մը կամ գիտնական
մը պէտք է :

— Մենք ասանկ մարդոց հետ չենք տեսուիր :

— Բայց կեցէք, անչեալ օր Պ. ար Ժլուսիօն ճանդի-
պեցայ կամսուհիին սանը մէջ :

— Տնկազէ՞տը :

— Այո՛ :

— Թրիանոնի ծաղկալից ամուսները սակն ու վրայ
ընելու համար հոն կ'երթայ ան : Ուրեմն այս դործն ալ
մնցաւ :

— Գրեթէ :

— Կը կարծէ՞ք որ ժիւլպէրս ձեռք պիտի անցընեմ :

— Այո՛, և թէ առանց բռնութիւն բանեցնելու կամ
ազմուկ հանելու : Ռուսօ զայն ձեզ պիտի յանձնէ ու-
քերն ու ձեռքերը կապուած :

— Կը կարծէ՞ք :

— Ապահով եմ :

— Ի՞նչ ընելու է ուրեմն ասոր համար :

— Գրեթէ աննշան բան մը . Մէտաէօնի կամ Մար-
լիի կողմը անշուշտ պարապ հող մը ունիք :

— Այդ կողմէն հող մի ընէք . Լիւսիէնի և Պուժի-
վալի մէջտեղը ասոր կտորի չափ ունինք :

— Լաւ ուրեմն, հոն շինել կուտանք . . . ինչպէս
կ'ըսեն . . . Ը՛, Ը՛, Ը՛ . . . հա՛, գտայ, փիլիսոփաներու
թակարդ մը :

— Հէ՞, ի՞նչ լաիք :

— Փիլիսոփաներու թակարդ մը, ըսի :

— Բայց ի՞նչպէս պիտի շինենք այդ թակարդը, ես
ասոր ինչ տեսակ բան ըլլալուն վրայ ընու զաղափար
չունիմ :

— Անոր ծրագիրը ես կուտամ ձեզի, այդ կողմէն
հող մի՛ ընէք : Բայց հիմայ մեկնինք, տեսէք, մեզի կը
նային : Կառապան, ասպարանք վերագարծիր :

ԿՊ

Թէ Ի՛նչ ԿՐՆԱՅ ՊԱՏԱՀԻՎ Պ. ՏՐ ԼԱՎՕԿԻՅՈՆԻ՝
ԳՎԱԺԱՌԱՆԳԻՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՂԸ

Վիպասանին համար պատմութեան երեւիլի անցքերը
հսկայ լեռներու կը նմանին : Վիպասանը անոնց կը նա-
յի, անոնց բոլորտիքը կը շրջի, անցնելու ասին կը բա-
րեւէ զանոնք, բայց անոնց վրայէն չանցնիր, ինչպէս
ճամբորդն ալ լեռներուն :

Նմանապէս մենք ալ բոլորտիքը գտնանք և բարե-
տանք : Էլէրոսյլի մէջ կատարուող արքայադատեր ամուս-
նութեան պատկառելի հանդէսին : Այսպիսի պարագայի
մը համար Գաղիոյ ժամանակադրութեան արարողու-
թեանց մտքը անցընելու է :

Արդարեւ, Լուի Ժե.ի ժամանակուան Վէրայլի շքե-
ղութիւնները, արքունիքին զգեստները, միազգեստները

և եկեղեցական զարբերը նկարագրելով մեր պատմութիւնը՝ որ կողմնակի փոքր ճամբէ մը Գաղիսիական պատմութեան մեծ ճամբուն կը մտննայ՝ չէր կրնար շահուկան ըլլալ :

Թող մայիսի գեղեցիկ օր մը, կիզիչ արեւին ճառագայթներուն մէջ հանդէսը կատարուի՝ թող մեծանուն կոչնականները լեւիայն մեկնին կամ տեսարանին հրաշալիքները պատմեն, մենք դառնանք մեր անցուդարձին և մարդոց՝ որոնք պատմութեան մէջ արժէք մը ունին :

Թագաւորը ներկայացումէն՝ մանաւանդ երկարատե հաշկերոյթէն յոգնած՝ իր սենեակը քաշուեցաւ ժամը իննին և ըտլոր մարդիկը ճամբեմ, միայն Գաղիոյ թագաւորին ազոց դաստիարակ Պ. աը Լաօկիւսոնը վար գնելով :

Այս գուքը, ճիզվիթներուն զլխաւոր բարեկամներէն մին ըլլալով, զանոնք վերտաին Գաղիա մացնել կը յուսար շնորհիւ արկին Տիւպարիի վարկին, և զանամուռանդին ամուսնութեամբն ալ իր աշխատութեան մէկ մասը աւարտած ըլլալ կը յաւակնէր :

Բայց Պ. աը Լաօկիւսոն մեծ կորուստ մը կ'ունենար թագաւորէն վերջ Գաղիոյ ամենէն երեւելի անձին աշխնքն իր աշակերտին ամուսնանալովը : Թագաւորէն մնալու հրաման ստանալով Պ. աը Լաօկիւսոն կարծեց թէ նորին վեհախառութիւնը այս կորստեան փոխարէն կ'ուզէր փոխարինութիւն մը ընել : Գաստիարակութիւն մը ի կատար հանուած ասան սովորաբար գաստիարակը կը վարձատրեն :

Այս պատճառաւ Պ. աը Լաօկիւսոն իր գիւրազգացութիւնը կրկնապատկեց, և աշակերտը կորսնցնելուն երեսէն զգացած ցաւը արտայայտելու համար, ճաշին ամբողջ

աւտուութեանը թաշկինակը աչքերէն վար չստաւ : Միբղը աւարտելուն պէս հեծկրտալ սխաւ, բայց տեսնելով որ իրեն նայող չկար, թաշկինակը գրպանը գրաւ և հանգարատրէն գուրս ելաւ :

Երբ որ թագաւորը զինքը կանչել առաւ, անմիջապէս թաշկինակը վերտաին գրպանէն գուրս ելաւ և արցունքն ալ աչքերէն : Ճիզվիթներուն զլխաւոր բարեկամներէն էր, ըսինք :

— Եկէք որ խօսակցինք, խեղճ Լաօկիւսոն, խօսք առաւ թագաւորը երկայն թիկնաթոռի մը մէջ սարածուելով :

— Ձեր վեհախառութեան հրամաններուն կը սպասեմ, ըսաւ գուքսը :

— Անչուշտ յոգնած ըլլալու էք, սրտեղը նտեցէք, սիրելիս :

— Ե՞ս նստիմ, տէր արքայ :

— Այո՛, և առանց քաշուելու :

Եւ Լուի ԺԵ. աթոռ մը ցոյց առաւ գուքսին : Այսպէսով գաստիարակը լոյսի մէջ կը մնար, մինչդեռ թագաւորը մութի մէջ :

— Ան գաստիարակութիւն մը որ աւարտեցաւ, սիրելի գուքս, ըսաւ թագաւորը :

— Այո՛, տէր արքայ :

Եւ Պ. աը Լաօկիւսոն հասաչեց :

— Իբաւ որ լաւ գաստիարակուեցաւ արքայորդին, շարայարեց թագաւորը :

— Նորին վեհախառութիւնը խիստ բարեխիտ է :

— Եւ ձեզի շատ պատիւ կը բերէ ան, գուքս :

— Նորին վեհախառութիւնը զիս բարեօք կը ընու :

— Կարծեմ Պ. արքայորդին Եւրոպայի ամենէն գի-

տուն իշխաններէն մին է :

— Այդպէս կը կարծեմ, տէր արքայ :

— Պատմագիտութեան մէջ ինչպէս է :

— Շատ լաւ :

— Աշխարհագրութեան մէջ :

— Տէր արքայ, Պ. արքայորդին երկրաչափէ մը առելի աղէկ աշխարհագրութիւններ կը գծէ :

— Բայց թուահաշիւի և նաւարկութեան մէջ :

— Ո՛հ, տէր արքայ, սնա այս գիտութիւնները սորվեցնելու համար ձեռքէս եկածը չինայցի :

— Սակայն բոլոր ասոնք ձեզի կը պարտի . . . :

— Ձեր վեհախառութիւնը արժանիքէս շատ առելի կը գնահատէ զիս :

— Բայց ճշմարտութիւնը սա է որ, դուքս, Պ. արքայորդին իրօք բարի թագաւոր մը, լաւ վարիչ մը և ընտանիքի լաւ հայր մը պիտի ըլլա՞յ :

— Է՛հ, տէր արքայ, ամէն տեսակ առաքինութիւն արքայորդոյն սրտին մէջ իր բողբոջը ունենալով, անշուշտ այդ առաքինութիւնն ալ միւսներուն նման անոր սրտին մէջ տպաւորուած է, պատասխանեց Պ. ար լալօլիւյն պարզամտութեամբ :

— Ըստծո չհասկցաք, դուքս : Ձեզի հարցնել ուզածս սա է որ ընտանեաց լաւ հայր մը կրնա՞յ ըլլալ :

— Տէր արքայ, ես ալ կը խոստովանիմ որ ձեր վեհախառութեան ըսածը չհասկցայ : Այդ հարցումը ինչ իմաստով կ'ընէ ձեր վեհախառութիւնը :

— Անշուշտ Սուբբ զիրքը կարգացած էք, այնպէս չէ՞, պարսն դուքս :

— Կարգացած եմ, տէր արքայ :

— Ուրեմն նահապտաները զիտէք, այնպէս չէ՞ :

— Անշուշտ :

— Լաւ նահապետ մը պիտի ըլլա՞յ :

Պ. ար լալօլիւյն թագաւորին նայեցաւ իբրև թէ երբայերէն խօսուած ըլլար իրեն, և զլիարկը ձեռքերուն մէջ ուրեկով պատասխանեց :

— Տէր արքայ, մեծ թագաւոր մը իր ուզածը կրնայ ըլլալ :

— Ներեցէք, պարսն դուքս, պնդեց թագաւորը, կը տեսնեմ թէ իրարու խօսք չենք հասկնար :

— Սակայն ձեռքէս եկածը կ'ընեմ հասկնալու համար, տէր արքայ :

— Վերջապէս առելի լացորոշ պիտի խօսիմ, ըստ թագաւորը : Տեսնե՞ք ուրեմն : Արքայորդին ձեր ազուն պէս կը ճանչնաք, այնպէս չէ՞ :

— Այո՛, տէր արքայ :

— Կիրքեր ունի՞ :

— Ո՛հ, եթէ ունենար իսկ, դանտնք արմատախիւ կ'ընէի : Բայց այդ գծուարութիւնը չունեցայ բարեբաղդարար . Պ. արքայորդին կիրք չունի :

— Բարեբաղդարա՞ր մի :

— Տէր արքայ, միթէ ձիրք չունենալը բարեբաղդութիւն մը չէ՞ :

— Ըսել է չունի՞ :

— Ո՛հ, տէր արքայ :

— Եւ ոչ մէկ կիրք :

— Ո՛չ մէկ կիրք, կ'երաշխաւորեմ :

— Ահա ձիջք ես ալ այդ բանէն կը վախնայի : Արքայորդին շատ բարի թագաւոր մը և շատ ընտիր վարիչ մը կրնայ ըլլալ՝ բայց լաւ նահապետ մը երբեք :

— Աւա՛ղ, տէր արքայ, այդ մասին ու եէ պատուէր

մը չատուիք ինձ :

— Պակասութիւն մը դործեցի : Խորհկու էի որ օր մը պիտի ամուսնանար : Բայց որչափ որ ալ կիրք չունի՝ բւրրովին չէք դատապարտեր զինքը, այնպէս չէ՞ :

— Այսինքն :

— Ըսել կ'ուզեմ թէ օր մը կիրք ունենալու անկարող չէք դատեր զինքը, այնպէս չէ՞ :

— Կը կասկածիմ, տէր արքայ :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Ո՛հ, տէր արքայ, չեմ գիտեր թէ ի՞նչ պատասխան տալու է ձեր վեհախառութեան :

— Պ. աը Պէրի դուքսը կիրքով թէ առանց կիրքի լու ամուսին մը կրնա՞յ ըլլալ, պարոն աը Լափօկիւ՞յն, գոչեց թագաւորը համբերութիւնը կորսնցնել սկսելով :

— Ա՜նա այդ բանի ճիշդն պատասխանը չեմ կրնար տալ ձեզ, տէր արքայ :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ չեմ գիտեր :

— Չէք գիտեր մի՞ . . . , գոչեց թագաւորը ազշտութեամբ :

— Տէր արքայ, Պ. աը Պէրի դուքսը ձեր վեհախառութեան յարկին տակ ուսանող սղու մը անմեղութեամբը կ'ապրէր :

— Է՛հ, պարոն, ալ հիմայ այդ տղան չուսանիր, այլ կ'ամուսնանայ :

— Տէր արքայ, ես պարոն արքայորդիին դատախառակն էի :

— Հետեաբար անոր գիտնալիքը իրեն սորվեցնելու էիք :

Նեւ Լուի ԺԵ թիկնաթուին մէջ ինկաւ և ուսերը

ցնցեց ու հառաչեց .

— Ո՛հ, մտքէս կ'անցնէ՛ր . . . :

Պ. աը Լափօկիւյն Լուի ԺԵ ի հոտաչանքին արձագանք տուաւ :

— Ֆրանսայի պատմութիւնը գիտէք, այսպէս չէ՞, Պ. աը Լափօկիւյն :

— Տէր արքայ, միշտ զայն գիտնալու կարծիքը ունեցած եմ և այս կարծիքս պիտի շարունակեմ եթէ ձեր վեհախառութիւնը հակառակը չզնորէ :

— Ուրեմն հարսնիքիս առաջին գիշերը զլիսուս եկածը գիտնալու էք :

— Ո՛չ, տէր արքայ, չեմ գիտեր :

— Ուրեմն մտիք ըրէք և ըսելիքս թող ձեզի դատ մը ըլլայ, որպէսզի միւս երկու թունկուտ աւանդէք զայն :

— Չեր վեհախառութիւնը մտիկ ընելու պատիւը ունիմ :

— Ես ալ իմ մեծ-հօրս տանը մէջ մեծցած եմ ճիշդ այնպէս՝ ինչպէս որ դուք արքայորդին մեծցուցիք, Պ. աը Վիթրոյն էր իմ դատախարակս, բարի մարդ մըն էր, բայց այնքան բարի էր որ բւրրովին ձեզի կը նմանէր, դուքս : Օր մըն ալ ամուսնացայ, և գիտէք որ թագաւորի մը ամուսնութիւնը բոլոր աշխարհի համար լուրջ բան մըն է :

— Ո՛հ, այո՛, տէր արքայ, հետզհետէ կը սկսիմ հասկնալ :

— Իրա՞ւ, փառք Աստուծոյ : Կը շարունակեմ, երբ որ ամուսնացայ, Պ. կարտինալը նահապետութեան համար ունեցած յարմարութիւններս քննել տուաւ : Բնաւ յարմարութիւն չունէի, և այս կողմէն այնպիսի ամեհնասուրը ամբողջութիւն մը ունէի որ, կը վախցուէր թէ

քիչ ասեմէն Գաղիոյ թագաւորութիւնը կ'նսջ ժառանգ
 պիտի մնար : Բարեբաղդարտը, Պ. կարօինալը Պ. ար
 Ռիչլիէօին խորհուրդ հարցուց այս մասին, խնդիրը փա-
 փուկ էր . բայց Պ. ար Ռիչլիէօ մեծ վարպետ մըն էր
 այսպիսի խնդիրներու մէջ : Պ. ար Ռիչլիէօ հանձարեզ
 գազափար մը յըսցաւ : Կըմօր անուսով աղջիկ մը կար
 սր հիանալի պատկերներ կը գծէր . տեսարաններու շարք
 մը ապարկեցին անոր . կը հասկնաք, այնպէն չէ :

— Ո՛չ, տէր արքայ :

— Բնական մերկապարանոց տեսարաններ
 կարծեմ թէ ալ պէտք եղած բառը գտայ :

— Ի՞նչ, և զանոնք ձեր վեհախառութեան ցոյց տա-
 լու համարձակեցան . . . , գոչեց Պ. ար Լալօկիւճօն կար-
 մըրերով :

— Անշուշտ, պէտք էր որ խմ վեհախառութիւնս գա-
 նոնք ասեմէր :

— Ուրե՞մն :

— Ես ալ նայեցայ :

— Ետքը՞ . . . :

— Եւ որովհետեւ մարդս ի բնէ ուրիշները կը կապկէ :
 ես ալ պատկերները կապկեցի :

— Ստուգիւ, տէր արքայ, միջոցը խնտ հանձարեզ է
 և ընտիր, թէպէտեւ երիտասարդի մը համար վտանգաւոր
 թագաւորը անամօթ ժպիտով մը Պ. ար Լալօկիւճօն
 գ ու քսին նայեցաւ :

— Առայժմ վտանգը մէկզի թողունք և մեր ընկի-
 քին նայինք :

— Այո՛ .

— Գիտե՞ք թէ ինչ պիտի ընենք :

— Ո՛չ, տէր արքայ : Ձեր վեհախառութիւնը զայն
 ինձ սարկեցնելով չափէն աւելի երջանիկ պիտի ընէ զիս

— Անա թէ ինչ ընել պէտք է . կ'երթաք արքայորդին
 կը գտնէք, այս միջոցին այրերուն վերջին շնորհաւորու-
 թիւնները ընդունելու վրայ է, մինչդեռ արկին արքայա-
 դուստրն ալ կ'իներուն վերջին շնորհաւորութիւնները
 կ'ընդունի :

— Լաւ, տէր արքայ :

— Ձեռքի աշտանակ մը կը գտնէք և Պ. արքա-
 յորդին մէկզի կը քաշէք :

— Շատ լաւ, տէր արքայ :

— Ձեր աշակերտին կ'ըտէք թէ իր սենեակը նոր
 նրբանցքին ծայրն է :

— Բայց այդ նրբանցքին դուռը կը պուռած է և բանա-
 լին բնու չէ տեսնուած դրանիկներուն ձեռքը :

— Անոր համար որ ես կը պահէի զայն, պարոն . ես
 այս օրուան պատահելիքը կը գուշակէի . ահա՛ այդ բա-
 նալին :

Պ. ար Լալօկիւճօն գուրալով բանալին տաւ :

— Ձեզի ըսեմ թէ այս գահլիճին մէջ քան պատկեր
 կայ զորս ես հոն գնել տուի :

— Այո՛, այո՛, հասկցայ, տէր արքայ :

— Այո՛, պարոն գուքս, ձեր աշակերտը կ'ողջագու-
 րէք, նրբանցքին դուռը կը բանաք, աշտանակը իր ձեռքը
 կուցտք, բարի երեկոյ կը մաղթէք և կ'ըտէք որ մինչև
 իր սենեակին դուռը հասնիլը քան վայրկեան պէտք է
 անցընէ հոն՝ իւրաքանչիւր պատկերի առջև մէյ մէկ
 վայրկեան կենալով :

— Հասկցայ, տէր արքայ, հասկցայ :

— Փա՛ռք Աստուծոյ : Գիշեր՞ բարի, պարոն տը Լա-
 վօկիւճօն :

— Ձեր վեհախառութիւնը արգեօք զիս անբասիր հա-
 ժօզ. Պալս., բիւ 28—60, հատ. Դ, Բ. հր. Ն. Բ.

մարեւու բարեարտութիւնը ունենալ կը հաճի՞ :

— Ատիկայ ես ալ չեմ գիտեր, որովհետեւ եթէ ես չըլ-
լայի՝ ազուտը բաներ պիտի ընէիք ընտանիքիս մէջ . . . :

Գուռը Պ. դատարարակին ետեւէն գոցուեցաւ :

Թագաւորը իր մասնաւոր զանգակը զարկաւ :

Լըպէլ ներս մտաւ :

— Սուրճս բերէք, ըսաւ Թագաւորը : Աղէկ միտքս
ինկաւ, Լըպէլ . . . , սուրճս տալէ վերջ, Պ. աը Լափօկիւյ-
եօնին ետեւէն կ'երթաս, որ հիմայ Պ. արքայորդոյն քով
գնաց իր պարտականութիւնը կատարելու :

— Անմիջապէս տէր արքայ :

— Պ. աը Լափօկիւյեօն այնքան խռոված և այնքան
տխրած է որ՝ վախնամ սիրտը պիտի ելնէ Պ. արքայորդ-
ւոյն համար և չուտրի :

— Եթէ չուտրի, ի՞նչ կը հրամայէք որ ընեմ :

— Ոչինչ, կուգաս ինձ լուր կուտաս, ահա այսչափ :
Լըպէլ սուրճը Թագաւորին քով դրաւ : Թագաւորը
ծանրօրէն խմել սկսաւ և պատմական ծառան դուրս ելաւ :
Քառորդ ժամէ մը վերադարձաւ :

— Ի՞նչ պատահեցաւ, Լըպէլ, հարցուց Թագաւորը :

— Տէր արքայ, Պ. աը Լափօկիւյեօն, Պ. արքայորդ-
ւոյն թեւէն բռնած, մինչև նոր նրբանցքին ծայրը գնաց

— Ետքը՞ :

— Սիրտը ելածի երեւոյթ չունէր, այլ ընդհակառակը,
աչքերը կը շողային : Գրպանէն բանալի մը հանեց, Պ.
արքայորդւոյն տուաւ : Արքայորդին դուռը բացաւ և
ներս մտաւ :

— Է՞. . . :

— Պ. դուքսը Պ. արքայորդւոյն տուաւ աշտանակը և
իմ կողմէն լսուելու չափ ցած ձայնով անոր ըսաւ .

«—Վեհազուն տէր, առագաստը այս դահլիճին ծայրն
է որուն բանալին հիմայ ձեզի տուի : Թագաւորը կը
փափաքի որ քսան վայրկեանէն երթաք մինչև այդ սն-
եակը :

«—Ի՞նչ, քսան վայրկեան, բայց հազիւ քսան րոպէի
միջոց մըն է անցնելիք նրբանցքս, ըսաւ իշխանը զար-
մանահար :

— Վեհազուն տէր, իմ իշխանութիւնս հոս կ'աւարտի,
պատասխանեց Պ. աը Լափօկիւյեօն : Ա՛լ ձեզի տալիք
դաս չունիմ, այլ վերջին խրատ մը . այս դահլիճին պա-
տերուն աջ ու ձախ կողմը լաւ մը դիտեցէք, և ես կը
վստահեցնեմ թէ նորին բարձրութիւնը հազիւ քսան վայր-
կեանէն պիտի կրնայ թողուլ զայն :

— Գէշ չէ, մընջեց Թագաւորը գոհունակութեամբ
ձեռքերը շփելով :

— Եւ Պ. աը Լափօկիւյեօն մեծ բարեւ մը տալով՝
հրաբորբք աչքերով հրածեշտ առաւ Պ. արքայորդին,
աւելցուց Լըպէլ :

— Պ. արքայորդին իրեն ցուցուցուած դռնէն ներս
մտաւ :

— Ահա՛, տէր արքայ, նայեցէք, դահլիճին մէջ լոյս
կայ : Առնուազն քառորդ ժամ մըն է որ արքայորդին
հոն կը թափառի :

— Հը՛մ, հը՛մ, ահա լոյսը կ'անհետի, ըսաւ Թագա-
ւորը քանի մը վայրկեան վերջը ապակիներուն վրայէն
Լըպէլի ցուցուցած կողմը դարձնելով գլուխը : Ինձի՛ ալ
քսան վայրկեան պայմանաժամ արուեցաւ՝ բայց հինգ
վայրկեանէն կնոջս սենեակը վազեցի : Թերևս որ մը Պ.
արքայորդւոյն համար ալ պիտի ըսեն՝ «մեծ հօր մը թողն
է այս» :

ԿԵ

ԱՐՔԱՅՈՐԳԻՆ ԶԱՐՄԵՒՔԻՆ ԳԻՃԵՐԸ

Արքայորդին առագաստին դուռը բացաւ :

Արշիդքսուհին, երկայն ճերմակ շրջազգեստ մը հագած, սսկեզօծ մահճակալին մէջ կը սպասէր : Անկողինը հազիւ ճնշուէր էր անոր տկար և վափուկ մարմնոյն ծանրութեան տակ : Տարօրինակ բան, եթէ անոր ձակատը ծածկող ախրութեան ամպին տակէն կարելի ըլլար կարբալ ներքինը, նոր հարսի մը քաղցր սպասման տեղ հոն պիտի տեսնուէր զուտառի աղջկան մը այն վախը՝ զոր նախազգացմամբ կ'ունենան ջղային բնութիւն ունեցողները իրենց սպաննացող վտանգը տեսնելով և նոյն պահէն իսկ աւելի քաջարտութեամբ զխաղաղութեամբ անոր :

Մահճակալին քով նստած էր տիկին տը Նօայլ :

Տիկինները սենեակին անկիւնը կեցեր էին և ուշադրութեամբ պատուոյ տիկինին առաջին շարժումին կը սպասէին՝ որպէս զի հրամայուած ատենին մեկնին :

Պատուոյ տիկինը, արքունի սովորութեանց հաւատարիմ, Պ. արքայորդոյն գալտեսանը կը սպասէր անտարբերութեամբ :

Բայց այս անգամ արքունի սովորութեանց և արարողութեանց օրէնքը պարագաներու ձախողութեանց պատճառաւ մէկդի ձգել պէտք եղաւ :

Պ. արքայորդին առագաստի սենեակը մտցնելու պաշտօն ունեցող անձինքը՝ չգիտնալով որ նորին բարձրու-

թիւն լուի ժե. թագաւորին կարգադրութեանց համեմատ նոր նրբանցքէն պիտի դար ան, տարբեր նախասենեակէ մը կը սպասէին անոր մուտքը :

Պ. արքայորդին, գողունի ակնարկներով և ծածուկէն մտիկ ընելով, սպասեց :

Տիկին արքայադուստր ձայնը քիչ մը դողդոջուն՝ այլ յատակ ու ներգաշնակ կ'ելլէր :

— Պ. արքայորդին ս'ըրկէ պիտի մանէ, հարցուց իշխանուհին :

— Այս գոնէն, տիկին, ըստ տը Նօայլ գքսուհին գահաժառանգին սպասած դրան դէմի դուռը ցուցնելով :

— Սա պատուհանէն եկած ձայնը ի՞նչ է, կարծես թէ ծովուն ձայնն է, մրմնջեց իշխանուհին :

— Այդ ձայնը խուսներամ հանդիսականներուն ձայնն է սրոնք լուսավառութեանց լոյսին մէջ կը շրջին և հրախաղին կը սպասեն, ըստ տիկին տը Նօայլ :

— Լուսավառութիւն, ըստ իշխանուհին ախուր ժրպիտով մը : Բաւական օգուտ ունեցաւ ատիկայ, որովհետեւ այս գիշեր երկինքը խիստ մութ է, տիկին :

Այս միջոցին արքայորդին սպասեցն ճանճրացած՝ դուռը մեզմիւ հրեց, գլուխը ներս մտցուց և հարցուց թէ կրնա՞ր ներս մանել :

Տիկին տը Նօայլ առաջին առթիւ իշխանը չճանչնալով ճիշ մը արձակեց :

Տիկին արքայադուստրը տիկին տը Նօայլի թեէն բռնեց :

— Մի՛ վախնաք, տիկին, ես եմ, ըստ գահաժառանգը :

— Բայց ինչո՞ւ այդ գոնէն կու գաք, հարցուց տիկին տը Նօայլ :

— Որովհետեւ Պ. տը Լատիլիւսիսն թուեալ ճիւղիթ մը ըլլալով՝ լատիներէնը, թուահաշիւը սքանչելիօրէն պիտէ,

քայց ասանցմէ դուրս՝ ոչինչ, ըստ թաղաւորը ինքն ալ նոյն գոնէն գլուխը ներս խօթելով :

Յանկարծուատ ներս մտնող թաղաւորին ներկայութեանը, տիկին արքայադուստրը մածնակալէն վար սահեր և սաքի կեցեր էր, սաքէն մինչև պարանոցը իր բոլոր մարմինը ծածկող երկայն գիշերազգեստին փաթտուած :

— Մնա նիւար ըլլալը կ'երևի, մրմնաց Լուի Ժե : Գեանին տակը անցնի սա պարոն տը Շուաղէօլը որ բուլբուլ արշիպքսուհիներէն գնաց սա ընտրեց :

— Ձեր վեհախառութիւնը կը տեսնէ որ իմ կողմէս լաւ հոգ տարուեցաւ արքունի ձեռակիրպութեանց, գիտել տուաւ տիկին տը Նօայլ, և օրինազանցութիւնը վեհագուն արքայորդիին կողմէն է :

— Այդ օրինազանցութիւնը ես իմ վրաս կ'առնեմ, որովհետեւ արդարացիօրէն ես գործել տուի զայն, ըստ Լուի Ժե : Բայց, և որովհետեւ ծանր պարագայի մը առջև կը գտնուէինք, կը յուսամ որ ինձ կը ներէք, սիրելի տիկին տը Նօայլ :

— Ձեր վեհախառութեան ըսածը չեմ հասկնար :

— Հիմայ միտտին կը մեկնինք և ես ձեզի համբան կը պատմեմ զայն, այժմ թողունք սա տղաքը որպէս զի պատկին :

Տիկին արքայադուստրը անկողինէն քայլ մը հեռացաւ և երկրորդ անգամ ըլլալով սոսկուսով տիկին տը Նօայլի թեւէն բռնեց :

— Ո՛հ, չնոր՛ ըրէք, տիկին, ամօթէս կը մեռնիմ, կակաղեց :

— Տէր արքայ, տիկին արքայադուստրը ձեզ կ'աղագէ որ թոյլ տաք իրեն պարզ քաղաքացի կնոջ մը պէս պատկիլ :

— Օհօ՛, այդ բանը խնդրողը դո՛ւք էք, տիկին արքունի սովորութիւն :

— Տէր արքայ, գիտեմ որ Գաղիոյ արարողական օրէնքներուն ներակ է խնդրածս, բայց տեսէք արշիպքսուհին . . . :

Արդարև, Մարի-Անթուանէթ, սոքի կեցած, սոքու նած, թիկնաթուռի մը ետին պրկուած, ճիշդ պիտի նըմանէր այն արձանին՝ որուն կաթնցուցած էր թեւը՝ եթէ ակոսներուն մեղմօրէն իրարու զարնուելու ձայնը չի լսուէր և որուն չմիանար ձակուէն հասնող պաղ քրտինքը :

— Ո՛հ, տիկին արքայագոտեր կամքին հակառակիլ չեմ ուզեր, ըստ Լուի Ժե : Մեկնինք, դքսուհի, մեկնինք : Սա ալ կայ որ դաճիճներուն գոները ներսէն փկանք ունին, և այս պարագան առկի դուարձալի պիտի ըլլայ :

Գահաժառանգը իր մեծ հօր այս վերջին խօսքը լսեց և կարմրեցաւ :

Իշխանուհին ալ լսեց բայց բան մըն ալ չհասկցաւ :

Լուի Ժե իր հարսը ողջագութեց և տիկին տը Նօայլը հետն առնելով դուրս ելաւ այն ծաղրալից խնդուքով՝ որ շատ արամառիթ է խնդոցողին զգացած ուրախութեան մասնակից չեղողներուն :

Ներկայ գտնուող միւս կիներն ալ ուրիշ գոնէ մը դուրս ելան :

Երկու դեռատի անձինքը առանձին մնացին :

Պահ մը լսութիւն տիրեց :

Վերջապէս դեռատի իշխանը Մարի-Անթուանէթին մօտեցաւ : սիրտը ուժղնակի կը բաբախէր, երիտասարդութեան և սիրոյ արիւնին իր կուրծքին, քունքերուն և շնչերակներուն մէջ հոսիլն ու հոսլը կը զգար : Բայց կը կարծէր թէ իր մեծ հայրը զբանը հետեւ էր և անոր համարձակ նոյնուածքը մինչև հարսանեկան անկողինը կը

սուզէր, և ասով, արդէն երկչոտ ու անձարակ, քար կը կտրէր, կը ստուէր, կը շուարէր :

— Տիկին, արդեօք ցա՞ւ մը կը զգաք, ըստ իշխանուհիին նայելով : Չտիէն աւելի զեզներ էք, և կարծեմ կը գողաք :

— Պարոն, ձենէ պահելու բան մը չունիմ, տարօրինակ յուզմունք մը կը զգամ, անպատճառ տարտիկի փոթորիկ մը ըլլալու է գուրար, ըստ արշիպքսուհիին : Փոթորիկը սարտիկի սպաւորութիւն մը կ'ընէ իմ վրաս :

— Մեզ սպառնացող մ'ըրիկէ՞ մը կը վախնաք, տիկին, ըստ գաճաճառանոցը :

— Վաստ՛ ևմ, սպաճով ևմ : տեսէք, ամբողջ մարմինս կը գողայ :

Իբրաւ ալ ճէզ իշխանուհիին ամբողջ մարմինը երկկարական ցնցումներով կը սարսուտար :

Նոյն միջոցին, կարծես բնութիւնը ուզէր ստուգել անոր նախազգացական գուշակութիւնը, կատաղի հով մը՝ այն գորտուր ու վայրագ բուքերէն մին սրոնք ծովուն կէսը՝ միւս կէսին վրայ կը մղեն և լեռները կը սրբեն կ'անցնին, վերահաս փոթորիկին առաջին սուլումին նըման, զզեակը աղմուկով, անձկութեամբ և խլացուցիչ շտապիւններով լեցուց :

Ծառերէն ինկած ձիւզերն ուտիւրները, իրենց պատուանգանէն ստապարած արձանները, պարտէզներուն մէջ ցրուած հազարուոր հանդիսականներուն երկայն և անկերջանալի աղմուկը և զզեակին գաւիթներուն ու նրբանցքներուն մէջ սաքածուսոց տխուր և երկարատեւ մոնչիւնը նոյն միջոցին այնպիսի վայրենի ու քստմնաւոր տարտու ներդաշնակութիւն մը կազմեցին-որ՝ մարդկային լսողութիւնը քիչ անգամ լսած է :

Ապա, այս մոնչիւնէն յաջորդեց չարագուշակ շտապ-

չիւն մը : սպակիւններն էին՝ սրոնք ջարդ ու փշուր եղած՝ մարմարիտնէ ասնուլաներուն և քիւերուն զարնուելով և օդին մէջ ճանչելով կ'երթային իշնալ ու փոշիանալ :

Հովը, մէկ շունչով, սպառնակէն խլեր հաներ էր զէջ գոցուած փնզի մը՝ որ՝ զիշերային հակայ թռչունի մը պէս՝ գացեր սատին զարնուէր էր : Դեղակին մէջ, բոլոր պատուհանը լաց եղող սենեակներուն ճրագները մարիւր էին այս սաստկաշունչ հովէն :

Գաճաճառանոցը, անշուշտ փեղկը գոցելու համար, պատուհանին մօտեցաւ, լայց իշխանուհիին թող չտուաւ :

— Ո՛հ, չնո՛րճ ըրէք, պարո՛ն, մի՛ բանաք այդ պատուհանը, ճրագները կրնան մարիլ և այն առնն ևս ալ վախէս կը մեռնիմ, ըստ :

Արքայտրդին կեցաւ :

Անոր քաշած վարագոյրներուն տակէն պարտէզին ծառերուն միջապատ գողաթները կը տեսնուէին, սրոնք, զոգցես աներևոյթ հակայի մը ձեռքէն ցնցուած, կը զոզային ու կ'օրօրուէին :

Լուսալատութեան լապտերներուն բոլորն ալ մարեցան :

Այն ատեն երկնքին վրայ բազմաթիւ սեւ ամպեր երեցան, սրոնք գալար գալար կը թառալէին :

Գաճաճառանոցը սոճուեց, սուքի կեցած և ձեռքը պատուհանին փեղկին կոթնցուցած էր : Տիկին արքայտրդուարը հատաչանք մը արձակելով ակնուրի մը վրայ ինկաւ :

— Ծա՞ ա կը վախնաք, տիկին, հարցուց գաճաճառանոցը :

— Ո՛հ, այո՛, լայց ձեր ներկայութիւնը ինձ սիրա կուտայ : Ո՛հ, Աստուած իմ, այս ի՛նչ փոթորիկ է : Բոլոր լապտերները մարեցան :

— Այո՛, հովը հարաւարեմուտքէն կուզայ և անողին փոթորիկ մը կը սպառնայ, ըստ Լուի իշխանը : Եթէ

այսպէս շարունակէ՝ չեմ գիտեր թէ հրախաղը քնչպէս տեղի պիտի ունենայ :

— Ո՛հ, պարոն, ասանկ օդի մը պարտէզներուն մէջ մարդ չմտար, հրախաղը որո՞ւ համար պիտի ընեն :

— Ո՛հ, տիկին, գուք զաղխացիները չէք ճանչնար, անոնք իրենց հրախաղէն չեն հրաժարիր . հրաչալի պիտի ըլլայ ան . ճարտարագիտը անոր յատակադի՞նք ինձ ցուցուց : Է՛ն, տեսէք, չեմ սխալիր, անա ատալին հրալից փամփուշտները կ'արձակեն :

Արդարեւ հրախաղին սկզբնաւորութեան նշանն եղալ բացիկէն ու ոսկեղօծուած օձերու նման փամփուշտներ երկինք սլացան : Բայց միևնոյն ատեն, հրաչէկ կայծակ մը օձի մը նման երկինքը ձեղքելով հրախաղի տողաւարին վրայ իջաւ և իր կապուտագոյն հուրը փամփուշտներուն կարմիր կրակին խառնեց :

— Իրա՛ւ, մարդիկ Աստուծոյ դէմ պայքարելով ամբարշտութիւն կը գործեն, ըսաւ արջիլքսուծին :

Հրախաղին սկզբնաւորութիւնը ծանուցանող փամփուշտներուն արձակուելէն քանի մը րոպէ կաքը ամբողջ հրախաղը սկսեր էր . ճարտարագիտը անապարել պէտք ըլլալը զգացեր և ատալին մտոր ըրնկցուցեր էր : Բաղմուլիւնը ցնծութեան անհասնում աղապակներով ողջունեց հրախաղը :

Բայց փոթորիկը ստատկանալով՝ իր սնազին դղրդիւնովն ու որոտաղին մոռնչներովը ժողովուրդին ձայնը խախտնեց, կարծես թէ իրաւ մարդիկ ամբարշտութիւն գործած ըլլային իրենց Աստուծոյն դէմ, և երկնային ջրվէժը իր ամպէ թուամբերը խորտակելով անձրևի հեղեղով մը ողողեց երկիրն ու երկրաբնակները :

Հովը լապտերները մարեր էր, ջուրն ալ հրախաղը մարեց :

— Ո՛հ, ի՛նչ դժբաբութիւն է այս, հրախաղը աւ-

րուեցաւ, ըսաւ զահաժառանգը :

— Է՛ն, պարոն, Գաղիա մտնելէն ի վեր չէ՞ մի որ ամէն բան կ'աւրուի, պատասխանեց Մարի-Անթուանէթ :

— Ի՛նչպէս, տիկին :

— Վէրսայլը տեսա՞ք :

— Անշուշտ տիկին : Արդեօք Վէրսայլը ձեզի հաճելի չի՞ թուիր :

— Ո՛հ, ի՛նչպէս հաճելի թուի : Վէրսայլը ինձ հաճելի պիտի թուէր՝ եթէ այսօր ան ինձ ներկայանար ձեր ականաւոր հաւին՝ Լուի ԺԳ-ի թողած վիճակին մէջ : Բայց ի՛նչ վիճակի մէջ կը տեսնենք զայն այսօր : Ըսէ՛ք : Ամէն կողմ սուզ ու աւեր : Ինձ համար սարքուած այս հանգէսին խիստ յարմար է Աստուծոյ պատրաստած սափօթորիկը : Այո՛, փոթորիկ մը պէտք է՝ որպէսզի մեր պաշտօնին չքաւորութիւնը ժողովուրդին աչքէն ծածկուի, գիշերային մթութիւնը խիստ նպաստաւոր է՝ որպէսզի չերևան տա վայրի խոտերով լեցուն ծառուկիները, տըզմուտ ամուռները, չորցած աւազանները և կոտրուած արձանները : Ո՛հ, հարաւային հովը թող փչէ, փոթորիկը թող գոռայ, թանձր ամպերը թող կուտակուին և ամէնուն աչքէն պահեն այն արտառոց ընդունելութիւնը՝ զոր Գաղիա կնարներու աղջկան կ'ընէ երբ նա իր ձեռքը Ֆրանսայի ապագայ թագաւորին ձեռքին մէջ կը դնէ :

Գահաժառանգը շուարեցաւ և աի ի բերան մնաց : Չէր գիտեր թէ ի՛նչ պատասխանել հարկ էր այն կշտամբանքներուն և մանտանդ այն զայրապին մեղամաղձոտութեան որը իր բնաւորութեան խիստ հակառակն էր : Հատաչանք մը արձակելուն կարգը արքայորդիին եկած էր այժմ :

— Թերեւ ձեզի վիշտ կը պատճառեմ, բայց մի կտրձէք որ հպարտութիւնս է զիս խոսեցնողը, շարունակեց Մարի-Անթուանէթ : Ո՛հ, ո՛չ, ո՛չ, այդպէս չէ՛ : Գոնէ ինչո՞ւ ինձ ցոյց չտուին զեղաղուարթ, ստուերամած և

ծաղկալից թրխանօնը՝ որուն թաւառաներէն անրեներ կը խլէ մ'ըրիկը և ջրերը կը յուզէ . ես այդ գեղատեսիլ բոյնով զո՛ն կը մնայի . բայց աւերակները ինձ սոսկում կ'ազդեն, իմ երիտասարդութիւնս կ'անարդէ զանոնք :

Առաջինէն աւելի կատաղի ստեպիտունն է հով մ'ը պաւրատը հիմէն գըրգեց : Իշխանուհին, ահարեկամ, սուքի ելաւ :

— Ո՛հ, Աստուած իմ, ըսէք ինձ թէ ու ե է վտանգ մը կա՞յ թէ ոչ . . . : Վախէս պիտի մեռնիմ :

— Ոչ մէկ վտանգ, աիկինս վէրսայլի անսիքը միտհարթ ըլլալով կայծակ չիջնէր վրան : Եթէ կայծակ իջնէ՝ հաւանաբար մտտուտին վրայ կ'իջնէ որ սրածայր տանիք մը ունի : Անշուշտ զխտէք որ սուր ծայր ունեցող մարմինները ելեկարական հոտանուաը կը քաշն, իսկ հարթ մարմինները ընդհակառակը զայն կը վաննն :

— Ո՛հ, ո՛չ, չեմ գիտեր, զոչեց Մարի-Անթուանէթ : Լուի իշխանը արշիւղքուհիին զողորջուն և սառած ձեռքը բանց :

Կոյն պահուն տեղոյն փայլակ մը իր կապտախառն մանիշակագոյն լոյսովը սենեակը ողորկեց : Մարի-Անթուանէթ ճիշ մը արձակելով արքայորդին հրեց :

— Բայց ի՞նչ եղաք, աիկին, հարցուց այս վերջինը :
— Ո՛հ, այս փայլակին լոյսին մէջ՝ գեղնամ, ծիւրած և արիւնաթաթաւ երեցաք ինձ, կակաղեց իշխանուհին : Կարծեցի թէ ուրուական մըն է գէմս ցցուեր :

— Ծծմբախառն հուրին անդրադարձումն է այդ, և ես ձեզ կրնամ բացատրել թէ . . .

Ահարկու որոտում մը, որուն արձագանգը մոնչելով շարունակեց մինչև որ իր գազաթնակէտին հասնելով ըսկըսաւ ձեռուէն կորուել, երիտասարդին խօսքը բերանը թողուց՝ որ պողարիւնութեամբ կը պտորատուէր գլխական բացատրութիւն մը տալ իր արքայազն կողակցին :

— Օ՛հ, աիկին, սիրտ առէք, կ'աղաչեմ, ըսաւ պահ մը լռելէ վերջ . այս վախերը ոտակին թողունք . ֆիզիքական յուզմունքը ընտթեան պայմաններէն մի՛ն է : Եմանապէս հանդարտութեան վրայ ալ զարմանալու չէ . հանդարտութիւնն ու յուզմունքը իրար կը յաջորդեն . յուզմունքը հանդարտութիւնը կը խռովէ, հանդարտութիւնն ալ յուզմունքը կը պողեցնէ : Մէկ խօսքով, աիկին, փոթորիկ մըն է ասիկայ, և փոթորիկը արարչագործութեան ամենարեական և ամենայաճախ երևոյթներէն մի՛ն է : Ուրեմն չեմ հասկնար թէ մարդ ինչո՞ւ համար վախնայ անկէ :

— Ո՛հ, եթէ առանձին ըլլայի՝ թերևս վախ չպիտի գգայի, բայց մեր հարսնիքին օրը պայթող այս փոթորիկը միթէ ձեզի սոսկալի նշան մը չի՞ թուիր՝ որ անշուշտ կը միանայ այն նշաններուն՝ որոնք Գաղիա ոտք կոխելէս ի վեր գլխ կը հալածեն :

— Ի՞նչ կ'ըսէք, աիկին, նշանն'ը մի՛, ի՞նչ նշաններ, զոչեց արքայորդին սնուպաշտական վախով մը սկամայօրէն յուզուելով :

— Այո՛, այո՛, ստրատիելի՛, արիւնախառն նշաններ :
— Այդ նշանները ըսէք ինձ, աիկին, թերևս ձեզ զարհուրեցնող նշաններուն դէմ պայքարելու և զանոնք տապալելու երջանկութիւնը կ'ունենամ :

— Պարո՛ն, Գաղիա առաջին անգամ ոտք կոխած գիչերս Սթրագպուրկի մէջ անցուցի . գիս մեծ սենեակ մը սեղաւորեցին ուր ջահեր վառեցին գիչեր ըլլալուն պատճառաւ . արդ, այդ ջահերը վառուելուն պէս անոնց լուսովը արիւնաթաթաւ պատ մը տեսայ : Բայց և այնպէս պատերուն մօտենալու և այդ կարմիր ներկը աւելի մօտէն գիտելու արիւթութիւնն ունեցայ : Ամեղներու կոտորածը ներկայացնող գորգով մը ծածկուած էին պատերը : Ամէն կողմ վշտազեղ ակնարկներու մէջ յուսահատութիւն,

հրաբորբոք աչքերու առջև կոտորած, ամէն կողմ ար-
ցունք, Մայրերու աղաղակներ և հոգեվարքի խառնիխուռն
հանգիւններ կ'արձակուէին կարծես թէ այդ մարգարէական
պատէն՝ որուն վրայ կեդրոնացած աչքերս զիս պատրանքի
կ'ենթարկէին կենդանի երևոյթ մը տալով պատկերին :
Ո՛հ, սոսկումէս առ կտրած բնաւ չքնացայ . . . : Ըսէք
ուրեմն, ախուր նշան մը չէ՞ այս :

— Թերևս հին աստուծան կնոջ մը համար այդպէս
ըլլար, բայց ո՛չ թէ մեր դարուն մէջ ապրող իշխանու-
հիի մը համար :

— Պարոն, մայրս ինձ ըսաւ թէ ներկայ դարը աղէտ-
ներով լիցուն է ճիշդ մեր զլիտուն վրայ որոտացող ծը-
ծումբով, հուրով և աւերով լիցուն երկինքին նման :
Ո՛հ, ահա այս պատճառաւ շատ կը վախնամ, ահա այս
պատճառաւ ամէն նշան ինձ ազդարարութիւն մը կը
թուի :

— Տիկին, վտանգ մը չկրնար սպառնալ այն գահին
ուր մենք պիտի ելնենք : Մենք՝ թագաւորներս՝ ամպե-
րէն վեր դասի մը մէջ կ'ապրինք : Կայծակը մեր ոտքին
տակն է, և երբ ան երկրիս վրայ կ'իջնէ՝ մենք ենք զայն
արձակողը :

— Աւա՛ղ, ինձ այդպէս չգուշակեցին, պարոն :

— Ի՞նչ գուշակեցին ձեզ :

— Սոսկալի, սարսափելի գուշակութիւն մը :

— Ձե՞ր մասին գուշակութիւն :

— Աւելի ճիշդը՝ ցոյց տուին ինձ :

— Յո՞ւրջ տուին, ի՞նչ բան :

— Այո՛, տեսայ, տեսայ և այդ պատկերը մտքիս մէջ
տպաւորուած է, և անանկ մը ապաւորուած է որ ամէն
օր անոր վրայ խորհելով կը սարսափ ու գիշերը զայն
երազիս մէջ կը տեսնեմ :

— Ձեր տեսածը մեզի չէ՞ք կրնար ըսել . լռութիւն

պահանջուեցա՞ւ ձեռք :

— Ո՛չ, բան մը չպահանջեցին ինչ :

— Ուրեմն տեսածնիդ ըսէք :

— Մտիկ ըրէք . զայն նկարագրելը անկարելի կ'երե-
ւայ ինձ . գետնին վրայ հաստատուած կառախնատի մը
նման մեքենայ մըն էր ան՝ որուն վրայ պատշաճօրէն
կանգնած էին ելնարանի երկու սիւներ . այդ սիւներուն
մէջէն դանակի, կտրոցի կամ տապարի պէս բան մը կը
սպրդէր : Կը տեսնէի զայն, և տարօրինակը սա է որ
զլուխս այդ դանակին տակը կը տեսնէի : Դանակը երկու
սիւներուն մէջէն սահեցաւ և զլուխս մարմինէս զատեց :
Ահա՛ տեսածս, պարոն, ահա՛ ինչ որ տեսայ :

— Պարզապէս զգայարանքի խարկանք մը ունեցեր էք,
տիկին . գրեթէ բոլոր տանջանքի գործիքները գիտեմ ու-
րոնցմով մարդ կը սպաննեն, սակայն ձեր ըսածին պէս
գործիք մը վտտահ եղէք որ չիկայ և բնաւ չէ տեսնուած,
ըսաւ գահաժառանգը :

— Աւա՛ղ, թէ և ձեռքէս եկածը կ'ընեմ այս գարշելի
զաղտփարը մտքէս հանելու համար, բայց գժբաղդարար
չեմ յաջողիր, ըսաւ Մարի-Անթուանէթ անձկագին :

— Վերջապէս պիտի յաջողիք, տիկին, այս վայրկեա-
նիս ձեր քով սիրով ու գորովով առլցուած բարեկամ մը
և ամէն բան աչքն առնող պաշտպան մը ունիք, ըսաւ
գահաժառանգը իր կնոջը մօտենալով :

— Աւա՛ղ, գոչեց Մարի-Անթուանէթ աչքերը գոցելով
և իր թիկնաթոռին վրայ սանկով :

Գահաժառանգը քիչ մըն ալ մօտեցաւ իշխանուհիին,
այս վերջինը զգաց որ ամուսնոյն շունչը իր այսը կը
չոյէր :

Յանկարծ, նոյն միջոցին, գահաժառանգին մտած դուռը
կիտով բացուեցաւ ինամուտ ձեռքի մը կողմէ, և Լուի
Ժե.ի հետաքրքիր ու անկուշտ ակնարկը թափանցուեցաւ

այն ընդարձակ սենեակին թերատուեիրն մէջ՝ ուր միայն երկու ճրագ մնացած էր որոնք հազիւ ամոյն լոյս մը կը ափռէին հարկով ու սակեզօժ աշտանակներուն վրայ հոսեցնելով իրենց ճրագուն :

Ծեր թագաւորը բերանը կը բանար անշուշտ քաջաբերական բառ մը փոխադու համար իր թոռանը, երբ յանկարծ անբացատրելի շտապէն մը լուեցաւ պատին ետեւէն : Այս աղմուկին կայծակը յաջորդեց, օդը թնդաց, պարտախն հիմքերը դողացին և կանաչառոյխտակ բոցի սիւն մը դահավէժօրէն պատուհանին առջև իջաւ ու բոլոր ապակիները ճաթեցուց, խորտակելով նաև պատշգամին տակը գտնուող արձանը . սպա, սարաափելի ճեղք մը յօրինելով երկինք դարձաւ և օդերևոյթի մը նման ժարեցաւ :

Ջարդ ու փշուր եղած ապակիներէն գէպի սենեակ խուժող հովը երկու ճրագները մարեց : Գահաժառանգը, սարսափահար ու դողդուռն, շուարած ետ ետ քաշուեցաւ և պատին կռթնած մնաց : Իշխանուհին, կիսանուաղ, իր աղօթարանին վրայ ինկաւ և մահատիպ թմբութեան մը մէջ թաղուած մնաց :

Լուի Ժե., դողահար, կարծեց թէ երկիրն իր առջևը պիտի բացուի և Լըպէլը ետեւը ձգած իր ամայի սենեակը վերադարձաւ :

Նոյն միջոցին, հեռուն, վախկոտ թռչուններու երաժի մը պէս, Վէրսայլի և Բարիզի ժողովուրդը սկսաւ փախչիլ պարտէզներուն, ճամբաներուն և անտառներուն մէջէն ցիրուցանի, ամէն կողմ խիտ ու խիտ կարկուտէ մը հալածուելով : Կարկուտը պարտէզներուն մէջ ծաղիկները, անտառներուն մէջ տերեւները, դաշտերուն մէջ հաճարն ու ցորենը և շէնքերուն քարերն ու նրբին քանդակները հերձատելով՝ ստառապանքին վրայ աւերն ալ կը կ'աւելցնէր :

Իշխանուհին զլուխը երկու ձեռքերուն մէջ առած հեծեազին կ'աղօթէր :

Գահաժառանգը, ախուր և անզգայ կերպարանք մը ստացած, կտարած ապակիներէն սենեակ յորդող անձրևը կը դիտէր, զոր մերթ ընդ մերթ փայլատակող կայծակները հայելիի մը նման կը ցոլացնէին մթազոյն տախտակամածին վրայ կապոյտ ալիքներով :

. . . Սակայն առաւօտուն բոլոր այդ աւերն ու քառք ախուր երևոյթ մը ստացաւ : Նորածագ արևուն ճառագայթները սղնձագոյն ամպերուն վրայէն սպրդելով՝ զշերտան ամպրոպին համայնափխու աւերները ցոյց տուին :

Վէրսայլ անճանաչելի դարձեր էր :

Երկիրը ծծեր էր այդ ջրնեղը, ծառերը կուլ տուեր էին այդ հրեղէն հեղեղը . ամէն կողմ աղմտացիք էր . և ծառերը տա շանթ կոչուող հրատապ ճնշումներով օձէն ջախջախուեր, գալարուեր, կրացիք էին :

Լուի Ժե., որ անօրինակ սարսափի մը ենթարկուած, չէր կրցած քննաւ, առաւօտուն զինքը հպուեցընել հրամայեց իր անբաժան ծառային՝ Լըպէլի :

Թագաւորը սաջի օրուընէ ի վեր երբորդ անգամ բլլով հարսանեկան սենեակին դուռը բացաւ, և սարսուռ ստանելով Գաղիոյ ապագայ թագուհին՝ որուն աչքերուն եղբրքները քնատութենէ մանիշակագոյն ծիրով մը շրջաճակուած էին, և որ, տժգունած, աղօթարանին առջև ծունկ չորքած էր : Վերջապէս իշխանուհին քունը պահ մը դադրեցուցեր էր իր վիշտերը, և ստուռան արևուն մեղմ փողիտուումները կրօնական յարգանքով կուգային սփռել անոր սպիտակ գիշերազգեստին վրայ կապոյտ ու մաքուր անմեղաթեան գոյն մը՝ որը զիտողին աչքին հարսանեկան անաղբար գիշերուան մը ապօրինութիւնը ցոյց կուտար, եթէ մինչև իսկ այդ զիտողը թագաւոր ժօզ. Պալս., թիւ 28—61, հւս. Դ, Բ, հր. Ն. Բ.

մըն ալ ըլլար :

Սենեակին խորը, պատին առջև գրուած թիկնաթոռի մը մէջ կը հանգչէր զահաժառանգը՝ որուն մետաքսէ գուլպաներ հազած ոտքերը կ'երթային լողալ լճացած ջուրին մէջ : Անոր ճակտին վրայ մղձաւանջի քրտինքներ կը տեսնուէին դեռ :

Հարսանեկան մահճակալը թարմ ու չտկուած մնացած էր տակաւին և սաւանները չէին քրքրուած : Ծածկոցը չէր բացուած : Թաղաւորը հարսանեկան այդ երջանակաբաշխ օրօրանը տեսած էր այնպէս ինչպէս որ թողած էր նախընթաց գիշեր :

Լուի ԺԵ- յօնքերը պոստեց : Կակձեցուցիչ ցաւ մը, զոր մինչև այն ատեն չէր զգացած, կարմրած երկաթի մը պէս մխուեցաւ իր անձնասիրութեամբ սառած ճակտին մէջ, նամանաւանդ այսպիսի պարտադայի մը առջև՝ որ շուսայտութիւնը կը փորձէր դայն տաքցնել :

Գլուխը օրեց, հառաչանք մը արձակեց և, թերևս գիշերուանէն աւելի տխուր ու տարտախանար, իր սենեակը քաշուեցաւ :

ԿԶ

ԱՆՏՐԷ ՏԸ ԹԱՎԷՐՆԷՅ

Յաջորդ օրը, մայիսի 30ին, այսինքն այն սոսկալի գիշերուան հետեւալ օրը՝ որ Մարի-Անթուանէթի ըսածին պէս նշաններով և ազգարարութիւններով լեցուն էր, Բարիզն ալ իր կարգին իր ապագայ թաղաւորին ամուս-

նութեան տօնախմբութիւնը կը կատարէր : Հետեւաբա Բարիզցին սկսաւ հետզհետէ հաւաքուիլ ու խոնուիլ Լուի ԺԵ-ի հրապարակին մէջ՝ ուր տեղի պիտի ունենար հրախաղը, բոլոր մեծ հանդէսներու այս վերջաբանը՝ որուն քմժիծաղով մը կը նայի Բարիզցին, բայց որմէ չկրնար հրաժարիլ :

Տեղը աղէկ ընտրեր էին : Վեց հարիւր հազար հանգիսականներ դիւրաւ կրնային շրջադայիլ հոն : Լուի ԺԵ-ի հեծեալ արձանին շուրջը աստիճաններ շիներ էին, այնպէս որ հրապարակին բոլոր հանդիսականները առանց դժուարութեան պիտի կրնային տեսնել հրախաղը՝ զոր գետնէն տասը տասներկու ոտնաչափ բարձր դրած էին :

Բարիզցիները խումբ խումբ եկան : Լուրջ մարդիկ՝ մեծ քարեր, կանաչք՝ վանդակներ, խրամներ և շարժուն տախտակամաներ կ'ընտրէին :

Իրիկուան ժամը եօթնին մօտ, առաջին հետաքրքիրներուն հետ աղեղնաւորներու քանի մը խումբեր տեսնուեացան :

Հսկողութեան պաշտօնը Գաղիական պահպան զօրքը չկատարեց, որովհետև քաղաքին պաշտօնատունը չէր ուզած շնորհել աը Պիրօն մարաջախտ-գնդապետ գուքսին պահանջաց վարձքը :

Ժողովուրդը այս գունդէն թէ՛ կը վախնար, թէ՛ կը սիրէր զայն, որովհետև անոր իւրաքանչիւր անդամը թէ՛ կեսար մը, թէ՛ Մանտրէն մը կը նկատէր : Գաղիացի պահպան զօրքը, ինչպէս որ անողք՝ պատերազմի դաշտին վրայ իր պաշտօնը կատարելու մէջ, նոյնպէս ալ խաղաղութեան և պաշտօնի չեղած ատենը աւազակային սոսկալի համբաւ մը հանած էր : համազգեստ հազած ատենը զեղեցիկ, քաջ և անհամբոյր էր ան, և իր քաւուածքը հաճելի կը թուէր կանանց, իսկ այրերուն պատկառանք կ'ազդէր : Բայց արձակուրդի ատեն պարզ ան-

հասոներու նման ժողովրդեան մէջ ցրուելով՝ սոսկում կը պատճառէին բոլոր անոնց որոնց առջի օրը հիացում պատճառած էին, և կը հալածէին զանոնք՝ զորս յաջորդ օրը պիտի պաշտպանէին :

Աւատի, քաղաքը, իր հինաւուրց ատելութեան մէջ այդ անասակ և գեղի մարդոց դէմ գալու առիթը գտնելով, հազար սկուար Գաղիական պահակազօրքին չստլու համար իր քաղաքացի աղելնաւորները ուղարկեց սա մասնաւոր ասարկութեամբ թէ՛ պատրաստուած ընտանեկան հանդէսին մէջ սովորական պահապանը կը բաւէր :

Այն ատեն արձակուրդ ստացած պահապան զինուորները ի վերեւ յիշուած աղելնաւորներու խումբերուն մէջ խառնուեցան և իրենց ցոփութեան չափ խիստ կերպով վարուելով իրրեւ քաղաքացի զինուորական՝ բազմութեան մէջ մանր մուկներ անկարգութիւններու տեղի տուին, այն տեսակ անկարգութիւններ զորս իրենց հրացանին ըունովը, ոտքով ու արմուկով պիտի զսպէին :

Կանանց ճիչերը, քաղաքացիներուն մամուլները և փոքրիկ կարկանդակներ ու համեմուած հացեր՝ ձրիօրէն բամնող վաճառորդներուն արտունջները կեղծ աղմուկ մը կը պատրաստէին այն խոկական վայնատունէն ու զո՞ ու բո՞նէն առաջ՝ որ ընտանաբար տեղի պիտի ունենար երբ վեց հարիւր հազարնոց հեռաքրքիրներու վիթխարի բաղմութիւն մը այդ հրապարակին մէջ խռնուէր : Այնոնք ամէն տեղ այնպիսի խառնակութիւններ կը պատճառէին որ՝ իրիկուան ժամը ութին ժամանակները Լուի Ժե : հրապարակին վրայ փոխանակ գոհունակութեամբ աւլըցուած գողիացիի դէմքեր տեսնելու՝ կարելի կ'ըլլար զայրացկոտ դէմքերով տխրատեսիլ պատկեր մը նշմարել :

Բարիզի խիստ աճապօքող և միանգամայն խիստ ծոյլ ստամբակները տեղ մը նստելէ կամ շուտելով ելնելէ և ժողովուրդն ու քաղաքացին անկիւն մը գտնելէ վերջ,

աղնուականներուն և սեղանաւորներուն կառքերը եկան :

Մասնաւոր ճամբայ մը ցոյց տրուած չէր անոնց, այս պատճառաւ Մատչէն և Սէնթ-Օնօրէ փողոցներէն գուրս կ'ելլէին, և իրենց հեծեալները կ'առաջնորդէին նոր չէնքերը՝ որոնց պատուհաններէն և պատշգամներէն հրախաղը պիտի գիտէին հանգստութեամբ : Կառավարիչը հրաւիրած էր զանոնք :

Հրաւէր չընդունողները հրապարակին անկիւնը թուղուցին իրենց կառքերը և գրանիկնին առջևնին ձգած հետխոսն խառնուեցան համախմբուած բազմութեան՝ ուր մարդ քիչ մը ճարպիկ և շատ մըն ալ անփախկանկառ ըլլալով միայն տեղ կրնար գտնել :

Տեսնելու արժանի բան էր այն հեռաքրքիրներուն և բերտուքը՝ որոնք զիչեր ատեն մեծ վարպետութեամբ կը յարմարցնէին իրենց հպարտ քալուածքը գեանին խորհուփորդութեանը : Նորայէն ճամբուն վրայ, որ տակաւին աւարտած չէր, և որ օր մը Ռուայալ փողոց պիտի կաշուէր, հոս ու հոն խոր փոսեր կային որոնց եզերքը փլատակներ և փորուած հողերու կոյտեր գիզեր էին : Բոլոր այս փոքրիկ վտեմութիւնները՝ իրարմէ բարձր ալիքներու նման՝ իրենց յատուկ խումբերն ունէին այդ մարդկային ծովուն մէջ : Մերթ ընդ մերթ ալիք մը միւս ալիքներէն մղուելով բազմութեան խնդուքներովը կը փշրուէր :

Ժամը ութուկէսին ամենուն նայուածքը հրախաղին սաղաւարին ուղղուեցաւ : Ահա այդ վայրկեանէն սկսեալ ամէն ոք հոգ տարաւ իր տեղը չկորսնցնելու :

Ռիւճիրէի կողմէ պատրաստուած այս հրախաղը թօր ճարտարապետին վէրսայլի մէջ կազմակերպած հրախաղին հետ մրցելու սահմանուած էր, մրցում մը որ նախընթաց գիշերուան փոթորիկով աւելի կը դիւրանար : Բարիզ իմացած էր թէ վէրսայլի մէջ մեծ օդուտ մը քաղուած չէր թագաւորին առատաձեւութիւնէն՝ որ յի-

տուն հազար ֆրանք շնորհեր էր այդ հրախաղին համար, որովհետև առաջին փամփուշաները արձակուած պահուն իսկ հրախաղը անձրևէն մարեր էր, և Բարիզցիք՝ մայիս 30ի երեկոյան զեզեցիկ օդը տեսնելով՝ իրենց դրացի վէրսայցիներուն վրայ ճշմարիտ յաղթանակ մը տանելու հաճոյքը կանխաւ կը վայելէին :

Այդէ զատ, Բարիզ աւելին կը սպասէր Ռիւճիէրիի հին ժողովրդականութենէն քան թօրի նոր հաւթաւէն :

Սա ալ կայ որ, Ռիւճիէրիի յատակադիծը իր վէրսայցի արձևատակիցին յատակադիծէն նուազ հրապուրիչ և նուազ որոշ չըլլալով՝ ամէն ոք կը կարծէր թէ հրարուեստական նշանաւոր տեսարաններ պիտի ցուցադրէ ան : Դիցարանական այլարանութիւնը՝ որ ժամանակակից թագուհին էր այն ատեն՝ խիստ վայելուչ կերպով կը համապատասխանէր ճարտարապետական ոճին : Հրախաղին տաղաւարը կը ներկայացնէր հարսանեաց Աստուածին տաճարը . անպին սիւներու վրայ կառուցուած էր շէնքը՝ որուն անկիւնները կեցած էին արքայազուն իշխաններ որոնք նշանի մը կը սպասէին բոցիզէն հեղեղներ ժայթքեցնելու համար : Արքայազուն իշխաններուն դիմացը, պերճօրէն և վեհապանծ, կը բարձրանային Գաղիացուց չորս գետերուն խորհրդանիշը եղող սափորներ : Սափորներէն մին Լուսուր, միւսը Ռօնը, երրորդը Սէնը և վերջինն ալ Ռէնը կը ներկայացնէր, որոնք իրենց ջուրերուն փոխարէն կապոյտ, ճերմակ, կանաչ և վարդագոյն հուր պիտի ժայթքեցնէին սիւներուն բրնկած միջոցին : Միւստոյն ատեն ուրիշ մասեր ալ քրնկելով հիմնական տաճարին տանիքին վրայ անպին ծաղկամաններ պիտի ցուցադրէին :

Վերջապէս, դարձեալ նոյն տաճարին վրայ ուր այնքան իրարմէ տարբեր բաներ տեղի պիտի ունենար, լուզարդ բուրգ մը կը բարձրանար՝ որուն ծայրը երկրա-

զունդ մը կար : Այս երկրագունդը առանց ձայնի փայլակներ արձակելէ վերջ պիտի պայթէր որոտումի ձայն և զունաւոր փամփուշաներու խուրձեր պոթկալով զուրս :

Իսկ փունջը, այն պարտաւորիչ և կարևոր պահետը որմէ միայն կը դատէ Բարիզցին հրախաղի մը լաւ կամ դէժը ըլլալը, մեքենայէն անջատուած և գետին կողմը դրուած էր, արձանին վարօքը, պահետի փամփուշաներով լեցուն մարտկոցի մը մէջ, և այնպէս մը զետեղուած էր որ զայն դիւրաւ պիտի տեսնէին, որովհետև երեք չորս գրկաչափ բարձրութիւն ունեցող պատուանդանի մը վրայ կը կենար :

Անա Բարիզ ատնցմով կը զբաղէր : Բարիզցիները տասնը հինգ օրէ ի վեր մեծ զարմացմամբ կը նայէին Ռիւճիէրիի և իր օգնականներուն՝ որոնք իրենց լատերուն տխուր լոյսին մէջ՝ ուրուականներու նման կ'երթային կուգային և տարօրինակ շարժումներով կը կենային պատրոյգները և խանձերը զետեղելու համար :

Այսպէս թէ այնպէս, հրախաղը բրնկեցնելու համար կանթեղները տաճարին տանիքին վրայ բերուած ատեն, բազմութեան մէջ մեծ իրարանցում մը, ներքին փոփոխութիւն մը տեղի ունեցաւ, և ամենէն աներկիւղներէն քանի մը շարքեր ետ քաշուեցան, որով երկայն ճօճում մը յառաջ եկաւ բազմութեան միջև վերջին ծայրերը :

Կառքերը շարունակ կուգային և ամբողջ հրապարակը դրատել կը սկսէին : Չիբրը գլուխնին վերջին հանդիսականներուն ուսերուն վրայ կը բարձրացնէին, և ասոնք կը սկսէին անհանդիստ ըլլալ իրենց այս վտանգաւոր դերացիներէն : Իսկոյն բազմութիւնը խռնուելով կառքերուն ետեւ պարսպ տեղն ալ լեցուց, այնպէս որ, եթէ կառքերը ետ քաշուիլ ալ ուզէին՝ ալ անկարելի էր, որովհետև ամէն կողմէ չըջապատուած ու մարդկային պարիսպի մը մէջ բանտարկուած էին : Այն ատեն Բարիզ-

ցիւն գրաւիչ յանդգնութիւնն ու սրամտութիւնը երեւան եկաւ : Պատմենք թէ ի՞նչպէս : Տեսնուեցան Գաղիական պահակ զինուորներ, զործաւորներ, սպասաւորներ և ստամբախներ՝ որոնք կառքերուն ձեղուններուն վրայ կ'ելէին՝ ինչպէս որ նաւարեկները պատրանի մը և կամ ժայռի մը վրայ կ'ելնեն իրենց զոյուժիւնը ապահովութեան մէջ դնելու համար :

Նոր շէնքերուն առջև, սրոնցէ մին այսօր Գրիչեօնի պանդոկը և միւսը արքունի կարասիներու պահարանն է, հրաւիրեալներուն կառքերը երեք շարք կազմէր էին : Այս կառաչարքերէն մին պողոտայէն սկսելով մինչև Թիւլլըրի խոկ միւսը մինչև Շանդէլիդէ կ'երկնար երեք անգամ իր վրայ գալարուած հսկայ օձի մը պէս :

Կառքերուն երկայնութեանը, թախտառջիկ ուրուականներու նման ման կուզար հանդիսականներուն այն մասը՝ որուն առջև իրմէ առաջ հասնող կառքերը թումբ մը կանգներ և մեծ գրան մօտենալու առիթ չէին ձգեր : Մետաքսէ զգեստներ և նոր կօշիկներ հնգամ կիներ, ակմուկէն դուխնին ուռած, փոշելից սալայտուակէն անցնելու վախնալով, ժողովրդեան ալիքներուն կը զարնուէին, խոկ այս վերջինները անոնց փափկութիւնը կը ծաղրէին :

Ժամը իննին մօտ, այսինքն հրախաղը բրնկոսելէն քանի մը վայրկեան առաջ, կառք մը հասաւ և իր կարգին ուղեց մինչև կառավարիչին դուռը անցք մը բանալ իրեն համար : Բայց այս բանը, որ պահէ մը ի վեր դըժուարացի էր, նոյն միջոցին գրեթէ յանդուգն ձեռնարկ մըն էր՝ եթէ ոչ անկարելի : Կառքերու չորրորդ շարք մըն ալ սկսեր էր կազմուիլ որ առաջին երեք շարքերը հետզհետէ կը սեղմէր, և այդ շարքերուն մէջ գտնուող ձիերը բազմութենէն չարչարուելով՝ իրենց կայտառութիւնը կատաղութեան կը փոխէին, ամենաչնչին բանէ մը զըր-

զըռուելով աջ ու ձախ կից կ'արձակէին : Մէկուն ձեռքը կը սիւթուէր, միւսին ոտքը կ'արիւնէր, երրորդի մը կողը կը ջախջախուէր, բայց այս արկածները բազմութեան և աղմուկին մէջ կը կորսուէին, կ'անհասային, ինչպէս որ կաթիլ մը ջուրը կ'անհատի ովկիանոսին մէջ :

Բազմութեան մէջ իրեն համար ճամբայ բացող կառքին ետեւ զսպանակներուն երիտասարդ մը պլլուած էր, որ հետիտան քաշելով մէկդի կ'ընէր բոլոր ետքէն եկողները որոնք օգտուիլ կ'ուզէին այդ ճամբայ բացող մեքենայէն : Այդ երիտասարդը կարծես թէ կառքին զսպանակը միայն իր օգտին գործածելու համար գրաւած էր :

Երբոր կառքը կեցաւ, երիտասարդը առանց պաշտպան զսպանակը ձեռքէն ձգելու մէկդի նստուեցաւ : Այսպէս կրցաւ լսել կառքին մէջ գտնուողներուն խօսակցութիւնը :

ձերմակներ հագած կին մը, քանի մը բնական ծաղիկներով զարդարուած դուխը դուրս հանեց կառքին պատուհաններէն : Իսկոյն ձայն մը դոջեց :

— Ի՞նչ կ'ընես, Անտրէ, կատարեալ գաւառացի մըն ես եղեր, այդպէս դուրս մի կախուիր, ապա թէ ոչ, դիպուածաւ հոսկէ անցնող դիւղացիի մը համըրոյին կը հանդիպին այսօրդ : Չե՞ս տեսներ, մարդկային ծովու մը մէջ ենք : Չէ՞, ի՞նչ կ'ըսեմ, տիղմի մէջ, աղտեղի ճահիճի մը մէջ : Վրանիս դուխնիս ձեխ չընելու համար հոգ տանելու ենք :

Գիտասի աղջիկը դուխը կառքէն ներս քաշեց :

— Բայց հոսկէ բան մը չպիտի կրնանք տեսնել, պարոն, բաւ Անտրէ : Եթէ ձիերնիս սանկ կէս չըջան մը ընէին՝ կառքին գոնէն կրնայինք դիտել :

— Կառապա՛ն, կառքը դարձօ՛ւր, դոջեց սեպուհը :

— Ատիկայ անկարելի է, պարոն սեպուհ, պատասխանեց կառապանը : Տասը հօգի ճգմելու է կառքը դարձ-

նելու համար :

— Գեանին տա՛կը անցնին, ճգմէ՛ :

— Ի՛նչ կ'ըտէք, հայր իմ, ըստ փիլիպ :

— Նայինք ո՞վ է խեղճ ժողովուրդը ճգմել ուզող սա սեպուհը, գոչեցին քանի մը տարանալից ձայներ :

— Գեանին տա՛կն անցնիք, ահա ե՛ս եմ, գոչեց ար թալէրնէյ և կառքէն գուրս ծռելով շեղակի գրուած կարմիր ժապաւէն մը ցոյց առաւ :

Այն տոնները տակաւին ժապաւէնները կը յարգէին, մանաւանդ կարմիր ժապաւէնները, ուստի, մրմոսցին՝ բայց հետզհետէ ձայնարնին ցածցուցին :

— Կեցէք, հայր իմ, ես հիմայ կ'իջնեմ և կը նայիմ որ կարելի՞ է անցնելու միջոց մը գտնել, ըստ փիլիպ :

— Զգուշացի՛ր, եղբայր իմ, սոքի սակ պիտի երթաս . կտողած ձիւրուն վրնջիւնները չե՛ս լսեր :

— Մանչիւններ՛ը ըտէ, կրկնեց սեպուհը, կեցի՛ր, վար իջնել հարկ պիտի ըլլայ : Փիլիպ, ըտէ որ անցնելու ճամբայ բանան :

— Ո՛հ, հայր իմ, Բարիլը՝ ըտրովին մոպցեր էք, ըստ փիլիպ : Այդ հրամայական եղանակները ասնեով լաւ արդիւնք կ'ունենային, բայց այսօր թեցես չեն յաջողիր, և գուք ալ ձեր արժանիքը վտանգի ենթարկել չէք ուզեր անչուշտ, այնպէս չէ՛ :

— Սակայն երբ սա ստանակները գիտնան իմ ո՞վ ըլլալս . . . :

— Հայր իմ, կարծեմ թէ եթէ մինչև իսկ գահաժառանգն ըլլայիք՝ դարձեալ տեղերնուն չպիտի երերակային մանաւանդ այս միջոցին, որովհետեւ ահա՛ հրախաղը կը սկսի :

— Ուրեմն բան մը չպիտի տեսնեք, ըստ Անտրէ նեղացած :

— Է՛հ, յանցաւորը գո՛ւն ես, հպիւ չերկու ժամէ

զլտուզ գարգարանքը լինցաւ, սրտատխտանց սեպուհը :

— Եղբայր իմ, կարելի չէ՞ որ թեզ մտնեմ և քեզի հետ վարը, բազմութեան մէջ կենամ, հարցուց Անտրէ :

— Ինչո՞ւ չէ, փաքրիկ տիկին, այո՛, եկո՛ւր, գէր չես և քեզի համար տեղ մը կը տրուի, ըսին Անտրէի գեղեցկութենէն շանթահարուած քանի մը երիտասարդներ :

— Վար իջնել կ'ուզե՞ս, Անտրէ, հարցուց Փիլիպ :

— Այո՛, կ'ուզեմ, ըստ Անտրէ և առանց քայլարկին վրայ կոխելու վար ցատկեց :

— Ասանկ թող ըլլայ, ըստ սեպուհը, Բայց ես որ հրախաղէն չեմ ախորժիր և զայն կ'արհամարհեմ, տեղէս անգամ չեմ շարժիր :

— Լաւ, հոս մնացէք, մենք ալ հետուները չենք երթար, հայր իմ, ըստ Փիլիպ :

Արդարև, բազմութիւնը՝ երբ կիրք մը չզրգոէ զինքը՝ միշտ կը յարգէ այն գերագոյն թագուհին որ գեղեցկութեան կը կոչուի : Բազմութիւնը Անտրէի և իր եղբորը առջև բացուեցաւ, և բարի քաղաքացի մը՝ որ քարէ նոտարան մը գտեր էր իր ընտանիքին հետ՝ կնոջն ու աղջկանը մէջ տեղ բացաւ որպէս զի անոնց մէջ Անտրէ տեղաւորուի :

Փիլիպ քորջը ոտքին քովը նստաւ : Անտրէ մէկ ձեռքը անոր ուսին դրաւ :

Ժիլպէր անոնց հետեւեր էր և անոնցմէ չորս քառանդին կեցած՝ աչքերովը Անտրէն կը լսիէր :

— Հոս աղէ՞կ է, Անտրէ, հարցուց Փիլիպ :

— Շա՛տ աղէկ է, պատասխանեց դեռատի աղջիկը :

— Կը տեսնե՞ս գեղեցիկ ըլլալը ի՛նչ աղէկ բան է, ըստ դերկոմսը :

— Այո՛, այո՛, գեղեցիկ, շա՛տ գեղեցիկ, մրմնջեց Ժիլպէր :

Անտրէ այս խօսքը լսեց, բայց, և որովհետեւ ստորին

կարգի մարդու մը բերնէն կ'ելնէր ան, բնաւ ականջ չի կահեց, ինչպէս որ հնդկ սատուած մը ուշադրութիւն չընէր խեղճ Բարխայի մը կողմէ իր սաքին տակ դրուած ընծային :

Կէ

ՀՐԱԽԱՂԸ

Անորէ և իր եղբայրը հազիւ հատատուեր էին քարէ նստարանին վրայ, ահա առաջին փամփուշտները ամպերուն մէջ սողակեցան, բազմութեան մէջ մեծ ազաղակ մը ելաւ և ամենուէն ուշադրութիւնը հրապարակին կեդրոնը կատարուող տեսարանին վրայ կեդրոնացաւ :

Հրախաղը խիստ սքանչելի և Ռիւճիէրիի չքնած մեծ համբաւին արժանի յաջող սկզբնաւորութիւն մը ունեցաւ : Հիմենեան տաճարը սկսաւ հետզհետէ բրնկիլ և իսկոյն հրեղէն երեսներ ցոյց տուաւ : Ծափահարութիւնները օդը թնդացուցին, և այս ծափահարութիւնները, անմիջապէս վերջը, ահագնադղորդ կեցցէներու փոխուեցան՝ երբ արքայազուն իշխանին և սափորներուն բերնէն բոցեր արձակուելով՝ գոյնզգոյն հրեղէն վտակներ սկսան իրար խաչաձևել :

Անորէ, այլաչլած այս տեսարանին ի տես որուն նմանը քիչ անգամ կը տեսնէ մարդ, այսինքն եօթը հարիւր հազար հոգինոց խուռներամ բազմութիւն մը որ բոցեղէն պալատի մը գէմը վրայէ վրայ դիզուած ուրախութեան ձիւներ կ'արձակէ, չէր կրցած իր կրած տպաւորութիւնները ծածկել :

Անորէն երեք քայլ անդին, երկու ձեռքերովը իբր տղան վեր բարձրացնող բռնարկի մը ուսերուն ետին պահուած էր ժիլպէր, որ Անորէն կը գիտէր անոր նաչելու համար, և հրախաղը կը գիտէր՝ անոր համար որ Անորէ ևս հոն կը նայէր :

Ժիլպէր կողմնակի կը տեսնէր Անորէն . ամէն արձակուած փամփուշտ գեղանի աղջկան գէմքը կը լուսաւորէր և երիտասարդին սարսուռ մը կ'ազդէր . անոր այնպէս կը թուէր թէ ամէն ոք այդ պաշտելի արարածին կը նայէր և անոր վրայ կը հիանար :

Անորէ ո՛չ Բարխը, ո՛չ այդչափ բազմութիւն և ո՛չ ալ այսպիսի հանդիսական շքեղութիւններ տեսած էր . իբր միաքը պաշարող այս նորօրինակ տեսարանները կը սկսէին զինքը ապշեցնել :

Յանկարծ սարսափելի և անկապակից լոյս մը ելաւ և արամանիւնորէն գետին կողմը սրանալ սկսաւ : Հրախաղի սոււմը մըն էր որ մեծ աղմուկով պայթեր էր, որուն արձակած գոյնզգոյն հուրին վրայ կը հիանար Անորէ :

— Նայէ՛, Փիլիպ, որքա՛ն աղուօր է, ըսաւ Անորէ :

— Ատուած իմ, այս վերջին փամփուշտը գէշ ուղղութեան մէջ է, ճամբէն խտորեցաւ, փոխանակ կոտորէն ելնելու գրեթէ հորիզոնական սրացաւ, գոչեց և բխասասարդը խուժած :

Հազիւ թէ Փիլիպ իր մտահոգութիւնը կ'արտայայտէր, բոցեղէն փոթորիկ մըն է փրթաւ այն տեղէն ուր գըրուած էին փունջն ու հրախաղին պահեստի մասերը : Հարիւրաւոր որոտումներու ձայնին նմանող ձայն մը ամէն կողմէն իրարու արձագանգելով և իրար կտրելով հրապարակին վրայ գոռաց, այնպէս մը որ՝ կարծես թէ այդ բոցերուն մէջ կարմրած երկաթի կտորներ ըլլային : Ամենէն մօտը գտնուող հետաքրքիրները, տեսնելով որ յանկարծ վրանին խուժող բոցը երեսներ կ'այրէ, փախչիլ սկսան :

— Ի՛նչ շուտ կը վառեն փունջը, ի՛նչ շուտ կը վառեն փունջը, կը գոչէին հեռուն գտնուող հանդիսականները : Շատ կանուխ է, տակաւին վառելու չեն :

— Այո՛, կանուխ է, շա՛տ կանուխ է, կրկնեց Անտրէ :

— Ո՛չ, ո՛չ, փունջը չվառեցին, այլ արկած մը պատահեցաւ որ քանի մը բոպէի մէջ ծովուն ալիքներուն նըման տակնուլրայ պիտի ընէ այժմ հանդարտ տեսած սաբազմութիւնդ, ըսաւ Փիլիպ : Եկուր, Անտրէ, եկուր, կառքերնիս վերադառնանք :

— Ո՛հ, թո՛ղ որ քիչ մըն ալ տեսնեմ, Փիլիպ : Ի՛նչ գեղեցիկ տեսարան է :

— Անտրէ՛, բնաւ կորսնցնելիք ժամանակ չունինք : Եսեւէս եկուր : Գուշակած աղէտս է որ կ'իրականանայ : Մոլորած փամփուշտ մը չէնքը բրնկեցուց : Արդէն քիչ մը անդին իրար կը կոխտան : Սլալակները չէ՛ք լսեր : Ուրախութեան աղաղակներ չեն անոնք՝ այլ վշտի : Շո՛ւտ, շո՛ւտ, կառք դառնանք . . . : Պարո՛ններ, պարո՛ններ, ճամբայ բացէք, կ'աղաչեմ :

Եւ Փիլիպ թեք քրոջը մէջքէն անցընելով հօրը կողմը քաշքշեց զայն : Սեպուհը անհանգիստ սրտով, բայց ելած աղաղակներէն զգալով թէ փառնդ մը կար զոր ինքը չէր կրնար հասկնալ, գլուխը կառքին դռնակէն դուրս հանած՝ իր գաւակները կը փնտռէր :

Սակայն բանը բանէն անցեր էր և Փիլիպի գուշակութիւնն ալ կատարուեր : Փունջը՝ որ տասնը հինգ հազար փամփուշտ է կը բաղկանար՝ սթայթէր էր ամէն կողմ՝ սըբանալով և հետաքրքիրները հալածելով, նման այն հրաշէկ նիզակներուն որոնցմով ցուլամարտները առպարէզ կը մղեն կռուելու յատկացուած ցուլերը :

Հանդիսականները նախ զարմանաճար, ապա աճաբեկ, վարանման մէջ ընկրկեր էին : Հարիւր հազար հողինոց

քանակի մը անդիմադրելի երերտուքէն, ուրիշ հարիւր հազարնոց բանակ մը սեղմուելով՝ միևնոյն շարժումը հաղորդեալ էր իր ետեւ գտնուողներուն :

Շէնքին ատաղձները կը բրնկէին, աղաքներ կը ճգային, կանայք՝ հեղձամղձով թեւերնին կը բարձրացնէին, աղեղնաւորներ՝ կարծելով թէ պիտի կրնային պուշտողները լռեցնել և բռնութեամբ կարգ ու կանոն հաստատել՝ աջ ու ձախ հարուածներ կը տեղացնէին :

Բոլոր այս պատճառները իրար միանալով սա յառաջ եկաւ որ՝ Փիլիպի յիշած ալիքը թաթառի մը պէս հրապարակին անկիւնն ինկաւ՝ ուր կանգուն կիցեր էր : Երիտասարդը փոխանակ սեպուհին կառքին մօտենալու, հասանքէն քշուելով տարուեցաւ : Քշուեցաւ այն սարսուփելի և անդիմադրելի հոսանքէն՝ զոր սրքան ալ նկարագրենք՝ դարձեալ չպիտի կրնանք գաղտնիք մը տալ մեր ընթերցողներուն, որովհետեւ իւրաքանչիւրին ուժը վախէն ու ցաւէն տասնապատկուած, ընդհանուրին ուժովը կը սկսէր հարիւրապատկուիլ :

Փիլիպ, Անտրէն տարած միջոցին, ինքզինքը մարդկային ալիքին յանձներ էր : Բայց քան քայլ առնելէն ետքը, մօտեցած էր փոխաստականներու խումբի մը որ ձախ կողմը գտնուող Մատէն փողոցը կը դառնար : Այս խումբը ժիլպէրի հանդիպելով իր հետ քաշքշած էր զայն : Ռուսօի պաշտպաննալը Անտրէէն զատուիլը զգալով կը մռնչէր այն առիւծին նման՝ որ իր էզը կորսնցնելով յուսահատական աղաղակներ կ'արձակէ :

Անտրէ, Փիլիպի թեւին պլլուած, կատաղած ձիերէ լծուած կառքի մը առջևէն խոյս տուող խումբի մը խառնուեցաւ : Փիլիպ տեսաւ որ կառքը արագորէն և սպառնալից կերպով իր վրայ կուգայ : Ձիերուն աչքերէն կրակ և առնչէն փրփուր կը ժայթքէին : Կառքին առջևէն խոյս տալու համար գերմարդկային ճիգեր ըրաւ :

Յմէն ճիգ անօգուտ եղաւ : Երկտասարդը տեսաւ որ բազմութիւնը իր հօտին կը բացուէր և երկու կատողած կենդանիներուն զլուխները կ'երեւային : Այս հրէշացած կենդանիները ետեի երկու ոտքերնուն վրայ կանգնեցան և մութին մէջ իրենց որովայնին փայլուն ստեղծ փոստի տեսնելու փայլիւրց : Եզրայրը իր քրոջ թևը թող տալով և զայն վտանգաւոր ճամբէն կարելի եղածին չափ հեռու մղելով, իր կողմը գտնուող ձիուն սանձին վրայ խոյացաւ : Չին կեցաւ :

Անորէ իր եղբորը իշխանը, ծոխը և անհետանալը տեսաւ : ճիշ մը արծակեց, թեւերը երկնցուց, առաջ նետուիլ ուզեց, բայց մարդկային ալիքէն մղուեցաւ, շրջեցաւ, իր վրայ դարձաւ և ինկաւ : Պահ մը հոռքը առանձին մնաց հովէն տարուող գողգոջուն փետուրի մը նման, և զինքը տանող ոյժին զէմ իր մարմնոյն ծանրութենէն ուրիշ գիմազբութիւն մը չկրցաւ ընել :

Պատերազմի ավազակները խեղդող խլացուցիչ վայնատուններ, ձիերու վրնջիւններ ու երբեմն քարայաւ տակը և երբեմն ալ զիակներ փշրող անխնեքու անարկու ճայն մը, այրող ատաղձներուն կապոյտ բոցը, մոլեգին զինուորականներու քաշած սուրերուն ժանտատեսիլ փայլակը, մանուանդ տա արիւնաբուլիս անդունդը, անազապզինձէ արձանը որ շիկազոյն լուսով մը լուսաւորուած վեհապանծօրէն այս կոտորածը կը գիտէր, բոլոր ասոնք պէտք եղածէն շատ աւելի էին Անորէի միտքը մոլորելու և անոր ունեցած ուժը ձեռքէն խլելու համար : Ասկէ զատ, ախտանի մը ոյժն անգամ անդաւական պիտի զար այսպիսի աննաւասար կուսոյ մը մէջ, այսինքն մէկ հողի մը պարտաւոր էր ամէնուն զէմ կուսիլ և վերջն ալ մեռնիլ :

Անորէ արտաճակիկ ճիշ մը արծակեց : Չինուոր մը սուրը ճօճելով ճամբայ բացաւ իրեն :

Սուրը Անորէի գլխուն վրայ շողաց : Իրեզ սղջիկը ձեռքերը իրար միացուց այն նաւարեկեալին պէս որուն ճակատին վրայէն կ'անցի վերջին ալիքը, և « Աստուած իմ » գոչելով գետին փռուեցաւ :

Իշխողը մեռած կը սեպուէր :
Մէկը բամբ, ճանչցած և սրտին մէջ ամփոփած էր անոր անարկու և վն ճայնը : Ժիլպէր որ Անորէէն հետո մնացեր էր՝ գերմարդկային մաքառումներով կրցիր էր անոր մօտենալ : Անորէն կլլու ալիքին սակ ծռելով կանգնեցաւ, իբրև մարդէ մեքենայ մը Անորէի սպասնացող սուրին վրայ ցատկեց, զայն խրեց զարնել ուզող զինուորին ձեռքէն և ախրովը կոկորդը մխելով զայն գետին ատաղանց : Չինուորին քով ձերմակ զգետով դեռատի կին մը տարածուած էր գետնին վրայ, զայն բռնեց և հարցալի մը նման վեր առաւ :

Երբ իր սրտին վրայ զգաց այդ իրը, այդ զեղեցկութիւնը և թիրեռ այդ զիակը՝ հզարուութեան փայլակ մը իր զէմքը լուսաւորեց : սրպիտի կացութեան մը մէջ կը գտնուէր ինքը, զօրութեան և արիւթեան սրպիտի վն զանուէր մը կ'ընծայէր : Իր բոլը աննկելով նետուեցաւ այն մարդկային հոտանքին մէջ որուն հեղիւր իրօք կրնար պատ մը փլչնել : Խուժրին հետեւեցաւ, ինքզինքն ու զեռտախ աղջիկը տարաւ : քաղց, կամ սուկի ճիւղը՝ ինքնիր վրայ զլսորեցաւ : Յանկարծ հոտանքը խուժէ մը ջախջախուածի պէս կեցաւ : Այն ատեն Ժիլպէրին ալ սուքը գետնիւր դրաւ, և քաջորի երկատասարդը այն ատեն միայն Անորէի ճանրութիւնը զգաց : Գլուխը զարձուց հակնալու համար թէ ի՞նչ բան կ'արգիլէր զինքը յառաջանալէ, և տեսաւ որ կարտ-Մէջուլէն կրեք քայլ հետո կը գտնուէր : Այդ քարերու զանգուածը մարմիններու զանգուածը ճմլեր էր :

Ժիլպէր, այս անաղք գողորի միջոցին, մեռելական ժօզ. Պալս., բիւ 29—62, հաս.Ի, Բ.հր.Ն.Բ.

խոր քունով մը քնացող Անտրէն գիտելու ժամանակ ունեցաւ : Անտրէի սիրտը տրտիկէ դադրած, աչքերը գոցուած և դէմքը թառամող վարդի մը նման մանիշակագոյն գոյն մը առած էր :

Ժիւլպէր դայն մեռած կարծեց : Ինքն ալ ճիշ մը արձակեց, շրթունքը նախ անոր զգեստին և ձեռքին դպցուց, ապա անոր անդրաշուքինէն համարձակութիւն առնելով, համբոյրներով ծածկեց անոր պաղած դէմքը և գոց արտեւանունքներուն տակ ուռած աչքերը : Կարմրեցաւ, լացաւ և մոնչեց, իր հոգին Անտրէի կուրծքին մէջ թափանցել, անոր փոխանցել ջանաց և տարօրինակ զարմացում մը ունեցաւ մտածելով որ մարմարիտնն իսկ տաքցընելու կարող եղող իր համբոյրները անպօր կը մնային անոր դիակին վրայ :

Յանկարծ ժիւլպէր ձեռքին տակը անոր սրտին բարակ խիւնը զգաց :

— Ազատեցա՛ւ, ազատեցա՛ւ, ե՛ս ազատեցի զինքը, գոչեց սե ու արխնաթաթաւ ամբոխին խոյտ տալը տեսնելով և գոհերուն անէծքը, աղաղակները, հառաչանքները, օրհատական տագնապները մտիկ ընելով :

Թշուառ տղան, աչքերը կամուրջին կողմը անկած, կոնակը պատին կոթնցուց. աջ կողմը նայած չէր Դէպի աջ, կառքերուն առջևը գտնուողները՝ որոնք իրենց շուրջը անցած դարձածէն թէպէտ արգելափակուած բայց ուրիշներու չափ նեղուած չէին, շարժակիլ կը սկսէին . այն կողմը, քառասմբակ սուրացող կառքերուն առջևէն քսան հազարի չափ թշուառականներ ճմլուելով, ոտնակոխ ըլլալով, իրար կոխտելով խոյս կուտային :

Բնազդաբար պատերուն կը մօտենային, այն պատերուն որոնց զարնուողները կը ջախջախուէին, կը ճըզմուէին :

Այդ զանդուածը քշելով կը տանէր կամ խեղդամահ

կ'ընէր բոլոր անոնք որ Կարտ-Մէտլին քովը հասնելով ինքզինքնին ախիտով թնէն ազատուած կը կարծէին : Հարուածներու, մարմիններու և դիակներու նոր հեղեղ մը ժիւլպէրը ողողեց . մօտակայ երկաթէ վանդակապատներուն սլլուեցաւ :

Պատը փախչողներուն ծանրութիւնէն ձայն տուաւ :

Ժիւլպէր, շնչանգձ, քիչ մնաց ինքզինքը թոյլ պիտի տար, բայց զերագոյն ճիգով մը բոլոր ուժը հաւաքելով՝ թեւերովը Անտրէի մարմինը զրկեց և գլուխը դեռատի աղջկան կուրծքին կոթնցուց : Կարծես թէ պաշտպանել ուզածը խեղդել կ'ուզէր :

— Մնաս բարձ՛վ, մնաս բարձ՛վ, մրմնջեց անոր զգեստը համբուրելով :

Ապա յետին նայուածքով մը աչքերը վեր առաւ անոր օդնութիւն հայցելու համար :

Նոյն միջոցին տարօրինակ տեսիլք մը ներկայացաւ իր աչքին :

Մարդ մը, պարապ մնացած գետիններուն սահմանը ցուցնող քարի մը վրայ ելած, աջ ձեռքը պատին ազուցուած օղակի մը անցուցած, կարծես թէ փախչողներուն որոշ մէկ մասը ձախ ձեռքով մէկ կողմ կը հաւաքէր : Այդ կատարած ովկէանոսը անոր ոտքերուն տակէն անցած ատեն, երբեմն բառ մը կը հանէր բերնէն և երբեմն ալ շարժում մը կ'ընէր : Բազմութեան մէջէն ոմանք այս բառը լսելով և այս շարժումը տեսնելով կանգ կատնէին, ճիգ մը կ'ընէին, կը մաքատէին և այս մարդուն քովը երթալու համար սողին անդին կը սլլուէին : Ուրիշներ անոր մօտենալով՝ նոր եկողներուն երեք-կէտ եղբայրներ ըլլալը գողցիս կը ճանչնային, և այս երեք-կէտ եղբայրները բազմութեան մէջէն զիրենք ազատելու համար իրենց կ'օգնէին, գետնէն կը վերցնէին, կը բռնէին և իրենց կը քաշէին : Այսպէս փախտականներուն այս խմբ-

բակը հաւաքարար մաքառելով՝ կարող եղեր էին կամուրջի մը պէս բազմութիւնը իրարմէ զատելու և փախստական ներուն գէմ թումբ մը կանգնելու :

Ամէն վայրկեան, նոր մաքառողներ, որոնք կարծես թէ գեանէն կ'ելնէին, այդ սարօրինակ բառերուն արտասանուած և այդ եզական շարժումներուն կրկնուած միջոցին կ'երթային այդ մարդուն շուրջը կը հաւաքուէին :

Ժիլպէր յետին ճիգով մը ստքի ելաւ . զբոց թէ փրկութիւնը հանկէ պիտի գար, որովհետեւ պաշարի նսւթիւնն ու զօրութիւնը հո՛ն էր : Բոցերուն յետին մէկ նշույլը այդ մարդուն գէմքը լուսաւորեց : Ժիլպէր զարմացական տղազակ մը արձակեց :

— Ո՛հ, թող ես մեռնիմ, թող մեռնիմ, բայց ան ապրի, մամառ : Այս մարդը կրնայ զինքը ազատել :

Եւ վհնագոյն անձնուբացութեամբ մը զեռատի աղջիկը երկու ձեռքերուն վրայ բարձրացնելով դռնէն .

— Պարո՛ն տը Պալսամօ սեպուհ, օրինոր Սնորէ տը Թավէրնէյը ազատեցէ՛ք :

Պալսամօ այս աղաղակը լսեց, լսեց զայն որովհետեւ Ս. Գրքին ձայնին նման բազմութեան խորերէն կը զօչէր : Յետոյ մարդկային աննուած ալիքին բարձունքէն ձերմակ բան մը նշմարեց : Իր մարդիկը ամէն արդէք ստաթուր ընելով և նուազամ վիճակի մէջ Ժիլպէրի բազուկներուն մէջ հանդիսող Սնորէն բռնելով՝ զայն քառին տարին առանց զլուխնին անգամ զարձնելու ժամանակունենալու :

Ժիլպէր յետին բառ մը յօղել ուզեց . թերեւս այդ սարօրինակ մարդէն իրեն համար ալ օգնութիւն պիտի ինդրէր Սնորէի համար խնդրելէ վերջ, բայց առանց ուրիշ բան մը ընելու զօրութիւնն ունենալու՝ շրթունքները զեռատի աղջկան կախուած թեւին դպցուց և կարկամամ ձեռքովը զգիտէն կտոր մը պատուեց այն հրեշ-

տակին զոր դժոխք իր ձեռքէն կը խլէր :

Այս վեհ համբոյրէն և այս հուսկողջոյնէն հաք՝ երկատասարգին մեռնիլ կը մնար միայն, ուստի սրայքառելով իր անձը պաշտպանելու ճիգ չըրաւ . աչքերը գոցեց և մեռելակոյտի մը վրայ ինկաւ կիսամեռ :



ԿԸ

ՄԵՌԵԼԱԳԱՇՏԸ

Միշտ մեծ մրրիկներուն կը յաջորդէ հանդարտութիւնը, այն հանդարտութիւնը որ անարկու է՝ սակայն վերանորոգիչ :

Ժամը առտուան երկուքն էր, կամ երկուքին քանի մը վայրկեան կար :

Բարիզի վրայէն թաւալող ամպեր տժգոյն լոյսի մը ներքեւ խիտ ախուր կերպով կը պատկերացնէին աղէտալի գեանին խորգուփորգութիւնները՝ որուն փոսերուն մէջ անկում և մահ գտած էր փախչող ժողովուրդը :

Մերթ ընդ մերթ ձիւնաման մեծ ամպերուն հախ պահուրտող լուսնին լուսովը, հոս ու հոն, զատիվայրերուն վերեւ, խոռոչներուն մէջ, անկարգ զգիտանելով, սրունքնին պրկուած, ճակատնին կապուացաց և ի նշան ստակման կամ ազաջանաց ձեռքերնին երկնցուցած գլխակներ կը տեսնուէին :

Հրապարակին մէջտեղի տտաղձներուն փլատակներէն զեղին և ժահանոտ ծուխ մը կ'ելլար և պատերազմի տեսք մը կ'ընծայէր Լուի Ժե. հրապարակին :

Արիւնով սոսոզուած և տառապանքով լուացուած հրապարակին մէջէն գաղտնի և չարազ քայլերով տուեղներ կը ղեզեղէին՝ որոնք երբեմն կը կենալին, շուրջներին կը նայէին, կը ծոէին և խոյս կուտային . սասնք մեռելի գողեր էին որոնք ապուաներու պէս իրենց որսին քով հաւաքուէր էին . ողջերը չկրնալով կողոպտել մեռելները կողոպտելու եկեր էին : Ուշ մնացած ապուանական սուխները տեսնելով, գծոս և սնարեկ, խոյս կուտային : Բայց այս մեռելներու երկայն շարքին մէջ միայն գողերն ու զիչերապահները չէին շարժուները :

Լապտերներով մարդիկ կային և սասնք կրնային հետաքրքիր կարծուիլ :

Տխուր հետաքրքիրներ : Աւա՛ղ : Ասոնք մտատանջութեան մատնուած ծնողքներ ու բարեկամներ էին, որոնք իրենց եղբայրներուն, բարեկամներուն և տիրուէիններուն սուռն վերադառնալը չէին տեսած : Շատ հաու թաղերէ կուգային : Սոսկալի լուրը աւերիչ ամպրոպի մը պէս Բարիզի մէջ սարածուեր էր : Ամէն ոք, անձկութեան մատնուած, խուզարկութեան եկեր էր :

Այս տժգոյն գէմքերուն վրայ ցաւի և վիշտի ամէն տեսակ տպաւորութիւն կարելի կ'ըլլար նշմարել . հոն կը կարդացուէր իրենց ամենէն սիրելի անձին գլակը դրանողներուն յուսահատութենէն սկսելով մինչև բան մը չգտնողին տխուր կատկածը . այս վերջինները անձուկ ակնարկ մը կ'արձակէին միօրինակ և կարկաչելով հոսող գետին կողմը :

Կ'ըսուէր թէ Բարիզի քաղաքապետութիւնը արդէն բազմաթիւ դիակներ զետը նետել տուեր էր իր անխոհմութեան արդիւնքը պարտկելու համար, տնխոհմութեան արդիւնքը ըսինք, այսինքն քանի մը հարիւր հազար հոգիի մահը :

Ապա, երբ այդ ամուլ տեսարանը դիտելով իրենց

աչքը կը կշտանար, կը յտիրանար, ոտքերնին Սէն գետէն թըջած, սրտերնին անձկութեամբ նեղացած գետին զիչերային ախրածայն վաղքէն, լապտերնին ձեռքերնին կը մեկնէին հրապարակին քովի փողոցները խուզարկելու համար, ուր, կ'ըսէին թէ չատ մը վիրաւորներ ինքզինքնին քաշքշեր էին՝ եթէ ոչ օդնութիւն գտնելու՝ գոնէ իրենց տառապանքը պատկերացնող տեսարանէն խոյս տալու համար :

Եւ դժբաղդարար երբ դիակներուն մէջէն իրենց ցաւին առարկան, կրանցուցած բարեկամը կը գտնէին, աղէկաւոր զարմանքին կը յաջորդէր սպառակը, և անոնց հեծեծանքները՝ արիւնտուշտ տեսարանին մինչև մէկ նոր ատիճանը բարձրանալով՝ ուրիշ հեծեծանքներու արձագանգ կուտային :

Երբեմն հրապարակը յանկարծական ազմուկներով կը դղրտուէր : Յանկարծ կանթեղ մը կ'իյնար, կը ջախջախուէր . կենդանին մեռալին վրայ նետուած էր վերջին անգամ մըն ալ ողջագուրելու համար զայն :

Այս համայնակուլ գերեզմանոցին մէջ տակաւին ուրիշ ազմուկներ ալ կային :

Անկուճէն անդամներնին ջախջախուած, սուրը կուրծքերնուն անցած և կամ բազմութեան կողմէ ճգմուած քանի մը վիրաւորեալներ կը խորդային կամ աղերասնման հատաչանք մը կ'արձակէին : Լապտերով իրենց ազգականը կամ բարեկամը փնտաւորները անոնց քով կը վազէին և տեսնելով որ վիրաւորեալը չէին ճանչնար, կ'տեսնէին կը քալէին :

Սակայն, հրապարակին ծայրը, պարտէզին մօտ, զինուորական հիւանդանոցի պէս բան մը հաստատեր էր զբթախրա ժողովրդեան անձնուէր մէկ մասը : Իր շուրջը գտնուող բազմաթիւ գործիքներէն վիրաւորք ըլլալը հասկըցուող երիտասարդ մը՝ վիրաւոր այրերն ու կիները ի-

րեն բերել կուտար . զանոնք կը գործանէր, և աշնայիսկ խօսքեր կ'ընէր որ՝ աւելի պատճառին հանդէպ սնուցած իր ատելութիւնը կը յայտնէին անոնք՝ քան արգիւնքին հանդէպ սնուցած իր գութը :

Վիրաւորեալները իրեն բերող իր երկու հուժիւր և թիկնեղ օգնականներուն տնտեսագար կը գոչէր .

— Ասաջ ժողովուրդին զաւակները բերէք : Անոնք, գրեթէ միշտ ամենէն աւելի վիրաւորեալները և ամենէն նուազ զարգարուածներն ըլլալով, գիւրաւ կը ճանչցունին :

Ամէն մէկ զարմանումէ վերջ կծու շիշտով մը կըրկնուած այս խօսքին վրայ, ձեռքը լսպտեր մը թնամ տեղոյն ճակատով երկտասարդ մը՝ որ գիտականուն մէջ բաներ մը կը փնտռէր, երկրորդ անգամ ըլլալով զլուխը վեր առաւ :

Անոր ճակատն սկստող մեծ վէրքէ մը արիւնը կաթիլ կաթիլ կը վազէր . թեւին մէկը երկու կոճակներուն մէջջէն զգեստին մէջ անցուցած էր, և անոր քրտնաթոր դէմքը անգուլ ու խորին յուզմունք մը կը յայտնէր :

Այս վիրաւորեալ երկտասարդը վիրաբոյժին պատուէրը լսելով զլուխը վեր առած էր, ըսինք՝ Ան, ախաւր ակնարկ մը նետելով այն կտրատուած անգամներուն վրայ որոնց գոգչես հրճուանքով կը նայէր վիրաբոյժը, ըսաւ .

— Ո՛հ, պարոն, ինչո՞ւ գոհերուն մէջ խորութիւն կը գնէք :

— Որովհետեւ ոչ ոք պիտի խնամէ աղքատները եթէ ես անոնց վրայ չմտածեմ, բայց հարուստները միշտ վիրենք հագացողներ կ'ունենան, պատասխանեց վիրաբոյժը զլուխը վեր առնելով . Վսպտերնիդ վա՛ր առէք և սալալատակը գիտեցէք, հարկը աղքատի փոխարէն մէկ հարուստ մը կամ ազնուական մը չզրտի զանէք : Եւ այս աղէտին մէջ խի, մինչև անգամ զԱստուած տաղտկացնող բազում մը՝ ազնուականներն ու հարուստները իրենց

սովորական հարկը միայն վճարեցին, այսինքն հազարին մէկ :

Երկտասարդը լսպտերը մ'ընչև իր արիւնտ ճակատը բարձրացուց :

— Ուրեմն միայն ե՞ս եմ որ ուրիշ խել մը ազնուականներուն մէջջէն մուրթած, ձիւ կից մը ճակատս վիրաւորեց և փոսի մը մէջ իյնալովս ձախ թեւ ջախջախուեցաւ, ըսաւ երկտասարդ վիրաւորեալը առանց զայրանալու : Կ'ընէք թէ հարուստներուն և ազնուականներուն ալ հոգ կը տանիք, բայց ահա կը տեսնէք որ ես տակաւին զարմանուած չեմ :

— Դուք տուն ունիք, դուք բժիշկ ունիք . քանի որ կրնաք քաշիլ, կրնաք նաեւ տուն վերադառնալ :

— Զիս խնամելնիդ չեմ խնդրեր ձենէ, պարոն . քոյրս կը փնտռեմ, տանը վեց տարեկան գեղանի աղջիկ մը որ հակառակ ազնուական ըլլալուն անշուշտ մեծամ ըլլալու է : Ճերմակ զգեստ մը հագած էր և պարանոցին վրայ խաչէ մանեակ մը ունէր : Ան թէպէտ իրեն տունը և իր մասնուոր բժիշկը ունի, սակայն գթացէ՛ք և պատասխանեցէ՛ք, պարոն, փնտուած անձս տես՞ք :

— Պարոն, մարդասիրութիւնն է իմ առաջնորդս, ինքզինքս անոր կը նուիրեմ, և երբ վշտակիր ժողովուրդը վերականգնելու համար մահուան անկողնին վրայ կը ձգեմ ազնուակետութիւնը, հնազանդամ կ'ըլլամ իմ աստուծոյս՝ այսինքն մարդասիրական արդար օրինաց, ըսաւ երկտասարդ վիրաբոյժը տնդային սատակութեամբ : Այսօրուան պատճառ ըտլոր չարիքը ձենէ է . ձեր զեղծումներէն, ձեր հարստանարութիւններէն յստաջ եկած են անոնք, ուստի անոնց հետեանքին սպասեցէք : Ո՛հ, պարոն, քոյրերնիդ չսեսայ :

Եւ այս կայծակնաճար յանդիմանութեան վրայ, վիրաբոյժը իր դործին սկսաւ . կիլոճ կին մը բերեր էին ու

բուն երկու սրունքը կառքէ մը ջախջախուեր էր :

— Նայեցէ՛ք, աղքատնե՛րն են որ հասարակաց հանդէսներուն մէջ հարուստներուն սրունքները խորտակելու ատախճան կառքերնին կը վաղցնեն, պոռաց վերարոյժը խոյս տուող փրկիչին ետեւն :

Փրկիպ, սրտաբեկ, հիւանդանոցէն հեռացու իր ախուր խուզարկութիւնը շարունակելու համար : Պահ մը ետքը ցաւէն ինքզինքը կորսնցուցած, արտատուախառն ձայնով մը սկսաւ գոչել :

— Անորէ՛, Անորէ՛ :

Նայն միջոցին ծերունի մը յախուան կերպով անոր քովէն կ'անցնէր : Մոխրագոյն չուխայէ զգեստ մը հագած էր ան և ոտքին հաստիկ գուլպաներ անցուցած . աջ ձեռքովը գուազանի մը կը կռթնէր, մինչդեռ ձախովը իւզոտած թղթէ լագոսեր մը կը բռնէր :

Ծերունին փրկիպին հառաչանքը լսելով անոր կրած ցաւը հասկցաւ և մրմնջեց .

— Հէ՛զ երիտասարդ :

Բայց սրովհետեւ ինքն ալ նմանորինակ պատճառով մը հոն եկած էր՝ ատաւ քալից :

Ապա, մէկէն ի մէկ, մեծ վշտի մը առջևէն անցած ըլլալով և վշտացնալին մխիթարութիւն մը տալ չճանալուն համար կարծեա ինքզինքը կշտամբել ուղիւով, ըստ անոր .

— Պարո՛ն, ներեցէ՛ք որ իմ վիշտ ալ ձերինին խառնեմ, անոնք որ միւլնոյն հարուածով կը զարնուին՝ պարտին իրարու կռթնիլ չիցնալու համար : Ասկէ զատ . . . կրնաք ինձ օգտակար ըլլալ : Կ'երեւի թէ երկար ատենէ ի վեր խուզարկութիւն կը կատարէք որովհետեւ ճրագնիդ մարելու վրայ է, հետեւաբար հրագարակին ամենէն ալէտակի վայրերը գիտնալու էք :

— Այո, պարոն, գիտեմ :

— Լաւ, ես ալ գիտցող մէկը կը փնտռէի :

— Ուրեմն ամենէն առաջ մեծ փողը նայեցէ՛ք . հոն յիսուն գիակէ աւելի կայ :

— Յիսո՛ւն, Ատաւա՛ծ իմ, ի՛նչ կ'ընէք, հանգէսի մը մէջ այդչափ մարդ սպաննուի՛ն . . . :

— Դուք յիսունը շատ կը գտնէք, պարոն, բայց ես հազար գիականեր աչքէ անցուցի և տակաւին քոյրս չգտայ :

— Քո՞յրդ :

— Աս կողմն էր : Նատարանի մը քովը կորսնցուցի զինքը : Նատարանը գտայ, բայց քրոջս հետքը չգտայ :

Հիմայ փնտառուք մարակոցին քովէն պիտի սկսիմ :

— Բազմութիւնը ո՞ր կողմէ կ'երթար, պարոն :

— Նոր շէնքերուն կողմը, զէպի Մատէն փողոցը :

— Ուրեմն սա կողմը ըլլալու է :

— Այո՛, ստաի ես ալ այդ կողմերը փնտռեցի, բայց հոսանքը տարափելի էր : Իրաւ է որ մարդկային հեղեղը այդ կողմը կը քշէր ամէն ինչ, բայց ինքզինքը կորսնցնող խեղճ կին մը ուր երթալը չգիտէր և ամէն կողմէն փախչելու կը նայի :

— Պարոն, բազմութեան դէ՛մ դրած ըլլալը անհուա- նական է . խուզարկութեան համար փողոցներուն կողմը պիտի երթամ . ինձի հետ եկեք, երկուքնիս մէկ փնտա- րով թերեւ կը գտնենք :

— Դուք զո՞վ կը փնտռէք, գուակնի՞դ, հարցուց փրկիպ երկչոտութեամբ :

— Ո՛չ, պարոն, աղայ մը զոր գրեթէ որդեգրած էի :

— Ատանձին թոյլ տալու չէիք :

— Ո՛հ, տասնը ութէն ասանը ինը տարեկան երիտասարդ մըն էր : Ինքն իրեն տէրը ըլլալով, գալ ուղեց, ես ալ չկրցայ արդիւնը շինքը : Ասկէ զատ, սրո՛ւն միտքէն կ'անցնէր այս ստակալի աղէտը . . . : Ճրագնիդ կը մա- րի, պարոն :

— Այո՛, պարոն, դժբաղդարար :

— Հետս եկէք, ձեզ «կը լուստտորեմ» . . . :

— Շնորհակալ եմ, շատ բարեխիբս էք, սակայն ձեզ նեղութիւն չտամ :

— Ո՛հ, այդ կողմէն հոգ մի՛ ընէք, որովհետեւ ես ալ իմ կորուստս պիտի փնտռեմ : Երեզ՞ սղան սովորաբար ժամանակին տուն կը վերադառնար, բայց այս իրիկուն գոգցես նախազգացմամբ անոր կը սպասէի, շարայարեց ձերունին փողոցներուն կողմը յառաջանալով : Ժամը արդէն տասնը մէկն էր . կինս դրացիէ՛ մը իմացաւ հանդէսին աղէտալի վախճանը : Յուսալով որ կը վերադառնայ, երկու ժամ սպասեցի, բայց տեսնելով որ չեկաւ, մտածեցի թէ վատութիւն մը ըրած պիտի ըլլայի սոսանց լուր առնելու քնանալով :

— Ուրեմն տուներուն կողմը պիտի երթանք, հարցուց երխտասարդը :

— Այո՛, բազմութիւնը այդ կողմէն գացած է չըսի՞ք : Երեզ՞ սղան այդ կողմէն փախած ըլլալու է : Կաւտուացի մըն էր և ո՛չ քաղաքին սովորութիւնները, ո՛չ ալ փողոցները գիտէր : Թերեւս առաջին անգամն էր որ Լուի Ժե. հրապարակը կուգար :

— Աւա՛ղ, քոյրս ալ գաւտուացի է, պարոն :

— Ստակալի՛ տեսարան, մրմնջեց ձերը գլխիներու կոյս մը տեսնելով և գլուխը գամնորէն անդին դարձնելով :

— Սակայն հո՛ս փնտռելու ենք, ըսաւ երխտասարդը աներկիւղօրէն այդ մարմիններու կոյսին մօտեցնելով լսողները :

— Ո՛հ, նայած ատենս կը սարսուտ, որովհետեւ սպաւկանութիւնը ինձ ստակալ կը պատճառէ և պարզ մարդ մը ըլլալուս չեմ կրնար յաղթել այդ զգայման :

— Ես ալ այդ ստակալ մը ունէի, բայց աշակերտու-

թիւնս այս իրիկուն կատարեցի : Տեսէք, անա տասնըվեցէն տասնը ութը տարեկան պատանի մը . խեղուեր է, որովհետեւ վրան վէրք չեմ տեսներ : Փնտտածնիք ա՛յս է :

— Ո՛չ, պարոն, ո՛չ, իմ փնտտածս աւելի դեռատի է. մազերը սև են իսկ գէմքը սո՛գոյն :

— Այս իրիկուն որս՛ւն գէմքը սո՛գոյն չէ որ, մրմնջեց Փիլիպ :

— Ահա կարտ-Մէտլին տակը հասնա՛ք, իրենց կիանքը պաշտպանելու համար մաքսատղներուն նշանները տեսէք . պատերուն վրայի արիւնը, երկաթէ՛ ձողերուն վրայի լաթի կտորուանքները, վաղակապտոներուն ծայրը ծածանող զգեստի կտորները . քաղելու տեղ ալ չիկայ :

— Այս տեղն էր, այս տեղը, մրմնջեց Փիլիպ :

— Ի՛նչ ստակալի տեսարան :

— Ո՛հ, Աստուած իմ, հեկեկեց յանկարծ Փիլիպ :

— Ի՛նչ կայ, ի՞նչ կղաք :

— Սա գլխիներուն տակը ձերմակ լաթի կտոր մը կը տեսնեմ : Քոյրս ձերմակ զգեստ մը հագած էր : Լապտերնիք ինձ տուէք, պարոն, կը պաշտալիմ :

Արդարեւ Փիլիպ ձերմակ կերպարի կտոր մը տեսեր և բռներ էր : Լապտերը բռնելու համար միտին մէկ ձեռք ունենալուն՝ լաթին կտորը տոխպուեցաւ թողուլ :

— Անարէի հագած ձերմակ զգեստին նմանող կնոջ շրջազգեստի մը կտորն է որ երխտասարդի մը ձեռքին մէջ կը գտնուի, գոչեց Փիլիպ :

— Ո՛հ, Անարէ՛, Անարէ՛, աւելցուց երխտասարդը սպաս ալէկէզ հեծեծանք մը արձակելով :

Ծերուկն ալ իր կարդին անոր մօտեցաւ :

— Ա՛ն է, ա՛ն, գոչեց բաղուկները բանալով :

Այս բացազանչութիւնը երխտասարդին ուշադրութիւնը գրաւեց :

— Ժիլլէ՛րն է . . . , գոչեց Փիլիպ իր կարդին :

— Ժիւլպէրը կը ճանչնա՞ք, պարոն :

— Ժիւլպէ՞րը կը վնասուէիք :

Այս երկու բացազանչութիւնները միեւնոյն ժամանակ արձակուած ըլլալով՝ իրարու խառնուեցան :

Ծերունին Ժիւլպէրի ձեռքը բռնեց . սառեր, քար էր կարեր :

Փիլիպ երիտասարդին բաճկոնակը բացաւ, շապիկը մէկդի բրաւ և ձեռքը անոր սրտին դրաւ :

— Խէ՛ղճ Ժիւլպէր, ըսաւ :

— Սիրելի՛ տղաս, հառաչեց ծերունին :

— Շո՛ւնչ կ'առնէ, ո՞ղջ է . . . , ո՞ղջ է, գոչեց Փիլիպ :

— Ո՛հ, իրա՞ւ կ'ըսէք :

— Վստահ եմ, սիրտը կը բտրախէ :

— Ճշմարի՛տ է, պատասխանեց ծերունին : Օգնութի՛ւն, օգնութի՛ւն : Հոն վիրաբոյժ մը կայ, հո՛ն երթանք :

— Ո՛հ, օգնե՛նք այս տղուն, պարոն : Բայց քիչ մը առաջ օգնութիւն խնդրեցի այդ վիրաբոյժէն և մերժեց :

— Պէ՛տք է որ իմ տղաս խնամէ, գոչեց ծերունին զայրագին : Պէ՛տք է որ օգնէ մեզ : Օգնեցէ՛ք ինձ, պարոն, Ժիւլպէրը անոր քով տանելու համար օգնեցէք ինձ :

— Թեւ մը ունիմ և ան ալ ձեզի համար պիտի գործածեմ, պարոն :

— Ես ալ ձեր եմ բայց ո՛յժ պիտի առնեմ : Օ՛ն :

Ծերունին Ժիւլպէրի ուսերէն բռնեց . երիտասարդը անոր երկու սրունքը աջ բազուկին տակն առաւ, և սկսան յառաջանալ դէպի այն խումբը որոնք տակաւին կը նախագահէր վիրաբոյժը :

— Օգնութի՛ւն, օգնութի՛ւն, գոչեց ծերունին :

— Նախ ժողովուրդին զաւակները, պատասխանեց վիրաբոյժը իր սկզբունքին մէջ հաստատ մնալով և զինքը չըջպատողներուն հիացման արժանանալով :

— Բերածս ժողովուրդին զաւակներէն մին է, յարեց ծերունին ետանդիւ, և անմիջապէս արժանացաւ այն ընդհանուր հիացումին՝ որուն վիրաբոյժը իր բացարձակ ազատախօսութեամբը հազիւ կ'արժանար :

— Ուրեմն կիներէն ետքը . այրերը կիներէն աւելի կը դիմանան ցաւի, ըսաւ վիրաբոյժը :

— Պարզապէս արիւն տոնելու գործողութիւն մըն է, մէջ բերաւ ծերունին :

— Վա՛յ, դա՞րձեալ դուք էք, պարոն ազնուական, ըսաւ վիրաբոյժը պլուխը վերցուցած միջոցին ծերունիէն առաջ Փիլիպը տեսնելով :

Փիլիպ չպատասխանեց : Ծերունին կարծեց որ այս խօսքը իրեն ուղղուած էր :

— Ես ազնուական չեմ, ես ժողովուրդին զաւակն եմ, անուս ալ ժան-ժաք Ռուսօ է, ըսաւ :

Բժիշկը զարմացական ճիչ մը արձակեց և հրամայական չեչառով մը գոչեց իր շուրջիններուն :

— Տե՛ղ բացէք բնասէրին, տե՛ղ բացէք մարդկութեան բարերարին, տե՛ղ բացէք մեծ ժընէվցիին :

— Շնորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ, ըսաւ Ռուսօ :

— Արդեօք դժբաղդութիւն մը պատահեցաւ ձեզ, պարոն, հարցուց երիտասարդ վիրաբոյժը :

— Ինձի ո՛չ, բայց սա խեղճ տղո՛ւն նայեցէք :

— Ո՛հ, դո՛ւք ալ, դո՛ւք ալ ինձ նման մարդկութեան դատը կը պաշտպանէք, գոչեց բժիշկը :

Ռուսօ այս անակնկալ յարթանակէն յուղուած՝ հազիւ քանի մը անխմատ բտներ կրցաւ թոթովի :

Փիլիպ իր հիացած փիլիսոփային դէմը գտնուելով ապշած՝ մէկդի քաշուեցաւ :

Ռուսօի օգնեցին մարած վիճակի մէջ գտնուող Ժիւլպէրը սեղանին վրայ դնելու համար :

Այս միջոցին Ռուսօ վերաբոյժը գիտել սկսաւ : Գրեթէ ժիւղէրին սարիքը երիտասարդ մըն էր ան, որուն գիւմազիծերը ու է երիտասարդական խանդ չէին արտայայտէր : Երեսին մորթը ձերունիի մը մորթի նման խորշումած էր, տկար արտեանունքը զոյգ մը օձի աչքեր կը ծածկէին և բերանը լուսնոտի մը պրկուած բերնին կը նմանէր :

Թեւերը մինչև արմուկը սոթտած, ձեռքերը արխնով ծածկուած, մարդու կտորուանքներով շրջապատուած, սեւի՛ գործի վրայ գտնուող և խելքը միտքը իր արհեստին սուած գահիճի մը կը նմանէր՝ քան թէ իր տխուր և նուիրական պաշտօնը կատարող բժիշկի մը :

Սակայն Ռուսօի անունը անոր վրայ իր ազդեցութիւնը ունեցած ըլլալ կը կարծուէր, որովհետև ան պահ մը զազրեցուցած էր իր սովորական վայրագութիւնը՝ վերջապէս մեղմիւ ժիւղէրի թիւը բացաւ, կտաւէ կապով մը սեղմեց զայն և երակը ծակեց :

Արիւնը առջի բերան կաթիլ կաթիլ հոսեցաւ . քանի մը բոպէ հոքը երիտասարդական մարդը և սաստ արիւնը սկսաւ ժայթքել երակէն :

— Օ՛ն, աղատեցաւ, բայց խնամուելու՛ է կարօտ է, կուրծքը սարսափելի կիրողով ճզմուած է, ըսաւ վերաբոյժը :

— Ծնորձակալ եմ, պարօն, ըսաւ Ռուսօ : Գովելի է ձեր ընթացքը ո՛չ թէ ազքամներուն և հարուստներուն միջև խարութիւն գնելու համար, այլ անոր համար որ ժողովուրդին՝ զաւակները անձնուիրաբար կը խնամէք Պարօ՛ն, մարդիկ եղբայր են :

— Անգուականնե՞րն ալ, առատագիտանե՞րն ալ, հարուստնե՞րն ալ ալ՝ քսաններուն եղբայրն են, հարցուց վերաբոյժը, և իր սուր աչքերը արտեանունքի սակ խայլատակիլ սկսան :

— Այո՛, աղնուականնե՞րն ալ, առատագիտանե՞րն ալ,

հարուստներն ալ առատագիտանքի և գերազուրկեան մէջ աղքատներուն եղբայրներն են, պատասխանեց Ռուսօ :

— Ներքէք, պարօն, ես Պարթիի մէջ ծնած եմ, որ նեօշաթէլի մօտ կը գտնուի, ես ալ ձեզի նման Զուիցերիացի մըն եմ, որով քիչ մըն ալ սամկավար :

— Հայրենակից մըն էք ուրիմ, Զուիցերիացի՛ մը, գոչեց Ռուսօ : Կ'ազաչեմ, պարօն, անուննիդ ի՞նչ է :

— Անձանթ անուն մըն է իմ անունս, պարօն, անչուք անունը համեա մարդու մը որ իր կիանքը գիտութեան նուիրած է մինչև որ կարենայ օր մը ձեզ նըման մարդկութեան բարօրութեանը նուիրել : Անուն ժան-Բօլ Մարա է :

— Ծնորձակալ եմ, պարօն Մարա, ըսաւ Ռուսօ : Բայց այս ժողովուրդը իր իրաւունքը պաշտպանելու համար լուսաւորած աստիճիկ զայն վրէժխնդրութեան մի՛ գրգէք, որովհետև, եթէ ան վրէժ լուծել ուզէ, թերևս դուք իսկ ստակաք անոր վրիժառութենէն :

Մարայի զէմքին վրայ ստակալի ժպիտ մը ծրագրուեցաւ :

— Ո՛ն, երանի թէ մանուրնէս ստաջ այդ օրը տեսնուլու բարեբաղդութիւնն ունենայի, մընջեց :

Ռուսօ այս խօսքը բնեց և անոր արտասոց չեղան վախնալով այն ճամբորդին նման որ հետեւէն որոտման գոտալը բնելով կը վախնայ, ժիւղէրը բազուկներուն մէջն ստաւ և ջանաց ամսիլ զայն :

— Պ. Ռուսօին օգնելու յոժարութիւնն ունեցող երկու հոգի՛ չիկա՞յ ձեր մէջ, ժողովուրդին զաւակներէն երկու հոգի, գոչեց վերաբոյժը :

— Մե՛նք, մե՛նք, գոչեցին ստանի չափ ձայներ : Ռուսօ երկու հաճիտ բնականիրներ ընտրեց սրանք աղան իրենց բազուկներուն մէջ առին :

Ռուսօ մեկնած միջոցին փիլիպին քովէն անցնելով
- Ժօզ. Պալս., թիւ 29—63, հաս.Դ, Բ.հր.Ն.Բ.

ըսաւ .

— Առէք, պարոն, ա՛լ պէտք չունիա լապտերիս, առէք :

— Շնորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ, ըսաւ Փիլիպ և լապտերն առաւ :

Մինչդեռ Ռուսօ Բթաթրիէր փողոցը կը վերադառնար, երխտասարդը իր խուզարկութիւնը շարունակել սկսաւ :

— Հէ՛գ աղայ, մըմնջեց Ռուսօ ետին դառնալով և տեսնելով որ Փիլիպ արդեւքներով լեցուն փողոցներուն մէջ կ'աներևութանար :

Փիլիպ դողդղալով ճամբան շարունակեց, դողդղալով ըսինք, որովհետեւ այդ մեռելաբաշտին բարձունքներէն օձի աչքերէն պէս փայլատակող աչքեր ունեցող վերաբոյժին սուր և սպառնալից ձայնը կը գոռար .

— Ժողովուրդին գաւակները բերէք, միայն ժողովուրդին գաւակները: Վա՛յ աղնուականներուն, հարուստներուն և աւատասպաններուն :

կթ

ՎԵՐԱԳԱՐՁՐ

Մինչդեռ այս հեռուոր ազէտները իրարու կը յաջորդէին, Պ. տը Թավէրնէյ սեպուհը, գոգցես հրաշքով, առմէն վտանգէ զերծ մնացեր էր :

Սեպուհը անկարող մնացեր էր ո և է Փիլիպական դիմադրութիւն ընել այդ ամէն ըսն կործանող պորութեան դէմ: որը ոտքին տակն ինկող ամէն ինչ կը ջախջախէր,

կը փշրէր ու կը ճգմէր: Բայց, պաղարիւնութեամբ ու ճարպիկութեամբ, կրցեր էր գէպի Մատլէն փողոցը խուժող խուժրի մը կեդրոնին մէջ նետել և կանգուն պահել ինքզինքը :

Այս խուժրը, հրապարակին պատերէն ճմլուելով և կարտ-Մէտլին անկիւններէն խորտակուելով, վերաւորներու ու մեռելներու երկայն շարք մը կը թողուր իր երկու կողերուն վրայ, բայց ան, իր տասնին մէկը զո՞ տալով հանդերձ, յաջողեր էր իր կեդրոնը վտանգէն զերծ պահել :

Իսկոյն այրերու և կիներու խուժրերը ցրուելու էին հրապարակին վրայ և սկսեր էին ուրախութեան աղաղակներ արձակել :

Եւ այսպէսով Պ. տը Թավէրնէյ, իր շուրջը գտնուողներուն նման, ամէն վտանգէ զերծ մնացեր էր :

Մեր ըսածը անհաւատալի պիտի երևէր եթէ նախապէս բացայայտ կերպով նկարագրած չըլլայինք սեպուհին բնաւորութիւնը: Մեղքը չառնենք անոր, բայց, այս սոսկալի ճամբորդութեան միջոցին, միմիայն ինքնիզինքը մտածեր էր :

Սեպուհը խիտ թույլ չըլլալէ զատ, հանդարտաբարոյ մէկը չէր, և կեանքի մեծ ճգնաժամերուն, այս բնաւորութեան տէր անձինք, կեսարի սա առակը կը գործադրեն . — « Ըբէ՛ ինչ որ կրնաս ընել » :

Ուստի, չպիտի կրնանք ըսել թէ Պ. տը Թավէրնէյ բացարձակ անձնասիրութեամբ վարուեր էր, այլ՝ միտքը ցրուեր էր :

Բայց, վերջապէս ինքզինքը պողոտային սալայտակին վրայ գտնելով, ազատ ու համարձակ շարժիլը զգալով, մահուընէն ազատելով, մէկ խօսքով, իր անձին համար ա՛լ վախ չունենալով, զոհուակութեան բարձրագոյն աղաղակ մը արձակեց որուն յաջորդեց ուրիշ աղաղակ մը

Այս վերջին աղաղակը թէև ստաջինէն ակար՝ վշտի աղաղակ մըն էր :

— Աղջիկս, աղջիկս, գոչեց ան և թևերը վար ձգելով անշարժ մնաց, աչքերը տնդտնդից և անդօր, և մտասեւս, այս սարսափելի բաժանման պարագաները փնտուկ սկսաւ :

— Ինչո՞՞ք բարի հայր, մըմնջեցին քանի մը կիներ ցաւակցելով հօր մը աղեխարշ հտաւաչանքներուն :

Եւ սեպուհին շուրջը շրջանակ մը կազմուեցաւ, շրջանակ մը որ ցաւեղէ աւելի հարցափորձելու պատրաստուած էր :

Պ. որ թավէրնէյ ժողովրդային բնազդէն զուրկ էր. ցաւակցող մարդոց շրջանակին մէջ անհանդատութիւն ըզզաց. ճիգ մը ընելով զայն ճեղքեց և քանի մը քայլ առաւ դէպի վտանգավից հրապարակը ուրիշ հողիւ գուրս նստիւ էր ինքզինքը պահ մը ստաջ :

Բայց այդ քանի մը քայլերը հայրական սիրոյ անխորհուրդ շարժումներն էին, այն սէրը որ երբէք մարդու սրտին մէջ բոլորովին չմարիր :

Պատմենք ուրեմն թէ ի՞նչ կը մտածէր ան :

Նախ անկարելի էր վերտոին Լուի ժե. հրապարակը դառնալ : Մեծ արգելքներ և կտտորած կար հոն : Մարդկային ալիքը հրապարակէն կուգար և անմտութիւն պիտի ըլլար զայն ճեղքելու փորձ մը ընելը, ինչպէս որ յիմարութիւն պիտի համարուէր լուրջորի մը համար Շաֆուզի առջև Աէն գետին հոսանքն ի վեր լողալու փորձ մը ընելը :

Ասկէ զատ, եթէ նոյն իսկ գերբնական ձևը մը զինքը բռնելով այդ բազմութեան մէջ ալ գնէր, այդ հազարաւոր կանանց մէջէն ի՞նչպէս պիտի գտնէր իր փնտուած կինը և ի՞նչպէս պիտի կրնար վերասին իր օձիքը աղաւտել այն մահացու վտանգէն որմէ հողիւ թէ հրաշքով

սպասուէր էր :

Ապա ուրեմն իրեն կը մնար յուսալ : Սա յոյսը որ խաւարաչին գիշերուան ստուերոտ լապտերները կ'սփեղծէ :

Անորէ միթէ ֆիլիպի քովը չէ՞ր, միթէ անոր թիւը մտած չէր, էրիկ մարդու և եղբօր մը պաշտպանութեան սակ չէ՞ր գտնուէր միթէ ան :

Ինքը՝ սկսար և գողբոջուէն ծիրուծի մը ըլլալով կըրնար քաջքուիլ, կրնար մարդկային հոսանքէն տարուիլ, տախիայ պարզ բան մըն էր, բայց ֆիլիպ, այդ ետանդուն, հուժկու, կրակոտ երիտասարդը իրեն պէս գիւրապիտի քաջքուէ՞ր, պիտի քուէ՞ր, պիտի տարուէ՞ր : Փիլիպ պողպատէ բազուկներ ունէր, իր քրոջը պատասխանատուն էր, անկարելի էր որ զայն չազատէր ամէն վտանգէ. անշուշտ ֆիլիպ մտքատեր և յազթեր էր վերտանգին :

Սեպուհը, իբրև հաստէր, ֆիլիպը կը զարդարէր այն ամէն յատկութիւններով զորս հաստէրները իրենց համար կը մերժեն՝ բայց ուրիշին վրայ կը փնտուեն : Ետտէրին համար, զօրաւոր, վեհանձն և քաջ ըլլալը հաստէր ըլլալ է, այսինքն իրենց ոտխը, իրենց թշնամին, իրենց ախոյանը. ասանք ինքզինքնուն գործ ըրած են զոգնալ այն ամէն յատկութիւնները զորս կը կարծեմ թէ ընկերութեան վրայէն վերցնելու իրաւունքը միայն իրենց տրուած է :

Պ. որ թավէրնէյի սիրտն ու միտքը՝ այս մտածումներով տարուած՝ հեռոջնաէ հանդարտեցան. պահ մը նոյն իսկ եզրակացուց թէ անտարակոյս ֆիլիպ իր քոյրը ազատած էր, թէ թիւրևս քիչ մը ուշացիր էր իր հայրը փնտուելու և զայն ետ ազատելու համար, հետևաբար, հաւանական կրնար ըլլար որ իր սրբին Փօք-Չէրօն փոսցին համբան բռնած ըլլար՝ աղմուկէն քիչ մը այլայլ

լած Անտրէն տուն բերելու համար :

Ուստի կռնակը դարձուց և Գարուչիններու վանքին փողոցէն իջնելով Աշխարհակալութեան Հրապարակը հասաւ, այն հրապարակը՝ որ այսօր Զաղթութեան Հրապարակ կը կոչուի :

Բայց հազիւ թէ սեպուհը տունէն քսան քայլ հեռու կը գտնուէր, Նիգօլ, որ դրանք սեմին վրայ իբրև պահնորդ կեցած քանի մը շատախօս կիներու հետ կը շատախօսէր՝ գոչեց :

— Բայց պարսն փիլիպն ու օրինորդ Անտրէն ի՞նչ եղան :

Փախչողներուն առաջին մասը աղէտին ամէն մէկ մանրամասնութիւնը տարածեր էր Բարիզի մէջ : Ամէն ոք մտատանջութեան մատնուեր էր : Արհաւիրքն ու վախը չափազանցութիւններ կը գուգորդէր այս գէպքին և մահերն ու արկածները խոչորացոյցով կը գիտուէին մըտահոգ և անդոհալից աչքերէ : Ամէն ընտանիք իր անդամը ունէր այդ աղէտքին մէջ, ամէն ծնողք իր զուակը, ամէն եղբայր իր քոյրը և ամէն սիրահար իր սիրուհին, բայց ամենէն աւելի՝ սպասուհիներն ու սպասաօրները իրենց ազնուական տէրերն ու տիրուհիները ունէին հոն, որովհետև սարուկ դասակարգը տունը մնալու և այդ ճօխ հանդէսէն զրկուելու դատապարտուած էր :

— Ո՛հ, Աստուած իմ, տակաւին չվերադարձա՞ն, Նիգօլ, գոչեց սեպուհը քիչ մը յուզուելով :

— Ո՛չ, պարսն, ո՛չ, մարդ չէ տեսեր զանոնք :

— Թերևս ետևի ճամբաներէն գալու ստիպուած են, պատասխանեց սեպուհը հեազհեաէ գողգողալով՝ մինչդեռ իր արամարանական հաշիւները ջուրը կ'իյնային :

Ուստի սեպուհը ներս մտնել չհամարձակեցու և դրանք առջեւը՝ Նիգօլին քով մնաց : Նիգօլ կը հեծեծէր :

Հապրի թեւերը երկինք կը բարձրացնէր :

— Ո՛հ, ահա Պ. փիլիպ կուգայ, գոչեց Նիգօլ աննկարագրելի շեշտով մը, որովհետև փիլիպը առանձին տեսած էր :

Արդարև, փիլիպ, յուսահատ, գիշերուան մութին մէջ շնչապառ կը վազէր :

— Քոյրս հո՞ն է, գոչեց հեռուէն դրանք սեմին վրայ խուժը մը տեսնելով :

— Ո՛հ, Աստուած իմ, մրմնջեց սեպուհը գունատելով :

— Անտրէ՛, Անտրէ՛, ո՞ւր է Անտրէն, գոչեց երկտասարկը հեազհեաէ մօտենալով :

— Հոս չէ, պարսն փիլիպ, դայն չտեսանք, գոչեց Նիգօլ և սկսաւ հեծկտալ : Սիրելի՛ օրինորդ . . . , սիրելի տիրուհի . . . :

— Եւ դուն ձեռքերդ ծալելով ելար եկա՞ր, գոչեց սեպուհը անիրաւաբար բարկանալով :

Փիլիպ չպատասխանեց : Հօրը մօտեցաւ, արխնաշաղախ ճակատը և կոտրած թեւը ցոյց տուաւ անոր : Քաջարի երկտասարկին թեւը չորցած ճիւղի մը պէս քոփն է վար կախուեր էր :

— Չի՛ւնը զլիտու, հառաչեց ծերունին : Անտրէ՛, իսն՛դճ Անտրէս :

Եւ դրանք քովի քարէ նոտարանին վրայ ինկաւ :

— Ո՛ղջ կամ մեռած պիտի գտնեմ զայն, գոչեց փիլիպ տխուր գէմքով մը :

Եւ հեռանալով իրեններէն, տենդոտ ու ախնոտ, բազմութեան մէջ նետուեցաւ վերստին : Վազած միջոցին աջ ձեռքովը բաճկոնակին մէջ կը գետնէր անպորժածելի դարձած ձախ ձեռքը : Այս անգուռ ձեռքը զինքը կը նեղէր և բազմութեան մէջ մտնելու արդելք կ'ըլլար : Եթէ նոյն միջոցին իր քովը տաղար մը ունենար, զայն անմիջապէս պիտի կարէր ու պիտի բաժնէր մարմնէն : Այսքան անուշ էր իր քոյրը իրեն համար :

Փիլիպ այս երկրորդ գործին էր որ գտա Ռուսոն և ժիլպէրը այն տէրտալի մեկնապաշտին մէջ ուրիշ մենք անցանք պահ մը առաջ, նոս աս անգամուն էր որ դէմն ելած էր այն չարագէմ և արինաշաղախ վիրարոյժին, որը, օգնութեան հասնող բարերար ոգիէ մը աւելի՛ վերայիչալ կտորածին ներկայ գտնուող զօսխաջին ստատուայի մը կը նմանէր :

Փիլիպ զիշերուան մէկ մասը կուի թե՛ հրապարակին վրայ թախտակեցաւ :

Կարտ-Մէտոպլին պատերէն չէր կրնար զատուիլ, որովհետեւ ժիլպէր այն սեղէն գտնուած էր, և աչքը չէր հետոյնիս այն ճերմակ մուսըլլինի կտորէն՝ որ երխտատոր գին ձեռքէն գտնուել էր :

Վերջապէս, երբ ատուան տառջին նշոյնները արեւելքը կ'ստիկոծէին, Փիլիպ, տկարացած, աւելի տգոյն այն գիտնորէն որոնց մէջ իշխալու պատրաստուել էր, տարորինակ դալուիէ մը բռնուած, իր հօրը պէս յուսալով որ Անտրէն ասուն տարուած էր, Գօք-ձէրօն փողոցին ճամբան բռնեց :

Հետուէն տեսաւ իրեննորուն խմբակը :

Հասկցաւ որ Անտրէ երեսան ելած չէր, կանգ առաւ : Սեպուհը հետուէն գոյն ճանչցաւ :

— Ի՞նչ լուր, գոչեց խօսքը Փիլիպին ուղղելով :

— Քոյրս տակաւին չվերադարձա՞ւ, հարցուց Փիլիպ :

— Աւա՛ղ, ո՛չ, գոչեցին ամենքը միարեան :

— Լուր մը, տեղեկութիւն մը, յոյս մը չիկա՞յ :

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, գոչեց սեպուհը :

Փիլիպ քարէ նստարանին վրայ ինկաւ, սեպուհը վայրենի բացագոնչութիւն մը օրծակեց :

Նոյն միջոցին փողոցին ճայրէն կառք մը երեցաւ, գանդաղօրէն մօտեցաւ և տանը գիտացը կանգ առաւ :

Կառքին պատուհանին նստէն կը տեսնուէր մարած

կնոջ մը զլուխը՝ որ ծած և ուսին վրայ ինկած էր : Փիլիպ զայս տեսնելով՝ յանկարծ սթախեցաւ և այն կողմը ցատկեց :

Կառքին գուռը բացուեցաւ : Մարդ մը վար իջաւ : Անտրէի անկինդան մարմինը թեւերուն մէջ կը կրէր :

— Մեա՛ձ, մեա՛ձ զայն մեղի կը բերեն, գոչեց Փիլիպ ծունր դնելով :

— Մեա՛ձ, կակաղեց սեպուհը : Ո՛հ, պարոն, խընդրեմ, ըտէք, իրա՛ւ մեա՞ձ է . . . :

— Չեմ կարծեր, պարոններ, օրխորդ աը թալէրնէյ կարծեմ միայն մարտը է, պատասխանեց Անտրէն թեւերուն մէջ ունեցող մարդը հանդարտօրէն :

— Ո՛հ, կախա՛րդն է, կախա՛րդը, գոչեց սեպուհը :

— Պ. աը Պարտամօ կո՛մսը, մրմնջեց Փիլիպ :

— Ես ինքս եմ, պարոն սեպուհ, և չախալանց երջանիկ կը զգամ ինքզինքս որ այդ ստակալի բաղմութեան մէջէն կարող եղայ օրխորդ աը թալէրնէյը հանչուաւ :

— Ո՛ւր էր, պարոն, հարցուց Փիլիպ :

— Կարտ-Մէտոպլին մօտ :

— Ճի՛շտ է, մրմնջեց Փիլիպ : Սպաս, յանկարծ տխուր կատկած մը մխոքը պատրելով, տեղեցուց :

— Ստեպան զայն շո՛ւս ուշ բերիք, կոմս :

— Պարոն, այդ մտաին բացատրութիւն տալը զիւրին պիտի ըլլայ, պատասխանեց Պարտամօ ստանց շուրիւ և ամենայն պաղարիւնութեամբ :

Չնք օրխորդ բերու և ամենայն պաղարիւնութեամբ : Չնք օրխորդ կին աը Մալինի մարքելուհիին տունը տանիլ տուել էի : Տիկին աը Մալինի մարքելուհիին խմ բարեկամուէն հիներէս մին է և թագաւորին անտունբուն մօտը կը բնակի : Այս լարի տղան, զոր այժմ հոս կը տեսնէք,

ինձ կ'օգնէր օրիորդը բռնելու համար . . . Եկ'ւր, Գօն-
թուա :

Պալամօ այս խօսքին վրայ նշան մը ըրաւ և ար-
քունական համագրեատով մարդ մը իջաւ կառքէն :

— Այս բարի տղան, որ պալատին պատաւորներէն
մին է, օրիորդը ճանչցաւ, որովհետև իրիկուն մը զայն
միւլէթէն ձեր ազարանքը բերած է եղեր, շարայարեց
Պալամօ : Օրիորդը իր հրաշալի զեղեցկութեանը կը պար-
տի այս երջանիկ զուգարիպութիւնը : Հետս կառքն առի
և այժմ զայն ձեզ բերելու պատիւն ունիմ : Օրիորդ ան
թափէրնէյ ձեր կարծածին չտի հիւանդ չէ :

Եւ յարգանք խօսքը աւարտեց՝ դեռառի աղջիկը իր
հօրն ու Նիգօլի բազակներուն մէջ գնելով :

Անպուճը տաղին անգամն ըլլալով արցունք մը զգաց
արանանունքներուն եղերքը, և հակառակ ներքին զար-
մացումին, թողուց որ ան ազատօրէն սահի իր խորշո-
մած այսերն ի վար : Փիլիպ իր սղջ ձեռքը Պալամօի
երկնցուց և ըսաւ .

— Պարոն, հասցէս ալ գիտէք, անունս ալ : Կ'աղա-
չեմ, առիթ մը տուէք ինձ ձեր մատուցած ծառայութեան
հանդէպ մեր անհուն երախտապարտութիւնը յայտնելու :

— Դուք զիս հիւրընկալեցիք, պարոն, ևս ալ փոխա-
զարձ պարտականութիւն մը կատարեցի, պատասխանեց
Պալամօ և իսկոյն բարեւելով, զինքը ներս հրաւիրելու
պատրաստուող սեպուհին չպատասխանելու համար քանի
մը քայլ տուա :

Բայց յանկարծ ետին դառնալով ըսաւ .

— Ներեցէք, պարոն, քիչ մնաց պիտի մոռնայի տի-
կին ար Սափինի մարքիզուհիին ճիշդ հասցէն տալու
ձեզ . ձեռքան փողոցին մօտ, Սէնթ-Օնորէ փողոցին մէջ
կը գտնուի իր ազարանքը : Թերեւս օրիորդ Անտրէ փո-
խադարձ այցելութիւն տալ ուզէ՝ մարքիզուհիին, հետե-
ւաբար պէտք է որ անոր հասցէն գիտնաք :

— Պարոն, աղջիկս իր կեանքը ձեզի կը պարտի,
ըսաւ սեպուհը :

— Ասով կը պարծենամ և ինքզինքս երջանիկ կը
զգամ, պարոն, պատասխանեց Պալամօ :

Եւ այս անգամ Գօնթուան ետին ձգելով կառք նըս-
տաւ և աներեւոյթ եղաւ : Գօնթուա փիլիպի երկնցու-
ցած քսակը մերժած էր :

Գրեթէ նոյն միջոցին, կարծես Պալամօի մեկնումը
գեռատի աղջկան նուազումը դադարեցուցած ըլլար, Անտ-
րէ աչքերը բացաւ :

Սակայն քանի մը վայրկեան ևս համր, ընդարմա-
ցած և անարեկ նայուածքով մը մնաց :

— Աստուած իմ, արդեօք յիմարացած է, արդեօք
Աստուած կ'իտուի՞ն մեզ զարձուց զինքը, մոմօաց փիլիպ
Անտրէ այս խօսքը լսեց և զուլը ցնցեց . բայց տա-
կաւին չէր կրցած իր համրութիւնը թոթափել, գոգցեա
մտային յտիշտակութեան մէջ ըլլար :

Ուրի կեցեր և ձեռքին մէկը երկնցուցեր էր այն
փողոցին ուղղութեանը որմէ Պալամօ կը հեռանար :

— Օ՛ն, օ՛ն, ալ ասոնց վերջ տալու է, գոչեց սե-
պուհը : Փիլիպ, քրօջօ օգնէ որ տուն մանէ :

Երիտասարդը իր առողջ թեւը Անտրէի ներկայացուց :
Գեռատի աղջիկը միւս կողմէն Նիգօլի կոթնեցաւ և քնա-
չըջիկի մը քարուածքովը ընկարանէն ներս մտաւ ու
իր սենեակը առաջնորդուեցաւ :

Հոն հազիւ կրցաւ սա բառերը թոթովել :

— Փիլիպ . . . Հա՛յր իմ :

— Մեզ կը ճանչնայ, մեզ կը ճանչնայ, գոչեց փի-
լիպ :

— Անշո՛ւշտ, թոթովեց Անտրէ : Բայց ի՞նչ պատա-
հեցաւ ինձ, Աստուած իմ :
Եւ Անտրէ վերստին աչքերը գոցեց, բայց այս ան-

գամ ոչ թէ նուազելու, այլ հանգարա քունով մը նըն-
ջելու համար:

Նիզօլ զայն հանուեցուց և անկողին գրաւ:

Փիլիպ իր սենեակը քաջուած միջոցին բժիշկ մը գը-
տաւ հոն զոր խոնկնն Լա Պրի վազելով բերեր էր Անարէի
քիչ մը հանգարտիլը տեսնելով:

Բժիշկը Փիլիպի թեւը քննեց: Կոտորած չէր. սակորը
տեղէն խախտեր էր: Ճարտարութեամբ սեղմելով թեւը
կրած տեղը մղեց:

Այս գործը լիննալէն ետքը, Փիլիպ քրօջը մտաին
մտածող, Անարէի անկողինն քով առաջնորդեց բժիշկը:

Այս վերջինը գիտատի աղջկան բազկերակը քննեց,
չնշատութիւնը մտիկ քրաւ և մպտեցաւ:

— Ձեր քոյրը անմեղ տղու մը խաղաղ քունովը կը
ննջէ, թողէք որ քնանայ, ասպեա, ուրիշ բան մը ընել
պէտք չէ, ըսաւ բժիշկը:

Իսկ սեպտեմբ, իր տղան ու աղջիկը վերտոին գտած
ըլլալով, շատոնց ի վեր կը քնանար:

2

Պ. ՏԸ ԺԻՒՍԻԷՍ

Եթէ անգամ մըն ալ փոխադրութիւնը Բրաթթրիէր փո-
ղոցի առունը, ուր Պ. աը Սարթին վերջին անգամ իր
լրտեաը գրկած էր, մայիս 31ի առաւօտուն, թէրէզի
սենեակին մէջ, խշտեակի մը վրայ երկնցած պիտի գըտ-
նենք ժիլպէրը, որուն շուրջը հաւաքուած էին թիբէզ,

Ռուսօ և իրենց գրագիտները՝ որոնք ամբողջ Բարիզը սա-
կաւին գողագնող աճարկու եղելութեան այս զոնը կը գի-
տէին գլխիկոր:

Ժիլպէր, տեղոյն, արիւնալից աչքերը բացեր էր, և
ճանաչողութիւնը ստանալուն պէս, գլուխը վեր առնելով
հետադատիչ ակնարկ մը նետեր էր շուրջը, կարծես թէ
տակաւին Լուի Ժե. հրատարակին մէջ գտնուէր:

Նախ խորին յազմունք մը, յետոյ մեծ ուրախու-
թիւն մը ծրագրուեր էր անոր զէմքին վրայ, ապա
տխուր ամոլ մը գալով ուրախութեան նշոյլները ծած-
կեր էր:

— Մէկ տեղը կը ցաւի՞, բարեկամս, հարցուց Ռուսօ
հագածութեամբ անոր ձեռքը բռնելով:

— Ո՛հ, ո՞վ աղաւտեց զիս, ո՞վ իմ վրաս մտածեց,
ես որ աշխարհի մէջ մէկը չունիմ, թոթովից ժիլպէր:

— Զաւակիս, տակաւին մեռած չըլլալուդ համար ա-
զատեցար. ինկ քու վրայ մտածողը այն մարդն է որ
ամենուն վրայ կը մտածէ:

— Ըլլալիքը արդէն այս էր, միթէ անխոնձմութիւն
չէ երթալ այդպիսի բազմութեան մը մէջ մանկը,
մամուաց թէրէզ:

— Այո՛, այո՛, անխոնձմութիւն է, կրկնեցին գրա-
ցիները մխարբան:

— Է՛, տիկիներ, ուր որ վտանգը տեսնու չէ,
հոն երթալը անխոնձմութիւն չտեսուիր, և հրախաղ մը
տեսնելու երթալուն մէջ ալ ակնեքու վտանգ մը չկայ,
ընդմիջեց Ռուսօ: Այսպիսի պարտադատի մը մէջ երբ
վտանգ մը պատահի, մարդ անխոնձմ եղած չըլլար, այլ
գժբաղը. մենք որ այժմ կը քննադատենք, մենք ալ
նոյն բանը պիտի ընէինք:

Ժիլպէր շուրջը նայեցաւ և ինքզինքը Ռուսօի տան
մէջ տեսնելով խոսիլ ուզեց, բայց այս Տիլը անոր բեր-

նէն ու քիթէն արիւն հոսեցուց, որով ինքզինքը բոլորովին կորսնցուց :

Լուի ժե. հրապարակին վիրաբոյժը այս պարագան կանխած էր արդէն, ուստի Ռուսօ չվախցաւ արիւնահոսութենէն : Արդէն ասոր կը սպասէր և այս պատճառաւ իր հիւանդը ստանց սաւանի խշտեակի մը վրայ պառկեցուցած էր :

— Հիմայ այս խեղճ աղան կրնան պատկեցնել, ըսաւ Ռուսօ խօսքը թէրէզի ուղղելով :

— Բայց ո՞ւր :

— Հո՛ս, իմ անկողինիս մէջ, պատասխանեց Ռուսօ կորուկ շեշտով մը :

Ժիլլէր այս խօսքը լսեց, միայն թէ, այնքան տկար էր որ չկրցաւ անմիջապէս պատասխանել, բայց բռուն հիգ մը ըրաւ և աչքերը բանալով դժուարաւ թոթովեց :

— Ո՛չ, ո՛չ, վե՛րը :

— Սենեսակդ դառնալ կ'ուզես :

— Այո՛, այո՛, եթէ կը հաճիք :

Եւ չկրնալով լեզուովը լրացնել՝ աչքերովը աւարտեց վշտէն աւելի զօրաւոր յիշատակէ մը թելադրուած այս փափաքը՝ որ անոր մտքին մէջ իմացականութենէն աւելի զօրաւոր կ'ապրէր :

Ռուսօ, իբրև անհրեւոյթ և պարտկուած զգացումները կարգացող մարդ, անշուշտ հասկցաւ թէ ժիլլէր ի՞նչ բնել կ'ուզէր, ըսաւ :

— Շատ աղէկ, աղա՛ս, քեզ վեր կը փոխադրենք :

Եւ սպա խօսքը թէրէզի ուղղելով ըսաւ :

— Մեզի նեղութիւն պատճառել չուզեր :

Ասիկայ թէրէզի դործին եկաւ :

Որոշուեցաւ ժիլլէրը անմիջապէս իր շտեմարանին մէջ տեղաւորել :

Կէսօրին մօտ Ռուսօ եկաւ իր աշակերտին քով անցը-

նելու այն դադարի պահը՝ զոր սովորաբար իր սիրական բոյսերը դատաւորելով կ'անցընէր : Երեսասարդը քիչ մը ինքզինքը գտած ըլլալով, ցած և մարած ձայնով մը ծանօթ աղետալի արկածին մ'անրամտան պատմութիւնը ըրաւ :

Հրախաղը ինչո՛ւ համար վիտելու գոցած ըլլալը ծածկեց և ըսաւ թէ պարզապէս հետաքրքրութիւնն էր որ զինքը Լուի ժե. հրապարակը առաջնորդած էր :

Ռուսօ կասկածելու համար կախարդ ըլլալու էր : Բնաւ չզարմացաւ, ըրած հարցումները բաւ համարեց և համբերութեան խրատներ տուաւ անոր, Բնաւ չհօսեցաւ անոր ձեռքը տեսնուած այն ճերմակ կերպասի կտորին վրայ զոր Փիլիպ առած էր :

Երկուքն ալ այս խօսակցութեան մէջ թաղուեր էին՝ կըր թէրէզի ոտքին ձայնը լսուեցաւ դուրսէն :

— Ժա՛ք, Ժա՛ք, կը պոսար թէրէզ :

— Ի՞նչ կայ :

— Թերեւս իշխան մը եկած է որպիսութիւնս հարցընելու համար, ըսաւ ժիլլէր տխուր և հեզնական յայտով մը :

— Ժա՛ք, գոչեց թէրէզ յատճանալով :

— Լա՛ւ, ի՞նչ կուզեն ինէ :

Թէրէզ դռնէն ներս մտաւ :

— Պ. աը ժիւսիէօն եկաւ, վարն է, ըսաւ թէրէզ : Իմանալով որ գիշերը հրապարակին վրայ երևցեր ես, եկեր է հասկնալու թէ արդեօք վիրաւորուած ես :

— Բարեխիտ ժիւսիէօն, բացազանչեց Ռուսօ : Ազնիւ սիրտով մարդ մըն է ան որ իր ճաշակովը բարիքներու աղբիւրն եղող բնութեան կը մօտենայ : Հանդարտ կեցիք և տեղէզ մի՛ շարժիր, ժիլլէր, ես հիմայ կը վերադառնամ :

— Լա՛ւ, շնորհակալ եմ, ըսաւ երեսասարդը :

Ռուսօ գուրս ելաւ :

Բայց, հազիւ Ռուսօ մեկնամ, ինքզինքը քաշքշկով ուղղուեցաւ դէպի այն լուսամուտը՝ ուրիշ Անտրէի պատուհանը կը տեսնուէր :

Չափազօնաց դժուար էր անգօր, հաւտաարակչու-թիւնը կորսնցուցած և գրեթէ զազախարները տարտղնամ կրիտասարդի մը համար ակնոտակի մը վրայ ելնելը, լուսամուտին շրջանակը բանալը և տանիքին անկիւնին կըթընիլը :

Սակայն հազիւ թէ հանր հասած՝ աչքերը մթագնեցան, ձեռքերը դողաց, արիւնը շրթունքներուն վրայ ելաւ-վերտաին և պատուհանին վրայ ինկաւ յոգնարեկ :

Նայն միջոցին շտեմարանին դուռը բացուեցաւ և Ժան-Ժաք Ռուսօ Պ. աը Ժիւսիէօն ասջին ձգած ներս մտաւ :

— Զգուշացէք, սիրելի գիտնականս, գլուխնիդ ծակցէք հող . . . անջուներդ սեմ մը կայ : Ե՛ն, ի՛նչ ընենք, պալատ մը չէ մտած տեղերնիս :

— Շտորհակալ եմ, սուր աչքեր և զօրաւոր սրունքներ ունիմ, պատասխանեց գիտուն լուսարանը :

— Անա քեզի այցելելու կուգան, փոքրիկ Ժիլպէրս, բաւ Ռուսօ անկողինին կողմը նայելով : Ո՛հ, Աստուած իմ, ս՛ուր գացիր է : Անկողինէն ելիք է թշուտտականը :

Եւ Ռուսօ պատուհանը բաց անանելով՝ հօր մը յանդիմանութիւններուն գործնիւր տղղեցութիւնը չափեց ձեւեց իր մտքին մէջ :

— Օդ աննկու պէտք ունէի, կմկմաց Ժիլպէր մտրած ձայնով մը և դժուարաւ ոտքի վրայ կենալով :

Յանդիմանելը անկարելի էր : Գլուխը ամօթիւմ տղջկան մը պէս մէկ կողմ ծռած էր : Տատաղանքն ու վիշաը անսր դէմքը այլայլեր էին : Դեղնեք, մեռելի գոյն մը ստացիր էր :

Թիլպէր դժուարաւ կանդնեցաւ, և դրեթէ մարած ձայնով,

— Օգի պէտք ունի, ըսաւ :

Աշտամբել չէր ըլլար, վիշտը յայտնի կը նշմարուէր այն այլ շայլեալ գիմաց վրայ :

— Արդարեւ, ընդմիջեց Պ. տը Թիւսիէօ, սոսկալի կերպով տաք կ'ընէ հոս. տեսնեմ, պատահի, տեսնեմ բաղկերակդ, ես ալ բժիշկ եմ :

— Եւ շատերէն աւելի լաւ, ըսաւ Ռուսօ, ինչու որ թէ հոգւոյ թէ մարմնոյ մասին լաւ բժիշկ մ'էք :

— Այդքան պատիւ . . . ըսաւ Թիլպէր տկար ձայնով մը ջանալով աղքատիկ անկողնին մէջ ծածկուելու՝ աչքի չէր եկելու համար :

— Պ. տը Թիւսիէօ ուզեց քեզի այցելութեան գալ. ըսաւ Ռուսօ, և ես սիրով ընդունեցի անոր այս բարեկամական ցոյցը : Տեսնեմք, սիրելի բժիշկ, ինչպէս կը դանձք կուրծքը :

Ճարտար մարմնահատոր (anatomiste) ոսկրները շօշափեց, և ուշադիր ունկնդրութեամբ (auscultation) մը կուրծքին խորուշը քննեց :

— Յատակը լաւ է, ըսաւ : Բայց ո՞վ զքեզ այնքան ուժով բազկացը մէջ սեղմեց :

— Աւաղ, պարոն, Մահը, ըսաւ Թիլպէր :

Ռուսօ զարմանօք երիտասարդին նայեցաւ :

— Ո՛հ, ճմլուեր ես, տղաս, սատիկ ճմլուեր ես. բայց զօրացուցիչ դեղերով, օշով, անզբաղութեամբ ամենքն ալ կ'անցնին :

— Անդբաղութիւն չըլլար . . . անզբաղ չեմ կրնար մնալ, ըսաւ Թիլպէր Ռուսօի նայելով :

— Ինչ բեւեղ կ'ուզէ, հորցուց Պ. տը Թիւսիէօ :

— Թիլպէր հաստատաբար աշխատող մ'է, սիրելի պարոնս, պատասխանեց Ռուսօ :

— Հատ լաւ, բայց այսպիսի օրերու մէջ չեն աշխատիր :

— Ապրելու համար, ըսաւ Թիլպէր, ամեն օր կ'աշխատին, ինչու որ ամեն օր կ'ապրին :

— Ո՛հ, շատ բան չպիտի ուտես, և դեղաշրերդ սուղի չպիտի նստին քեզի :

— Երբան ալ սուղ չըլլան, պարոն, ըսաւ Թիլպէր, ես ողորմութիւն չեմ ընդունիր :

— Դու յիմար ես, ըսաւ Ռուսօ, և չափազանցութեամբ կը խորհիս : Ես քեզի կ'ընեմ որ պարոնին պատուէրներուն համեմատ սիտի վարուիս, ինչը որ պարոնը քու բժիշկդ պիտի ըլլայ քու կապամացդ հակառակ . . . : Կը հաւատամք, շարայարեց խօսքը Պ. տը Թիւսիէօի ուղղելով, որ զիս աղերսեց բնաւ բժիշկ չլինելու համար :

— Ինչո՞ւ :

— Ինչու որ դրամ պիտի վասնեմ, և ան ալ հստատ է :

— Բայց, պատասխանեց Պ. տը Թիւսիէօ որ մեծ ուշադրութեամբ կը դիտէր Թիլպէրի նշանակական և նրբաձև զլուրը, մարդ որքան հստատ ալ ըլլայ՝ կարելիէն աւելին չկրնար ընել . . . : Դու կը կարծես որ աշխատելու կարող վիճակի մէջ ես, դու որ պատուհանին առջև երթալուդ համար կէս ճանքան մնացիր :

— Ճշմարիտ է, միմաջ Թիլպէր, տկար եմ, գիտեմ :

— Քանի որ այդպէս ըլլալը գիտես՝ հանդիսա կեցիր, մանաւանդ բաբոյապէս : Այնպիսի մարդու մը հիւրն էք՝ որմէ բոլոր աշխարհ շատ բան կը յուսայ՝ բաց 'ի հիւրընկալութենէ :

Ռուսօ այն նշանաւոր մարդուն ցոյց տուած փափուկ քաղաքավարութենէն կարելի երջանիկ ըլլալով : անոր ձեռք բռնեց և սեղմեց :

— Եւ ապա, յարեց Պ. տը Թիւսիէօ, լմադատրին և արքայազուն իշխանաց հայրենի խնամոց առարկան պիտի ըլլաս :

— Ես, գուցէ Թիլպէր :

— Դու, այն երեկոյթին խեղճ զոհը : Պ. Արքայորդին, զոյժն իմանալու ատեն աղէկէզ աղաղակներ արձակեր է : Տիկին իշխանուհին որ Մարլի երթալու կը պատրաստուէր՝ Գրիանօն մնաց, որպէս զի թշուառաց մօտը գտնուի անոնց օգնելու համար :

— Ա՛հ, իրան, ըսաւ Ռուսօ :

— Այո՛, սիրելի փիլիսոփաս, և արքայորդուցն առ Պ. տը Սարգին զբաժ նամակը ամենուն բերանն է :

— Տեղեկութիւն չունիմ անոր վրայ :

— Պարզ և միանգամայն սրտազբաւ բան մ'է : Արքայորդին ա-

միւր երկու հազար սկուտ թռչակ ունի: Այս առտու ամսականը ուշ մնացեր էր: Արքայորդին խոսովեալ դիմեք կը շրջադայէր. շատ անգամ դանձապետան հարցուց, և երբ սա դրամն անար տարաւ՝ իշխանը իսկոյն Բարիզ զրկեց զան Պ. սը Սարգիսի երկտող նամակաւ մը՝ զոր քիչ մ'առաջ ինձ ցոյց տուաւ:

— Ա՛հ, այսօր Պ. սը Սարգիսը տեսա՞ք, ըսաւ Ռուսօ տեսակ մ'անհասկնալով թեամբ կամ մանաւանդ կասկածով:

— Այո՛, անոր քովէն կու գամ, պատասխանեց Պ. սը Ժիւսիէօ քիչ մը շփոթելով. հոնտեր պիտի ուզի անորմէ. այնպէս որ, յարեց կարի արտօրէն, տիկին իշխանուհին Վեքսայլ կը մնայ իւր հիւանդներն ու վիրաւորները ինամուր համար:

— Հիւանդներն ու վիրաւորները, ըսաւ Ռուսօ:

— Այո՛, միայն Պ. Ժիւսիէրը չէ որ կը տաճարի, ժողովուրդն այս անգամ մանական հարկ մը վճարեց այն օղէտարի պատահարին. վիրաւորներուն մէջ շատ արեւակամներ կան, կ'ըսեն:

Ժիւսիէր անբացատրելի մտատանջութեամբ մը, ցանկութեամբ մը մտիկ կ'ընէր. անոր այնպէս կը թուէր որ Անտրէի անունը ամեն վայրկեան ականաւոր բնութիւնասիրին (naturaliste) բերնէն պիտի ելնէր:

Պ. սը Ժիւսիէօ ոտք ելլաւ:

— Խորհրդակցութիւնն աւարտեցաւ, ըսաւ Ռուսօ:

— Եւ ասկէ ետք մեր գիտութիւնն աւելորդ է այս հիւանդին համար. պէտք է օդ, շափաւոր մաքրմամարդութիւն . . . անտառներու մէջ շրջադայութիւն: Աղէկ միտքս ընկաւ . . . կը մոռնայի . . .

— Ի՛նչ:

— Գալ Կիւրալէ Մարլիի անտառին մէջ սնկադիտական զննութիւններ պիտի ընեմ, հետո կու գաք, մեծանուն արուեստակիցս:

— Ա՛հ, պատասխանեց Ռուսօ, ձեր անարժան զարմացողն ըսէք:

— Է՛հ, ահա ձեր վիրաւորին համար շրջադայութեան գեղեցիկ առիթ մը . . . : Հետ բերէք:

— Այնքան հեռուն:

— Շատ մտ է. ասկէ զատ, կառքս զիս Պոմիկտը կը տանի, ձեզ կու գամ կ'անեմ. . . : Ի վերջէն իշխանուհին հոյս մանրէն կ'ենենք. հոնկէ Մարլի կ'երթանք: Ըսն մէկ վայրկեան սնկադ տնեբու կը պատահինք. վիրաւորներս մք ծալածոյ արժողները (plant) կը կրէ . . . երկուքնիս տունը կը քաղենք. իսկ նա կեանք կըստանայ:

— Ի՛նչ սիրուն մէկն էք, սիրելի զիւնականս, ըսաւ Ռուսօ:

— Բողէք որ ուզածս ընեմ, բրածիս մէջ շահ մ'ունիմ. դուք ընդարձակ երկասիրութիւն մը պատրաստած էք մամուռներուն վայր, զիւնեմ, և ես առ խորթապս կը քալեմ քիչ մ'անոց մէջէն, դուք զիս կ'առաջնորդէք:

— Ա՛հ, ըրաւ Ռուսօ, որուն գոհունակութիւնն ակամայ երևան ելաւ:

— Հոն, յարեց սնկադէտը, սղաքի նախաճաշ մը, հովանի, սղանչելի ծաղիկներ կ'ունենանք. որաչեցինք:

— Կիւրալէ օրն ի՛նչ զո արձալի զբօսանք: Որոշեցինք . . . : Ինձ կը թուի թէ տանն հինգ տարեկան էմ. ունենալիք երջանկութիւնս այժմէն կը վայելեմ, պատասխանեց Ռուսօ արդւո՛ւ մը գոհունակութեամբ:

— Գու ալ, փոքրիկ բարեկամս, քիչ չէ այն աստն սրունքներդ պնդէ:

Ժիւսիէր կերպ մը շնորհակալութիւն կակաղեց զոր Պ. սը Ժիւսիէօ շիմացաւ. երկու սնկադէտները Ժիւսիէրը բոլորովին իւր մտածմանցը և մանաւանդ իւր կասկածանալը թողուցին:

ԵՐԻՂՋՈՒԹԻՒՆ

Սակայն, մինչդեռ Առաս-իւր հիւանդը լիովին հանդարտեցուցած կը կարծէր, և թէրեզ բոլոր դժբաղձահայը կը պատմէր, թէ Պ. տը ժիւսիէս զիտնական բժշկին պատուէրներուն հորհրւ, ժիւլէր ամեն վտանգէ զերժ էր, այս ընդհանուր վտահումեան միջոցին, երիտասարդը առաջուանէ աւելի մծ վտանգի մէջ էր իւր յամառութեամբը և անդու մտախոհութիւններովը:

Առաս հոգւոյն խորը գիլիստիպայական արամախոհութեան մը վրայ հաստատուած կասկած մը չունենալու չափ վտահ չէր:

Ժիւլէրին սիրահարութիւնը զիտնալով, և բժշկական պատուէրներն արհամարհած միջոցին իսկ վրայ հասած բլլալով, մտածեր էր որ ժիւլէր մի և նոյն պակտութեանց մէջ պիտի իյնար՝ եթէ չափէն աւելի ազատութիւն տրուէր իրեն:

Աւստի Առաս իբրև բարի հայր ընտանեաց, ժիւլէրին շտեմարանին փակածը ամեն ժամանակէ աւելի մծ խնամքով գոցեր էր, և ռաւ թոյլտուութիւն ընելով որ պատահանին առջև երթայ՝ բայց դռնէն դուրս ելնէն իրապէս արդիւնելով:

Անկարելի է բացատրելը թէ այս հողացողութիւնը, որ ժիւլէրի շտեմարանը բանալի կը փոխէր՝ որքան զայրոյթ ազդեց ժիւլէրի և որքան դիտաւորութիւններ ծնաւ անոր մտքին մէջ:

Ինչ ինչ մտքերու համար հարկն արդիւնաբեր է: Ժիւլէր միայն Անտրէին վրայ, զան տեսնելու և գէթ հեռուէն, անոր ապաքինութեան յառաջդիմութիւնը դիտելու երջանկութեանը վրայ մտածեց:

Բայց Անտրէ պատահանը չէր երևեր: Միայն Նիլոյ յախճապակեայ սնախով մ'անոր դեղաջրերը կը տանէր, Պ. տը Գավէրունէյ փոքրիկ պարսէզի մէջ կը շրջէր քթախոտ քաշելով գողցես

զբախարանին արձնցքնելու համար. ահա ժիւլէրին տեսածը բոլոր ասոնք էին՝ երբ եռանդեամբ տեսնակներուն խորերը կը նայէր և աչքը թանձը պատերէն ներս թափանցել կ'ուզէր:

Սակայն բոլոր այն տեսածներէն սերտը քիչ մը կը հանդարտէր, վստան զի անոնցմէ հիւանդութիւն մը կ'իմացուէր և ոչ թէ մահ:

— Հոն, կ'ըսէր մտովի, այն գրանը կամ հողմարդիկն ետեը, կը շնչէ, կը հառաչէ և կը տառապի նէ զոր պաշտելու չար կը սիրեմ, նէ զոր եթէ տեսնեմ՝ քրտինքը ճակտես ի վար պիտի հոսի և անդամներս գողան, նէ որուն ձեռացը մէջն է իմ կ'անբա, և որով կը շնչեմ ես մեր երկուքին համար:

Ե. անիկ ետք, ժիւլէր իւր լուսամտակն այնպէս դուրս կը ծուր՝ որ հետաքրքիր շուն կը կարծէր որ մեկ ժամուան մէջ քան անդամ վար պիտի իյնար, և իւր վարժ աչքովը, միջնորոշեցը, տախտակամածները, տանը խորութիւնը կը չափէր, և անոնցմով ճիշտ յատակադիւ մը կը շինէր մտին մէջ. հոս սէտք է բնալի, կ'ըսէր, Պ. տը Գավէրուէն, հոն սէտք է բլլան մտանու խորութիւնը, ասդին գիլիստի յախճաքեալ տեսեալը, անպին Նիլոյին հարանը, ասդին գիլիստի յախճաքեալ տեսեալը, այն սրբաբնակած խոյը, վերջապէս միւս կողմը Անտրէի տեսեալը, այն սրբա վայրը՝ որուն դրանը վրայ ոք մ'ի ծուր մնալու համար կեանքը կու տար:

Այն սրբա վայրը ժիւլէրի դատողութեան համեմատ, մծ գետնայարկ մ'էր նախատեսելով մը, որուն վրայ ապակեոր միջնորմ մը կար, որ Նիլոյին ննջարանն բլլալու էր ժիւլէրի կարգադրութեանցը նայելով:

— Ահ, կ'ըսէր յիմարը իւր նախանձոր կատաղութեան ճշմարտութեան մէջ, երանի այն էակներուն որոնք իմ պատահանէս և անհրուսթիւն պատահանէն տեսնուած սպառնգլին մէջ կը քայլեն. երանի այն անտարբերներուն որոնք ծաղկոցին առաջին վրայ կը կռտնան: Հոն, արդարև մարդ կրնայ իմանալ անշուշտ օրիորդ Անտրէի արտունջն ու հառաչը:

Փափաքէն գործադրութեան անցնելու համար բաւական հեռաւորութիւն կայ. բայց ճոխ երևակայութիւնները ամեն ինչ իրարու կը մօտեցնեն, և ատու համար միջոց մ'ուզին:

իրականը կը դռնեն, դետերուն վրայ կամուրջ կը ձգեն և ընդնե-
րուն ելնարաններ կը դնեն :

Թիւլէր առ ջի օրերը միայն փախալ ունեցաւ :

Ապա մտածեց թէ այն պինջափ նախանձ ազգող երջանիկ անձինք
պարզ մահահանայունք էին որոնք իրեն նման սրունք՝ եր ունէին՝ պար-
տէզին հողին վրայ կոխելու, և թևեր ունէին դոները բանալու
համար : Մինչև անպամ աչքին ստջև բերաւ այն երջանկութիւնը
զոր կրնար զգալ՝ զողունի նահելով այն արդիւեալ տունը, ական-
ջը քսելով այն վանգախաոր փեղկերուն՝ որոյ մէջն կը լսուի ներ-
սի ձայները :

Թիւլէր միայն փախալեցով գոհ չէր ըլլար, անմիջապէս կը
գործադէր :

Ասկէ զատ ոյժն արագօրէն կը վերադառնար : Երիտասարդութիւնն
արդասաւոր և ճոխ է : Երեք օրէն ետք, ջերմին օգնութեամբ, Թիւ-
լէր ամեն ստենէ աւելի ուժեղ կ'զգար ինքզինքը :

Հաշուեց որ Ռուսո իւր վրայէն դոցիւրն համար, ամենամեծ
դժուարութիւններն մին հարթութեամբ էր, այն է դոնէն օրիորդ փը
Դավէլնի՝ յի աունը մտնելու դժուարութիւնը :

Արդարև, դուրը Գօք-Հէոսն փողային վրայ կը բացուէր, Թիւ-
լէր Բլադրիեր փողոցը փակուած ըլլալուն համար՝ բնաւ ուրիշ փո-
ղոց մը չէր կրնար անցնիլ. այս սրտաճառաւ բնաւ դուռ մը բա-
նալու պէտք չունէր :

Կը մնային պատահանները :

Իր շտեմարանին պատահանը քառասունևութ ոտք բարձրութեամբ
պատի վրայ կը նայէր ուղղորդ (à pic) :

Փարզ անպատճառ գլինհար կամ բոլորովին յիմար ըլլալու էր,
հոնկէ իջնելու վտանգն աչքն առնելու համար :

— Ո՛հ, ինչ զեղէցիկ հարողութիւններ են դոները, կը կրկնէր
ինքնիրեն բռները կրծելով, և Պ. Ռուսո փիլիսոփայ մ'ըլլալովն հան-
դերձ՝ վրայէս կը գոցէ՝ զանոնք :

Փականքը քաշել հանել՝ պիւրին է, այո, բայց ալ յոյս չմնար
հիւրընկալ տունը վերադառնալու :

Լիւսիկէն փախչիլ, Բլադրիէր փողոցէն փախչիլ, Դավէլնէն

փախած ըլլալ, միշտ փախչիլ, սակէ ուրիշ բան չէր հետեւեր՝ այլ
չպիտի համարձակեր մէկու մը երեւը նայելու՝ առանց կշտամբանք
մը լսելու, իւր ասիրախատութեանը կամ թեթևամտութեանը հա-
մար :

— Ոչ, Պ. Ռուսո բան մը չպիտի զիանայ :

Եւ լուսամուտին վրայ կ'քած՝ Թիւլէր կը շարայարէր ,

— Սրունքներով և ձեռներով որոնք ազատ մարդու մը բնական
դորձիքն են, կղմնարներուն կը սլլալով, և խողովակին վրայէն որ
շատ նեղ է արդարև՝ բայց ուղիղ է, և հետեւաբար երկու կէ-
տերու մէջտեղի ամենէն կարճ ճանքան՝ կը հասնիմ, եթէ հասնիմ,
իմիսիս զուգահեռական լուսամուտին :

«Արդ այն լուսամուտը սանդուխին լուսամուտն է :

«Եթէ չհասնիմ՝ պարտեզը կ'իյնամ, ձայն կ'եղնէ, ձայնն առ-
նելով սնէն դուրս կ'եղնեն, զիս կը վերցընեն, զիս կը ճանչան. զեղեցիկ,
ընտիր, բանաստեղծական մահ մը կ'ուենեմ. վրաս կը
ցաւին, քանի սքանչելի է այս ամենը :

«Եթէ հասնիմ, ինչպէս որ ամեն մասամբ սոյն կարծիքէն եմ,
սանդուխին լուսամուտին ներքէն կը սրանամ. գատիկոններէն բոկ-
ոսն կ'իջնեմ՝ մինչև առաջին գատիկոնը որ պարտեզին վրայ պա-
տահան մ'ունի, այսինքն գետնէն տասնհինգ ոտք բարձր : Ա՛ստ-
նում. . . :

«Ա՜նղ, ոչ ոյժ ունիմ ոչ զիւրակորութիւն :

«Արդարև պատիկն ներքև ծառեր կան որոնք ինձ կրնան օգնել. . . :

«Այո, բայց այն ծառերուն որդնհար ձողերը կրնան կոտրիլ.
Ես ալ դարահոս կ'ըլլամ չէ թէ ընտիր և բանաստեղծական մա-
հաւամբ մը՝ այլ վրաս զլուխս բուռով ծածկուած, պատուտած, ա-
մօթահար սպաննուելով, և տանձի գողի մը տեսքով, քանի զգու-
րէ է ասոնց վրայ մտածելը . Պ. տը Դավէլնէյ դռնապանին պի-
տի ըսէ որ զիս լաւ մը ձեծէ, կամ Լա Պրէիին՝ որ ականջներէս
քաշէ :

«Ոչ, հոս քրան լար ունիմ որ պարան մը կը կազմն միանալով :

Պ. Ռուսոի սա սահմանին համեմատ թէ՛ շիղերը որայն կը կազ-
մն :

«Տիկին Թեզգի բոլոր լարերը զիշերուան մը համար փոխ կ'առնեմ, իրար կը կապեմ, և անդամ մ'որ առաջին դատիկոնին գերերջանիկ պատուհանը ձեռք ձգեմ՝ սարանը փոքրիկ պատշգամին կամ նոյն խակ կապարեայ կոնքին կը կապեմ, և պարտեզը կը սահլամ»:

Թիւլէր խողովակը աչքէ անցուց, լարերն իրարմէ զատեց շափելու համար, աչքով բարձրութեան չափն չառաւ. ասոնք ընկէն ետք՝ ինքզինքն ուժեղ և յանդուղն դտաւ:

Բոլոր այն լարերը հաստատուն պարան մ'ընկելու կերպով հիւսեց. վերնայարկին մէկ դերանէն կախուելով ոյժը փոփոցեց, և այն ըրոժ ճիգերուն ատեն անդամ մը միայն արինն փոխած ըլլալուն վրայ կարի ուրախ՝ զիշերային արշաւանաց որոշումն ըրաւ:

Պ. Ժաքը և Թեզգը լաւ մը խարելու համար, սուտ հիւանդ եղաւ և ժամը մինչև երկուքը անկողին մնաց. այն միջոցին ըստ սովորութեան Ռուսօ շրջադայութեան կիւնէր և երեկոյէն թռաջ շէր վերագառնար:

Թիւլէր մինչև առտու քնանալու փափաք մը յայտնեց:

Ռուսօ պատասխանեց թէ նոյն իրիկունը քաղաքն ընթրելով, շատ ուրախ էր Թիւլէրն այնպիսի ապահովիչ տրամադրութիւններու մէջ տեսնելով:

Այսպէս երկուքն ալ ապահովութիւն ստանալով իրարմէ զատուեցան:

Ռուսօ երթալուն պէս՝ Թիւլէր վերստին լարերը բացաւ և այս անդամ լաւ մը հիւսեց զանոնք:

Խողովակն ու կղմնտրները վերստին շոշափեց, և ապա սկսաւ մինչև իրիկուն պարտեզին մէջը դիտել:

ՀԲ

ՕՓԵՉՈՒ ՈՒՂԵԻՍՈՐՈՒԹԻՒՆ

Թիւլէր այնպէս պատրաստուած էր թշամի պարտեզն անցնելու համար, մտքէն այս անունը կու տար Գավէրնէյի տան, և իւր լուսամտան խորին ուշադրութեամբ ասպարէզը կը վննէր՝ մարտ մղելու պատրաստ ճարտար մարտագէտի մը նման, երբ այն այնչափ համր, այնչափ դուրսն անցածին դարձածին անտարբեր եղող տան մէջ փիլիսոփային ուշը զբաւող տեսարան մը տեղի ունեցաւ:

Քար մը պարտեզին պատին վրայէն անցնելով տանը պատին անկեանը զարնուեցաւ:

Թիւլէր արդէն զիտէր որ ասոնց պատճառի արդիւնք չըլլար. ուստի արդիւնքը տեսնելէն ետք՝ սկսաւ պատճառը փնտռել:

Բայց Թիւլէր, թէպէտ շատ ծոռելով, փողոցէն այն քարը նետողը չ'ըրցաւ տեսնել:

Սակայն — և իսկոյն հասկըցաւ որ այն դործողութիւնը կապակցութիւն մ'ունէր պատահած եղելութեան — սակայն տեսաւ որ գետնայարկին մէկ սենեկին փայտեայ փեղկերէն մին զլուշուրութեամբ բայուեցաւ, և այն կիսաբաց փեղկին մէջ տեղէն Նիգօլ արթնցած գլուխը դուրս հանեց:

Թիւլէր Նիգօլը տեսնելուն պէս վերնայարկին մէջ սուղեցաւ, առանց վայրկեան մը այն կայտառ դեռատի աղջիկը աչքէ կորուսելու:

Նիգօլ աչքով բոլոր պատուհանները, և մասնաւորապէս տանը պատուհանները զննէն ետք իւր կէս թագստոցէն դուրս ելաւ և պարտեզին մէջ վաղեց գոլցես պատին ներքև տնկուած ծառերուն կողմն երթալու համար, ուր քանի մը տանդէլաներ արևին մէջ կը չորնային:

Այն ծառատունկ ճանքուն վրայ թաւալեր էր քարը՝ զոր ինչպէս նաև Նիգօլը երբեք աչքէ չէր կորուսեր Թիւլէր: Թիւլէր տեսաւ որ

Նիդօլ սարովը զարկաւ այն քարին որ նայն միջոցին այնքան կտրեորութիւն կատանար, դարձեալ զարկաւ և այնպէս շարունակեց մինչև որ քարը ծառերուն ներքև ամուլն եղըր հասաւ :

Հոն Նիդօլ ձեռները վեր ստաւ տանգէլաները ժողվելու մար, անոնցմէ մին զեակնը ձկեց և երկայն բարակ զեանին վերցուց, ու զեանէն վերջընկաւ ատեն այն քարը ձեռք ձկեց :

Թիլպէր տակալին բան մը չէր գուշակեր. բայց երբ սեսաւ որ Նիդօլ այն քարը կ'սարկէ, որովայնասիրի մը ընկողմը սարկելուն նման, և անոր վրայէն թղթէ կ'ձեպ մը կը հանէ, հասկըցաւ թե իրօք քանի՛ աստիճան կարևորութեան արժանի էր օգտաբար :

Նիդօլին քարին շուրջը բոլորուած դտածը տոմսակ մ'էր : Խորամանկ աղջիկը շուտ մը բացաւ տոմսակը, աչքովը լափեց զըսկանը դրաւ և անկէ ետք սէտք չունեցաւ տանգէլաներուն նայ յելու, ինչու որ չորցած էին :

Սակայն Թիլպէր զլուխը տատանելով ինքնիրեն կ'ըսէր, կնիկները տժգնող մարդոց անձնասիրութեամբ, թէ Նիդօլ իրօք մոլի բնաւորութիւն մ'ունէր, և թէ ինքը Թիլպէր, բարոյականութեան և ողջամիտ քաղաքականութեան դործ մը կատարած էր այնպէս յանկարծ աւրուելով այնպիսի աղջկան մը հետ՝ որ պատերուն վրայէն տոմսակ կ'ստանար :

Եւ այսպէս տրամաբանելով Թիլպէր որ քիչ մ'առաջ պատճառներուն և արդեանց վրայ այնքան զեղեցիկ տրամախոհութիւն մ'ունեցեր էր, կը դատապարտէր արդիւնք մը՝ որուն պատճառը թերևս ինքն էր :

Նիդօլ տուն մտաւ, ասպ վերատին դուրս ելաւ, այս անգամ ձեռքը դրպանը դրած :

Գրպանէն բանակի մը հանեց. Թիլպէր վայրկեան մը փայլակի մը նման այն բանակին անոր մատանց մէջ շողալը տեսաւ, յետոյ իսկոյն նորատի աղջիկը սլաքտեղին փոքրիկ դրանը ներքև մղեց բանակին. այս դուռը փողոցին պատին միւս ծայրէն էր, գործածուած մեծ դրան զուգահեռական կերպով :

— Լաւ, ըսաւ Թիլպէր, կը հասկընամ. տոմսակ մը և ժամագրութիւն մը : Նիդօլ ժամանակը պարապ շանցընէր : Արեմն Նիդօլ նոր սիրահար մ'ունի :

Եւ Թիլպէր յօնքը պոստեց այնպիսի մարդու ահաճութեամբ՝ որ կարծած է թէ իւր լքած կնոջ սրտին մէջ անպարմանելի կերպով քարաց տեղ մը թողած է, և զարմանօք կը տեսնէ որ այն պատեղ կատարելապէս լցուած է :

— Ե՛հ այս կրնայ արդեւք ըլլալ իմ դիտարութիւններուս, քրոջսնց Թիլպէր իւր սրանեղութեանը շինծու պատճառ մը վնասութիւն օգցե՛ չէ, կրկնեց Թիլպէր քիչ մ'ևս լուռ կնեակէն ետք, զէ՛ չըլլա՛ր եթէ ինձ, ետք օրիորդ Նիդօլին բարեկամութիւնը վայելող եղջանիկ մահկանացուն ճանչնամ :

Բայց Թիլպէր, ինչ ինչ պարզաներու մէջ ուղղադատ միտք մ'ունէր. իսկոյն հաշուեց թէ ըրած դիւարը, որմէ ոչ ոք սեղեկութիւն ունէր, իրեն այնպիսի առաւելութիւն մը կու տար Նիդօլին վրայ, որմէ օգուտ կրնար քաղել առիթը ներկայացած ատեն, վասն զի Նիդօլի զաղանիքը այնպիսի մանր պարազաներով զլուտեր օր նէ չէր կրնար ուրսնալ, մինչդեռ Նիդօլ Թիլպէրի զաղանեաց մասին հաշիւ արեմն կատկած մը կը տածէր մտքին մէջ, և պարագայ մ'ալ չկար որ այն կատկածին մարմին տար :

Աւտօի Թիլպէր միտքը դրաւ որ առիթը ներկայացած ատեն օգուտ քաղէ իւր այն առաւելութիւնէն :

Բոլոր այն երթեկներու միջոցին, այն այնքան անհամբերութեամբ սպասուած զիշերը հասաւ վերջապէս :

Թիլպէր ալ մի միայն բանէ մը կը վախնար, կը վախնար որ Ռուսօ յանկարծ ներս կը մտնէ, զինքը տանիքին կամ սանդուխին վրայ կը գտնէ, կամ կրնայ ըլլալ որ սենեակը պարսպ կը գտնէ : Այս վերջին պարագայն, Թիլպէր վաղեմի բարկութիւնը ստուակի պիտի ըլլա՛ր. Թիլպէր կարծեց թէ կրնար իրեն դէմ բարկութեան շղթաներ նամակ մը միջոցաւ զոր փոքրիկ սեղանին վրայ թողուց, փիլիսոփային հասցէով :

Նամակն այսպէս գրուած էր,

«Միբերի և Ածանուն պաշտպանս,
«Ծուռ կարծիք մը մ'ունենաք իմ վրայ, ձեր պատուէրին, և նոյն իսկ ձեր հրամանին հակառակ դուրս ելնել ուղեւորս հա-

մար : Գիշ ատենէն կը վերադառնամ, եթէ արդէն պատահածին նման պատահար մը չգայ գլխուս . քայք նմանօրինակ և նոյն խոյ վատթարացոյն վտանգ մ'ալ ըլլայ առջնս սխտը է որ երկու ժամուան համար սենեակս լողում :

— Աերպարձիսինչ պիտի ըսեմ, չլիսեմ կ'ըսէք ժելլէր մտովի, քայք գէթ Պ. Ռուսօի սիրան անհանդիսա շըլար, և շքարկանար :

Երեկոյն մութն ամեն կողմ պատեց : — Հեղձուցիչ տար մը կար, ինչպէս որ գարնան առաջին տաքերուն սովորաբար կը պատահի . ուստի երկինքն ամբողջ ծածկուեցաւ, և ժամն ութուկէօխն ամենավարժ աչք մ'իսկ բան մըչէր կրնար նշմարել այն սև վշին խորը ուր ժելլէր աչքով կը զննէր :

Երիտասարդն այն ատեն միայն տեսաւ որ դժուարաւ շունչ կ'առնէ, յանկարծական քրտինքներ ձակասա ու կուրծքը կը պատեն, որոնք տկարութեան և անզօրութեան նշաններ էին : Խոհեմութիւնն իրեն կը խրատէր այն վիճակով ինքզինքը վտանգի-չնթարկել այնպիսի արշաւանք մ'ընելու համար՝ յորում գործարանայ քոյրը զօրութիւնը, բոլոր սպահովութիւնը կտրեցր էին ոչ միայն ձեռնարկութիւնն յաջողցնելու համար՝ այլ և անձին պահպանութեանը համար . քայք ժելլէր ամենին ուշ շքրաւ ֆիզիկական բնազդման տուած խրատին :

Բարոյական կամքը աւելի բարձր խօսէր էր անոր ներքը, անոր հետեւեցաւ երիտասարդը, ինչպէս որ միշտ կ'ընէր :

Ժամանակն հասեր էր . ժելլէր իւր փոքրիկ առասանը տասներկու անգամ պարանոցին շուրջը քոյրեց, սրտաբախ սկսաւ լուսամուտէն իջնել, և նոյն լուսամուտին շրջանակէն ուժով բռնելով, խողովակին մէջ քայլ մ'առաւ դէպ ի աջ կողմին լուսամուտը, որ ինչպէս ըսինք, սանդուխին լուսամուտն էր և մուտէն երկու դրկաչափ հեռի կը դանուէր :

Այնպէս ոտքերը առ առաւելն ութ մտանաչափ լայնութեամբ կապարեայ խողովակի մը մէջ, որ սեղանդ երկաթէ ակիշներով պնդուած էր, սակայն կապարին կախողութեան պատճառաւ անոր ոտիցը ներքև կը ձուէր . ձեռները կողմնարներուն վրայ դրած էր, որոնք միայն յենարան մը կրնային ըլլալ հաւասարակշիւութիւնը պահելու հա-

մար, քայք իյնալու ատեն նեցուկ չէին կրնար ըլլալ, ինչու որ չէին բռնուեր . ահա այսպէս էր ժելլէրի գիբը այն օրացու ուղեբութեան միջոցին՝ որ երկու վայրկեան սեւեց, այսինքն երկու յաւիտենութիւն :

Քայք ժելլէր վախնալ չէր ուզէր, և իւր կամայ զօրութիւնն այն ստոխձանի էր, որ չվախցաւ : Միտքը կը բերէր հաւասարակշիւութեան դասատուի մը ըսածը թէ, նեղ ձանքանեղէն անլուանդ քայլելու համար սխտը չէր ոտներուն վրայ նայիլ՝ այլ իրմէ քսան քայլ հեռի, և անդունդին վրայ արծիւին նման խորշիլ, այսինքն թէ անոր վրայ սառաւնելու համար ստեղծուած է : Ասիէ դատ ժելլէր արդէն այս սկզբունքներն ՚ի գործ դրած էր՝ նիգօլի տուած բազմաթիւ այցելութեանց միջոցին, այն նիգօլին որ այժմ այնքան յանդգնութեամբ տանեաց և ծխնելոյզներու սեղ բանավիներ և դռներ կը գործածէր :

Այսպէս անցեր էր Դավէրնէյի շաղպքներուն, շքերուն և հին հիւղի մը թափթփած տանեաց գերաններուն վրայէն :

Ուստի առանց անգամ մը դող ելնելու նպատակին հասաւ, և անգամ մ'որ նպատակին հասաւ՝ հոգարտութեամբ սանդուխին վրայ սահեցաւ :

Քայք գրանդն հասնելուն պէս յանկարծ կեցաւ : Ստորին դասիկոնները ձայներ կ'ելնէին : Թէրէզին և քանի մը դրացուհեաց ձայնն էր որ Պ. Ռուսօի հանձարին, իւր գրոց արժանիքին և ձայնազրութեան ներդաշնակութեանը վրայ կը խօսէին :

Այն դրացուհիք նոյն Էլէշը կարգացած էին և լիտի գանձելին առանց քաշուելու կը խոստովանէին : Այս քննադատութեան պատասխանելով տիկին Թէրէզ կ'ըսէր թէ անոնք այն գեղեցիկ դեբին փիլիսոփայական իմաստը չէին ըմբռներ :

Որուն ուրիշ պատասխան մը չէին կրնար տալ դրացուհիք, այլ կը խոստովանէին թէ իրենք այսպիսի նիւթերու մէջ վճիւռ տալու անկարող էին :

Այս դերադնիւ խօսակցութիւնը մէկ դրանդէն միւսը տեղէ կ'ուռնենար, և վիճարանութեան հուրն այնքան բոցալի չէր՝ որքան կրակարաններուն հուրը՝ որոց վրայ այն տիկնանց անուշաբոյր ընթրիք կ'եփէր :

Թիպէր անոնց արամաբանական ձևոնարկով թիւնները և մեքոնի խորովելը կը լսէր :

Այն ժխորին մէջ իւր անուան . արասանուիլը լսելով անհամոյ դող մը զզաց :

— Ընթրիքէս ետք, կ'ըսէր Թէրէզ, վերնայարիը երթամ տեսնեմ այս սիրուն աղան թէ պակաս բան մ'ունի :

Այն -ի-ը-ն-ը-ն-ը այնքան համոյր չարամառեց Թիլպէրի՝ որքան որ այցելութեան խոստովար վախ չէր տուեր : Երջանկաբար, մտածեց որ Թէրէզ առանձին ընթրած աստեղ երկայն բարակ կը խօսակցէր իւր շիշին հետ, խորովածը համեղ կ'երևէր, և ընթրիքէն ետք ըսածը ժամը . . . տասնին ըսել էր : Թամը իննին քառորդ կար : Ասէ զատ ընթրիքէն ետք, շատ հաւանական էր որ Թէրէզի միտքը փոխուէր, և -ի-ը-ն-ը-ն-ը-ն-ը զատ ուրիշ բանի մը վրայ խորհէր :

Սակայն ժամանակը կ'անցներ որով Թիլպէր մեծ յուսահատութեան մէջ կ'իյնար, երբ յանկարծ խորովածներէն մին կրակը ընկաւ . . . : Խոհակէրու հի մը շփոթելով սխառ կանչուտել, այս վախ յայտնող աղաղակին վրայ ամեն խօսակցութիւն կտրեցաւ :

Ամեն մարդ եղելով թեան կատարուած կողմը վաղեց :

Թիլպէր այն տիկնանց խոհանոցական ղրազմունքէն օգուտ քաղելով այսի մը նման սանդուխի վրայ սահեցաւ :

Առաջին դատիկները հասած աստեղ, իւր պարանը վրան կապուելու սահմանուած կապարը գտաւ : շարժուն հանդուցով մը պարանը հոն հաստատեց, պատուհանին վրայ ելաւ և սխառ թեթևօրէն վար իջնել :

Այն կապարին և գետնին մէջ տեղը կախուեր էր, երբ արագընթաց քայլ մը լսուեցաւ պարտէզին մէջ :

Կապերուն պլլուելով ժամանակ ունեցաւ ետը դառնալու և նայելու թէ ո՞վ էր այն վրայ եկող անձարակը :

Մարդ մ'էր :

Որովհետև փոքրիկ դրան կողմէն կու դարձ Թիլպէր պահ մը ամենեին կասկած չունեցաւ որ Նիզովին սպասած երջանիկ մահականացուն էր նա :

Աստի բոլոր ու շարութիւնը այն միւս բանակոյձին (intrus) վրայ կեդրոնեց՝ որ կկեր արդէք եղեր էր իրեն այն վտանգակէ Էջի միջոցին : Անոր քալուածքէն, եւ ամայր գլխարկին ներքև ծածկուած կիսադէմն, այն եւ ամայր գլխարկին մասնաւոր եղանակաւ մը մէջ ախանջին վրայ ծածկ ըլլալէն, Թիլպէր կարծեց թէ անուան Պազիրն էր ան, այն սեղակալը՝ որուն հետ Նիզով ծանօթացեր էր Պապէրնէյ :

Գրեթէ մի և նոյն աստեղ, տեսաւ որ Նիզով տանը դուռը բացաւ, պարտէզը սրացաւ դուռը բաց թողլով, և վազող հովուտէ մը նման ու անոր պէս արագաշարժ՝ սխառ ջերոցին ճանքան բռնել, այսինքն արդէն Պ. Պոզիրի գացած կողմը :

Առաջին անգամը չէր որ այս կերպ ժամադրութիւն մը տեղի կու նենար անշուշտ, ինչու որ երկու քն ալ վարանում մը չէին յայտներ կենալու տեղերնուն համար :

— Հիմա իջնել կը լմընցընեմ, ըսաւ Թիլպէր մտովի . ինչու որ եթէ Նիզով այս պահուն ընդունեց իւր սիրահարը՝ անշուշտ ժամանակը լաւ ընտրած է : Ուրեմն Անտրէ առանձին է, Աստուած իմ, առանձին է . . . :

Արդարև բնաւ ձայն մը չէր լսուեր, և միայն աղօտ լոյս մը շերեւէր դեմնայարիլը :

Թիլպէր առանց պատահարի մը դետինը հասնելով չորեք պարտէզէն անցնիլ տրամանակիւնօրէն, պատին երկայնութեանը գնաց, թառուտ մը գտաւ, ծոկով մէջէն անցաւ, և առանց մէկէ մը օտնուելու՝ Նիզովին բաց թողած դուռն հասաւ :

Հոն մեծ սղանդի մը ներքև ծածկուելով, որ մինչև դրանը վերելք փաթտուեր ելեր և ամեն կողմէն կախուեր էր, դիտեց թէ ասանը առաջին մտող որ իւր գուշակածին համեմատ բաւական ընդարձակ նախասենեակ մ'էր՝ բոլորովին թափուր էր :

Այն նախասենեակին ներքը երկու դուռ կար, մին դոյ, միւսը բաց Թիլպէր գուշակեց թէ բաց դուռը Նիզովին սենեակն էր :

Ծանրաքայլ այն սենեակը մտաւ, ձեռներն առնէն երկրորդով պատահարէ վախնալուն համար, ինչու որ այն սենեակն մէջ բնաւ լոյս չկար :

247
 - 211 -

Մակայն կիրպ մը նեղ նրբանցքի մը ծայրը, ապակեօր դուռ մը կը տեսնուէր որ մերձակայ սենեկին լաստին վրայ խոր շրջանակները կը նկարէր, այն ապակիներուն միւս կողմն մուսլինե վարագոյր մը կը ծածանէր:

Նրբանցքին մէջ յառաջ երթալով, Ժիլպէր ակադ ձայն մը բնոց լուստու որ սենեկին մէջ:

Անորէն ձայնն էր. Ժիլպէրի բոլոր արիւնը սիրան հոսեց:

Այն ձայնին ուրիշ մը կը պատասխանէր, Փիլիպի ձայնն էր:

Երեսասարգը քրօջն առողջութիւնը կը հարցընէր հողացողութեամբ:

Ժիլպէր զգուշութեամբ քանի մը քայլ առաւ, և վրան որ և է կիսանդրի արուած այն կէս սիրներէն միոյն եակը կեցած որ այն ատենները կրկին դռներուն մէջ իբրև զարդ կը դրուէին:

Այսպէս ապահով վիճակ մ'ունենալով, մտիկըրաւ և նայեցաւ, կարի երջանիկ սիրան այնպէս ուրախութեամբ լեցուելուն համար, նաև կարի ահաբեկ մի և նոյն սիրաը կուրծքին մէջ կէտ մ'ըլլալու չափ կծկուելուն համար:

Մահի կընէր և կը տեսնէր:

Կրտսէ

Վ Ե Բ Զ Զ Ո Ր Բ Ո Ր Գ Կ Է Ս Տ Ո Ր Ո Յ




ՀԱՆՆԿ ԳՒԼՈՒՅ ԶՈՐԲՈՐԳ ՀԱՏՈՐՈՅ

247
 211

Գ Լ ՈՒ Խ

ԾԲ. Տը Ռօհան սրբաղան կարգինալը	3
ԾԳ. Սէն-Տընիէն վերապարձը	19
ԾԴ. Գոբբիկ տունը	20
ԾԵ. Սէն-Գլօս փողոցին տունը	94
ԾԶ. Կրկին դոյութիւն — քոն	51
ԾԷ. Կրկին դոյութիւն — զարթումն	52
ԾԸ. Այցելութիւնը	70
ԾԹ. Ոսկին	76
Կ. Կենսատու ցքին	95
ԿԸ. Տեղեկութիւններ	102
ԿԹ. Բլադբէր փողոցին տունը	132
ԿՊ. Ծրագիր մարտի	141
ԿՊ. Արքայորդւոյն ամուսնութեան զիշերը, Գ. սը լա Վօկիյօնի, Գաղղիոյ արքայորդւոց դաստիարակին պատահածը	155
ԿԵ. Արքայորդւոյն հարսանեաց զիշերը	164
ԿԶ. Անորէ տը Գալէրնէյ	179
ԿԷ. Հրահաղ	188
ԿԸ. Մեռելոց դաշտը	192
ԿԹ. Վերադարձ	210
Հ. Գ. սը Ժիլպիօ	220
ՀԱ. Առողջութիւն	229
ՀԲ. Օղաչու ուղեորութիւն	234

Եւթ-
 3
 19
 20
 94
 51
 52
 70
 76
 95
 102
 132
 141
 155
 164
 179
 188
 192
 210
 220
 229
 234



ՀՀ Ազգային գրադարան



NL0792317

11

7825